

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒՅԹ

Հ Ո Ղ Վ Ա Ծ Ն Ե Ր Ի Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ ՈՒ

ԵՐԵՎԱՆ
2006

NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

NEAR EAST

III

*This publication was made possible by
Armen and Bersabe Jerejian Foundation Inc. - USA*

YEREVAN - 2006

The book is recommended for publication by the Scientific Council of the Institute of
Oriental Studies, National Academy of Sciences, Republic of Armenia

EDITORIAL BOARD:

Nikolay Hovhannisyán (President)

**Vahan Bayburdyan, Gor Gevorgyan, Shahen-Hakob Karamanukyan,
Pavel Chobanyan, Ruben Safrastyan.**


The book includes articles presented at the XXVII Conference
of Young Orientalists of Armenia (8-9 June, 2006)

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

III

*Մեկենասությունը
Արմեն Լ. Բերսաբե ճերեմեան Հիմնադրամի - ԱՄՆ*

A 91340



ԵՐԵՎԱՆ - 2006

ՀՏԳ 94/99
ԳՄԳ 63.3(5)
Մ 663

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ՝
Հովհաննիսյան Ն.Հ. (Ճախագահ)
Բալթարդյան Վ.Ա., Գեորգյան Գ.Գ., Կարամանուկյան Շ.-Հ.Լ.,
Չոբանյան Պ.Ա., Սաֆրաստյան Ռ.Ա.

Մ 663 Արեւավոր Արևեղ (III) - Եր., Ջանգալ-97, 2006, 160 էջ:

Ժողովածուն ջնդգրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում կազմակերպված երկատասրդ արևելագետների հանրագիտական XXVII գիտական մատչյրքանի մյութը (2006թ. հունիսի 8-9):

Ժողովածուում թննադիկ առումով ներառված են հոդվածներ, որոնք ջննդրյան են առնում Արեւավոր Արևեղի էին, միջին, նոր և նորագույն շրջանի պատմության, քաղաքականության, միջազգային հարաբերությունների, ինչպես նաև լեզվաբանության և գրականության մի շարք էիննահարցեր:

Նախատեսվում է արևելագետների, քաղաքագետների, բանասերների և ջնդրիչող յայն շրջանակների համար:

Մ $\frac{0503030000}{0003(01)-2005}$ 2006 թ.

ԳՄԳ 63.3(5)

ISBN 99930-2-525-9

© Հրիմակներ, 2006 թ.

ԲԱՐԱՅԱՆ ԱՆԻ
(ԻԱԿ)

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԵՎ ՍՊԱԿԱՆԻ ՈՐՄԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ
ՓՈՒՍՈՒՆԶՈՒԹՅՈՒՆԸ XVII ԴԱՐՈՒՄ

XVII դարի առաջին տասնամյակում հայերին Սպահան քոն-գաղթեցնելու Շահ Աբբաս Ա-ի (1571-1629թթ.) գլխավոր նպատակը Իրանի, հատկապես, նոր մայրաքաղաք Սպահանի մշակութային զարգացման ապահովումն էր¹: Կարճ ժամկետում Սպահանում կառուցվեցին ապարանքներ, բնակարաններ, այգիներ, մզկիթներ, դպրոցներ, կամուրջներ, հիմնվեցին վաճառատներ, արհեստանոցներ և այլն²: Այդ ընթացքում դրսևորվեցին հայ և իրանական արվեստի, հատկապես, որմնանկարչության առանձնահատկություններն և նրանց միջև փոխազդեցությունը³:

Հայ ազգաբնակչության տարբեր խավերը ակտիվորեն մասնակցելով մայրաքաղաքի շինարարական և գեղեցկացման գործին՝ առեղծեցին արվեստի իսկական գլուխգործոցներ: Հատկանշական է հատկապես հայ վաճառականների դերը Նոր Ջուղայի մշակույթի, արվեստի զարգացման և հովանավորման գործում: Մամուլողելով եկեղեցական զարգացած երկրներ՝ նրանք ծանոթացան Վերածննդի սկզբնական շրջանի արվեստի ձեռքբերումներին և դրանք փոխանցելով իրանա-հայկական իրակամությամբ՝ կարևոր ներդրում ունեցան Նոր Ջուղայի արվեստում⁴:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Նոր Ջուղա բնագաղթված հայերի թվում էին հոգևորական և աշխարհիկ ծաղկողներն ու գրիչները, որոնք շարունակեցին իրենց աշխատանքը, հիմնեցին Նոր Ջուղայի մանրանկարչության դպրոցը՝ վստահաբար դեռակատար լինելով մահ եկեղեցիների մկարագաբղման գործում⁵:

XVII դարում շինությունների ներքին հարդասանքը բնորոշվում է որմնանկարչության, գեղանկարչության և դեկորատիվ իրերի ներդաշնակ գուգակցությամբ և արվեստաբանական բարձր ճաշակով: Որմնանկարչության հիմնական ուղղությունները Սպահանում ընթանում են աշխարհիկ բեմաներով՝ պատերազմ, համըխաձորություն, սիրահարներ և կանազի կամ տղամարդու միայնակ կեքպարճեր: Ի տարբերություն

Սպահանի, Նոր Ջուղայում աշխարհիկ բեմաներին գուզքերաց իշխում են մաս կտնակալի քովանդակությամբ որմնամկարները՝ ընդգրկելով Աստվածաշնչի դրվագներ, Հայ Առաքելական Եկեղեցուն վերաբերվող հասուկ դրվագներ, Հայոց եկեղեցու խորհուրդները, քրիստոնեական սրբերի և եկեղեցու քարերարների կերպարներ⁷։

ՅԻն Սպահանի և Նոր Ջուղայի որմնամկարության ճևալորման ժամանակաշրջանը (1605-1660թթ.) համընկնում է սակայն քնական և նմանությունների և տարբերությունների առկայությունը, որը փոխազդեցության և ազգային ավանդույթների դրսևորման արդյունք է։

Ջարդանկարները կարևոր տեղ են գրավում կառույցներում։ Դրանք երբեմն ընդհանուր ֆոն են ծառայում նկարների համար, կամ նկարները երիզված են զուսագեղ զարդանկարներով, ինչը ճևալորում է պատկերների մեկ ընդհանրություն։ Ընդհանրապես Սպահանի և Նոր Ջուղայի շինություններում շատ են նույնատիպ զարդանկարները։ Առանձնահատուկ ուշադրության են արժանի գմբեթների գարդանկարները ու նրանց հորինվածքը, որոնք դիտողի հայացքը ակամա տանում են դեպի գմբեթի կենտրոն՝ պատճառելով գեղազնուական հանույք։

Մզկիթները հաղորդվել են հասնապակեներով, որոնք պատկերազարդված են քուսական և երկրաչափական զարդանկարներով և գեղազվեր *այծմեղով*⁸։ Մարդկային կերպարներ պատկերելը չի համապատասխանում մահմեդականության սկզբունքին, ուստի արվեստը զարգացում է սալրել գեղազուության, զարդանկարչության և դեկորատիվ կիրառական ասպարեզներում։ Մահմեդական երկրներում միայն իրանցի արվեստագետներն են շարունակել ավանդական զգրի նկարազարդումը և կրոնական կերպարների պատկերումը, որի գլխավոր պատճառը իրանական հարուստ գրականությունն է համարվում։ Սաասնյանների անկումից մինչև Սեֆյանների շրջանը որևէ կառույց որմնամկարությամբ չի հաղորդվել⁹։ Եսիի կողմից *չիա* դավամանը պաշտոնականացնելու մարտակներից մեկն էլ իրանական արվեստի մուսգված գեղարվեստական արժեքների վերականգնումն էր։ Այս ուղղությամբ ուշադրավ է պաշտոնների որպես աշխարհիկ կառույցների հաղորդումը որմնամկարներով¹⁰։

Հախնապակյա զարդանկարներով են հաղորդվել նաև Նոր Ջուղայի եկեղեցիները, պաշտոններն ու քնակարանները։ Հիմնական տարբերությունները, որ կարելի է մատնանշել Սպահանի և Նոր Ջուղայում օգտագործված հախնապակյա զարդանկարներում, տիրող գույնն և կիրառվող բեմաներն են։ Նոր Ջուղայում որպես տիրող ֆոն ընտրվել է դեղին գույնը, որը քրիստոնեության խորհրդանիշն է հանդիսանում, իսկ Սպահանում *յաթվաթթ*¹¹ որպես իսլամի խորհրդանիշ։ Նոր Ջուղայի կրոնական շինություններում հախնապակյա հորինվածքներում

կենդանիներ և մարդկային կերպարներ են իշխում, իսկ Սպահանում միայն թոյուններ են պատկերվել:

Կանգուն եկեղեցիներից ամենահինը 1607 թվազրվող Ս. Հակոբ Մոթնա եկեղեցին է, որի ներքին ձևավորումը կատարվել է հիշատակագրություն ունեցող խաչքարերով: 1613 թվից հետո կառուցված եկեղեցիները, ըստի Մ.Նիկողայոս եկեղեցուց, բոլորը պատկերագրված են: Հատկապես առանձնահամուռ են Ս. Բերդեհիմ և Ս. Ամենափրկիչ վանքի Արեմաթացու եկեղեցիները, որոնց ներքին հարդարանքը բնորոշվում է գմբեթից մինչև նառակ, բոլոր որմերով ծածկված որմնանկարներով, զարդանկարներով և հախճապակիներով: Մյուս եկեղեցիների հարդարանքներն ավելի պարզ են¹⁰:

Կատարողական տեսակետից Սպահանի և Նոր Ջուղայի որմնանկարներում մտանորյուններ են նկատվում: Դրանց մի մասը համապատասխանում են եվրոպական գեղագիտական չափանիշներին: Այս հանգամանքը առիթ է տալիս այդ որմնանկարների ում ձևերին պատկանելու վերաբերյալ վարկածների վերահամմամ: Վարկածներից մեկի համաձայն՝ դրանք պատկանում են Եվրոպայից ժամանած որմնանկարիչներին, սակայն նկատի ունենալով ժամանակի տիրող դավանական մթնոլորտը, կարելի է ենթադրել իզուտ այն վարկածի, որ դա հայ վաճառականների Եվրոպայի հետ ունեցած կապերի այդպուցն է: Հնարավոր է նաև, որ տեղացի արվեստագետները վարպետության էին հասել Իրանում գտնվող Եվրոպայից ժամանած նկարիչների հետ շփման այդպուցում¹¹: Առկա են գրավոր տվյալներ, որոնց համաձայն հայ արվեստագետները կրավորվում էին մասնակից լինելու ճայրաքաղաքի շինությանը և կամ հանձնարարվում՝ իրենց արվեստը փոխանցելու պարսիկ տեղացիներին¹²: Գոյություն ունեն մաս առավել համեստ կատարողությանը որմնանկարներ, որտեղ ավելի զգալի է դառնում ու շեշտվում ազգային նկարագիրը:

Երբեմն մի հորինվածքում կատարողական վարպետության հավաստություն է զգացվում, օրինակ պատկերված մարդկային կերպարը ամատոմիայի լիարժեք պատկերման խնդիր ունի, իսկ դիմանկարը անքերի է, ինչն առիթ է հանդիսանում ենթադրել, որ հորինվածքը միայն մեկ նկարչի վրձնին չի պատկանում: Կան նաև անվարժ ձևերի նկարչություններ. հորինվածքը տարրական լուծում ունի, սակայն ինքնաբերական արտահայտության արդյունք լինելով՝ անմիջական է:

Սպահանի պալատների որմնանկարները մեծ մասամբ մանրանկարչական սկզբունքով կատարված որմնանկարներ են: Թվում է, թե պատկերում մանրանկարչության ծավալն ընդարձակելով՝ որմնանկար են ստացել: Սպահանում և Նոր Ջուղայում մեծ որմնանկարների հանդիպում ենք Ս. Բերդեհիմ եկեղեցում, Սուքիազյանի բնակարանում, Չեհելտթում և Ալի Դափու պալատներում, որտեղ ակնհայտ է դառնում

որմնակարգության կատարողական տեխնիկայի զանազանությունը նշմարվում է մի կողմից ազգային ավանդական մամրանկարագության, մյուս կողմից եվրոպական արվեստի ազդեցությունը:

Բոլոր կառույցներում նկատվում է գլխավոր դեմքին կարևորելու և կոմպոզիցիայի կենտրոնում պատկերելու միտումը: Իշխող է մաև կերպարների ասեմանսիականը և բազմակերպարից մի կերպարի անցնելն՝ այն տարրերությամբ, որ եկեղեցում ներկայացվում է պատմական, հոգևոր կերպար, իսկ բնակարաններում և պալատներում որևէ նշանավոր դեմք չի շեշտվում (միայն պալատների բազմակերպար հորինվածքներում ընդգծվում է շահի կերպարը): Նոր Ջուդայի որմնակարներում շեշտվում են կերպարների հոգեկան և զգացական ապրումները և նկատվում է նկարչի ձգտումն՝ արտահայտելու կերպարների իրական հոգեվիճակը: Այդ է պատճառը, որը կերպարները պատկերված են տարրեր տարիքներում և դիպքերով (կիսադեմ, անփոսկան գլուխը երեք քառորդ կողմ թեքած, լրիվ): Սակայն Սպահանի որմնակարներում պատկերվող կերպարների դեմքերն իբրև նման, երիտասարդ և երեք քառորդ կողմ թեքած դիրքերով են պատկերված: Միայն յուրանկարներում է, որ նկարիչը ձգտում է լույս ու սովորով կերպարը բնական դարձնել: Միայնակ ծառը և կապույտ երկինքը նշմարվում են թե՛ Սպահանի, թե՛ Նոր Ջուդայի որմնակարներում:

Նոր Ջուդայի որմնակարներում պատկերի տակ հայերեն անկա են անվանում կամ/և հիշատակության գրություններ, իսկ Սպահանի որմնակարները նման գրություններ չունեն: Հավանական է, որ հայկական որմնակարներում այդ գրությունների անկայությունը ունեցել է ազգային ինքնության պահպանման նպատակ:

XVII դարի որմնակարության մեջ միամշակակ ընդօրինակություն չի նշմարվում, այլ նոր ձևերի ձևերը զուգորդվում են ազգային ավանդական զեղազիտական սկզբունքներին¹³: Իրանական և հայկական որմնակարությունները կրելով եվրոպական արվեստի ազդեցությունը, պահպանում են իրենց ազգային ինքնությունը և խտանվածքը: Նկատվում է անցում միջնադարյանից նոր եվրոպական չափանիշների:

Նոր Ջուդայի որմնակարության դպրոցի եկեղեցունը հայկական արվեստում, միջնադարյան շրջանից նոր շրջան անցնելու աստիճան քայլերից էր:



MUTUAL INFLUENCES NEW JULFA AND ISFAHAN MURAL PAINTING
IN SEVENTEENTH CENTURY

The research is focused on the 17th century paintings of Julfa and Isfahan art and their effects on the contemporary art. Armenian (New Julfa) and Iranian (Isfahan) arts accompanied with mural painting, resulting in an aesthetic and unique art.

Author looks over characteristic of mural paintings in the churches and buildings and how they formed.

ՑԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Առաքել Դավթիժեցի, Պատմություն, եր., 1988, էջ 24-72: Ն. Շախաձի, Շահ - Արքայա Առաքինի կյանքը, Թեհրան, 1371 (1992), հ. 3, էջ 1111-1117 (պարսկերեն):
2. Վ. Եղիպեման, Նկարագրություն Պարսկաստանի երևելի Շինածոց, Կոստանդնուպոլիս, 1854: Լ. Հոմարձատ, Սպասանի պատմական արձեղանի զամմարանը, Թեհրան, 1350 (1971, պարսկերեն): Ս. Շախաձի, Սպասանի - քաղաքաշինության հիմունքները Սեֆյանների շրջանում, Սպասանի Մշակույթ-15, 1379 (2000), էջ 35-51 (պարսկերեն): Ը. Արքաթի Հաշեմի, Նոր Ջուղայի ձևավորումը և ընդարձակումը Սեֆյանների շրջանում, Սպասանի Մշակույթ-14, 1378 (1999), էջ 60-71 (պարսկերեն):
3. Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը XVII- XVIII դարերում, Երևան, 1974, էջ - 49-50:
4. Յ.Տեր Յովհաննան, Պատմություն Նոր Ջուղայի (Սպասան), Նոր Ջուղա, 1880 (աշխարհարարի քաղաքամեջ Պ. Ֆինյ. Պետրոսյան, 1980), էջ 173: Վ. Ռայ-բուրդան, Համաշխարհային աստուղղը և իրանահայտերի մը 17րդ դարում, Թեհրան, 1996:
5. S. Der Nersessian, A. Mekhitarian, Armenian Miniatures from Isfahan, Brussels, 1986, pp.133-136.
6. Մ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 45: եր., Մարտիկյան, Հայկական կերպարվեստի պատմություն, եր., 1971, գիրք Ա էջ 9-10:
7. Տե'ս Լ. Հոմարձատ, նշվ. աշխ. (պարսկերեն):
8. Ռ. Փակրազ, Իրանական նկարչությունը սկզբից մինչև այսօր, Թեհրան, 1383 (2004), էջ 54 (պարսկերեն):
9. Ռ. Փակրազ, նշվ. աշխ., էջ 126-129 (պարսկերեն):
10. J. Caswell, New Julfa, The Armenian Churches and other Building, Oxford, 1968, pp.19-29. A.Haknazarian, Nor Djulfa, Documents of Armenian Architecture, 21, Venice, 1992, pp.113-117.
11. Ռ. Փակրազ (պարսկերեն), նշվ. աշխ., էջ 132-141: Մ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 16:
12. Առաքել Դավթիժեցի, նշվ. աշխ., էջ 321-324:
13. Ռ. Փակրազ, նշվ. աշխ., էջ 134 (պարսկերեն):

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՆ
(ԱԲ)

ՈՒՐԱՐՏԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՎԱԱՂԵՐՍՆԵՐԸ ԱԿԱԴ.
ԳՐ. ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ակամավոր արևելագետ-հայագետ ակադ. Գր. Ղափանցյանը տասնամյակներ շարունակ համատ Գանքեր է գործադրել ուրարտերեն սեպագիր լեզվի ուսումնասիրության ուղղությամբ: Ըստ որում իր պր-պտումները մա կատարել է համակողմանի՝ խորամուխ լինելով այդ լեզվի բոլոր ծայրերում: Հնդեվրոպական քառարմատներ է տեսել ուրարտերենում, քացահայտել ուրարտա-խեթական և ուրարտա-խա-բդիական ընդհանրություններ, նկատել ակկադերենի ազդեցությունը ու-րարտերենի և հայերենի վրա և, վերջապես, ի հայտ բերել ուրարտա-հայկական լեզվական, մասնավաճնդ քառասպաշարային քազում ընդհամ-րություններ:

Ըստ ամենայնի համոզիչ փաստական նյութով ամվանի ուրարտա-զետ-հայագետը, օրինակ, քացահայտել է, որ ուրարտերենի անանցողիկ քայերը —a- ցուցիչով և անցյալ կատարյալ ժամանակի եզակի բվի III - դեմքի —bi վերջավորությամբ լիովին համընկնում են հայերենի համաաբատաախան քայական ցուցիչի և վերջավորության հետ: Այդ կապակցությամբ, նկատի ունենալով ուրարտա-հայկական Ե-վ ենչումական անցումները, կարելի է համեմատել ուրարտերենի ռոսեի «եկավ», սնեի «արչավեց», սեի «տղևրվեց», չոնեի «աղորեց» և հայերենի «տեսավ», «ենծացավ», «բազմեցավ», «ընթացավ» և այլ անանցողիկ քայերը:

Մյուս կողմից, ակադ. Գր. Ղափանցյանը միաժամանակ նկատել է, որ ուրարտերենի քեմատիկ a-ն յեզոք սեռի քայերում այժմ էլ նույն ձևով առկա է հայերենի որոշ բարբառներում: Հմնտ. «ծխել» և «ծխալ», «քվել» և «քվալ» և այլն: Ի դեպ, միևնույն արմատով անցողական և անանց-ողական քայեր կազմելու երևույթը, հայերենի մեամ, լայն տարածում է գտել սեպագիր ուրարտերենում: Հմնտ. սհ(ս) - «ճանապարհել», «տղարվել», «նվիրել» և սհ(ս) - «ճանապարհվել», «արչավել», հի(ս) - «քերել» և հի(ս) - «զալ», սլ(ս) - «տղևրել» և սլ(ս) - «տղևրվել» և այլն: Նո-ւյնը կարելի է ասել ուրարտերենի և հայերենի եզակի սեռական հոլովի նույնական մի վերջավորության մասին¹:

Ինչ վերաբերում է ուրարտա-հայկական բառապաշարային բազում ընդհանրություններին, ապա քաջատեղյակ լինելով ժամանակի մասնագիտական, մանավանդ արտասահմանյան օտարալեզու գրականությանը, ինչպես նաև սեպագիր ուրարտերենին, խեթերենին, խուրրիերենին և ակկադերենին, Գր. Լավանցյանն իր աշխատություններում, մի կողմից, ամփոփել է այդնի հայտնի տարալեզու, ըմբռցման և ընկալման համար հաճախ անմատչելի նյութը, մյուս կողմից, համարել այն իր սեփական, մեծ մասամբ համոզիչ մտահղացումներով: Եվ դրա ցանկալի արդյունքը եղել է անվանի արևելագետի մտ երեք տասնյակ ուրարտա-հայկական բառապաշարային ընդհանրությունները, որոնք գիտությանը մա շնորհել է հիմնականում «Ուրարտուի պատմությունը», «Xaṣṣa - koṣṣeḥelbē armuḥ» և «Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան» բազմաբովանդակ աշխատություններում, որոնց ուսանելի արդյունքները, նորագույն փաստական նյութի և հետազոտական բարձր եզրահանգումների համադրումներով հանդիքժ, հակիրճ մատուցվում են ստորև.

1. «abili «ավելի», abili-dubi «ավելի արեցիս», «ավելացրի»²: abili - ավելի բառերի Ե-վ հնչյունական անցման կապակցությամբ հիմն. մասնի hubi - հովիտ, Biaiṣi - Վան, Erebani - Երևան իդնետիկ եամադրությունները: Ուրարտական արձամագրություններում abili-dubi-ն սովորաբար հիշատակվում է ռազմական արշավանքների ժամանակ օտար երկրների նվաճման և օկուպացման դեպքում. ^{KUR}ebani ^{KUR}ebani-akiedi abili-dubi «երկիրը երկրին իմ ավելացրի» (միացրի, կցեցի). KYKH, 241B, տողերը 25-27:

2. aruazi «արմ», «արմ-ատ», «գ-արմ», «ցեղ», «ներունը»³: Ուրարտական արձամագրություններում հաճախ հիշատակվում է մասն ուրարտերեն zil(i)bi-ի կամ նրա շումերական NUMUN համապատասխանության հետ միասին⁴: Ի դեպ, zil(i)bi-NUMUN համապատասխանությունը հատկ ակնառու է ըստ երկրեզվյան արձամագրություններ KYKH, 30 ուրարտական տեքստի 36,41 և ասորեստանյան տեքստի 36,42 տողերի, ինչպես նաև KYKH, 387 ուրարտական տեքստի 38 (կարդա՝ zil(i)bi) և ասորեստանյան տեքստի 36 տողերի համապատասխանությունների: Հենց դրանց հիման վրա էլ Գ.Ա.Մելիք-իշվիլին, Ֆ.Վ.Ջյունիզը և Ն.Վ.Հարությունյանը իրավամբ առաջարկել են ուրարտերեն zil(i)bi, ակկադերեն zēru և շումերերեն NUMUN համապատասխանությունները⁵: Այդ տեսակետից հիմնադրել է Մ.Սալվինիի կողմից վերջերս պնդած aruazi-NUMUN (?) նույնացումը⁶: Այստեղ նշենք նաև, որ այդ բառերը, որպես կանոն, արձամագրություններում հանդես են գալիս անեծքի բանաձևերում և իմաստային նրբերանգներով, կարծես, ինչ-որ տեղ զուգադիպում են, ըստ որում մեղաակնցներին ուրարտական արքաները դրանցով ամարզանքի պլունին են զամել մտամկրապես «ազգատուհն» բարդությամբ⁷:

3. at(u) «տտել», «պսել», «ավերել»: Հմմտ. խեթերեն at-/et- նույն- իմաստ բայը¹: Համդխասնում է KÚ (GU₇) և ŠÁ շումերագրամների, ինչպես նաև ակկադերեն akšlu-ի ուրարտերեն համապատասխան- ոթյունը²: Ուրարտական արձանագրություններում հիշատակվում է Ե- ազնական արշավանքների ժամանակ օտար երկրների ավերման և քաղաքների հրկիզման նկարագրություններում (^{KUR}ebani atubi URU^{ANZ} anaštubi / GIBIL-bi)³: at(u)-ն համանիշ է ուրարտերեն ḫarḫar(u)- և հայերեն «խարխարել» բայերին⁴:

4. ^{ŠADU}babani- «ղեռ», ^{ŠADU}babanili «ղեռներ»: Եւրյանական է խորհրիե- րեն fevani-ի, հայերեն բաբայ-բլուրի և ակկադերեն šadū-ի հետ: Գ.Ա.Ղափանցյանը նկատել է, որ այս բառը հայերենում ամառարտ պահպանվել է Երեմիա Մեղեցու քառասնում, ըստ որում դրանից է սերում Իշաղոնիի և Մննուայի Մեղի դրան պաշտամունքային արձան- ազդության ⁹Baba դիցուհու անունը⁵: Ի դեպ, ⁹Baba դիցուհին այժմ արդեն հիշատակվում է նաև Ռուսա II Այանիի դարձյալ պաշտամունք- ային արձանագրության մեջ⁶: Ուրարտական սեպագիր արձանագրու- թյուններում պահպանվել են նաև ^{KUR}Babanaի խոսուն երկրանունը և քաղուն ^{ŠADU}babani- լեռնանուններ՝ Միքիմուտարա, Կուլաշինի, Կարնիշի, Մազմալի, Ալաթեյ, Ամունի, Բուդուանի, Եազիշանի, Եալատարանի, Ուրա և այլն⁷:

5. ^{KUR}ebani «երկիր», ^{KUR}ebanili «երկրներ», խորհրիերեն amoi նույն նշանակությամբ: Համապատասխանում է շումերական KUR-ին, ակկադերեն ամու-ին և հայերեն «աւան»-ին⁸: Վերջինիս տակ ենթադրվում է «մեծ գյուղ», «փոքր քաղաք», «գյուղաքաղաք», «քաղաքագյուղ»: Հմմտ. նաև «ավանապետ», որը նշանակում է «զավատապետ»⁹: ^{KUR}ebani-ի համանիշն է դարձյալ ուրարտերեն asuni «մարզ» բառը, որի մասամբ տուժած asuni հոգնակին հիշատակված տակ Բալուի KYKH, 56 արձանագրության մեջ, ճշգրտել է Ն.Վ. Հաջոթյունյանը և որի տակ ենթադրվում են նույն արձանագրության Երեմեղիա, Խուզանա քաղաք-պետությունները և Մուփանի-Յոփո երկիրը¹⁰: Ուրարտերեն ^{KUR}ebani-ի հետ Գ.Ա.Ղափանցյանը ազգակցություն է տեսնում նաև մեգրեղական ebani «տեղ» և քաղթական ubani «տեղամաս», «քաղամաս» բառերը:

6. euri «տեղ». հմմտ. խորհրիերեն նույնիմաստ ewri-ն: Պահպանվել է հայերեն օրեար-օրեանք «տեղեք», «մեծեք» և «օրիդդ» բառերում¹¹: Կելիշինի և Թուփուզայի երկրեզվյան արձանագրություններում համապ- առասխանում է շումերերեն EN և ակկադերեն belu բառերին¹²: Հմմտ. e- uri և En-ri: Ուրարտական արձանագրություններում euri-ն հանդես է գալիս նաև -uki «իժ» հետադրության հետ միասին՝ ⁶Haldie euri-uki «Ժաղի (աստծուն) տիրոջ-ին»¹³, որը համապատասխանում է

շումեքական EN ՏՄ-ին²¹: Հմմտ. մաև ka(i)-uki kag-uki «առցեն-ին» (կարդա՜ «ին առցե») ²²:

7. Էսբի «հովիտ» - այսպես է ակադ. Գր. դափանցյալնը իրավամբ ստուգաբանում որարտերենի էսբի բառը՝ կենդավ որարտա-հայկական հայտնի օրինաչափությունից²³: Ինչպես հայտնի է, որարտական արձանագրություններում էսբի «հովիտ» բառով կազմված են մի ամբողջ շարք տեղանուններ. ^{KUR} AՏգ / kajai - էսբի, ^{KUR} Igarab-էսբի, ^M Mensainie-էսբի, ^{KUR} Niribai-էսբի, ^{KUR} Paqaja-էսբի, ^{KUR} Quarlini-էսբի / ^M Russainie-էսբի, ^{KUR} Tuarasiniei-էսբի²⁴: Այստեղ առանձնապես հատկանշական է ^{KUR} Tuarasiniei-էսբի - Տուարսաձահովիտը, որի առանձնահատկությունը հստակ նշմարվում է ոչ միայն այդ աշխարհագրական անունների միօրինակ ստուգաբանությամբ, այլև Խորհրդային տարեգրության մատուցած տվյալներից, երբ աշխարհագրական այդ միավորը ընկած է եղել Արածանի-ի (ստորեստանյան սեպագիր աղբյուրների Արծանիայի) հովտում. որտեղ Դաինալի գետից անցկացված ջրանցքը ապահովել է որարտական բազավորության քարոզությունը (յե՛սե ^M Dainali tinini PA, agubi zedubi kulmeie ^{KUR} šurue)²⁵: Նույնը կարելի է ասել ^{KUR} Quarlini- էսբի - հովտի մասին, որը Ռուսա II-ի Չվարթնոցի KYKH, 421 արձանագրության տվյալներով սկիզբ է առնում Իլդարունյա-Հրագդան գետից անցկացված Ռմնչինի ջրանցքի հովտով և Արարատյան դաշտավայրում հայտնի է իր ցանքադաշտերով, խաղողի և պղտառու հարուստ այգիներով²⁶:

8. Էս(ս) «զցել», «ճնտել» - ակադ. Գր. Դափանցյալի կողմից առաջարկված այսպիսի մեկնաբանությունը²⁷, կարծես, արտահայտում է իրեն որարտական արձանագրությունների անեծքի բանաձևերի իղնատիկ հատվածներում՝ aluše quira mepulie aluše A ^{MES} hušulie, aluše KI TM mepulie aluše A ^{MES} hušulie «ով հողում քաղի, ով ջուրը զցի»²⁸: Գր. Դափանցյալնը միաժամանակ կարծում է, որ որարտական էս - բայարմատը անշուշտ հնչել է «hoss» - ուստի պետք է կապակցել այն հայերեն «հոս» բայարմատի հետ, որը նշանակում է «ճնտել, վազել, հեղել, քափել, գահավիժել»²⁹:

9. Իժնի - Ա.Գ.Մորդումանը և Գ.Ա.Նափանցյալնը այս բառի Իժարմատը նույնացնում են զրաբարյան ḫašar «այստեղ» բառի հետ³⁰: Ի դեպ, այդ արմատից են սերում մաև Իժնի բառի մյուս հղովաձևերը. Իժնի-1 - այս կողմը, այստեղից եզակի բացառականը, Իժնի - Եժնի³¹ - եզակի ուղեորականը, Իժնի-ասի այս տեղերում հոգնակի տեղականը: Ըստ որում հիշատակված բոլոր տարբերակներում, առանց բացառության, Իժնի - այստեղ ստուգաբանությունը լիովին արդարացնում է իրեն: Օրինակ՝ ահե Իժնի zedubi «պատանի այստեղ դարձրի (զերի)», DUB-se terubi Իժնի «արձանագրություն դրի այստեղ», ^{CU} irdi ^{MES} Իժնի ašubi «կայագործներ այստեղ բռնեցի», ai giei Իժնի šidšari «ոչինչ այստեղ չի եղել կառուցված»³²:

10. ⁽¹²⁵⁾šari – սուր, մետ. այսպես ստուգաբանում ակադ. Գր.Ղափանցյանը ուրարտա-հայկական քառապաշարային այս ընդհանրությունը³⁷։ ⁽¹²⁵⁾šari-ն համընթացում է GIS շումերագրամի և ⁽¹²⁵⁾BE.LE (be₁le) ակադացրամի ուրարտական համապատասխանությունը³⁸ և նույնական է խորրհերինն šari-ի հետ³⁹։ Իսկ վերջերս Ն.Վ.Հարությունյանը բացահայտել է, որ Ռուսա II-ի Այամիսի նորահայտ և Արծկիի ու Կարմիրբլուքի KYKH, 415, 425 արձանագրություններում BE.LI SIKIL-ը հակադրված է KÜ TUKUL-kumemše-ին⁴⁰։ Հետևաբար, ելնելով այդ քատերի SIKIL KÜ մակդիրներից, հանգել է այն հետևության, որ BE.LI-ն, ակնհերևարար, համապատասխանում է ուրարտերեն ⁽¹²⁵⁾šari-ին և համընթացել է մարտական զենք (համտ. Սարդուրյան տարեգրության KYKH, 241G, տող 9 BE.LI gumšiniei-ն), իսկ KÜ TUKUL-ը կամ KÜ kumemše-ն՝ «ամենը զենք»։ Այսինքն՝ մի դեպքում մենք գործ ունենք պատերազմների օրոք մարտերում գործադրվող զենքի, իսկ մյուս դեպքում՝ արվեստի և գաղաարանքի իդենտիկ առարկայի հետ⁴¹։

11. šani – սան, «սանք – կարսա – աման»։ այսպես է մեկնաբանում – ակադ. Գր.Ղափանցյանը ուրարտա-հայկական տվյալ ընդհանրությունը։ Միաժամանակ նա մատնանշում է կարևորագույն այն կովանդ, ըստ որի Իշպուինիի և Մննուայի Կելիշինի երկրեզվյան արձանագրության իդենտիկ տեքստերում ուրարտերեն šani-ն համապատասխանում է շումերական ⁽¹²⁵⁾UTÚL-ը կամ ասորեստանյան նույնիմաստ ժգհր-ն³⁸։ Հատկանշական է, որ Կելիշինի KYKH, 30 երկրեզվյան և Միերի դամ – KYKH, 38 արձանագրություններում šani-սան-կարսան գործածվում է պաշտամունքային զոհաբերությունների պահին։ Նույնը պետք է ասել ուրարտա-հայկական amani-աման-ակիս³⁹ ընդհանրության մասին, որը պաշտամունքային աշարդությունների ժամանակ ըստ էության սերտորեն առնչվում է šani – կափսայի հետ և համարվում է մերթ ⁴²H-alđini amani «Խալդի աստծո աման», մերթ տե՛ս amani «ընծայի աման», մերթ էլ զոհաբերված կենդանու տե՛ս amani «սրտի աման»⁴⁰։

12. ⁽¹²⁵⁾pašini – պախրե, «տավար, արջատ, մախիր»⁴¹ – այսպես է ստուգաբանում ակադ. Գր.Ղափանցյանը ուրարտա-հայկական քառապաշարային այս ընդհանրությունը։ Ուրարտերեն բառը իր շումերական դետերմինատիվով համապատասխանում է շումերական G-UD-GU-ին և ասորեստանյան արքա I-ին⁴²։ Գր.Ղափանցյանի ուշադրությունը միաժամանակ զբաղել են այն փաստերը, ըստ որոնց pašini – պախրեն պահպանվել է նաև ասորական begrē – մախիրում, երրայական bēgrē – ցուլ, կով, արջատում, և արաբերեն beqara, baqra – եզ, կովում։ Ի դեպ, pašini – պախրեն հայագիտությանը հայտնի է մահ հայ բարբրատներից։ Ձեյթունը Հաննը՝ «եզ» նշանակությամբ, իսկ երևանը, ծիրկիսին և Արցախը՝ «եղջերու» իմաստով⁴³։

13. ¹²⁵սմսև – տուխ, «վայրի խաղող, խաղողի որթ»⁴⁴ – այսպես է մեկնաբանում ակադ. Գր. Ղափանցյանը ուրարտա-հայկական հնարավոր ընդհանրությունը⁴⁵: Սարգուրի II-ի КУКН, 273 արձանագրության միակ-հիշատակության համաձայն, ¹²⁵սմսև-ն նույնն է, ինչ շումերական ¹²⁵GE-ŠTIN-ը «խաղողի այգին»-ն: Ըստ որում, Գր. Ղափանցյանը հիշյալ ուրարտերեն բառը ժառն ձևով հակված է տեսնելու նաև ալթայերենում, իսկ տևի գրությամբ՝ ուտիերենում: Իսկ գիտությանը վաղուց հայտնի է նաև ուրարտա-հայկական իսխև – խաղող ընդհանրությունը⁴⁶, որը սեպագիր արձանագրություններում եփշտակվում է կենդանիների պաշտամունքային զոհաբերությունների ժամանակ ուրարտական տաճարներում մասնակիցներին նաև խաղող մատուցելու կապակցությամբ⁴⁷:

Ուրարտա-հայկական լեզվական ընդհանրությունները պայմանավորված են հինարևելյան այդ ժողովուրդների ռազմա-տնտեսական դարավոր փոխհարաբերություններով, Բ.ա. I հազարամյակում Հայկական լեռնաշխարհի լայնատարած տերիտորիայում և, ի վերջո, անգիջում – պալլարում պարտված ուրարտացիներին և՛ ֆիզիկապես, և՛ մշակութով ըստ ամենայնի տարալուծմամբ կազմավորվող հայ ժողովրդի մեջ:

SONA GRIGORIAN

(IOS)

URARTIAN-ARMENIAN LINGUISTIC SIMILARITIES IN ACADEMICIAN GRIGOR GHAPANTSIAN'S WORKS

The article discusses similarities in Armenian and Urartian vocabulary on the basis of the available material. We have paid a special attention to Ghapantsian's contribution in the field, who considers the Armenian to be a mixed origin language that incorporates also elements of the Urartian.

In the article we briefly observed common words for Armenian and Urartian in Ghapantsian's late studies and opinions.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Каланцян Г.А., Хайаса – колыбель армян, Ер., 1947, էջ 214:
2. Каланцян Г.А., նշվաշխ., էջ 214. նույնի՝ Հայոց լեզվի պատմություն (այսուհետև՝ ՀԼՊ), Եր., 1961, էջ 131-139: Дзякоўян Г.Б., Культурное наследие востока (այսուհետև՝ КНВ), Лен., 1985, էջ 369:
3. Ղափանցյան Գ.Ա., Ուրարտուի պատմությունը (այսուհետև՝ ՈւՊ), Եր., 1940, էջ 39. նույնի՝ Хайаса, էջ 215. Дзяконов И.М., КЭС, VIII, էջ 67, ծանոթ. 45:
4. Арутюнян Н.В., Корпус урартских клинообразных надписей (այսուհետև՝ КУКН), 136, հավ. կողմ, տողեր 9-10, 173, VIII, տողեր 16-17, 242 АII+АI, տող 22. 421, տողեր 45-46:

5. Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи (այլտիպիակ՝ УКН), էջ 414: König F.W., Handbuch der chaldäischen Inschriften, Archiv für Orientforschung, 1955-1967, II, էջ 210: Арутюнян Н.В., КУКН, էջ 476:
6. Salvini M., SMEA, XLIII/2, էջ 266. Եւլյի, SMEA, XLIV/1, էջ 25:
7. ՆՐՀԼ, I, Եր., 1979, էջ 8: Սեփարյան Հ., Հայերեն արձանագրանքի բառարան (այլտիպիակ՝ ՀՍՐ), I, Եր., 1971, էջ 84-85:
8. Каленция Г.А., Общие элементы между урартским и хеттским языками, Եր., 1936, էջ 52. Friedrich J., Hethitisches Wörterbuch, Heidelberg, 1952, (այլտիպիակ՝ НВb), էջ 44: Гамкрелидзе Т.В., Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы, Тб., 1984, II, էջ 897:
9. Арутюнян Н.В., КУКН, էջ 439:
10. Арутюнян Н.В., КУКН, 173, III սող 13, V, սող 4, 24, 38, 241В, սող 18, С, սող 36 և այլն:
11. Sandaljian J., Les inscriptions cunéiformes urartiques (այլտիպիակ՝ ICU), Venise, 1900, էջ 371, Դжаукян Г.Б., Урартские заимствования в армянском языке, КНВ, էջ 366:
12. Ղափանցյան Գ.Ա., ՀԼՊ, էջ 133: Ханикян М.Л., Хурритский и урартский языки, Ер., 1965 (այլտիպիակ՝ ХУ), էջ 49: Դжаукян Г.Б., КНВ, էջ 366:
13. Salvini M., Ayulis, I, էջ 254, սնկնիա II, սող 1:
14. Այլ ծափն ձանրանան տե՛ս Арутюнян Н.В., КУКН դիվանի հանապատասխան տեքստերը և անվանադրանքերը:
15. Ղափանցյան Գ.Ա., ՀԼՊ, էջ 133: Adontz N., Histoire d'Arménie, les origines du X^e siècle au VI^e (av J.C.), Փարիզ, 1946, (այլտիպիակ՝ ՈԱ), էջ 269:
16. ՆՐՀԼ, I, էջ 389, Սեփարյան Հ., ՀՍՐ, I, 15 353:
17. Дьяконов И.М., ПАС, I, էջ 409: Арутюнян Н.В., ДВ.МК, էջ 74-76:
18. Ղափանցյան Գ.Ա., ՀԼՊ, էջ 134: Adontz N., ՈԱ, էջ 268: Friedrich J., НВb, էջ 320:
19. Арутюнян Н.В., КУКН, 30, որարտերեն տեքստ, սողեր 12-13 (^ԴAldie eurie), ասորեստանյան տեքստ, սողեր 11-12 (^ԴHaldie EN) 387, որարտ.տեքստ, սողեր 13-14 (^ԴAldie eurie), ասորեստանյան տեքստ, սող 13 (^ԴHaldie EN):
20. Арутюнян Н.В., КУКН, 54, սող 5:
21. Арутюнян Н.В., КУКН, 224, 235, սող 1. 269, սողեր 1, 7.271, սող 1.283.284.-285 և այլն:
22. Այլ ծափն տես Арутюнян Н.В., КУКН, էջ 451:
23. Ղափանցյան Գ.Ա., ՈՊ, էջ 55 և ծանր. 1, Եւլյի՝ Хайаса, էջ 195 և ծանր. 2:
24. Арутюнян Н.В., КУКН, 173, IV սող 54.174 В2, սող 25.174А1, սող 20.76, սող 5-6.44, վերին կողմ, սող 7.173, II, սող 13.454.173, V, սող 12.421, սողեր 6, 16-17:
25. Арутюнян Н.В., КУКН, 173, V, սողեր 13, 17-18:
26. Арутюнян Н.В., КУКН, 421, սողեր 5-17:
27. Ղափանցյան Գ.Ա., ՈՊ, էջ 114, ծանր. 1:
28. Арутюнян Н.В., КУКН, 31, հակ կողմ, սողեր 24-25, 421, սողեր 35-36:
29. Ղափանցյան Գ.Ա., ՀԼՊ, էջ 134:

30. Mordtmann A.D., Erklärung und Entzifferung der armenischen keilinschriften von Wan, und der Umgegend, «Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft» (այլմտիշտն՝ ZDMG), XXVI, Leipzig, 1872, էջ 528: Ղափանցյան Գ.Ա., ՈւՊ, էջ 38:
31. Այդ մասին մանրամասն տես Հարությունյան Ն.Վ., Ուրարտեթիկն ինձի բարձր ստուգարանությունը, ՄԱՍԵՄ, XXIII, եր., 2005, էջ 484-494:
32. Арутюнян Н.В., КУКН, 173, III, տող 6.V, տող 80.241В, տող 24.195-196, տող 5:
33. Капанцян Г.А., ArOr, XVII, համ.1, Prag, 1949, էջ 370-371:
34. W.von Soden, , Akkadisches Handwörterbuch, I, Wiesbaden, 1965 (այլմտիշտն՝ Ahw), էջ120:
35. Haas V., OrAnt, II (1973), էջ233; Մ.Լ.Хачикян, XV, էջ 48:
36. Salvini M., Ауапа, I, էջ 257, սկզբիս IV, տող 3-4; Арутюнян Н.В., КУКН, 415, տող 4.425, տողեր 6-7:
37. Հարությունյան Ն.Վ., Ուրարտեթիկան սեպագրի կոմետիզե և ВЕ.ІІ բարձր ստուգարանությունը, ՄԱՍԵՄ, XXII, եր., 2003, էջ 201-209:
38. Капанцян Г.А., Хайаса, էջ 215, նույնի՝ ՀԼՊ, էջ 136; Джаукян Г.Б., КНВ, էջ 368:
39. Арутюнян Н.В., КУКН, էջ 434; ՆԲՀԼ, I, էջ51:
40. Арутюнян Н.В., КУКН, 193, տողեր 7, 10.415, տող 10; Salvini M., Ауапа, I, էջ 257, սկզբիս IV, տող 8:
41. Անտոյան Հ., ՀԱՐ, IV, էջ 7; ՆԲՀԼ, II, էջ584:
42. W.von Soden, Ahw, էջ38:
43. Капанцян Г.А., Хайаса., էջ 215, նույնի՝ ՀԼՊ, էջ 135; Ջախուկյան Գ.Բ., Հ-այլոց լեզվի պատմություն. մախազրային շրջան, եր., 1987, էջ 428:
44. Հ.Անտոյան, ՀԱՐ, IV, էջ 416:
45. Капанцян Г.А., Хайаса., էջ 215, նույնի՝ ՀԼՊ, էջ 135:
46. Sanderjian J., ISU, էջ 370; Мкртчян Н.А., Древний Восток, 4, Ер., 1983, էջ 27:
47. Арутюнян Н.В., КУКН, 82, տող 27.122, տողեր 2,3; Salvini M., Ауапа, I, էջ 257, սկզբիս IV, տող 10. էջ 258, , սկզբիս V, տողեր 9,11:

ԳՍՊԱՎՈՒՄՆԵՐ

ՄԱՍԵՄ – Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ
 ArOr - Archiv Orientalni (Prag)
 OrAnt – Oriens Antiquus (Budapest)
 SMEA - Studi micenei ed egeo-anatolici (Roma)
 ՆԲՀԼ – Նոր Բաղդիքը Հայկազնան Լեզուի

A II
 91340



ՀՄԱՅՆՎՅԱՆ ՀԱՍՄԻԿ
(ԱԹ)

«ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ» ՊԱՇՏԱՍՊԻՆԸ
ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐՎԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ ժողովուրդը հնագույն ժամանակներում ունեցել է հասարակային դասեր, երիտասարդական կազմավորումներ, կտրիճավորաց եղբայրություններ, որոնք խոր անցյալում նպատակ են ունեցել հասարակությանը տալ լիարժեք, առողջ, խիզախ, խելոք սերունդ¹:

Այդ կազմավորումները հայ իրականության մեջ հնագույն ժամանակներում կոչվել են «Թուխ Մամուկներ»: Այդ երիտասարդներն անցել են մի շարք փորձությունների միջով, մկրտվել են, անվանակոչվել և միայն դրանից հետո համարվել հասարակության լիիրավ անդամներ և իրավունք ունեցել ընտանիք կազմելու: Այդ ծեսերը մվիբագործական, ինիցիացիոն ծեսերն են և առկա էին շատ ժողովուրդների, ինչպես նաև հայերի մոտ:

Վերոհիշյալ հարցի ուսումնասիրողները գտնում են, որ այդ դաստիարակությունը ընթացել է հերոս նախնիների մասին սրբազան պատմությունների ավանդման, երգերի, պարերի միջոցով: Ընդ որում մեծ նշանակություն է տրվել նաև երիտասարդների ռազմական և ֆիզիկական դաստիարակությանը, ինչը պիտի նպաստեր առողջ և ուժեղ սերունդ ունենալուն:

«Թուխ Մամուկը» ամենայն հավանականությամբ վերոհիշյալ մվիբագործման շքանուն գտնվող պատանի հերոսն է: Թուխ Մամուկի սրբավայրերը ներառել են և ինչ հեթանոսական, և քրիստոնեական տարրեր՝ կապված մվիբագործության ծեսի, վիշապամարտի, ապա և հավատի մածատակների հետ²: Թուխ Մամուկների պաշտամունքը հետագայում միաձուլվել է քրիստոնեական սրբերի հետ: Ըստ Ա. Մնացականյանի, Զրիստոսն էլ յուրահատուկ Թուխ Մամուկ է³:

Թուխ Մամուկները համարվել են հերոսներ, որոնք բարիքներ են սփռել ժողովրդի համար, խակ իրենք՝ գահվել: Այս առումով «Թուխ Մամուկները» մոտենում են մեռնող-հարություն առնող աստվածություններին, և պատահական չէ, որ նրանց համարում են ոչ միայն Զրի-

ստոսի, այլ կովկասյան արևային հերոսներ Ստալան-Սուրբքոյի հետ⁴։ Այս առումով նրանք համադրելի են նաև հայկական ժայռոտ փակվող հերոս Փոքր Մեղիի և շրթայված Արտավազդի, ինչպես նաև այս բոլորին համարժեք Արա Գեղեցիկի բոտան՝ Սոսանվեր Անուշավանի հետ⁵։

Ըստ նրա, «Թուխ Մանուկներին» հետ են առնչվում նաև հայրենները։ Հայտնի է, որ միջնադարյան հայկական արհեստավորական միությունների կրիտասարդները ազատ ժամանակ հավաքվում էին խնջույքների, որտեղ զվարճանում էին, զինի խմում, ունկնդրում իրենց սիրելի քամաստեղծների և գոսանների հնարած սիրո երգերը և զվարճանում էին վարժակների պարերը դիտելով։ Հայրենների մի զգալի մասը ևս հնարված է քաղաքային ամուրի կրիտասարդների պատվերով⁶։

Փաստորեն հայրենները իրենց ծագմամբ կապվում են Թուխ Մանուկների մասին պատկերացումների հետ և իրենց յուրովի ծաղկումն են ապրել միջնադարյան Հայաստանում և տարածված էին երիտասարդ ամուրիների շրջանում։

Սակայն այսբանով չեն սահմանափակվում «Թուխ Մանուկներին» և հետագայում միջնադարյան Հայաստանում լայն տարածում ստացած արհեստավորական երիտասարդական միությունների միջև եղած բնդիանությունները։ «Թուխ Մանուկներին» մասին եղած տեղեկությունների համադրումը արհեստակցական միությունների կանոնակարգերի և սովորույթների հետ⁷, մեզ հնարավորություն է տալիս զարմանալի մոլորություններ տեսնել այս երկու երևույթների միջև։ Բերենք մի շարք օրինակներ։

Միջնադարյան համքարությունները (արհեստակցական միությունները) պարտավոր էին տոն օրերին (Շենդին և Ջատկին) փակել խանութները։ Համքարությունները տարվա մեջ ունեին իրենց մատաղի օրերը, որը նվիրված լինում իրենց արհեստի մախանորը, իսկ «Թուխ Մանուկներին» պաշտամունքը առնչվում էր նախնիների (մասնավորապես հերոս նախնիների հոգիների) հետ⁸։ Մատաղի օրը համքարության անդամները մատաղից մի մեծ կարծա փրակ էին ելնում, տանում եկեղեցում օրհնում և քաժամում աղբատներին։ Բարեկենդանի կինգչարքի օրը ներավարպետը կամ աշակերտը նվերով շնորհավորում էր վարպետի տունը։ Եժմանապես «Թուխ Մանուկներին» հետ կապված գործողությունների շարքում հիշատակվում է գոհեր մատուցելը (վերոհիշյալ մատաղի նախատիպերը), զանազան իրեր նվիրաբերելը և այլն։

⁴ Արհեստակցական միությունների, սովորույթների մասին նյութը լավագույնս նախագրված է Վ.Արքունիանի, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում գրքում, Եր., 1971։

Ամեն մի համբարություն իր մախանոր պատվին պատրաստ էր մի մասուտ կառուցել կամ որևէ եկեղեցու պահել մի կանթեղ, որը պետք է միշտ վառ մնար: Իսկ «Թուխ Մանուկների» պաշտամունքային կառույցները հիմնականում փոքր ժառուռներ էին կամ զերեզմանատիպ կառույցներ, որ ամեն շաբաթ երկեղ կատարվում էր խնկարկում, մոմավառություն և աղոթքներ, իսկ ամեն տարի այստեղ կազմակերպվում էին նաև համաժողովրդական տոներ:

Արհեստավորները մեծ նշանակություն էին տալիս իրենց դազգահներին և միշտ երթվում էին նրանով: Շաբաթ օրերը երկեղյան մոմ էին վառում և խոմկ ծխում դազգահի վրա ու «ուղորմիս»-ով հիշում «Տիրաց-Վարպետաց» հոգին⁶: Այստեղ ևս ի նայտ է գալիս Թուխ Մանուկների հետ կապված մոմ վառելու, խնկարկելու, ինչպես նաև նախնիներին մեծարելու ավարտյթը:

Արհեստակցական միությունների ավարտյթների հետ են կապվում նաև ժողովրդական-նմայական բժշկության մի շարք երևույթներ: «Թուխ Մանուկների» պաշտամունքին է առնչվում բժշկելու հատկությունը:

Եվ, վերջապես, համբարություններում հերանոսական հավատալիքների և պաշտամունքների ամենավառ ապացույթը այն է, որ ամեն մի համբարություն երկրպագում էր իր արհեստի նախահորը՝ օրինակ քյուտների նախահայրը՝ հայր Աստվածն էր, երկաթագործներից՝ Դավիթ մարգարեն, հացբոլիներից՝ Քրիստոսը:

Թամբագործների նախահայրը Սուրբ Սարգիսն էր, քանզի նա պատրաստել է թամբ, ըստ ավանդության, դրել ձիու վրա և փախցրել աղջկան: Սուրբ Սարգիսը, ինչպես նաև Քրիստոսը և Սուրբ Գևորգը առնչվում են նաև Թուխ Մանուկի պաշտամունքի հետ: Գինեգործների նախահայրը եղել է Նոյը, իսկ հյուսնեիցին՝ Սուրբ Գևորգը: Չշարունակելով թվարկումը, ասենք միայն, որ արհեստների նախահայրերի ընտրությունը, ինչպես տեսանք, պատահական քնույթ չէր կլում և խոր արձատներով կապված է հերանոսական կամ վերահիմաստավորված քրիստոնեական հավատալիքների հետ: Ավելացնենք նաև, որ XIX դ. Գյումրիում երիտասարդներին համբարությունների մեջ ընդգրկելիս մկրտում էին «Թուխ Մանուկ» հուշարձաններում⁷:

Փաստորեն միջնադարյան Հայաստանում ստեղծված և մինչև 19-րդ դարը՝ հարատևած եղբայրություններն ու արհեստակցական միությունները իրենց ծագմամբ հանգում են «Թուխ Մանուկների» ինստիտուտին:

CULT OF "TUKH MANUKS" AND MEDIEVAL ARMENIAN GUILDS

The Armenian people since the ancient times had institutions of youths, and bravemen's brotherhoods – "Tukh Manuks" that were carrying rationale to shape new coming generations as healthy, courageous and clever members of the society. At the same time "Tukh Manuks" were institutions that worshiped this or that Saint for whom they were building special sanctuaries. The sanctuaries and rituals of "Tukh Manuks" included both Christian and pagan elements. Comparing elements of "Tukh Manuks" cults with principles and traditions of guilds enables us to find surprising similarities among these phenomena. Actually origin of the brotherhoods and guilds formed in Armenia from medieval times until the 19th century can be traced back to institution of "Tukh Manuks". Also it is remarkable that values of medieval brotherhoods and guilds with very little changes were incorporated by the 19 century's Armenian guilds over the centuries.

ՇԱՆՈՑԱԳՐՈՒՅՅՈՒՆՆԵՐ

1. Ա.Մնացականյան, «Թուխ Մամուկ» հուշարձանների մասին, - «Թուխ Մամուկ» ժողովածու, Եր., 2001, էջ 108:
2. Ա.Պետրոսյան, «Թուխ Մամուկ». հնագույն ակունքները, «Թուխ Մամուկ» նստաշրջանի նյութեր, Եր., 2001, էջ 43:
3. Ա.Մնացականյան, մույն տեղում, էջ 103:
4. Ա.Պետրոսյան, մույն տեղում, էջ 36-39:
5. Կռվկաս, Սոսյան-Սոսրոզոյի, Փոքր Մեծի, Աջտափազդի և Մտամվեր Անուշավանի ընդհանրությունները տե՛ս Հ.Հմայակյան, «Մտամվեր Անուշավանն ու նրա Կռվկասյան և խոտիական զուգահեռները», Մերձավոր Արևելք, Հողվածների ժողովածու, Եր., 2005, էջ 28-35:
6. Լ.Նաչիկյան, Եղվնկա քաղաքի «Եղբրաց միաբանության» կանոնադրությունը (1280), - Բանբեր Մատենադարանի, N 6, Եր., 1962, էջ 370:
7. Հ.Հակոբյան, «Թուխ Մամուկների» պատկերազարդումը հին Հայաստանում, «Թուխ Մամուկ» նստաշրջանի նյութեր, Եր., 2001, էջ 53:
8. Վ.Ա.Արքախանյան, «Հայ համըստությունների Անդրկովկասի քաղաքներում», Եր., 1971, էջ 134:
9. Ա.Քալանթարյան, Հ.Մարգարյան, «Թուխ Մամուկ» հուշարձանների հարցի շուրջ, «Թուխ Մամուկ» նստաշրջանի նյութեր, Եր., 2001, էջ 86:

ՄԱՐՏՈՅԸ ԳՐԳԻԿ

ՀԱՅՈՑ 30-ՐԴ ՕՐԱՆՎԱՆ ԵՎ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԹԵՅՇԵԲԱ ԱՍՏԾՈ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ

Օրերից բաղկացած ամիսը հնդեվրոպական տոմարագրությունում մեջ առնչվում է լուսնի վուլերի չափումներին: Համարվում է, որ հնդեվրոպական նախալեզվի ամիսները սկզբում լուսնային են եղել, այդ պատճառով էլ համաևումը են լրճրոնվել «լուսին» և «ամիս» բառերը, որոնց նախածնը՝ **mens-*ն է: Դրա ժառանգներից են ամսկրիտ լեզվի *mā-*ը (լուսին, ամիս), պարսկական *māh-*ը, ռուսերեն *месѧ-*ը և այլն: Հնդեվրոպական նախալեզվի արմատից հայերենում մնացել է «ամիս» բառը՝ «ա» նախածայնի նավելմամբ¹:

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի համաձայն, հայոց մեջ լուսնային, այսպես կոչված «սինդային» մեկ ամիսը հաշվվել է 29,5 օրով (օրացուցայինը՝ 30): Այս թիվը 4 անգամ բաժանվում է 7 մասի, ինչից առաջացել է շաբաթվա (7 օր) գաղափարը: Մեկնկես օրվա մնացորդը համարվել է այն ժամանակահատվածը, երբ լուսինն անհետանում է երկնակամարից:

Հայկական օրացումներում 30-րդ օրը կոչվել է Գիշերավար², որը երևելոյան ծագող Վեներա մոլորակի անունն է: Համարվել է, որ նա 6 ամիս ծագում է որպես Գիշերավար (արևմուտքում) և 6 ամիս՝ որպես Արուսյակ (արևելքում)³: Դասական աստղաբաշխության մեջ Վեներայի գիշերային տունը, այսինքն՝ այնտեղ, ուր նա սկսում է ծագել արևից առաջ՝ այգարացին, Յուլ համաստեղությունն է, իսկ ցերեկայինը (որտեղից սկսած, ծագում է երեկոյան)՝ Կշեքը⁴: Այս պատկերացումը համընկնում է հայոց էփմերոտում գրանցված տվյալներին⁵: Վեներան երկսեռ աստվածություն էր, որն իր առափոյան ծագման ժամանակ իգական էր լրճրոնվում (վեղայական Ուշասը, հոռմնական Ավլոդան, հոռմնական Էոսը⁶), իսկ երեկոյան արական (հուն.՝ Հեսպեր, Ֆոսֆոր⁷): Ուրարտական պատկերագրության մեջ (Արծկնի քարձրաքանդակում) ցույի վրա կանգնած, գլխարկի վրա ցույի եղջյուրներով և աստղով է պատկերվել Թեյլերա աստվածը⁸: Էլնունայից հայտնաբերված մի քարձրաքանդակում համանման գլխարկի վրա աստղով է պատկերված Վեներա մոլորա-

կի մարմնավորում միջազնայան Իշխարը: Այստեղ սակայն նա առյուծի վրա է կանգնած⁹: Քրիստոնեական պատկերագրության մեջ գլխից անող ցլանդջութնեղով էր ընկալվում աստաման: Այդպիսի տեսք ունի նա, օրինակ, XV-XVIIրդ. խաչագի գեղամկարիչ Լ. Սիմյոնեղիի «Հակաքրիստոսի պատմությունը» նկարում¹⁰: Գիշերավաթի մասին հայ հին մատենագրության մեջ ասված է. «Ձգիշերավաթն խառարասեր՝ սկզբնաներեակ բարոյն աստուծոյ (սաղայե)»¹¹, այսինքն՝ աստաման: Քրիստոնեության մեջ Աստուծոն հակառակորդ «սկզբնաներեակ»-ը Հակաքրիստոսն է աստաման կամ աստամայից ուղարկված մարդը (Նեոթ)¹²: Իսկ Քրիստոսի հակառակորդը, հայտնի է, որ Միկր-Միթրան էր, որի դեմ պայքարի էին դուրս եկել նոր հավատքի ջատագովները:

Այն հանգամանքը, որ Արծկեի քարձրաքանդակում Յուլի խորհրդանիշերով թեյշերա-Վեներան արական սեռի է, հիմք է տալիս կարծելու, որ Վանի քաղաքագրության աստղագետներին հայտնի է եղել այն, որ արևելքում կամ արևմուտքում ծագող մոլորակը միևնույն աստղն է, այլապես ցույի վրա աստվածուհի կպատկերվեր, քանի որ Յուլ համաստեղությունը իզական Վեներայի աստեղտունն է:

Հայ րամահյուստքրոնից մեզ է հասել «Մարտիրոսի հեքիաթը» վերնագրով մի մեուշ, որը պատմում է, թե ինչպես քաղաղորն իր 30 - տղաներին անուսնացնում է մախրչու 30 աղջիկների հետ, քայց հայտնվում է երկնային վիշապը և Մարտիրոս անուվ 30-րդ տղային տանում է իր ծես: Վիշապը նրանից պահանջում է իր համար բերել Ջարգարի կնոջը՝ իր քրոջը, որը, երբ գլուխը երկկոյան դուրս է հանում պատուհանից, անբողջ քաղաքը լուսավորվում է¹³: Ջարգար-սկերիչն - այստեղ համապատասխանում է օսկե Արևի առասպելական կերպարին, գիշերը քաղաքին լույս տվող նրա կինը՝ Լուսինն, իսկ Մարտիրոսը, որի անունը քրիստոնեական իմաստով վկա, այսինքն՝ հանուն հավատքի մահատակված անձ է նշանակում¹⁴, լուսնային ամսվա 30-րդ օրն է, երբ Լուսինը «մահատակված է» («մեռած») և չի երևում երկնակամարում: Նույն Գիշերավաթ-Թեյշերան է, որ Արծկեի քարձրաքանդակում նույնպես արական է պատկերված: Հեքիաթը հին տոմարական առասպելի վերապրուկ է, որ պատմել է, թե ինչպես լուսնային 30 օրերն ամուսնացել են արևային (օրացուցային) 30 օրերի հետ: Լուսինն առասպելում արական է ընթրնվել, Արևը՝ իգական:

**ON THE MATTER OF DENOMINATION OF THE 30TH DAY'S OF THE
ARMENIAN CALENDAR AND THE ICONOGRAPHY OF THE URARTIAN
GOD TEJŠEBA**

The paper deals with the knowledge of the Urartians in the astronomical sphere, and its later developments survived in the Armenian fairy tales. Especially, the 30th day's name of the Armenian calendar – Gišeruvur, is the name of planet Venus in its male aspect, as it was known almost in the Urartian times. As it seems, the Planet Venus – Mesopotamian Ištar, in the Urartian iconography was also imagined as a male deity. It seems possible to attribute the image of the God Tejšeba in the Anake – Adilcevaš high relief to Ištar/Venus.

The paper also discusses some aspects concerning the possible parallels between the ancient Worldview and Christian ideology.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Мифы народов мира, т. II, М., 1992, с. 143. 2; с. 157-158.
2. Արշան Դ., Հին եռատր կամ հերմոսական կրօնը հայոց, Վենետիկ, 189, էջ 143-144.
3. Նոր բառգիրք հայկազնան լեզուի, հտ. I, Եր., 1979, էջ 555:
4. Саллин А. Ю., Астрологический энциклопедический словарь, М., 2001, էջ. 99, 122, 169, 179.
5. Գրգուկ, որ կոչի էֆիմբյուտ, Եր., 1992, էջ 2:
6. Мифы народов мира, т. I, М., 1991, с. 29; т. II, М., с. 551, 553, 663.
7. Гигин, Астрономия, Санкт-Петербург, 1997, II, 42; Թումանյան Բ. Ե., Հայ - ասորագիտության պատմություն, Եր., 1964, с. 166, примеч. ред. В.
8. Հմայակյան Ս. Գ., Վանի քաղաքապետության պետական կրոնը, Եր., 1990, 6, սղ. 15:
9. Мифы народов мира, т. I, М., 1991, с. 595.
10. Նոյն տեղում, էջ 86.
11. Նոր բառգիրք հայկազնան լեզուի, հտ. I, Եր., 1979, էջ 555.
12. Мифы народов мира, т. I, նշվ. աշխ., 85.
13. Հայ ժողովրդական հերիարներ, հտ. II, Եր., 1959, էջ 95:
14. Նոր բառգիրք հայկազնան լեզուի, հտ. II, Եր., 1981, էջ 231.

ՄԱՐՏՈՅԱՆ ԹԵՎԱՒԵԿ
(ԱԽ)

ԿԱՐՄԵԼՅԱՆՆԵՐԻ ԵՎ ՋՈՒՂԱՀԱՅԵՐԻ
ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներքափանցելով Իրան՝ Կարմելյան քարոզիչները ընակություն հաստատեցին Հոբմուզում, Շիրազում, Խարքում, Բուշեհրում, Համադանում, Ռանդար-Աբրասում, Նոր Ջուղայում: Սույն հոդվածով փորձ ենք կատարում քննարկման ենթարկել Նոր Ջուղայում Կարմելյանների ունեցած հաջողությունները և նորջուղայեցիների վերաբերմունքը «ճեմնակ վանականներին» (Կարմելյաններին այդպես էին անվանում ճեմնակ քիկնոց կրելու պատճառով) նկատմամբ: Կարմելյաններն առաջին անգամ Նոր Ջուղա են մտել 1625թ.: 1640-ականներից քարոզիչներն ակնհայտորեն սկսում են կենտրոնանալ Ջուղայում Տուն հիմնելու գաղափարի շուրջ:

Ոչ միայն Կարմելյանների, այլ ընդհանրապես կաթոլիկ քարոզիչների՝ Ջուղայում հաստատվելու մասին Հ. Աճեմյանը գրում է. - «Պապական նախապնդումը և կաթոլիկ քարոզիչներու արևելեան ատաքելութեան կարեւոր և խոռվայոյզ կեդրոններն մէկն ալ Նոր-Ջուղան դարձավ, ուր անոնք ոչ միայն իրենց քարոզչական գործունէութեան հիմ դրին, այլև հետագային հիմնեցին մենաստան մըն ալ ...»¹:

Կարմելյան միաբանների կողմից ջուղահայրության ընտրությունը - պատահական չէր, քանզի XVII դարում Իրանի արտաքին առևտուրը գտնվում էր հենց ջուղայեցի խաջանների ձեռքում: Ըստի խոշոր մեծաքանակ առևտրով զբաղվող այդ վաճառականական դասին ցանկանում էր օգտագործել որպես միջնուղի Իրանի քաղաքական և տնտեսական հարաբերությունները նվազապես երկրների հետ զարգացնելու համար²:

Նորջուղայեցիները համոզյալացան այն կարևոր միջուկը, որ ի զորոս եղան շենացնելու Իրանը՝ զարկ տալով երկրի արտաքին առևտրին, ինչպես նաև կաբողացան մեծապես ազդել երկրի հասարակական կյանքի վրա՝ իրենց ձեռքում կենտրոնացնելով ազգի կատախարհը: Պատահական չէ, որ Հ. Ալիշանը նրանց այսպես է քննադատում. «Ջուղայի ճարտար վաճառականք...զարմամալի՝ իր վաճառականական քարգաւանանօք և հարստութեամբ»³:

Հարկ է նշել, որ Կարմելյանները հետաքրքրված էին հատկապես այն ամձանցով, ովքեր կամ կաթոլիկներ էին, կամ ցանկանում էին կաթոլիկություն ընդունել: Օրինակ, Նոր Ջուղայի քաղաքապետ Իսդա Նազարին ոչ միայն պարսից լահն էր համակրում ու վստահում, այլև եվրոպական առաքյալները: Մտքի լրացում է հանդիսանում 1629թ. Ս. Ժողովի (հավատի քարտզի, հավատի միաբանություն) խոջա Նազարին հղած նամակի բովանդակությունը. «...Մեր Տերն եւ իմ գերածննդաւ Տեսար Զատ ուրախ եղան, որ կր գտնուի հող անձ մը, որ իրենց առաքնալներու հանդէպ ունի այնքան սէր եւ գութ...»⁴:

Բնականաբար, խոջա Նազարը հայ վաճառականների համար առանց մաքսի իրենց ապրանքների արտահանման, ինչպես նաև Հոռմուձ հայկական դպրատուն բացելու թույլտվություն հենց այնպես չէր առանա: Այս հարցի առնչությամբ Ս. Ժողովը 1630թ. հունիսի 23-ին գամարած նիստում որոշում է, որ «նայերը կարող են եկեղեցական պետութեան եւ ուրիշ քրիստոնեայ իշխաններու հողերու վրայ իրենց ծախսով կայաններ կառուցանել եւ փոխադրել հոն իրենց վաճառքները, գործեր կը ցանկան տարածել քրիստոնեայ աշխարհներու մէջ... Այս թույլտուութիւնը կ'ընդհատուի այն վաճառականներուն միայն, որոնք կաթոլիկ են եւ կամ ըլլալ կ'ուզեն...»⁵ (ընդգծումը մերն է. - Թ. Մ.):

1630թ. հունիսի 23-ին Ս. Ժողովը, անսալով ջուղահայերի խնդրանքին, որոշում է Հոռմուձ դպրոց բացել, պայմանով, որ ջուղայեցիները այդ կարևոր նախաձեռնության համար համձն առնեն զմեկ շինություն և կահավորանք⁶: Այդ պայմանների առկայության դեպքում հնարավոր էլինելու շուրջ 405 աշակերտի համար դպրոց բացել, որն, ըստ Ս. Ժողովի, մեծ ծառայություն կլիներ Աստծուն և մեծ օգուտ ողջ հայ ազգին⁷: Ջուղայեցիների հետ բանակցությունները վերոհիշյալ հարցերի հետ կապված, ըստ էության, պետք է վարեր Սպահանի նախկնտա, Կարմելյան հայր Թադրեոսը: Սակայն նրա և Մովսես կաթոլիկոսի գրեթե միաժամանակ կյանքից հեռանալը խափանեցին այդ բանակցությունները, իսկ ջուղայեցիները լռեցին:

Ս. Ժողովը որոշում կայացրեց հնարավորության սահմաններում հայերի համար սահմանափակ թվով դպրոց բացել⁸:

Նորջուղայեցի մեծահարուստ Շահրիմանյանները, կաթոլիկություն ընդունելով, դառնում են Նոր Ջուղայի հայ կաթոլիկ համայնքի պարագլուխները, որով և բացատրվում է նրանց սերտ առևտրական հարաբերությունների պահպանումը Եվրոպայի կաթոլիկ պետությունների հետ՝ արժանանալով Հոռմի Պապի և եվրոպական կաթոլիկ միապետների բարյացկամ վերաբերմունքին⁹:

Թեև գտնվեցին մարդիկ, ովքեր հարեցին կաթոլիկությանը, սակայն, ընդհանուր առմամբ, նորջուղայեցիները պայքար մղեցին կաթոլիկության դեմ՝ այդ հարցում կարևորելով հատկապես նակակաթոլիկական -

գրքերի տպագրությունը, որն, իսկապես, կարող էր ծառայել որպես արդյունավետ գործիչ կաթոլիկ քարոզչությանը դիմակայելու համար :

Այսպես, 1687-1688թթ. Ստեփանոս Ջուղայեցին իր հետևողը վանականների օգնությամբ հրատարակեց մի շարք գրքեր («Գիրք ատենական, որ ասի վիճարանական» (Ա. Ջուղայեցի), «Գիրք համատու վասն իսկապես նշմարիտ հավատո» (Հովհ. վարդապետ Ջուղայեցի Մրբուզ), - «Գիրք ընդդեմ երկաթնակաց¹⁶»), որը պատճառ հանդիսացավ կաթոլիկ քարոզիչների կողմից Ստեփանոս եպիսկոպոսի տպարանը վակելում¹⁷ սքարսից տեղափոխանքը հայտնելով, թե իբր հայերը Դարբանին հակառակ գրքեր են տպագրում¹⁸ :

Երկար պայքարից հետո, ի վերջո, 1689թ. հայերը շահից հրովարտակ ստացան և քանդեցին Կարմեյրանների եկեղեցին :

Ջուղայի բնակավայրից ոչինչ չմնաց՝ ընդամենը մի խաղողի այգի, որը երկար ժամանակ կրում էր «Կարմեյրանների այգի» անվանումը¹⁹ :

Անվտիփելով վերջաբարտրյալը նշենք, որ ջուղահայությունը, Աբբաս - Ա-ի բռնագաղթից հետո հավատում էր, որ քրիստոնյա պետությունների օգնությամբ հնարավոր կլինի ազատագրվել օտար լծից: Աշխատավորությունն օգնություն էր սպասում կաթոլիկ քարոզիչներից, իսկ վերջիններս զբաղվում էին մաև քարեգործությամբ՝ քժչական անվճար օգնություն, տատցանում, միջնորդություն հարկերի թեթևացման հարցում, սքարտքերի մարում և աղւն: (1607թ. Կարմեյրանների միջնորդությամբ ազատ է արձակվում մի քանի հայ, Պարսից ծոցի շրջանում ստրկավաճառությամբ զբաղվող պոլտուգալացիներին վճարելով 150 սկուդի փրկագում են 12 հայ պատանու, կամ երբ 1624թ. շահ Աբբաս Ա-ն որոշում է Չխարանալ գավառի 43 հայկական գյուղերի բնակչությանը մահմեդականացնել, Կարմեյրանների շնորհիվ չի իրագործվում և - նմանօրինակ շատ փաստեր²⁰): Սակայն, հասկանալով, որ դրանք ընդամենը միջոցներ են իրենց նախառակնեքին հասնելու համար, ջուղահայությունն ամուր կառույտ է իր հավատքից:

Կարմեյրանների քարոզչական աշխատանքների ծախսողման - պատճառներից գլխավորը թերևս այն էր, որ ջուղահայերն անկօտրում դիմադրություն ցույց տվեցին: Այն հետևանք էր առաջին հերթին իրենց հավատքի նկատմամբ անդրվելի մվիրավածության: Մտքի լրացում կարող է հանդիսանալ մաև Շարդնի հետևյալ վկայությամբ. «Ես խոսք չունեն նկարագրելու այն խորամանկություններն ու ծախսերը, որոնց այդ նպատակով (կաթոլիկացնելու) դիմում էր Հռոմի արքայը... Հայերը երիտաչությունից սովորում են ասել Քրիստոս, խաչակրքել երեսը և պաս պահել, շարունակելով միևնույնը և չափախա ժամանակ, նատատապես հավատում, թե միայն այդ ծեսերի կատարման մեջ է բովանդակվում և քրիստոնեության ամբողջ եւթյունը»²¹ :

THE RELATIONS BETWEEN THE CARMELITES
AND THE ARMENIANS OF NEW JULFA

The Carmelite missionaries penetrating into Iran established residences in Isfahan, Shiraz, Hurmuz, Kharg, Hamadan, Bandar-Abbas, Bushihr, New Julfa.

The paper analyses the established residence of the Carmelites in New Julfa, where the Carmelites entered in 1625 and established in 1640.

The relations between the armenians of New Julfa and the Carmelites were changed and the armenians began to struggle against the Carmelite missionaries. The church of the Carmelites ruined in 1689.

Author attempts to demonstrate that the residence of New Julfa was not fruitful, because the armenians of the New Julfa were struggling against the Carmelite missionaries.

ԾԱՆԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աճմյան Հ., Նոր - Զուղայի հայոց գերեզմանատան լատիներեն էջն տապանագիրքը, Բազմավեպ, յոմոսար-յունիս, քիի 1-6, հ. ՃԲ, Վննտիկ-Ս. Ղազար, 1944, էջ 42:
2. Բալթուրյան Վ., Հայերը և Ամանյան առևտուրը XVII դարում, Պատմա-բանասիրական հանդես, N 2 (109), եր., 1985, էջ 110:
3. Ալիշան Ղ., Հայ-Վննտ կամ յաղջնյութիինը Հայոց էի Վննտայ Ի ԺԳ-Դ էի Ի ԺԵ-Զ դարս, Վննտիկ, Ս. Ղազար, 1896, էջ 369:
4. Ալիևնան Հ. Ն., Մուխես Գ. Տարևացի կարողիկու, կյանքն և գործունեութիինը, Հանդես ամսօրեայ հայագիտական ուսումնարքեր, քիի 11,12, նոյեմբեր-դեկտեմբեր, Վիեննա, 1934, էջ 511-513:
5. Նոյն տեղում, էջ 514:
6. Նոյն տեղում, էջ 520:
7. Նոյն տեղում, էջ 521-522:
8. Նոյն տեղում, էջ 523-525:
9. Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 390, 495, 507-509:
10. Տեր- Յովհաննեսն Հ., Պատմություն Նոր Զուղայու, որ յասպսեան, Ն. Ջ., 1881, հ. II, էջ 200:
11. Նոյն տեղում, էջ 200:
12. A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, v. II, London, 1939, p. 1086:
13. "A Chronicle of the Carmelites", p. 120, 207-208, 265, 271, 1074:
14. Լեո, Խոջայական կապիտալը և նրա հասարակական-քաղաքական դերը հայերի մեջ, եր., 1934, էջ 106-107:

ՇԱՔԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ
(ԱԻ)

**ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԽՈՒՍԱՓՈՒՄԸ ԴԵՎՇԻՐՄԵՏԻՑ
(համաձայն օսմանյան փաստաթղթերի)**

Դեվշիրմեն (տղայահավաք, մանկահավաք, «սարյան հարկ») օրինականագված պարտադիր հարկ էր, որով պարբերականորեն XV-X-VII դարերում Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակներից տղաներ էին հավաքում, որոնք բռնի կերպով մահմեդականացվում էին, ապա համապատասխան ուսում ստանալով՝ ուղարկվում ժառանգության արքունիք, բանակ և այլուր կամ վաճառվում ստրկության: Արևմտյան մի շարք պատմաբանների Օսմանյան կայսրության վարչական համակարգի նկարագրման ժամանակ իրենց ուսումնասիրություններում նշում են, թե դեվշիրմեն կայսրության քրիստոնյա հպատակներին ընձեռնված քաջասիկ նմարավորություն էր հասարակ գյուղացուց դառնալ վեհաշուք մեծ վեզիր և կամ մահաճգասպետ: Իրականությունը, սակայն, այլ էր. քրիստոնյա հպատակները ոչ միայն նրգանիկ չէին հրաժարվել իրենց նրբեմն միակ որդուց, այլև որոնում էին զանազան միջոցներ հավաքից խուսափելու համար՝ չվարանելով մույնիսկ դիմել զենքի: Սա են ցույց տալիս օսմանյան արքունիքի ելից մատյանները, որտեղ ըստ տարիների գետնդված են սուլթանական վարչակարգի՝ կայսրության ներքին գործերին վերաբերող հրամանները:

Ուշ միջնադարյան ժամը պայմաններում, հաղթահարելով սովը, հիվանդությունները, եայրը պատանեկության հասակին էր հասցնում իր որդուն՝ հույս ունենալով արդեն, որ դաշտում իր համար օգնական մի ձեռք է պատրաստել: Եվ չցանկանալով համձեռն ողորմ հավաքմանց կացնող ենիչերիներին՝ նա պատրաստ էր կաշառք առաջարկել, մույնիսկ կրոնափոխ լինել՝ միայն թե պահպաներ իր գավակին: Հարկատուները դիմում էին դեվշիրմեի դեմ պայքարելու ամեն մի միջոցի՝ օրինական ու ապօրինի:

Օրինական միջոցների շարքին են պատկանում առաջին հերթին փոքրահասակ տղաների ամուսնությունները: Եվրոպացի ճանապարհորդ Գեյրլախը գրում է. «Տղաներին ամուսնացնում են 9-10 տարեկան հաս-

ակում, որպեսզի մնան ազատ ու չհավաքվեն»¹: Ամուսնացածներին զրամցում էին հարկատուների ցուցակի մեջ: Որոշ մայրեր հուսահատությունից հաշմանդամ էին դարձնում իրենց որդիներին, որպեսզի նրանց չկորցնեն առհավետ²:

Ավելի ծանախ ծնողները թաքցնում էին իրենց զավակներին, երբ հայտնվում էին դեվչիլոմն հավաքող պաշտոնյաները ենիչերիների ուղեկցությամբ: Նրանց թաքցնում էին անտառներում, լեռներում, քարանձավներում և այլուր³: Ղրա մասին վկայում են թե՛ նկրտակահամ, թե՛ օսմանական աղբյուրները, օրինակ սուլթանական հրահանգները, որտեղ տեղական իշխանություններին հրամայվում է պայքարել թաքցնելու դեմ ու պատժել մեղավորներին⁴: Իշխանությունները ֆանասիքարար ի կատար էին ածում այսօրինակ հրամանները: Դաժանության վառ օրինակ է բերում արքեպիսկոպոս Մարինո Բիդին, որն այցելել է քուղարական գյուղեր ու քաղաքներ 1610-1611թթ.: Կոնգրեզացիային իր զեկույցում նա տեղեկացնում է, որ 1610թ. Չիպուլոնց քաղաքում էր գտնվում Սոֆիայի կաթոլիկ եպիսկոպոս Պետր Սոլիմատը, որը թաքցրել էր քրիստոնյա երեխաներին հավաքողներից: Քաղաք ժամանած սանջաքելը եղյվել էր սպանել մախ և ասաջ եպիսկոպոսին, ապա բռնկված քրիստոնյաներին ու քուղին էլ զրկել սեփականությունից: Թյուրքերն արդեն սկսել էին պատրաստել ցիցերը, սակայն ժողովրդին հաջողվեց կաշառքի օգնությամբ գլուխն ազատել⁵:

XVI դարի կեսով քվազրված մի հրամանում, որն ուղղված է Նիդոնի բնյին ու քաղիին⁶, պատվիրվում է հավաքել Էփոանի գյուղի զինմի⁷ քնակիներին, որոնք լքել են գյուղը տղայաժողովից խուսափելու համար. «Թող վերադարձվեն գյուղ ու հավաքվեն հավաքի ենթակա տղաները»⁸:

Կամ շատ դեպքեր, երբ քրիստոնյա դնտանիքները դիմադրել են դեվչիլոմն հավաքին: Այսպես, 1580թ. Հերցեգովինայի սանջաքի⁹ Գահիլյեններից¹⁰ մեկում գյուղացիները զենքը ձեռքին դուրս են եկել սուլթանական պաշտոնյաների դեմ, որոնք դեվչիլոմն հավաք էին անցկացնում: Սանջաքի ղեկավարին ուղղված հրամանում հրամայվում էր ձերբակալել սաղրիկներին ու դատապարտել թխապարտության¹¹:

Հիջրայով 973թ. (1565-1566թթ.) քվազրված և Խչրասանի բնյին ուղղված սուլթանական հրամանը պահանջում է որպես խրատ մյուսներին պատժել Բեզընչքե գյուղի քնակչությանը դեվչիլոմն հավաքից վերադարձող ենիչերիների վրա հարձակում կատարելու համար¹²:

Իսկ Խոսեմոյեթիյեի բնյին ուղղված հրամանից պարզ է դառնում, որ Իփեք քազայում¹³ դեվչիլոմն հավաքելու եկած պաշտոնյային տեղի բնակչությունը չի ենթարկվել ու հարձակվել է նրան ուղեկցող ենիչերիների վրա¹⁴:

Մի շարք հրամաններում Բարձր Դուռը արտահայտում է իր դժգոհությունը դեվլիթմենների փախուստի կապակցությամբ, որոնք փախուստի էին դիմում արդեն հավաքողների ձեռքն անցնելուց հետո: Օրինակ, Քաջսերիքի քաղաքի բնիկն ու քաղիին ուղղված հրամանում նշվում է, որ փախուստի են դիմել դեվլիթմեններն* արդեն այն քանից հետո, երբ նրանց տարել են Ստամբուլ ու մահմեդականացրել¹⁰: Որպեսզի քարոզելի փախուստը, հրաման է տրվում Ամատոլիայում* հավաքվող տղաներին ուղարկել Ռումելիա* և հակառակը¹¹: Ենթադրվում էր, որ քրիստոնյա տղաները, որոնք որպես կանոն չէին տիրապետում քյուրքերեն լեզվի (հիշեցնենք նաև, որ քյուրքերենի իմացությամբ տղաներին չէին էլ հավաքում), պետք է ջանան տուն գնալ, սակայն կեանդիպեն ճանապարհին մի քարոջ անցանելի արգելքի՝ ծովին, ուստի նրանց հեշտ կլինի բռնել: Սակայն, ի հեճուկս սպասվող վտանգների, շատ դեվլիթմեններ փախչում էին և այդ գործում հաջողածները կրկին դառնում էին քրիստոնյա: Իշխանությունները պահանջում էին ծնողներից վերադարձնել դեվլիթմեններին: Այդ հրամանին չամսալու հետևանքով ծնողներին դաժանորեն պատժում էին ու նույնպե վաճառում ստրկության¹²:

Այսպես, 1564թ. Սիս քաղաքի քաղիին ուղղված հրամանում ասվում է, որ ձեքե գյուղի հավաքվածների ազգականները, զաղտմի կերպով Ստամբուլում դեվլիթմենների շրթերը փոխելով, հետ են քերել արդեն մահմեդականացման ծեսն անցած 7 տղաների ու եկեղեցում քրիստոնեությանը վերադարձման ծես են կատարել: Այս անգամ ևս Բարձր Դուռը պահանջում էր խստագույնս պատժել «մեղավորներին»¹³:

Չնայած դաժան ճնշումների գեյրալներն այնուամենայնիվ փորձում էին դիմել փախուստի: Փախչողները հիմնականում 15-20 տարեկան տղաներն էին: «Ամեն տարի քեթխադաները* բռնում էին այդ դեվլիթմեններին Ռումելիայում ու Ամատոլիայում»¹⁴: սակայն փախուստները չէին դադարում: Դրա մասին են վկայում սուլթանների քազում հրամանները՝ ուղղված տեղական իշխանություններին¹⁵:

Հայրենիք փախչելու հույսը դեռ երկար տարիներ չէր մարում երևաասարդ դեվլիթմենների մոտ: Երանց մի մասը նույնիսկ մի քանի տարի հետո չէր վարանում փախչել հայրենիք հնարավորության դեպքում¹⁶: Այսպես, Եմիլիեիի քաղիին հրամանից պարզ է դառնում, որ Տընուվա գյուղից Իլյասի որդի Եիլյանն ու Քուրդի որդի Նիկոն, լինելով արդեն աքեմի օղլան, փախել են հայրենիք կերպասագործի մոտից, որին տրվել էին որպես օգնական՝ չակիլը¹⁷: Իսկ մեկ այլ սուլթանական հրամանից տեղեկանում ենք, որ աքեմի օղլանը հայրենիք է փախել, վերադարձել քրիստոնեությանը, ամուսնացել ու զավակներ ունեցել, հավաքագրվելուց արդեն 7 տարի հետո¹⁸:

Դեվշիրմե համակարգի մասին վերոհիշյալը քերտւմ է այն համոզման, որ այն ամենևին էլ չէր ուղղում կամ հպատակ քրիստոնյաների կողմից: Դեվշիրմեն չէր դիտարկվում որպէս բարիք, այլ ընդհակառակը՝ քրիստոնյաների մեղքերի համար Աստու կողմից ուղարկված ծանր պատիժ: Պատահական չէ, որ սլավոնական ժողովուրդների մտք դեվշիրմեն կոչվել է «արյան խարկ»:

ARTAK SHAKARYAN
(IOS)

**DEVSHIRME EVASION OF THE OTTOMAN POPULATION
(ACCORDING TO OTTOMAN DOCUMENTS)**

Devshirme (boy-tribute, "blood tax") was a legal periodic tribute that was collected from the Christian subjects of the Ottoman Empire in 15-17th centuries. The Christian subjects were forced to give their boys to the government as a special form of tribute. The collected boys were Islamized by force. Then, being given some particular education, the best of them were sent to the palace, army or elsewhere. The rest were sold as slaves. A number of Western historians mention this practice with admiration when describing the Ottoman administrative system. They insist that Devshirme was a brilliant opportunity for the Christian subjects when an ordinary peasant could have become a solemn Grand Vizier or a governor. The reality was not like that. The Christian subjects were looking for every mean to evade from the Devshirme, not avoiding even taking up arms. This is shown not only in the medieval manuscripts of the historians of those days but also in the Ottoman state registers.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Герлах С., Дневник на едно пътуване до Османската порта в Цариград, Подбор, превод, увод и коментар Киселинчева М., Предговор и редакция Цветкова Б., София, 1976, с. 179;
2. Георгиева Ц., Развитие и характер на кръвния данък, с. 65 մերթնւմ ըստ Новичев А., К истории рабства в Османской империи, Тюркологический сборник 1976, М. 1978, с. 95;
3. 7 numaralı mühimme defteri (975-976 / 1567-1569), c.1, Ankara, 1998, s. 18;
4. Uzuncarşılı, İ., Osmanlı devlet teşkilâtından kırıkulu ocakları, I, Ankara, 1943, s.105;
5. Новичев А., նշվաչխ., էջ 95-96;
6. Քաղի՝ դատավոր;
7. Ջիհնի՝ այն ժողովուրդները, որոնք ծանոթ էին Սուրբ գրքին մախրամ Վարանի ի հայտ գալը;
8. 3 numaralı mühimme defteri (966-968 / 1558-1560), c.1, Ankara, 1993, s. 113;

9. Սանջար՝ վիլայիթից փոքր վարչատարածքային միավոր Օսմանյան պետությունում: Համաձայն Էվլիյա Չելեբիի Ռումելի վիլայիթը բաղկացած էր 24, իսկ Անատոլիայի վիլայիթը՝ 14 սանջարից:
10. Նաեիլի՝ սանջարից փոքր վարչական միավոր Օսմանյան կայսրությունում: գավառակ:
11. Սունգարլի, Լ., Karikulu ocakları, s.21, 104;
12. 5 numaralı mühimme defteri, s. 161;
13. * Քազա - վարչատարածքային միավոր, ավելի փոքր, քան սանջարը:
14. 5 numaralı mühimme defteri, s. 159;
15. * Դեվլիթմեներ՝ նույնանուն ինստիտուտով հավաքազբված տղաներ:
16. 6 numaralı mühimme defteri (972 / 1564-1565), c.1, Ankara, 1995, s. 314, 138;
17. Անատոլիա՝ այս եզրն օգտագործելիս ի նկատի ունենք Հայկական քարձրավանդակի աթևոտյան մասն ու Փոքր Ասիա քերակղզին:
18. Ռումելի՝ Օսմանյան կայսրության՝ Եվրոպա աշխարհամասում գտնվող տարածքների անվանումը: Բառացիորեն «հույների երկիր»:
19. Սունգարլի, Լ., Karikulu ocakları, s.26; Սունգարլի, Լ., Devşirme, İslam Ansiklopedisi, İstanbul, 1940, cilt 3, s. 565 ;
20. Носичев А., Աշվ.աշխ., էջ 96;
21. 5 numaralı mühimme defteri, s. 302; Носичев А., Աշվ.աշխ., էջ 96;
22. * Քերթսուդա՝ մեծ վեճերի օգնականներին տրվող անուն: Ընդհանուր իմաստով հարուստ կամ եզր մարդկանց գործերն անող, կատարածու:
23. Սունգարլի Լ., İslam Ansiklopedisi, Devşirme, s. 565 ;
24. Սունգարլի, Լ., Karikulu ocakları, s.125-128; 12 numaralı mühimme defteri (978-979 / 1570-1572), c.3, Ankara, 1996, s. 143, 165;
25. 7 numaralı mühimme defteri (975-976 / 1567-1569), c.1, Ankara, 1998, s. 463; 12 numaralı mühimme defteri, s. 45 ;
26. 3 numaralı mühimme defteri (966-968 / 1558-1560), c.1, Ankara, 1993, s. 654;
27. 12 numaralı mühimme defteri, s. 156.

ԱՆՈՒՑՅԱՆ ՄԵԻՆԵ
(ՀՅԹԻ)

ՄԵԾ ԵՂԵՈՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՕՍՄԱՆՅԱՆ «ԱԼԵՄՒԱՐ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ (1919 թ.)

Հայոց ցեղասպանության փաստագրման առումով առանձնահատուկ կարևորվում են օսմանյան աղբյուրները, որոնց շարքում նշանակալի տեղ է զբաղում տվյալ ժամանակաշրջանի բուրքական մամուլը:

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի կրամ պարտությունից հետո, պատերազմական տարիներին հարկադրյալ լուրջուն պահպանած օսմանյան մամուլը սկսեց ակտիվորեն քննարկել հայոց տեղահանությունը, կոտորածները, դրանց կապակցությամբ հարուցված դատական գործերը, դատավարությունների ընթացքը և այլ հարակից խնդիրներ, որոնց մասև սուր վիճարանությունների առիթ դարձան բուրքական տարբեր օրաթերթերի միջև¹: Հայոց ցեղասպանության խնդրի հանդեպ մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում հատկապես «Ալեմդար» («Դրոշակակիր») օրաթերթը:

«Ալեմդարը» հրատարակվել է Ստամբուլում 1912-1921թթ.²: Օրաթերթի պատասխանատու խմբագիրն էր Բեֆի Ջևադ Ուլունայը, իսկ տնօրենը՝ Ահմեդ (Փեռլիվան) Քադրին: Օրաթերթի 1918-1921թթ. տպագրված եզակի համարները պահպանվում են Թուրքիայի Ազգային մեծ ժողովի գրադարանում³: 1919թ. սույն օրաթերթում տպագրված հայոց կոտորածներին վերաբերող հոդվածների մեջ առանձնահատուկ հիշատակության է արժանի օրաթերթի գլխավոր խմբագիր Բեֆի Ջևադ Ուլունայի հոդվածաշարը⁴:

«Ալեմդարի» գլխավոր խմբագիրը հայոց կոտորածներին, ինչպես մաս, դրանց վերաբերյալ հարուցված դատական գործերին անդրադարձող իր առաջնորդողներում հատկապես շեշտում էր երիտբուրքերի դատաքննություններն արագ իրականացնելու և հանցագործներին անմիջապես պատժելու անհրաժեշտությունը: Փետրվարի 14-ին տպագրված «Տեղահանության և կոտորածների կապակցությամբ» վերնագրով հոդվածում նա իր մտահուզությունն էր արտահայտում այն փաստի կապակցությամբ, որ Թուրքիան հայոց կոտորածների դատաքննություններն -

իրականացնում էր հարկադրված, և որ դատավարությունների շարժառիթ էր ծառայել ոչ թե արդարության վերականգնումը, այլ քննամեներ Լեյուպայի առջև արդարադատ երևալու ցանկությունը. «Երկիրը, կամա թե ակամա, մի քայլ կատարեց դեպի արդարադատություն: Այն, զավոք, կոչում ենք հարկադիր քայլ, քանզի, չզիտես թե ինչու, մեր երկրում բոլոր իրավական, տնտեսական և հասարակական միջոցառումների համար որևէ ազդեցիկ շարժիչ ուժի կարիք է զգացվում. այլ կերպ չենք կարողանում»⁵:

Եւոյն հողվածում Ջևաղն ընդգծում էր հայոց կոտորածների զանգվածային բնույթը. «Կատավարությունը, տեղահանության և կոտորածների խնդրո կապակցությամբ, դատարանին հանձնեց երեքից-հինգ - հոգու: Մի՞թե խնդիրն այդքանով ավարտվում է: Ինչպե՞ս կարելի է տեղահանությունն ու կոտորածները սահմանափակել նման շրջանակում»⁶:

«Ալեմդարի» խմբագիրը իր հողվածներում արագ գործելու կոչ էր անում հայոց կոտորածները քննող ռազմական արտակարգ առյանին: «Վերոհիշյալ հողվածում Ջևաղը գրում էր. «Ներկայումս ընթացող դատավարությունը՝ շատ ծանրաքայլ է առաջ գնում: Այդ մարդիկ (իսրիհատականները-Մ.Ա.) արտակարգ արագությամբ գործեցին: Ինչու՞ նույնպեսի արագություն չի ցուցաբերվում արդարադատության իրականացման դեպքում»⁷:

Փետրվարի 20-ին հրապարակված «Ինչպե՞սի»⁸ են եղել ուղեկառքի - ձիերը» հողվածում Ջևաղը շեշտում էր այն համզամանքը, որ Յոզղատի դատավարության մեղադրյալներից Յոզղատի մութասարրիֆի տեղակալ, Բուրազլյանի կայմական Մեհմեդ Քեմալը, ոճրագործ լինելով համղերձ, ընդամենը մի գործիք էր եղել Հայոց ցեղասպանության հեղինակների՝ գլխավոր պատասխանատուների ձեռքում, իսկ վերջիններս ոչ - միայն դեռ չեն պատժվել, այլև նույնիսկ չեն էլ կաղանավորվել. «Ո՞վ է Քեմալ քեյլը. եթե ճշմարտությունը որոնելու լինենք, այն քաղկացած կլինի արյունոտ մի կացնից: Արդարադատությունը պետք է կտրի այդ կացնից գործել տված ձեռքը, իսկ այդ ձեռքերը, այդ ուղեղները դեռ ազատ շրջում են մեր մեջ»⁹:

Եւոյն հողվածում Ջևաղը գրում էր. «Մեր առաջին իսկ հրապարակումներում ընդգծում էինք, որ կատավարությանը (երկտարրերի-Մ.Ա.) պատժելու համար կարիք չկա հետաքննության: Ոճրագործությունը հայտնի է, պատիժն էլ պատրաստ: Խնդիրը պատժի արագ կիրառման մեջ է:

...Մահմուդ Շեֆքեթ փաշայի սպանության¹⁰ հեղինակների դատաքննությունը սահմանափակվեց մեկ միտով: Մենք դեռ զբաղված ենք Քեմալի հանցավորությունը հաստատող վկաների փնտրտուքով: Հասկացանք, ամբողջ աշխարհն էլ համոզվեց, որ այդ մարդը կատարել է - տվյալ սմիթները: Ուրի՞շ ինչ ենք որոնում: Ինչու՞ խնդրին ժամ առաջ վ-

երջ շնք տալիս: Տեղահանության և կոտորածների դեպքերը իրփիսատականների հեղինակած ամենագազրելի, մինչև այժմ չսված իրադարձություններն են: Պատգամավորների պալատում մեկը բղավում էր, - թե այդ ազգին (հայերին-Մ.Ա.) կործանել է տալու մինչև վերջին շունչը: Եւ, մեղքեր գործելուց դեռ չկշտացած, ազատ շրջում է երթ այս դատողները փաստացի մարդասպաններ են, ապա իրական մարդասպաններն այստեղ են. քանձուկներով լի վայրի ուղեղները գտնվում են մեր շքբապատում: Ինչու՞ են նրանց նորանոր աղետներ նախապատրաստելու հնարավորություն տալիս»¹¹:

Ջևադը, նույն եղվածում անդրադառնալով դատարանի՝ խնդիրը - ձգձգելու ցանկությանը, գրում էր հետևյալը. «Լակիսանցյալ օրը տեղի ունեցած դատական նիստի ընթացքում ակամատես կղանք (դատարանի նախագահի-Մ.Ա.) տեղակալներից մեկի տված տաքօրինակ հարցին: Հետաքրքրվում էր, թե ի՞նչ գույն, ի՞նչ ձև ունեին հեմալի նստած ուղեկառքի ճիւղերը: Այդ հարցին պատասխան կտանք մենք.

-Ուղեկառքի ճիւղերը վիշապի տեսք ունեին, իսկ դրանց գույնը՝ ալյան:

Երբ դատարանը դա յարձանագրի, կարծանագրի պատմությունը»¹²:

Մարտի 28-ի համաբում տպագրված «Տեղահանության և կոտորածների դատավարությունները» հուղվածում Ջևադը, կոտորածների դատաքննությունները շքբան առ շքբան իրականացնելն անարդյունավետ գտնելով, առաջարկում էր խնդրի լուծման իր տարբերակը. «...Դատավարության՝ Յոզդատին վերաբերող հատվածն ավարտվելու է, ապա սկսվելու է Տրասպիզոնի խնդիրը, այնուհետև՝ Դիարբեքիյը և այլն, և այլն: -Քանի որ տեղահանություն և կոտորածներ եղել են Օսմանյան կայսրության քաղաքիս վիլայեթներում, դե՞ պատկերացրեք՝ երբ կավարտվեն դրանք ամբողջությամբ»¹³: Այդ դեպքում անհրաժեշտ է որևէ քանական, - օրինական և տրամաբանական եք գտնել: Այդ ելքը կա: Ավելի ճիշտ, այն ընկալում ենք ոչ թե որպես եք, այլ միակ օրինական ճանապարհը, որին մինչև այժմ էլ պետք է հետևած լինեինք: Տեղահանություններն ու կոտորածները կրում են համընդհանուր քնույթ: Այնտեղ չենք համարում այն որպես քաղիայը ընկալելը: Երբ ռազմական առյանը, գործը երկարացնելով, հույս ունի մի ամբողջ շարք գաղտնիքներ քացանայտել, ապա այդ տեսակետը ևս քննադատության չի դիմանում, քանզի տեղահանությունն ու կոտորածներն այն հանցագործություններն են, որոնք և՛ հայտնի են, և՛ հաստատված, և՛ ապացուցված: Այդ իսկ պատճառով առանձին-առանձին հետաքննություններն անհրաժեշտ չենք գտնում: Պետք է կազմակերպել մի դատավարություն, որը կլինի հասարակական խայցի հիման վրա: Խնդիրը պետք է լուծվի ընդհանուր դատավճռով»¹⁴:

Ինչի Ջևադը չչեղում էր մաև կոտորածների խնդրում բոլոր իրփիսատականների՝ մեղքի բաժին ունենալու հանգամանքը, այդ քվում և նրանց, ովքեր, տեղյակ լինելով հանդերձ, չեն միջամտել. «Ավագա-

կախճից (նկատի ունի «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը-Մ.Ա.) շատ քիչ թվով մարդ ենք ճանաչում, որ տեղահանության և կոտորածների խնդրում չունենա իր մտքի բաժինը: Այդ - ոճիրները գործողները մեղավոր են, դրանց գործիք եղողներն էլ են մեղավոր, լուրջում պահպանողները նույնպես: Տեղափոխությունը և կոտորածները «Միություն և առաջադիմություն» կուսակցության երբևէ խաղացած ամենահասարակու ողբերգությունն էր: Աճեմար է երկրի ամուսից չտխրել, մարդկության ամունից այն չատել: Լուրջում, սպանիչ կերպով լուրջում պահպանելը մի՞թե նույնպիսի ռճըր չէ, որպեսին կոտորելն է: Նույնիսկ տեղին չէ հարցնել, թե դրանց դեմ ինչ կարելի էր ծեռնարկել, քանզի ավելի հեշտ կլիներ հրաժարվել, քան սեփական հասնոզմունքներին հակառակ գործել: Նրե այդ վճռական, այդ հաստատական քայլը կատարած լինեինք, երկիրն այս օրին չէր հասնի»¹⁵:

«Ալեհոյարի» խմբագիրը ապրիլի 9-ի համարում տպագրված «Ն» պատասխան մի պաշտպանության» հոդվածում քննում էր հայոց կոտորածների կանխամտածված բնույթը, մտահոգազողի և կատարողի միասնական լինելը. «Եմքարդիներ» որևէ մեկը հանցագործություն է կատարել: Բնականաբար, չենք կարող այդ ոճրագործությունը նշուքած ուղղել ու ի կատար ածած ձևըրը միայնացից բաժանել: Դա ո՛չ օրենքը թույլ կտա, ո՛չ էլ բանականությունը: Նրե Բեհանդդին Շաքիրը, ողբերգություններ հղացած ուղղել էր¹⁶, ապա Քեմալ քեյն ու իր հանցակիցները այդ ուղղելի յառագործությունները մախապատրաստող ձեռքերն էին: Օրենքը ձեռքն էլ է կտրում, ուղղել էլ՝ հանցցում»¹⁷:

Բե՛լի Ջևադը մարտի 23-ի համարում երապարակված «Ջեվահիր-ջյան էֆենդու խոսքերը» հոդվածում պատերազմի տարիներին թուրքական դատարանների՝ անմեղ հայերին դատելու և դատապարտելու օրինակներ էր բերում. «Նրք գտնվում էինք Չորումում, ծանոթացանք մեր հայ հայրենակիցներից մեկի հետ, որը ցմահ քանտարկության դատապարտվելուց հետո արքարվել էր այնտեղ և մի կերպ էր օձիքն ազատել մահից: Պետրոս Փափագյան անունը կրող այդ մարդու մոտ նստաներ էին հայտնաբերել: Բուրասյի դատարանը, ոչ թե հանցագործության համար պատիժ, այլ պատժի համար հանցագործություն որոնելով, նուռայի բովանդակությունը որակել էր որպես հայկական քայլերգ: Նրք Պետրոս էֆենդուն դատարանում հարցաքննում էին նստաների առնչությամբ, նույն պահին դրանում զինվորական նվազախումբը հենց այդ երաժշտությունն էր նվագում, սակայն նույնիսկ սույն հանգամանքը չէր օգնել մեր խեղճ հայրենակցին»¹⁸:

Նույն հոդվածում մտավորականը նշում էր հայերի՝ Օսմանյան կայսրության զարգացմանը բերած նպաստը, ընդգծում ցեղասպանության պատճառներից մի քանիսը՝ ճախանճը քաղաքակրթված հայ ազգի նկատմամբ, հայերի ինչքը յուրացնելու մտադրությունը. «...Իբրիհատ-

ականները սարսափելի հարձած հասցրեցին արդյունաբերության, - ժամանակակից զարգացման մեջ շատ առաջ գնացած այդ ազգին: - Անկրթները էր հազեցնել ավազակախմբի սոված անդամներին: Պահուստային ֆունդերը, վազմանային կողոպուտները, չարաշահումներն այլևս չէին բավարարում: Անկրթները էր կողոպուտի միջոցով հազեցնել ավազակախմբի ստոր խավին: Այդպես էլ վարվեցին, սակայն այդ կողոպուտի շահույթը (հայ-Մ.Ա.) ազգի արյունը, հոգին, ավելի ճիշտ - գոյությունն արժեցավ: Միմյուր հայերը այս երկրի երաժշտությանը քուրքերի չափ, գուցե և բորքերից ավելի շատ են ծառայություններ մատուցել¹⁹:

«Ալեմդարի» խմբագիրը, որպես հայոց ողբերգությունների - ակամատես, «Ի պատասխան մի պաշտպանության» հողվածում հայ ազգի հանդեպ իրականացված բռնությունների օրինակներ էր բերում. «...Նման աղետալի տեսարանի մեկ ուրիշ անգամ էլ են հանդիպել, երբ դուրս էինք գալիս Հավգայից²⁰, հանդիպեցինք գաղթականների մի քարավանի: Երկանիվ սայլեր լցված այդ խեղճ մարդիկ տեղավախվում էին - ժամդարմների՝ առնամակի պես շառաչող մտրակների ողնկցությանը: Մի պատանի, սարսափելի նյարդային զրաճգությունների մեջ ցնցվելով, իրեն սայլից ցած նետեց: Այդ անկումն այնքան ամապասեղի եղավ, որ սաղում գտնվող ծնողները չկարողացան պահել իրենց ստամած սրտուն: Ժանդարմը մտեցավ, մտրակով ուշքի բերեց երեխային և սայլը նետեց: Մի փոքր անց մեկ ուրիշ զրաճգություն նույն անկմամբ և նույն օղաքմանով՝ ավարտվեց: Այնժամ մայեցի այդ սզավոր քարավանին, որ մտնեում էր՝ փոչու ամպ տարածելով ընդարձակ դաշտերի վրա, և այն տղայի հորն աւ մորը, չէին լալիս, քանի որ համակերպվել էին վշտին»²¹:

Ապրիլի 10-ի համարում տպագրված «Ի՞նչ ենք ասում, ի՞նչ ենք ուզում» հողվածում «Ալեմդարի» խմբագիրը, կասկածի տակ առնելով կուտրածների՝ փոխադարձ լինելու մասին վարկածը, շեշտում էր, որ հայոց կուտրածները տեսել էր սեփական աչքերով և գրում էր որպես ակամատես. «Կրկին օրակարգում է տեղահանության և կուտրածների խնդիրը: Ասվում է՝ այն փոխադարձ է եղել: Մեր առարկությունը վերաբերում է մակ փոխադարձ եղած լինելուն: Ասում են, իբր հայերը բռնարարքներ են գործադրել խաղաղ բնակիչների հանդեպ: Գրում ենք՝ - ասում են, իբր, քանի որ նրանց արածը չենք տեսել մեր սեփական աչքերով: Այնինչ հայերի հանդեպ կատարված բռնությունները տեսել ենք - անմամբ»²²:

Խմբագիրը սույն հողվածում ևս շեշտում էր ոճրագործներին ըստ արժանվույն պատժելու անկրթներությունը. «Ընդամենը արդարություն ենք պահանջում մեր հողվածներով: Այդարություն ասելով՝ ի նկատի ունենք՝ բռնությանը համարժեք պատիժ: ...Այսօր քաղաքակիրթ աշխարհն ու մարդկությունը չեն կարող անտարբեր մնալ պատուված ա-

դիրենքի, համված աչքերի, զնգիված ուղեղների հանդես: Չի կարելի մեծ հայրենասեր համարել այդ ողբերգական տեսարանների հեղինակներին: Միակ բանը, որ պարտավոր ենք անել, մի ողջ ժողովրդի դեպի քնազնջում տարած մարդասպաններին պատժելն է»²⁷.

Ապրիլի 11-ի համարում հրատարակված «Մայրահեղություն արդարության մեջ. ձեռքակալություններ, ազատ արձակումներ» հոդվածում Ջևադը, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայոց կոտորածները կրել էին համատարած բնույթ, առաջարկում էր այդ գործով կազմակերպել ընդհանուր դատավարություն, որը կանցներ Օսմանյան կայսրության տարբեր հարատակներից բաղկացած հանձնաժողովի նախորդության նկրտ. «Քանի որ հանցագործները կիմնականում մեղսակից են եղել միմյանց, ապա առանձին-առանձին դատական պրոցեսների կազմակերպումն ավելորդ հոգս է: Կարելի է նույն հանցագործության համար մեղավորներին միասին դատել, տարբեր հարատակներից կազմել հանձնաժողով, և հանձնաժողովի «մեղավոր է» կամ թե «մեղավոր չէ» - խոսքերից հետո անմիջապես դատավճիտ կայացնել: Այդ կերպ լիովին բավարարված կլինի թե՛ նվրուպական և թե՛ օսմանյան հասարակայնությունը»²⁸.

Այսպիսով, «Ալեմդար» օրաթերթի խմբագիր Բեֆի Ջևադ Ուլունայի հոդվածաշուն բերված վկայությունները մեկ անգամ ևս ապացուցում են, որ Առաջին աշխարհամարտի ընթացքում Օսմանյան կայսրությունում հայ ազգի դեմ ուղղված գործողությունները՝ հարածանքներն ու կոտորածները, կանխատեսվել, նախապատրաստվել և իրականացվել են իրար հետևողական կատավարության կողմից, դրանք կրել են ոչ թե տեղական կամ մասնակի, այլ համատարած բնույթ: Ջևադն իր հոդվածներում շեշտում էր երիտթուրքական կատավարության՝ հայ ազգին մինչև վերջին շունչը քնազնջելու մտադրությունը, ընդգծում՝ հայ ազգի կործանումը, մտահոգացողի ու իրականացնողի միասնական լինելը, կարևորում՝ Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուներին՝ հեղինակներին, անմիջապես պատժելու անհրաժեշտությունը: Թուրք մտավորականը նշում էր, որ հայոց զանգվածային կոտորածներն ապացույցների կարիք չէին զգում. դրանք այն հանցագործություններն էին, որոնք և՛ հայտնի էին, և՛ ապացուցված, և՛ հաստատված: Ջևադն ակիտսանքով էր զրույն, որ հայոց տեղահանմանությունն ու կոտորածները քննելու և դատավարտելու շարժառիթ էր հանդիսացել ոչ թե արդարամտությունը, մի ամբողջ ազգի քնազնջման ցավը, այլ ընդամենը՝ Նվրուպայի աչքում արդարադատ երևալու ցանկությունը: «Ալեմդար» օրաթերթի խմբագիրը մատնանշում էր քաղաքակրթված հայ ազգի՝ Օսմանյան կայսրության զարգացմանը թերած նպաստը, Հայոց ցեղասպանության պատճառներից մեկը՝ հայ ժողովրդի ունեցվածքը կողոպտելու և յուրացնելու ցանկությունը: Ջևադը կասկածում էր կոտորածների երկկողմանի լինելը, գրում,

որ հայ ազգի ողբերգությունը տեսել էր անձամբ: Քանի որ «Ալեմդարի» խմբագիրը, մտավորական լինելով համդերձ, նաև հայոց կոտորածների անմիջական ակամատեսն էր, նրա վկայությունները կրկնակի արժեք են ձեռք բերում:

Եվ հենց իր «Ալեմդար» օրաթերթի խմբագիր Բեֆի Ջևադ Ուլումայի - խոսքերով ասած՝ նրն անգամ վերոնշյալ վկայությունները շարժանագրվեցին էլ բուրբակաճան քաղաքական արտակարգ առյուծմաների կողմից, դրանք արձանագրեց պատմությունը:

MELINE ANUMYAN
(MIAG)

EVIDENCES IN OTTOMAN DAILY "ALEMDAR" (1919) CONFIRMING THE ARMENIAN GENOCIDE

Ottoman sources are playing an essential role for the documentary argumentation of Armenian Genocide. Turkish media of the concerned period is crucial in this regard.

After Turkey lost in the First World War, Ottoman media, which was forcibly silent during the War, started to discuss actively the deportation and massacres of Armenians, the judicial procedures, trails and other connected issues.

Turkish daily "Alemdar" was especially focused on Armenian Genocide.

Series of articles written by chief editor of "Alemdar" on Armenian Genocide printed in 1919 is worth of particular interest. In these articles author proves that Armenian massacres and pogroms in Ottoman Empire during First World War were programmed and implemented by the government of Young Turks and had massive character.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Şin'ü Taser Akşam, İnsan hakları ve Ermeni sorunu, İmge kitabevi yayımları, 20-02, s.397.
2. Գրիկերը (Գրիգոր Կեղեկեչյան) «Ալեմդար» օրաթերթը բնորոշում է օրպես կիսապաշտոն օրաթերթ, Բարձր Դոսան և սուլթանական պալատի քամերեր: - Տե՛ս Գրիկեր, Եղգղատի հայաստպանութեան վաճկերագրական պատմութիւնը, Լիւմ Երոք, 1980, էջ 12:
3. Meydan Larousse B0y0k Luşt ve ansiklopedi, birinci cilt, İstanbul, 1985 s.296.
4. Բեֆի Ջևադը ծնվել է 1890թ. Դանասկոստում: Հայրը՝ Ալի Մուհիդդին փաշան, եղել էր Անկարայի նահանգապետը: Բեֆի Ջևադը 1909թ. Գալաթասարայի լիցիւն ավարտելուն պես աշխատանքի է անցնում «Մամիլե» («Արձագանք») և «Իրդամ» («Ուռաշքմբաց») օրաթերթերում: 1912թ. հիմնում է «Ալեմդար» օրաթերթը: Իր քաղաքական հայացքների պատճառով իրրիեռատականների կողմից արտրվում է Սիմոպ, Օրդում և Կոնիա: Ստանբուլ վերադառնալուց - անմիջապես հեռու վերսկսում է «Ալեմդարի» իրատարակումը: Քննադական -

չարժան դեմ հողվածներ գրելու պատճառով 1922թ., այս անգամ քեմալականների կողմից, արտաքսվում է երկրից: 1938թ. համաներում ստանալով՝ վերադառնում է Թուրքիա: 1953-1968թթ. թղթակցել է «Յենի սաթան» («Նոր առավոտ») և «Միլլիյեթ» («Ազգ») թրաքերթերին: Դեղի Ջաղղ մահ մի քանի-գեղարվեստական տեղեկագրությունների, այդ թվում՝ վեպերի հեղինակ է («Ալիբրակների մեջ», «Օրագույցով կամխատեսված փոքրիկներ», «Լեռների արքան», «Մեկ տրիչ աշխարհ» և այլն): Տե՛ս նշվ. աշխ., on ikinci cilt, Istanbul, 1985, s. 418.

5. Refi Cevad, Tehcir ve taktik münasibetiyile, Alemdar, 14 subat, 1919.
6. Նույն տեղում:
7. Խոսքը վերաբերում է Յոզղատի դատավարությանը:
8. Refi Cevad, նշվ. աշխ.:
9. Refi Cevad, Arabanın beygirleri nasıl imiş?, Alemdar, 20 şubat, 1919.
10. Մահմուդ Շեքերե փաշա-սաղրազամ (վաղապետ) երիտթուրքերի ժամանակաշրջանում, սպանվել է 1913թ.:
11. Refi Cevad, նշվ. աշխ.:
12. Նույն տեղում:
13. 1919 թ. րուրական ռազմական արտակարգ ատյանները քննել են հայոց տեղաբնակչությանը և կոտորածներին վերաբերող 29 տարբեր դատական գործից: Այդ մասին տե՛ս՝ Tamer Akcam, Ermeni tabusu aralarken diyalogten başka çözümler var mı?, Istanbul, 2002, s.87-92
14. Refi Cevad, Tehcir ve taktik muhakemeleri, Alemdar, 28 mart, 1919.
15. Նույն տեղում:
16. Փաստորեն, «Ալիեդարի» խմբագիրը տեղյակ էր, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության գաղափարախոս Բեհաեդդին Շարիֆն էր հատուկ կամակերպությունը հիմնականում քանտերից ազատված հանցագործներով կազմելու գաղափարի հեղինակը: (Տե՛ս Մելլան Ջառեմ Դիշաթ, Օսմանեան յեղափոխության մութ ծայրերը և իթթիհատի հայազինք ծրագիրները, Պեյրոթ, 1968, էջ 113-118):
17. Refi Cevad, Bir müdafaa karşısında..., Alemdar, 9 nisan, 1919.
18. Refi Cevad, Cevahirciyan efendinin sözleri, Alemdar, 23 mart, 1919.
19. Նույն տեղում:
20. Հավա-գյուղ Սամսունի հարավ-արևմուտքում:
21. Refi Cevad, Bir müdafaa karşısında..., Alemdar, 28 mart, 1919.
22. Refi Cevad, Ne diyoruz? Ne istiyoruz?, Alemdar, 10 nisan, 1919.
23. Նույն տեղում:
24. Refi Cevad, Adalette ifrat! Tevkifler, tahiyeler, Alemdar, 11 nisan, 1919.

ԱՐՇԱԿՅԱՆ ԳՐԻԳՈՐ
(Ա)

ԹՈՒՐԹԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱԸՆՈՒԹԲԻԼԻՍԻ-ՉԵՅՀԱՆ ՆԱՎԹԱՍՈՒՂԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Հայաստանի համար Բաքու-Թրիխսի-Ջեյխան նավթամուղի շուրջ Խեռաքրքրությունը կարելի կլիներ սարսափած համարել այն պահից, երբ Խաստատվեց դրա՝ Հայաստանի Հանրապետությունը շրջանցող երթուղին: Մակայն այդ երթուղին ներառեց մեր երեք հարևաններին՝ քացառությամբ Իրանի՝ նավթամուղը փաստացիորեն վերածելով Հարավային - Կովկասի ամվտանգության օղակի: Կասպիական ավազանն աշխարհի ամենամեծ նավթի և գազի հանքեր և պաշարներ ունեցող վայրերից մեկն է: Խորհրդային Միության փլուզումից հետո ԱՄՆ-ը, Արևմտյան Եվրոպայի երկրները և Թուրքիան սկսեցին ակտիվորեն քննարկել Կասպիական էներգետիկ ռեսուրսներն Արևմտյան շուկա հասցնելու և այդ կապակցությամբ մի նոր՝ Ռուսաստանին այլընտրանքային նավթամուղ կառուցելու հարցը: Նոր նավթամուղ կառուցելու համար քննարկվում էին մի քանի տարբերակներ: Երջանառվում էր իրանական տարբերակը, - համաձայն որի նավթամուղը Կասպից ծովից Իրանի տարածքով պետք է հասներ Պարսից ծոց: Այս մախազծի իրականացման դեպքում այն կլիներ ամենակարճ ուղին, սակայն Իրանը մի շարք պատճառներով արևմտյան ներդրողների համար անցանկալի գործընկեր էր համարվում: Արևմտյան ներդրողները լրջորեն մտախոզված էին Իրանում իշխող կոմսապետական կասապությունից և վարած քաղաքականությունից, Իրանի միջուկային ծրագրից և ըստ էության էական ազդեցություն ունեղ մակ Միացյալ Նահանգների գործունը, որն Իրանի նկատմամբ մի շարք պատժամիջոցներ էր կիրառում: Մա էր պատճառը, որ արևմտյան ներդրողներն սկսեցին ավելի լուրջ ուշադրություն դարձնել Միջերկրական ծովի թուրքական հատվածին, և ի վերջո քննարկություն կատարեցին հոգուտ այդ մախազծի: Նախատեսվում էր նավթամուղն անցկացնել Հարավկովկասյան երեք հանրապետություններից երկուսի տարածքով: Այն սկիզբ պետք է առներ Ադրբեջանից, այնուհետև պետք է անցներ կամ Վրաս-

տանի, կամ էլ Հայաստանի տարածքով: Սակայն Հայաստանի տարրերակր Աղբյուրների և Թուրքիայի համար անընդունելի էր՝ քաղաքական երեք հիմնական պատճառներով՝

1. Լեռնային Ղարաբաղի հակամարտության չուժված լինելու փաստը,

2. Թուրքիայի և Աղբյուրների միջև առկա սերտ կապերի հետևանքով Թուրքիան փակել էր Հայաստանի հետ իր սահմանները,

3. Հայաստանի և Թուրքիայի միջև առկա էր քաղաքական լարվածություն Հայոց Տեղապահության հարցի շուրջ:

Անստիճան էր հիմնական պատճառը, որ չլրջանառության դրվեց Բաքու-Թրիլիսի-Ջեյհան երթուղի՝ որպես քաղաքականապես ամենամալարակահարմարը հիմնական գործընկերների համար, քնն այն ամենաերկար երթուղի ունեցող և ամենաբանկարժեք մախազիժն էր:

Թեև Թուրքիան ունի շատ մալարակառուցող ռազմավարական դիրք, քանզի գտնվում է Արևելյան Եվրոպայի, Ռուսաստանի, Կովկասի և Մերձավոր Արևելքի խաչմերուկներում, ունի մեծաքանակ հանքային պաշարներ և դինամիկ զարգացող բնակչություն, սակայն Թուրքիան դեռևս ունի երկարաժամկետ ռազմավարական սպառնալիք՝ դա էնեթրգետիկ կախվածությունն է: Թուրքիայի ներկայիս կախվածությունը ներկրվող էներգետիկ աղբյուրներից կազմում է մոտ 65%: Սպառվում է, որ գալիք երկու տասնամյակներում այս ցուցանիշը հասնելու է մոտ 75%-ի: Որպեսզի ինչ-որ կերպ կանխեն այս զարգացող սպառնալիքը, Թուրքիայի քաղաքական գործիչները մախազը տասնամյակում մեծ - ցանկություն հայտնեցին լիովին օգտագործել երկրի ռազմավարական - դիրքի առավելությունները: Լավ հասկանալով, որ էներգետիկ տրամապորտային ուղիների վերահսկողությունը մոյճբան կարևոր է, որքան էներգետիկ պաշարների վերահսկողությունը, նրանք սկսեցին մեծ ուշադրություն դարձնել Թուրքիայի՝ երրևից իրականացրած ամենակարևոր մախազներից մեկի՝ Բաքու-Թրիլիսի-Ջեյհան մալարակառուցողի վրա: Արևմուտքը պլանավորել էր ստեղծել այսպես կոչված "Արևելք-Արևմուտք Տրանսպորտային Միջանցք", որը Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի մալարի և գազի խանցարկայրերը կմիացնեի Արևմտյան Եվրոպայի շուկաների հետ:

Նորիդրային Միության փլուզումից և Աղբյուրների անկախացումից - հետո Թուրքիան հսկայական ջանքեր էր գործադրում որպեսզի Կասպիական տարածաշրջանի մալար Բաքու-Թրիլիսի-Ջեյհան ճանապարհով հասնի համաշխարհային շուկա: Այդ կապակցությամբ Թուրքիան սկսեց քանակցություններ վարել Աղբյուրների հետ: 1993թ. Անկարայում ստորագրվեց Բաքու-Թրիլիսի-Ջեյհան մալարակառուցող կտրուցման վերաբերյալ աղբյուրնա-բուրջական առաջին համաձայնագիրը:

1994թ. ապրիլի 20-ին Ադրբեջանի ազգային նավթային ընկերության «SOCAR»-ի և օտարերկրյա նավթային ընկերությունների Կոնսորցիումի՝ «AIOC»-ի միջև կնքվեց համաձայնագիր Ազերի-Չիրազ-Գյումեշլի նավթահանքերի ուսումնասիրման և շահագործման վերաբերյալ: Թուրքական TPAO ընկերությունը նույնպես իր 6.75% բաժնետոմսերով համընթացում է AIOC Կոնսորցիումի անդամ:

1994թ. սեպտեմբերի 20-ին Ազերի-Չիրազ և Գյումեշլի նավթահանքերի շահագործման վերաբերյալ Ադրբեջանի կառավարության և օտարերկրյա կազմակերպություններից կազմված Միջազգային Կոնսորցիումի միջև կնքվեց այսպես կոչված «Դարի պայմանագիրը»: Միջազգային կոնսորցիումի անդամներն էին ռուսական Lukoil, ամերիկյան «Amoco», «Exon», «Unocal», քիտառական «British Petroleum», նորվեգական «Statoil», ճապոնական «Inocho» և Ադրբեջանի ազգային նավթային ընկերություն՝ «SOCAR» ընկերությունները: 30-տարով կնքված պայմանագրի համաձայն՝ մախատեղովում էր արտահանել 540 մլն. տոննա նավթ: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում էր մոտ 9 միլիարդ դոլլար:

1994թ. փետրվարին Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը 80 հոգանոց պատվիրակությամբ այցելեց Թուրքիա: Թուրքիայում անցկացրած բանակցությունների ընթացքում Թուրքիայի և Ադրբեջանի դեկավարները քննարկեցին մի շարք հարցեր: Կողմերը ձևաք բերեցին համաձայնություն ադրբեջանական նավթահանքերի շահագործման քննազավատում թուրքական նավթային ընկերությունների ավելի ակտիվ ներգրավվածության հարցի վերաբերյալ:

1995թ. հոկտեմբերին Թուրքիայի վարչապետ Թամազ Չիլլերը այցելեց Վրաստան, որտեղ նա հայտարարեց. «Մենք պայմանավորվել ենք Վրաստանի տարածքով նավթի տեղափոխման հարցի շուրջ: Թուրքիան այդ նախագիծը ներկայացրել է բոլոր շահագրգիռ կազմակերպություններին ու կողմերին և նախագիծը լավագույնն է ճանաչվել»: Թուրքիայի նախաձեռնությամբ 1998թ. մայիսի 15-ին Թուրքիան, Ադրբեջանը և Վրաստանը ստորագրեցին «Փոխըմբռնման Հուշագիրը», համաձայն որի յուրաքանչյուր երկրում ստեղծվելու էին Աշխատանքային խմբեր:

1998թ. հոկտեմբերի 29-ին Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը, Թուրքիայի նախագահ Մուլեյման Դեմիրելը, Վրաստանի նախագահ Էդուարդ Շվաբդիմաձեն, Վազախտանի նախագահ Նուրալուքան Նազարբաևը և Ուզբեկստանի նախագահ Իսլամ Բարիձովը ստորագրեցին Անկարայի հուլակագիրը: ԱՄՆ Էներգետիկայի նախարար Բիլ Ռիչարդսոնը դեռտրդի կարգավիճակով նույնպես ստորագրեց այս Հուլակագիրը: Համաձայն հուլակագրի՝ մասնակից կողմերն իրենց

աջակցությունն էին հայտնում Բաքու-Թրիխի-Ջեյհան մախազեդին՝ որպես հիմնական մավթամուղ՝:

Վերոհիշյալ Աշխատանքային խմբերի աշխատանքների արդյունքում 1999թ. նոյեմբերի 18-ին Թուրքիայի մախազահ Սուլեյման Դեմիրելը, Ադրբեյջանի մախազահ Հեյդար Ալիևը և Վրաստանի մախազահ Էդուարդ Շեվարդնաձեն ԵԱՀԿ Ստամբուլյան զազաթնաժողովում ստորագրեցին «Ղախազդի Միջկառավարական Համաձայնագիր»: ԱՄՆ մախազահ Բիլ Էշինթոնը նույնպես ստորագրեց այս համաձայնագիրը՝ որպես դիտորդ: ԱՄՆ մախազահը ավելի ուշ մշել է, որ այս համաձայնագիրը ծանդիսացել է «1999թ. արտաքին քաղաքականության բնագավառում իր ամենակարևոր ձեռքբերումներից մեկը»¹⁷: Այսպիսով Բաքու-Թրիխի-Ջեյհան մավթամուղի կառուցմամբ շահագրգիռ կողմերին հաջողվեց իրականացնել մեծ մասամբ քաղաքական այդ մախազեդը, քանի որ հենց քաղաքական նկատառումները գլխավոր դեր խաղացին ամենակարևոր կրթուղի ունեցող և ամենաբանկարժեք մախազդի՝ Բաքու-Թրիխի-Ջեյհան մավթամուղի ընտրության մեջ:

Ինչ խոսք, Թուրքիան րազմաթիվ աշխարհագրադարձական և տնտեսական պատճառներով շահագրգռված է Բաքու-Թրիխի-Ջեյհան - մավթամուղի գործարկմամբ: Թուրքիան հույս ունի մավթամուղի գործարկումից հետո տարեկան 140-200 միլիոն դոլար ստանալ տրանզիտից և շահագործումից, իսկ 16 տարի հետո մավթամուղից իր եկամուտները եասցնել մինչև 300-400 միլիոն դոլարի: Թուրքիան, օգտվելով իր աշխարհագրական նպաստավոր դիրքից, հույս ունի ոչ միայն էլ ավելի անրապնդել տնտեսական և ռազմական համագործակցությունը - Ադրբեյջանի և Վրաստանի հետ, որը քույլ կտա Թուրքիային ուժեղացնել իր ազդեցությունը հարավկովկասյան տարածաշրջանում, այլ նաև օգտագործել այն Եվրամիության հետ շարաքերություններում: Այսպիսով, Թուրքիան մախատեսում է մավթամուղի վերջնական շահագործումից հետո ստանալ ոչ միայն տնտեսական քավականին մեծ եկամուտներ, - այլ նաև, օգտագործելով իր աշխարհագրական նպաստավոր դիրքը, քաղաքական և ռազմավարական գերակա դիրք գրավել տարածաշրջանում: Ուստի, անկասկած Թուրքիան կանի հնարավոր ամեն ինչ, որպեսզի իր վերջնական ավարտին հասցնի Անկարայի՝ երթևիցի իրականացրած ամենակարևոր մախազեդերից մեկը՝ Բաքու-Թրիխի-Ջեյհան մավթամուղի կառուցումը:

THE ACTIVITY OF TURKEY DURING THE PROCESS OF
CONSTRUCTION
OF BAKU-TBILISI-GEYHAN PIPELINE

Turkey's current dependence on imported energy sources amounts to 60 percent. This percentage is expected to grow during the coming two decades up to 75. In order to prevent somehow this developing threat, the Turkish politicians expressed during the last decade their big wish to use thoroughly the advantages of their strategic location. Understanding very well that the control over energy transportation routes was as important as the control over energy resources, they started paying great attention to one of the most important projects ever realized by Turkey, that of the Baku-Tbilisi-Ceyhan pipeline. Turkey had planned to create a so called "East-West Transport Corridor" which would connect the Central Asian and South Caucasian oil and gas wells to Western European markets. Turkey expects not only to receive quite big economic revenues after the final launching of the pipeline, but also, using its advantageous geographical location, to take a dominant political and strategic position in the region. Therefore, it was not by mere chance that Turkey did everything possible to bring the Baku-Tbilisi-Ceyhan pipeline construction, to its final completion.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Middle East economic digest, 15.06.1994.
2. Hurriyet, 22.04.1994.
3. Бакиров В., Рахметов Н., Турецкий марш на трубе с нефтью // Профиль, 1997, № 42, с. 27.
4. Независимая Газета, 11.10.1995.
5. www.btc.com.tr
6. Zaman, 30.10.1998.
7. www.silkroadstudies.org, Zeyno Baran, The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline: Implications for Turkey, 10.07.2003.

**ԳԵՆՈՐԳՅԱՆ ԳՈՌ
(ԱԽ)**

**ԵԳԻՊՏՈՍՈՒՄ 2005Թ. ԿԱՅԱՑԱԾ ՆԱԽԱԳԱՀԱՎԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՈՒՐՋ**

20-րդ դարի վերջին արաբական աշխարհը հայտնվեց որակապես նոր գլոբալ գործընթացների հորձանուտում: Մի կողմից այն պայմանավորված էր արաբական երկրներում օրյեկտիվորեն հաստատագրված ճեղքի գործընթացներով, մյուս կողմից՝ միջազգային հարաբերություններում լայն բաժի ստացած գլոբալականացման գործոնով, ինչը նկատի է առնում արևմտյան ժողովրդավարական ինստիտուտների ներդրման փորձերը Արժավոր Արևելքում:

Արաբական աշխարհում զարգացման ժամանակակից մոդելի կարևորագույն բաղկացուցիչն է քաղաքական համակարգի արդիականացումը, ինչն իր հետ բերում է հարաբերական դեմոկրատական գործընթացներ: Այդ շրջանակներում արաբական աշխարհում հարաբերական ժողովրդավարական օրինակ կարող է համոզիսամալ 2005թ. սեպտեմբերին Եզիպտոսում կայացած մախազահական ընտրությունները:

2005թ. սեպտեմբերի 7-ին Եզիպտոսում առաջին անգամ անցկացվեցին մախազահական այլընտրանքային ընտրություններ, որոնց արդյունքում հաղթանակ տարավ երկրի գոյծող մախազահի 77-ամյա Մուհամմեդ Հոսնի Մուբարաքը¹, որի օգտին քվեարկել էին ընտրության մասնակիցների 88,5 տոկոսը, այսինքն մոտ 6,3 մլն մարդ²: Եզիպտոսում մախազահական այլընտրանքային ընտրությունները հնարավոր եղավ անցկացնել միայն 2005թ. մայիսի 25-ին պետության սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն անցկացնելուց հետո³, ինչը հնարավորություն էր ընձևտում Եզիպտոսում գործող կուսակցություններին մախազահի թեկնածուներ առաջադրել: Համաձայն սահմանադրական այդ փոփոխությանը, սկսած 2011թ. մախազահական ընտրություններին թեկնածուներ առաջադրելու իրավունք կունենա միայն այն կուսակցությունը, որն առնվազն հինգ տարիների ընթացքում եզիպտական պառլամենտում կապահովի պատգամավորական մանդատների 5 տոկոսը⁴: 2005թ. օգոստոսի 11-ին Եզիպտոսի ընտրական քարձրագույն կոմիտեն նրապարակեց մախազահական թեկնածուների ցուցակը, հետևյալ կազմով.

1. «Ազգային դեմոկրատական» կուսակցությունը՝ առաջադրել էր Մուսամբեդ Հոսեի Մուրարաքի թեկնածությունը,

2. «Բուրբա» կուսակցությունը՝ Այման Նուրի³,

3. «Սոցիալական համերաշխության» կուսակցությունը՝ Ռաամա Շալտուտի,

4. «Եզիպտոսի արարական սոցիալիստական» կուսակցություն՝ Վահիդ ալ-Աբսարիի,

5. «Դեմոկրատական դաշնություն» կուսակցություն՝ Իբրահիմ Թուրքի,

6. «Ալ-Ումմա» կուսակցություն՝ Ահմեդ աա-Սարահիի,

7. «Ազգային համաձայնության» կուսակցություն՝ Ռիֆատ ալ-Աղլուդիի,

8. «Եզիպտոս-2000» կուսակցություն՝ Ֆաուզի Գազալի,

9. «Նոր Վաֆդ» կուսակցություն՝ Նուաման Գոմհաաի,

10. «Սոցիալ-սահմանադրական» կուսակցություն՝ Մամբուտ Թեմնաուի⁴:

Ընտրությունների ընթացքում Մուրարաքի հիմնական հակառակորդներն էին «Բուրբա» կուսակցության առաջնորդ Այման Նուրը, որը հավաքեց ընտրողների ձայների 7,6 տոկոսը (540 հազար ձայն), և «Նոր Վաֆդ» կուսակցության առաջնորդ Նուաման Գոմհաան, որը հավաքել էր ընտրողների ձայների 2,7 տոկոսը՝ ավելի քան 208 հազար ձայն: Մնացած յոթ թեկնածուները միասին վերցրած հավաքել էին 2 տոկոս: Փաստենք, որ 2005թ. հուլիսի 14-ին նախագահական ընտրություններին իր թեկնածությունն էր ներկայացրել մահ Տալաաթ Սաալաթը՝ Եզիպտոսի սրբանված նախագահ Անվար Սաալաթի գաղմիկը: Նա հանդիսանում է ընդդեմադիր «ալ-Աիրաբ» կուսակցության նախագահը⁷:

Նշենք, որ ներկայումս Եզիպտոսում գործում են շուրջ 19 քաղաքական կուսակցություններ:

Հակառակ այն հանգամանքին, որ ընտրարշավի և ընտրությունների ընթացքում թեկնածուների և ընտրողների համար ստեղծվել էին բարենպաստ պայմաններ, այդուամենայնիվ, ընտրություններին մասնակցել էին ընտրողների ընդամենը 23 տոկոսը, այսինքն՝ 32 մլն ընտրողներից ավելի քան 7,3 մլն մարդ: Համեմատական կարգով նշենք, որ 1999թ. անցկացված նախագահի թեկնածության հաստատման համարաքվեին Մուրարաքին ձայն էին տվել ընտրողների 93,79 տոկոսը, ինչը խստում է այն մասին, որ եզիպտական քնակչությունը, ձգտելով ներքաղաքական կյանքում որոշակի փոփոխությունների, միևնույն ժամանակ դրսևորում է այդ նպրոցում որոշակի պասիվություն:

Եզիպտոսում այլընտրանքային նախագահական ընտրություններ անցկացնելու համզամանքը արդեն իսկ ներքաղաքական կյանքում մեծ առաջընթացի վկայություն է: Մակայն պետք է նշել, որ այդուամենայնիվ, եզիպտական հասարակության ներսում ընթացող մի շարք գործը-

նթացները և առկա սոցիալ-քաղաքական կարգավիճակը դեռ ենթադրություն չեն տալիս խոստելու դեմոկրատական ընտրությունների անցկացման մասին¹։

Եզիպտոսում անցկացված այլընտրանքային նախագահական ընտրություններն այն քանի վկայությունն էին, որ բե՛ հզիպտական հասարակությունը և բե՛ կառավարությունը հակված են համընթաց քայլեր կատարել, որոնք համահունչ են միջազգային հարաբերություններում տեղի ունեցող ժողովրդավարացման գործընթացին։

GOR GEVORGYAN
(IOS)

ABOUT PRESIDENTIAL ELECTIONS IN EGYPT 2005

At the end of 20th century the Arab world appeared in the influence of global processes - giving way to a gradual modernization of political systems. This new reality was expressed in presidential elections in Egypt (2005, September) first time being organized in alternative way. In result of the election among 10 candidatures won 77 years old Hosni Mubarak - the president of Egypt since 1981. The elections witnessed about gradual democratization of political system in Egypt and the readiness of Egyptian society to participate in socio-political processes.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Мамед-Заде П.Н., Об итогах первых альтернативных выборов в Египте, www.iimes.ru Եզիպ. որ Հոսնի Մուրարացը Եզիպտոսի նախագահի պաշտոնը գրադնցում է 1981թ. հոկտեմբերից, նախագահ Անվար Սադատի սպանությունից հետո: Սկսած 1982թ. հունվարի 26-ից Մուրարացը Եզիպտոսում ներկայումս իշխող Ազգային դեմոկրատական կուսակցության նախագահն է: Մանրամասն տես՝ *Арабская республика Египет*, М., 1990, с. 238.
2. Մեռ 80 մլն. բնակչություն ունեցող Եզիպտոսում ջնտրական իրավունքից օգտվում են ընդամենը 32մլն. մարդ, որոնցից մտտ 20 մլն. երկրում իշխող Ազգային-դեմոկրատական կուսակցության անդամներն են: *Мамед-Заде П.Н.*, նշվ. աշխ., տես՝ www.iimes.ru
3. Եզիպտոսի գործող սահմանադրությունը ընդունվել է 1971 թվականին: *Stu՝ Арабская республика Египет*, М., 1990, с. 223.
4. Куделев В., О ситуации в Египте, маѳ, 2005, տես՝ www.iimes.ru
5. Հարկ է նշել, որ այս բեկնածուն շփումներ ունի աներիկյան վարչակազմի որոշ շրջանակների հետ: Այժման Նուրի կուսակցության ղեղըն մարմնագույն է: Երբ Նուրին 2005 թ. ձեռքակալել էին Եզիպտոսում մեղադրելով փաստաթղթերի կեղծման մեց, որպես բողոքի ակցիա, ԱՄՆ-ի պետարտոդար Կոնդոլիզա Ռայսը հետաձգեց 2005 թ. գարնանն իր նախատեսվող այցելությունը Եզիպտոս:

6. Мамед-Заде П.Н., Внутривполитическая ситуация в Елиште накануне президентских выборов, август, 2005, isbn' www.imes.ru
7. Кудалев В., О ситуации в Елиште, сентября, 2005, isbn' www.imes.ru
8. Օրինակ մախազահական ընտրություններին շին թուրքաթվել ներկա լինել միջազգային դիտարդներին, բայց ինչպես եզրատուի ներսում գործող Մարդու իրավունքների ու պաշտպանության ազգային խորհրդի մախազահ Բուրուս Դաշմ է մշտն, ընտրությունները անցկաթվել էին շննդրատական ձևով:

ԳՈՒՄԱՆԱԿԱՆ ԱՐՁՈՒՐ
(ԱԻ)

ԹՈՒՐԹԻԱՅԻ 1980 Թ. ՈՒՋՄԱԿԱՆ ՀԵՂԱՇԻՋՄԱՆ
ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՇՈՒՐՋ

1980 թ. ուսզմական հեղաշրջման անհրաժեշտության հիմնավորման որպես գլխավոր կողմաներ՝ հեղաշրջման հեղինակների կողմից նշվում էին քրդական անջատողականությունը, երկրի սոցիալական ճգնաժամը, ահաբեկչությունը, մեղրադարական ճգնաժամը, ժախ շարժման գործունեությունը և այլն¹: Սույն հողվածում կանդաղադատմանը ռազմական հեղաշրջման այն պատճառներին, որոնք, մեր կարծիքով, վճռորոշ նշանակություն ունեցան զինվորականության միջամտության համար:

Ահաբեկչությունը 1970-ական թթ. վերջերին

1970-ական թթ. վերջերին Թուրքիայում ահաբեկչությունն աննախադեպ ծավալների էր հասել, որի գլխավոր նախաձեռնողներն էին աջ և ձախ ծայրահեղականները: 1980 թ. ռազմական հեղաշրջման նախօրեին Թուրքիայում կային շրջաններ, գյուղեր, քաղաքներում՝ քաղամասեր, որոնք ամբողջությամբ կամ մասնակի գտնվում էին կա՛ն աջ, կա՛ն ձախ ծայրահեղականների վերահսկողության ներքո: Նրանց միջև ընթացող պայքարը կարելի է քննրագրել որպես չհայտարարված քաղաքացիական պատերազմ: Եվ եթե ձախ ծայրահեղականները քաժամված էին խմբավորումների, որոնք Թուրքիայի ապագայի մասին ունեին տարբեր պատկերացումներ, ապա աջ ծայրահեղականները ղեկավարվում և վերահսկվում էին Ազգայնական շարժում կուսակցության (ԱԿԿ) կողմից և նամայնքված էին կուսակցության հիմնադիր ու առաջնորդ Ա. Թյուրքեշի պանքյորքիստական գաղափարախոսության շուրջ²:

Պատկերն ամբողջացնելու համար նշենք մի քանի վիճակագրական տվյալներ. 1978 թ. Թուրքիայում ահաբեկչության զոհ է դարձել 879³, 1979-ին՝ մոտ 1200, իսկ 1980 թ. առաջին 8 ամիսների ընթացքում (մինչև սեպտեմբերի 12-ը)՝ ավելի քան 2000 մարդ⁴:

Ահաբեկչության աղիքի ընդլայնումը հնարավոր եղավ կանխել միայն ռազմական հեղաշրջման միջոցով:

Իսլամական շարժումը Թուրքիայում և Ազգային փրկության կուսակցության գործունեությունը

1970-ական թթ. իսլամական շարժումը Թուրքիայում ներկայացնում էր Ազգային փրկության կուսակցությունը (ԱՓԿ): Ծնարած 1977 թ. խորհրդարանական ընտրություններում ԱՓԿ-ի ստացած քվեների քանակը (8.5%՝ 24 պատգամավոր)⁵ նվազել էր 1973 թ. ընտրությունների (11.9%՝ 48 ներկայացուցիչ)⁶ համեմատ, 70-ականների վերջերին այն դեռևս չափունակում էր մնալ հզոր ուժ Թուրքիայում:

Հարկ է նշել, որ քննարկվող ժամանակահատվածում բուրժուական քանակի վերնախավին (Իրանում Իսլամական հեղափոխությունից հետո՝ Թուրքիայի արևմտյան դաշնակիցներին ևս) անհամապատասխան էր հատկապես իսլամիստների գործունեությունը: Թուրքիայում ռազմական ռազմաճակատի կուրսանող՝ ապագա սպան, իր ուսման ատաքին իսկ օրից դաստիարակվում է քննադիզմի սկզբունքների ոգով, որոնցից հատկապես կարևորվում է աշխարհիկության (լայիցիզմ) սկզբունքը, և ամեն տեսակի ուղմծգությունների լայիցիզմի համդեպ անընդունելի է գինվորականության համար, իսկ այդպիսիք շատ էին ԱՓԿ-ի գործադրությունների մեջ՝ երբեմն հասնելով նույնիսկ խալիֆայի վերականգման և շարիաթի հաստատման անհրաժեշտության հայտարարությունների⁷:

Ներքաղաքական ճգնաժամը Թուրքիայում

Թուրքիայում 1970-ական թթ. գործող երկու ազդեցիկ կուսակցություններից (Ժողովրդահանրապետական կուսակցություն (ԺՀԿ) և Արդարության կուսակցություն (ԱԿ)) և ոչ մեկին չհասցողիկ ընտրությունների ժամանակ ստանալ ձայների քաջարձակ մեծամասնությունը և միանձնյա կազմել կառավարություն: Այդ համաձայնագրով էր պայմանավորված իրար հասցողող կառավարությունների (Բ. Էջևիթի կամ Ս. Դեմիրելի գլխավորությամբ) կարճատևությունը և անարդյունավետությունը: Այդ երկու կուսակցությունների միջև նդամ հակասությունները և անհանդուրժողականության մթնոլորտը ի յիք դարձրեցին զենքալների՝ ԺՀԿ և ԱԿ «մեծ կռալիցիա» ստեղծելու և այդպիսով քաղաքական ճգնաժամից դուրս գալու փորձերը:

Քաղաքական իրավիճակը հատկապես սրվեց մարտի 22-ին սկսված մախսազահական ընտրությունների ընթացքում, երբ ավելի քան հազար փուլերի արդյունքում Թուրքիայի Ազգային մեծ ժողովը այդպես էլ չկարողացավ մախսազահ ընտրել⁸:

Մոցիալ-տնտեսական ճգնաժամը, գործադուլային շարժումը, անարեկչությունը իրենց հերթին խթանում էին քաղաքական ճգնաժամի խորացմանը:

Մտեղծված իրավիճակում նույնիսկ քաղաքական գործիչներն էին նշում քաղաքական համակարգի սնանկության և ճգնաժամից դուրս գա-

յու անկարողության մասին: 1980 թ. օգոստոսին խտաբանական «La Repubblica» թերթին տված հարցազրույցում Բ. Էջևիթը խոստովանում է, որ քաղաքական կուսակցությունները ի գործ չեն հաղթահարելու ճգնաժամը¹⁰:

Արտաքին գործոնները

1970-ական թթ. վերջերին Մերձավոր և Միջին Արևելքում տեղի ունեցան երկու կարևորագույն իրադարձություններ՝ Իսլամական հեղափոխությունն Իրանում և խորհրդային զորքերի ներխուժումն Աֆղանստան, որոնք խախտեցին տարածաշրջանում ուժերի հաստատված հավասարակշռությունը՝ քուլացնելով ԱՄՆ-ի դիրքերը տարածաշրջանում: Միացյալ Նահանգներում ստիպված էին տարածաշրջանում դիրքերը վերականգնելու նոր ուղիներ փնտրել, ինչը հանգեցրեց Թուրքիայի դերի կարևոր անձին¹¹:

Նման իրավիճակում Թուրքիայում ահաբեկչության այլքի ընդլայնումը, ճախ շարժման ակտիվացումը, իսլամիստների գործողությունները և իշխանությունների կողմից իրավիճակի անվերահսկելիությունը չէին կարող չանհանգստացնել Թուրքիայի արևմտյան դաշնակիցներին, մասնավորապես՝ ԱՄՆ-ին: Վերջինս, այդի առջև ունենալով Իրանի իրադարձությունները, քնակամարար փորձում էր չեզոքացնել Թուրքիայում ծայրահեղականների կողմից իշխանությունը զավթելու բոլոր սպառնալիքները: Իսկ որպես այդպիսիք համարվում էին.

Ա. *իսլամական շարժումը*. Թուրքիայի իշխանությունները որոշակի մտավախություն ունեին Իրանում Իսլամական հեղափոխության հնարավոր արտահանման շուրջ: Միևնույն ժամանակ՝ իսլամամետ ԱՓԿ-ի գործունեության վերելքը, ինչպես նաև լայն տարածում առաջած տեղեկություններն այն մասին, որ Թուրքիայում գործում էին մի շարք գաղտնի կազմակերպություններ, որոնց նպատակն էր աշխարհիկ-հանրապետական կարգի տապալումը¹², ավելի իրական էին դարձնում այդ մտավախությունները:

Բ. *ժախսակողմյան շարժումը*. 1970-ական թթ. վերջերին նկատվում էր ժախսակողմյան շարժման ակտիվացում, ինչը պայմանավորված էր մի կողմից երկրում տիրող քաոսային վիճակով և իշխանությունների կողմից իրավիճակի անվերահսկելիությամբ, մյուս կողմից Խորհրդային Միության կողմից առաջվող զգալի օգնությամբ¹³:

Մտեղծված իրավիճակում ԱՄՆ-ն օժանդակում էր Թուրքիայի արդիականացման գլխավոր քառագույններին՝ բուրջական քանակին՝ երկրում ռազմական հեղաշրջում իրականացնելու համար¹⁴:

Անփոփելով քննարկվող խնդիրը՝ 1980 թ. ռազմական հեղաշրջման պատճառներին կարելի է նշել քրդական անջատողականությունը, մասնավոր սեկտորի անհանգստության գործոնը՝ կապված ժախսակողմյան

շարժումների ակտիվացման հետ, սոցիալ-տնտեսական ճգնաժամը և այլն, որոնք ևս խթանեցին հեղաշրջման իրականացմանը: Կարծում ենք, որ զինվորականության՝ քաղաքական կյանքին միջամտելու վճռորոշ և գլխավոր պատճառները հետևյալն էին. *Թուրքիայում ահաբեկչության ահազմացումը, իսլամիստների գործողությունները, արտաքին գործունեից, ժայռահեղական շարժումների կողմից իշխանությունը գավրելու վտանգը, ներքաղաքական ճգնաժամը և կառավարության կողմից իրավիճակի անվերահսկելիությունը.*

ARTUR DUMANYAN
(IOS)

ABOUT THE QUESTION OF THE CAUSES OF THE 1980 MILITARY INTERVENTION

The 1980 military coup d'état in Turkey constitutes an important era in the Republican life of Turkey. There were multiple causes which led to the third military. The given thesis aims to delineate the problem of main factors and reasons, which were behind the military intervention. We think that among other significant reasons there were several which played particularly pivotal role: the escalation of the terrorist movements, the unprecedented activity of the Islamic currents, external factors, the threat of the radical forces willing to seize the power, domestic political crisis and the governments' inability to cope with these problems.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. "Resmi gazete", 12.09.1980.
2. 1970-ականների վերջերին աջ ժայռահեղականների ահաբեկչական գործունեության մասին մանրամասն տե՛ս Сафрестян Р., Возвращение "серых волков": Консервативная партия в политической жизни Турции (1983-1985 гг.), - «Անթրոպոլոգիա և Միջին Արևելյի երկրներ և Ժողովուրդներ», XXIII, Եր., 2004, էջ 254-276; S. Yalcin, D. Yurdakul, Gladio'nun Türk tetikcisi, Ankara, 1998 և A. Ertugrul, Müdahale 12 Mart 1971-12 Eylül, İstanbul, 1980
3. "Milliyet", 05.03.1980.
4. "Time", 22.09.1980.
5. A. Ertugrul, Müdahale 12 Mart 1971-12 Eylül, İstanbul, 1980, s. 190.
6. Նույն տեղում., 103 s.
7. M. Ali Birand, 12 Eylül Saat: 04:00, İstanbul, 1984, s. 38.
8. ԱՓԷ-ի մասին առավել մանրամասն տե՛ս Վ. Տեր-Մաքևոսյան, Քաղաքական իշխանի էինմադրումն ու վերելքը Թուրքիայում, «Գլխաբախումը և կրթությունը Արցախում», 1-2, Եր., 2004, էջ 169-178:

9. 1980թ. Թուրքիայի նախագահական ընտրությունների մասին ժամանակակից տե՛ս В.И. Данилов, Политическая борьба в Турции: 50-е начало 80-х годов XX в., М., 1985, с. 242-243.
10. "La Repubblica", 24.08.1980.
11. В. И. Данилов, Турция 80-х: от военного режима до "ограниченной демократии", М., 1991, с. 20.
12. И. Л. Фадеева, Ислам в общественно-политической жизни современной Турции, "Турция. История, экономика, политика" (сборник статей), М., 1984, с. 67.
13. Թուրքիա Թուրքիայի արևմտյան դաշնակիցների կողմից ճախակողմյան շարժումը դիտվում էր որպես լրջագույն սպառնալիք, մեր կարծիքով, այն տվյալ ժամանակահատվածում իշխանությունը զավթելու իրական հնարավորություն չուներ: Ինչպես իրավագիտորեն նշում է Դանիլովը, քուրդական լեզու ճախակողմյան կուսակցությունները այդպես էլ չկարողացան հաղթահարել «բանավեճի ակումբի» վիճակը: Իսկ ճախակողմյան ժայռահեղական խմբավորումները բաժանված էին տարբեր խմբերի, ինչը թուլացնում էր նրանց հնարավորությունները: Այդ մասին ժամանակակից տե՛ս В. И. Данилов, նշվ. աշխ., 26.
14. Վերջերս հրապարակված նյութերը հաստատում են տեղեկությունները այն մասին, որ ուղղակի կապ է գոյություն ունեցել Թուրքիայում ԿՀՎ-ի ներկայացուցիչ Փոլ Հենցի և հեղաշրջումը իրականացրած զենեղբայրների միջև: Ուշագրավ է տեղեկությունը այն մասին, որ 1980թ. սեպտեմբերի 12-ին Փ. Հենցը զանգահարելով Սպիտակ տուն, զեկուցել է՝ «Մեր տղաները հեղաշրջում կատարեցին»: E.Şimşek, Türkiye’de İstihbaratçılık ve MIT, İstanbul, 2004, s. 357.

ԽՄԿԱՆՎԱՐՅԱՆ ԳՈՂՄԻ

(ԱԻ)

ՔՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԻՐԱՆՈՒՄ (ՄԵՀԱՐԱԿԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԵՂԾՈՒՄԸ)

Քրդական խնդիրը Իրանում միշտ էլ արդիական է եղել և համդիսացել ներքին քաղաքականության օրակարգային հարցերից մեկը: Սակայն այն նոր բաժնի առաջավի հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, նոր խորհրդային զորքերը 1941թ. օգոստոսի 25-ին հյուսիսից ներթափանցեցին Իրան: Նրանց անմիջական միջամտությամբ Իրանի հյուսիսային շրջաններում հրահրվեցին, այսպես կոչված, Ատրաբատականի և Քրդստանի «դեմոկրատական» շարժումները:

Սակայն ի տարբերություն Ատրաբատականի խնդրի, որտեղ մեծ աջակցություն էր գտնարեքվում ԽՍՀՄ-ի կողմից աղքատբանցիներին, քրդական հարցի դեպքում, զոնն սկզբնական շրջանում ԽՍՀՄ-ը փորձում էր վարել զգուշավոր և ճկուն քաղաքականություն: Առաջին և ամենակարևոր նպատակը «առանցքի» երկրների լրտեսների հետ քրդերի շփումների քացառումն էր:

Իրանի քրդերն որոշակի հույսեր էին կապում Խորհրդային Միության հետ, ենթադրելով, որ վերջինս համդես կզա քրդական շարժումը հովանավորողի դերում: Քրդերի ոգևորությունը էլ ավելի մեծացավ, նոր 1941թ. աշնանը Բաքու հրավիրվեցին Իրանական Քրդստանի 30 հայտնի զործիկներ: Նրանց ընդունեց Աղքեջանի ԽՍՀ-ի կոմկուսի առաջին քարտուղար Միր Ջաֆար Բաղիրովը:

1942թ. սկզբներին Իրանի կառավարությունը դիմեց Խորհրդային հրամանատարությանը, որպեսզի բույլատրեն զորք մտցնել քրդական շրջաններ՝ կարգ ու կանոն հաստատելու համար, սակայն մերժում ստացան: Խորհրդային Միության քաղաքականությունը մեծապես անհամզուտացնում էր դաշնակիցներին: 1942թ. հունվարի 10-ին այդ կապակցությամբ ԱՄՆ-ի պետդեսպարատամետի Մերձավորարևելյան բաժնի վարիչ Ռ.Մյուրիջը հայտնեց իր անհամզուտությունը, որ իրանական մեծաքանակ զենք առգրաված քրդերը իրականացնում են հարձակումներ, ինչը մեծ սպառնալից է: Նրանց նկատմամբ անհրաժեշտ է իրական-

նացնել վերանկողություն, որպեսզի ապահովվի բեռների ամվնաս տեղափոխումը Տրանսիբանական երկաթգծով¹:

1942թ. սեպտեմբերին Խորհրդային Միություն-Իրան փոխհարաբերությունները կարգավորելու ակնկալիքով՝ ԽՍՀՄ ժվեռ նախագահի առաջին տեղակալ Վ.Մուրտուզը նամակ էղեց Իրանում ԽՍՀՄ-ի դեսպան Ա.Սմիրնովին, որով, ընդհանուր առմամբ, հրահանգվում էր այտուհետ շաքակցել քրոչերին, նշելով, որ քուրդ անջատողականներն Իրանում միշտ էլ եղել են քուրդական և անգլիական քաղաքականության գործիքը Միջին Արևելքում: Նշվում էր նաև, որ քրոչերը կազմված են իրար դեմ ներդրուտ պայքարի մեջ գտնվող ցեղերից, և չունեն ազգային միասնության գաղափար: Նրանց մեղադրում էր անհավատարմության մեջ, իսկ քուրդ առաջնորդներին շատերին որակում որպես տարրեր երկրների լրտեսներ²:

1944թ. գարնանը Մեհարադում հավաքվեցին Իրաքի, Սիրիայի և Թուրքիայի քրոչական կազմակերպությունների ներկայացուցիչները՝ բանակցելու քրոչերի ինքնավարության հարցի շուրջ, ինչպես նաև ճշակելու հետագա ծրագրերը: 1945թ. սեպտեմբերին մուլլա Մուստաֆա Բարզանին իր մարտիկներին և 10 հազար ցեղակիցների հետ իանգրվան գտավ Իրանական Զրդստանում, որտեղ հենց այդ ժամանակ ուժգնաում էր քրոչական շարժումը: 1944թ. հոկտեմբերին Ղազի Մուհամմեդը միացավ 1942թ. էլիմնված «Քուճալա» կուսակցությանը³:

1944-45թթ., երբ աղոեն պարզ էր պատերազմի կըը, Խորհրդային Միությունը վերանայեց իր քաղաքականությունը իրանական քրոչերի նկատմամբ: 1945թ. հուլիսի 6-ին Մոսկվայում կոմկուսի քաղքյուրոչի միատում «Ատրպատականի հարցը» դրվեց հատուկ քննարկման: Վճովեց հարցը լուծել «ղեմոկրատական միջոցներով», ինչը նշանակում էր «զանգվածային ազգային շարժում» նրանել Ատրպատականում: Այդ ծրագրի պատասխանատվությունը դրվում էր Վ.Մուրտուզի, Լ.Բերիայի, Մ.Ջ.Բաղիբովի վրա⁴: Նժանատիպ ծրագրը պետք է իրականացվեր նաև Կրասնա-արևմտյան Զրդստանում: 1945թ. Ղազի Մուհամմեդը և այլ քուրդ նշանավոր դեմքեր քազմիցս հրավիրվեցին Թավրիզ, որը ԽՍՀՄ-ի ազդեցության գլխավոր կենտրոնն էր: 1945թ. աշմանը նրանք երկըրոր անգամ այցելեցին Բաքու: Որոշ տեղեկատվության համաձայն՝ ԽՍՀՄ-ի կարգադրությանը Բաղիբովը նշել էր, որ թեև քրոչական խնդիրը օրակարգային խնդիր է, սակայն խորեուրդ էր տվել առայժմ պայքարել աղքեծանական ինքնավարության շրջանակներում⁵: Ղազի Մուհամմեդը կտրականապես մերժել էր նման տեսակետը: Կարծում ենք, որ Ղ.Մուհամմեդի հետ տարվող բանակցությունները թե՛ Մոսկվայում և թե՛ Բաքվում դիտվում էին որպես *գոմրատ*, դաշնակիցների հնարավոր համաձայնության ժամանակ Իրանի մասնակի քաժամման դեպքում:

1945թ. Մեհարադում ԽՍՀՄ-ի գործուն աջակցությամբ ստեղծվեց Իրանական Քրդստանի դեմոկրատական կուսակցությունը /այսուհետ ԻՔՂԿ/, հոկտեմբերի 25-28-ին Մեհարադում տեղի ունեցավ ԻՔՂԿ-ի առաջին միառոց, որտեղ ղեկավարներին հրապարակվեց ԻՔՂԿ-ի ծրագրված կազմված 7 կետից: Կուսակցությունը խոստանում էր քարելավել գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի զարգացման համար նախատեսված պայմանները, զարգացնել Քրդստանի տնտեսությունը՝ ի հաշիվ այդ շրջանի բնական հարստությունների: Պահանջում էին նաև ապավել Իրանի տարածքում ապտող բոլոր ժողովուրդների համար քաղաքական ազատ գործունեության դաշտ⁵:

1946թ. հունվարի 24-ին Մեհարադում հռչակվեց Քրդական Հանրապետությունը, որի կազմի մեջ ընդգրկվեցին՝ Մեհարադ, Ռշնու, Միանդոհար, Սարդեշ, Բանեհ, Սեքքեզ, Սեննեդիջ քաղաքները⁶: Հանրապետության գլուխ կանգնեց ԻՔՂԿ-ի առաջնորդ Ղազի Մուհամմեդը, կառավարությունը կազմվեց ԻՔՂԿ-ի անդամներից, որոնք իրենց հույսերը դրանի քրդական շրջաններում միակ կառավարող կուսակցությունը⁷: Կառավարությունը քաղկազմ էր 13 նախարարներից, որոնք սերում էին քրդական քարձր խավից: Մեհարադում և այլ քաղաքներում ստեղծվեցին կամոնաֆոր զինվորական ջոկատներ՝ Մուստաֆա Բարզանիի գլխավորությամբ: Փետրվարին խորհրդային զորքերի հրամանատարությունը նորաստեղծ կառավարությանը տրամադրեց «Բրեն» և «Բոլտ» տեսակի 5000 զնդացիր, իրացան, ատրճամակ, ռազմամթերք, բևեռատար մեքենաներ: Խորհրդային սպաները ժամանեցին Իրան՝ ռազմական վերապատրաստական աշխատանքներ իրականացնելու: 60 քուրդ երիտասարդներ ուղևորվեցին Բաքու՝ կրթություն ստանալու նպատակով⁸: Հետաքրքրական է, որ 1946թ. ապրիլի 4-ին ԽՍՀՄ-ի և Իրանի կառավարությունների միջև կնքված համաձայնագրով, ի փոխ մեջաբե այլ պայմանների, իրանական կառավարությունը խոստացավ ճանաչել Ատրպատականի Հանրապետությունը⁹, այստեղ խոսք չկար Մեհարադի Հանրապետության մասին: Ալեմհայտ էր, որ պաշտոնական Մոսկվան քրդական հարցին հատկացնում էր երկրորդական տեղ:

Վերոհիշյալ պայմանագրի ստորագրումից հետո, 1946թ. ապրիլի 23-ին, Թավրիզում Ատրպատականի և Քրդստանի ներկայացուցիչների միջև համաձայնագիր ստորագրվեց՝ հետագա համագործակցության համար, որը կազմված էր 7 կողմից: Հիշատակության են արժանի հատկապես պայմանագրի 4-րդ և 5-րդ կետերը, ըստ որի, անհրաժեշտության դեպքում, Ատրպատականը և Քրդստանը պետք է ձևավորեին ռազմական դաշինք՝ ցուցաբերելով երկկողմ ռազմական օգնություն: Իսկ իրանական կառավարության հետ կարող էին քանակցել միայն երկու կողմերի հավանության դեպքում¹⁰: Սակայն երկու հանրապետությունների միջև չորաշվեց սահմանային հարցերը, ինչից էլ օգտվեց կնքող-

նական կառավարությունը՝ ջամադով տարածայնություններ սերմանել աղբբջանցիների և քրդերի միջև¹²։

Այդ վեճերը հատկապես վերաբերում էին Մակո, Խոյ, Շահիտը և Ռեզայե շրջաններին։ Մահմանային հարցերի շուրջ լարվածությունը երկու կողմերի մոտ հասավ գագաթնակետին 1946թ. սեպտեմբերին, երբ զինված քրդական ջոկատները մտան Շահիտը և պատրաստվում էին հարձակվել Մակո, Ռեզայե և Խոյ քաղաքների վրա, սակայն Մեհարազից անհրաժեշտ հրահանգ չտեսնալով՝ հեռացան այդ շրջաններից։

Քանի դեռ չէր ավարտվել ԽՍՀՄ-ի զորքերի ամբողջական տարհանման գործընթացը, Իրանի վարչապետ Ղալամ օս-Մալքամեմ աշխատում էր ավելոյլ լարվածություն յտեղծել, չնայած որ արդեն մշակված էր Առքաատակամի և Քոյստամի ինքնավարությունների վերացման ծրագիրը։ 1946թ. աշնանը ԽՍՀՄ-ի զորքերն արդեն ամբողջությամբ լքել էին Իրանի տարածքը և պաշտոնական թիկնոսնը զորք մտցրեց Առքաատակամ։ Այստեղ բերվեց 20 գումարտակ կառավարական զինված ուժերից։ Իացի այդ, օգտագործվեցին նաև Մեհարազի Հանրապետության դեմ թշնամաբար տրամադրված քրդական բոլոր ցեղերը։ Հարկ է նշել, որ, այդուամենայնիվ, որոշ շրջաններում աղբբջանցիները օգնության ձեռք մեկնեցին քրդերին¹³, դրանով իսկ հավատարիմ մնալով ապրիլի 28-ին կնքված պայմանագրի 4-րդ կետին։

1946թ. դեկտեմբերի 11-ին քրդերը տեղեկացան, որ իրանական զորքերը շարժվում են Թավրիզի ուղղությամբ։ Շուտով պարզ դարձավ, որ Թավրիզում որևէ դիմադրություն չէր ցուցաբերվել։ Անհրաժեշտ հրահանգներ տալով Բաքույին ժամանեց Մեհարազ, որտեղ պարզ դարձավ, որ Մեհարազի կառավարությունը նույնպես չի ցանկանում դիմադրություն ցույց տալ իրանական զորքերին¹⁴։ Դեկտեմբերի 17-ին գրավվեց նաև Մեհարազը։

Իրանական կառավարությունն անհանգստացած էր երկրում գտնվող քարզանցիների ներկայությունից, որոնք խստատանում էին հեռանալ երկրից միայն գարնանը։ Այդ հարցը քննարկելու նպատակով 1946թ. դեկտեմբերի 21-ին Մ.Բաքույին երավիտվեց Թեհրան, համդիպեց չաև Մուհամեդ Ռեզա Փահլավիի և այլ պաշտոնական դեմքերի հետ¹⁵։

Մարտի 31-ին Ղազի Մուհամեդը և իր կողմակիցներից շատերը մահվան դատապարտվեցին, որով գլխատվեց քրդական շարժումը, իսկ ԻԶԴԿ-ի անդամներից շատերը հեռացան երկրից։ Չնայած 11 ամիս գոյատևած Մեհարազի Հանրապետությունը չկարողացավ իրականացնել ԻԶԴԿ-ի ծրագրերը, այդուամենայնիվ, այն պատմական իրողություն էր քրդական պատմության մեջ։ Պետք է նշել, որ շատումը տարեկային քնույր ուներ, Իրանի քրդերը համախորժված չէին մեկ գաղափարի շուրջ։ Հարավի քրդերը չէին ընդունում հյուսիսի քրդերի գործելակերպը։ Սակայն Մեհարազի Հանրապետության տապալման գլխավոր պատ-

ճան այն էր, որ ԽՍՀՄ-ը չօգնեց քրդերին: Փաստորեն վարչապետ Ղափանը, որը մեր կարծիքով, տաղանդավոր դիվանագետ էր, կարողացավ բուլացնել ԽՍՀՄ-ի և Իրանի միջև առկա լարվածությունը՝ խոստումներ տալով ԽՍՀՄ-ին: Նախ՝ Իրանի տարածքից դուրս բերվեցին խորհրդային զորքերը, այնուհետև օգտագործվեց ԽՍՀՄ-ի մախկին դաշնակիցների դժգոհությունը, որի արդյունքում ամժամանակ ստեղծվեց քրդական և աղբյրեքամական խնդիրը Իրանում:

GOHAR ISKANDARYAN
(IOS)

KURDS MOVEMENT IN IRAN: MEHABAD REPUBLIC

The article deals with the Kurdish problem and establishing of Mehabad Republic in Iran. During the Second World War the USSR took careful position regarding to Kurd's problem. But after the Second World War the policy of the USSR was changed. The Democratic Party of Iranian Kurdistan and the Republic of Mehabad (Jan. 24, 1946) were founded with the help from USSR. After the agreement signed in April 1946 between Iran and USSR, the latter declared that the issues of Atrpatakan and Kurdistan are domestic affairs of Iran. The reasons of the fall of Mehabad Republic were the Iranian Kurds' not to be united and the lack of necessary support from the USSR.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Лазарев М.С., Курдистан и курдской вопрос (1923-1945), М., 2005, с. 212.
2. Лазарев М.С., նշվ. աշխ., էջ. 218-219.
3. Ղազի Մոհամմեդը սերում էր քրդական ազդեցիկ ընդից, որից էլ ավանդաբար նշանակվում էին Սեհարադի դատավորները: Հորեղբոր՝ Ղազի Ալիի ճակից հետո, Ղազի Մոհամմեդը նշանակվեց այդ պաշտոնում: Միաժամանակ նա իրականացնում էր Սեհարադի քաղաքապետի պարտականությունները:
4. Բայրուրդյան Վ., Իրանի պատմություն, էր., 2005, էջ 641:
5. Derk K., The Kurds and Kurdistan, L., 1964, p. 50.
6. Eagleton W., The Kurdish Republic of 1946, L., 1963, p. 57.
7. Курдское движение в новое и новейшее время, М., 1987, с.180.
8. Eagleton W., The Mehabad Republic, L., p. 33-35.
9. Kinnane Derk, նշվ. աշխ., էջ 52-53.
10. Внешняя политика Советского Союза, Документы и материалы, январь-декабрь 1946г., Госполитиздат, 1952, с. 114-115.
11. Ghassemlou A.R., Kurdistan in Iran. People Without a Country. The Kurds and Kurdistan, London, 1980, p. 119-120. Eagleton W., The Kurdish Republic of 1946, p. 82.

12. Eagleton W., The Mehabad Republic, p. 41-42.
13. Лазарев М.С, Мгом Ш.Х., История Курдистан, М.1999, с. 331.
14. Барзани М., Мустафа Барзани и курдское освободительное движение (1931-1951), Санкт-Петербург, 2005, с. 138.
15. Барзани М., *İzç. izçi.*, tg 137-143.

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԱԼՔԵՐՏ
(ԵՊՀ)

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԱՎԹԱՅԻՆ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 1950-ԱԿԱՆ ԹԹ.**

1953թ. օգոստոսի 19-ին Իրանի շահի, ԱՄՆ-ի և Անգլիայի հետախուզական վարչությունների կողմից կազմակերպված ռազմական հեղաշրջման հետևանքով տապալվեց Իրանի ազգային բուրժուազիայի կառավարությունը, որը գլխավորում էր «Ազգային ճակատի» ղեկավար Մեհամմեդ Մոսադեղը, և իշխանության եկավ զեմերալ Ֆազլուլահ Ջահեդին¹: Մտտ մեկ տարի անց՝ 1954թ. հոկտեմբերի 29-ին, կնքվեց պայմանագիր 25 տարի ժամկետով Միջազգային մավթային կոնսորցիումի (ՄԿԿ) և Իրանի կառավարության միջև, որի միջոցով երկրի մավթարդյունաբերության շահագործումը հանձնվեց աշխարհի ութ խոշորագույն մավթային մենաշնորհատերերին, որոնց վերահսկողության տակ էր գտնվում 1950-ականներին կառուցված և արդեն արտադրողական աշխարհի մավթի վերամշակման 99% (բացի ԱՄՆ-ից) և սպառման շուկայի 90%²:

ՄԿԿ-ի արժեքների 40% պատկանում էր «Անգլո-իրանական մավթային ընկերությանը» (որը շուտով վերանվանվեց «Բրիթիշ Փեթրոլեումի»), 40% ամերիկյան «Մեծ հնգյակ» հինգ խոշոր մավթային ընկերություններին (յուրաքանչյուրին 8%), 14% հոլանդական «Բոյալ Դաթ Եելլ» ընկերությանը և 6% ֆրանսիական «Ֆրանսեզ դե Փեթրոլին»³:

ՄԿԿ-ի հետ պայմանագիրը նոր էջ քացեց Իրանի մավթարդյունաբերության մեջ, որտեղ գլխավոր դեր սկսեցին խաղալ ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունները և մավթային մենաշնորհատերերը, որոնք ձեռք բերեցին ՄԿԿ-ի բաժնետոմսերի 95%⁴:

Ինչպես նշում է Ս.Մ. Ալիևը, «Իրանը կնքեց տիպիկ կոնցեսիոն պայմանագիր, որը չէր ասպնդում 1951թ. մավթի ազգայնացման օրենքով նախատեսված ինքնիշխանությունը երկրի մավթարդյունաբերության նկատմամբ»⁵:

ՄԿԿ-ի ստեղծումը հնարավորություն ընձևեց ամերիկյան մենաշնորհատերերի երկար սպասված մասնակցությանը Իրանի մավթարդյունաբերության շահագործման գործում, ինչպես նաև ճանապարհ հարթեց ԱՄՆ-ի կառավարության դիրքերի հետագա ամրապնդման համար:

Պայմանագրի կետերից ամենագլխավորն ու շահավետը Իրանի համար եկամտի 50% - 50% բաժանման սկզբունքն էր: Սակայն ՄՆԿ-ը իր գործունեության ընթացքում դիմում էր զանազան խարդախ միջոցների՝ այդ գումարները կրճատելու կամ չվճարելու համար:

ՄՆԿ-ի անդամների մեծ ֆինանսական հնարավորությունները և սպառման ու տրանսպորտային կազմակերպությունների լայն ցանցը հնարավորություն ընձեռեցին նրանց կարճ ժամկետներում վերականգնել և մեծացնել Իրանում նավթի արդյունահանումը, որը, փաստորեն, ազգայնացման տարիներին անգործության էր մատնվել: 1955թ. ՄՆԿ-ը Իրանում արդյունահանեց 16 մլն - տոննա, 1956թ.՝ 26 մլն տոննա, 1957թ.՝ 35 մլն տոննա, 1958թ.՝ 41 մլն տոննա, 1959թ.՝ 45 մլն տոննա և 1960թ.՝ 50 մլն տոննա նավթ, ինչի շնորհիվ երկիրը հասնաբարության մարտ ստացավ՝ 1955թ.՝ \$ 100,3 մլն, 1956թ.՝ \$ 152,1 մլն, 1957թ.՝ \$ 213,9 մլն, 1958թ.՝ \$ 247,1 մլն, 1959թ.՝ \$ 262,5 մլն և 1960թ.՝ \$ 285 մլն եկամտով: Ի դեպ Իրանի նավթի արդյունահանումից շատ ավելի շահում էին ՄՆԿ-ի անդամները, քան ինքը՝ Իրանը, որոնք վերանշակում էին այն և որպես նավթաքանիք վերավաճառում իրենց եկադրության տակ գտնվող Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի սպառման լայն շուկաներում մի քանի անգամ բարձր արժեքով՝ ստանալով դրանից հսկայական գերշահույթներ: Եթե, որ Իրանում 1950թ. 1 բարել նավթի արդյունահանման ծախսը կազմում էր 20 ցենտ, իսկ ԱՄՆ-ում՝ \$ 1,45 - \$ 1,75, ընդ որում նավթային մոնոպոլիաները Իրանի նավթից ստացած նավթաքանիքը վերավաճառում էին հաշվի առնելով ամերիկյան նավթի արդյունահանման ծախսերը, ինչի հետևանքով ՄՆԿ-ի անդամների եկամուտների չափը իրանական նավթից մինչև 1960թ. կազմեց մոտավորապես \$ 2,3 մլրդ:

Տարեցտարի աճող եկամուտները մեծ ազդեցություն գործեցին երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի վրա, և ամերիկյան ֆինանսական օգնությունների ու փոխառությունների հետ մեկտեղ նպաստեցին երկրի ֆինանսական վիճակի բարելավմանը, որը մավթարդյունաբերության ազգայնացման տարիներին Անգլիայի և ԱՄՆ-ի կողմից Իրանի՝ համաշխարհային նավթի շուկա դուրս գալուն և ինքնուրույն նավթ վաճառելուն խոչընդոտեցրեց և արգելեցրեց հարուցելու հետևանքով գտնվում էր ծանր ճգնաժամային վիճակում:

ՄՆԿ-ի վճարումները Իրանին կազմում էին երկրի բյուջեի 2/3-ից մինչև 9/10-ը, և ելնելով երկրի տնտեսական ցածր զարգացվածության աստիճանից՝ համընթացում էին նրա եկամտի հիմնական աղբյուրը, ինչը երկրի տնտեսական զարգացումը կախվածության մեջ էր դնում օտարերկրյա նավթային մոնոպոլիաներից և նրանց կառավարություններից:

1956թ. Իրանի մեջլիսի կողմից հաստատված Պլանային կազմակերպության երկրորդ 7-ամյա ծրագրի գումարը կազմեց \$ 933 մլն, որի ֆինանսավորման հիմնական միջոցը ՄՆԿ-ից ստացած եկամուտներն էին: Մեկ տարի հետո այդ գումարը ավելացվեց 20%-ով՝ կլնելով ՄՆԿ-ից

ստացած շահույթների և ամերիկյան փոխառությունների ու օգնությունների անից⁸:

ՄՆԿ-ի գործունեությունը նպաստեց Արևմուտքի և հատկապես ԱՄՆ-ի կապիտալի ներքափանցմանը Իրան, և երկիրը իր ապրանքների ապառման լայն շուկա դարձնելուն, որը ավելի վաղ արտահայտվեց Իրանի կառավարության կողմից 1955թ. դեկտեմբերին օտարերկրյա կապիտալի պաշտմանման և ներգրավման մասին օրենքն ընդունելուց և 1957թ. «սզատ առևտուր» սկզբունքը հայտարարելուց հետո, ինչի հետևանքով 1950-ականների երկրորդ կեսից Իրանի ներմուծուճ շուրջ էինգ անգամ գերակշռեց արտահանմանը, որն էլ իր հերթին ստիպում էր Իրանին ՄՆԿ-ից ստացած տարադրամի մեծ մասով լրացնել արտաքին առևտրի հաշվեկշռի պակասադրոշմը⁹:

Իրանի ղեկավար շրջաններն իրենց դիրքերի ամրապնդման և իշխանության պահպանման գրավականն էին համարում ԱՄՆ-ի և Անգլիայի հետ սերտ համագործակցությունը, որի հետևանքն էր 1955թ. Իրանի մասնակցությունը Արևմուտքի կողմից ստեղծված ռազմա-քաղաքական դաշինքին՝ Բաղդադի պակտին: Այդ կառույցին մասնակցությունը Իրանի ծախսերը ավելացնում էր տարեկան \$ 60 մլն-ով, որը ծախսվում էր զենքի գնման ու երկրի ռազմականացման նպատակով և հետզհետե անելով՝ 1961թ. կազմեց \$2 մլրդ¹⁰:

Այսպիսով, ՄՆԿ-ի գործունեությունը, ի տարբերություն Անգլո-իրանական մավթային ընկերության, որը 40 տարվա ընթացքում Իրանին վճարել էր ընդամենը 119,6 մլն Ֆունտ ստեռլինգ, հնարավորություն ընձեռեց երկրին ավելացնելու պետական եկամուտներն իր սեփական մավթի շահագործումից և մինչև 1961-1962թթ. առանալ շուրջ \$1,5 մլրդ¹¹, որը նրան անհրաժեշտ էր երկիրը սոցիալ-տնտեսական խորը ճգնաժամից դուրս բերելու և երկրի ֆինանսական վիճակը քարելավելու համար: Սակայն Իրանի ղեկավար շրջաններն, ԱՄՆ-ի և Անգլիայի դրոշմաճ տարեցտարե ավելացնելով երկրի համար անբարենպաստ ռազմական ծախսերը և զանազան ապրանքների ներմուծումների շահիերը, նպատակային յօզտագործեցին մավթից ստացած եկամուտները և չկայողացան հաղթահարել այդ ճգնաժամային վիճակը:

Այնուամենայնիվ, Իրանը 1957թ. ընդունեց մավթի մասին օրենքը, որը հնարավորություն տվեց 1950-ականների վերջին և 1960-ականների սկզբին երկրի մավթի շահագործման նոր պայմանագրեր կնքել ՄՆԿ-ի կազմից դուրս մնացած մի շարք եվրոպական և ամերիկյան մավթային ընկերությունների հետ Իրանի համար ավելի բարենպաստ պայմաններով (75%-25%)¹²:

THE ACTIVITIES OF INTERNATIONAL OIL CONSORTIUM
IN IRAN IN 1950's.

As a result of the Consortium Agreement reached in 1954 between the government and a consortium of foreign oil companies, industry control of the oil companies was left virtually intact, but the agreement greatly increased the government's share of income from each produced barrel of oil. The *Anglo-Iranian Oil Company*, which had then become the *British Petroleum*, had 40% of shares, and 40% was owned by American oil companies. Of the remaining 20%, 14% percent of the shares went to the *Royal Dutch-Shell*, and 6% to the French *CFP*. The combination of the larger share of income (50%-50%) and rising oil production provided the government with increased revenues to finance industrial development. In addition, steady progress was made in reestablishing Iran's relations with Western powers in the aftermath of nationalization. The Mohammed Reza Shah Pahlavi and his government wasted much of increased oil revenues for militarizing, instead of using for the development of Iran, leaving the country in continuing social - economic and financial crisis. In 1957, the first Iranian oil bill passed into law, which allowed to sign agreements based on participation with foreign investors, where 75% of shares belonged to *National Iranian Oil Company*.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Стамболцян А.Г., Внутренняя политика правительства национальной буржуазии Ирана 1951-1953гг., Ер., 1984, с. 105.
2. Frank H.J., *Crude Oil Prices in the Middle East*, N.Y., 1966, p. 129.
3. Соглашение между правительством Ирана и международным консорциумом и между правительством Ирана и Англо-Иранской Нефтяной Компании. Современный Иран, Справочник, М., 1957, с. 556.
4. Elwell Sutton L.P., *Persian Oil. A Study in Power Politics*, L., 1955, p. 234.
5. Алнев С.М., Нефть и общественно-политическое развитие Ирана в XX в., М., 1985, с. 141.
6. Расадн А., Иностранный капитал в Иране, М., 1973, с. 44.
7. Ізакі Сь, Yeganeh M., *The Economics of Middle Eastern Oil*, N.Y., 1962, p. 132.
8. Арабаджян А.Э., Международный нефтяной консорциум и экономика Ирана, Народы Азии и Африки, N2, М., 1962, с. 68.
9. Алнев С.М., Երվաշխ. էջ 147.
10. Политика США на Ближнем и Среднем Востоке (США и страны СЕНТО), М., 1960, с. 248.
11. Расадн А., Երվաշխ. էջ 44.

12. Шарипов У.Э., Эволюция нефтяной политики иранского государства в 50-70 годы, Иран. Проблемы экономического и социального развития в 60-70-е годы, М., 1980, с. 62.

ԿՆՅԱԶՅԱՆ ԴԱՎԻԹ
(ԱԻ)

ԳԵՆԵՐԱԼ ԱՆՏՈՆ ԴԵՆԻԿԻՆԸ
ԱՂԻՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աղբրեցանական պետականության քաղաքական, ռազմական, տնտեսական և այլ հիմքերի ռաւամնասիրությանը վերաբերող աշխատանքներում քաճարար ուշադրություն չի դարձվել գեներալ Ա.Դենիկինի հուշերում քննարկվող թեմային վերաբերող մտածելամեթոճին: Այս հոդճաճում փորճ է աքվում ներկայացնել Ա.Դենիկինի դիքքոյոչումը աղբրեցանական պետականության նկատմամք:

Ռազմաճարական դիքք գրաճող և էներգալիքներաճ հարուստ Աղբրեցանը Ա.Դենիկինը համարում էր ապագա միասնական Ռուսաստանի անօտարիլի մաս: Այսպես, նա նշում էր. «Ժճ գլխաճոր նախտակն էր Ռուսաստանի հետ անդրկուկասյան ծայրամասի պետական կասլի ապահուլոճը կամ, առնճազն, մասնատման տարածքային սահմանաճկալումը»:

Աղբրեցանի և Ռուսաստանի Հարաճի Ձինճաճ ուճերի հետ հարաբերոյոնները տարբեր կողմերին նվիրճաճ աղբրեցանի շարքում կենտրոնական տեղ են գրադեցնում Անտոն Դենիկինի «Очерки русской смуты» վերտառոյոյամք հուշերը: «Ռուսաստանի Հարաճի Ձինճաճ ուճերը» վերտառոյոյամք չոքրադղ հատորում 18-րդ գլուխն ամբողջոյոյամք, ինչպես մաև 16-րդ և 25-րդ գլուխները (5-րդ հատորի)՝ մասամք, նվիրճաճ են Աղբրեցանի հետ հարաբերոյոններին: Նքա հուշերում պարամակճում է հարուստ վաստագրական նյուք, տրվում են իրադարձոյոնների յուրօրինակ մեկնարանոյոններ և աքվում եզրահանգումներ, որոնց գգալի մասը նրկար ժամամակ դուրս է եղել գիտական շրջանառոյոյոնից կամ հանրոյոյանը ներկայացվել է խեղաթյուրճաճ կերպաճ:

Ռաւամնասիրող թեմային վերաբերող նյուքի մեճ ժաճալից նարտակահարմար են համարում մեքքերել մի հատճաճ, որն առաճել ցայտուն է քնուքազում Ա.Դենիկինի անճնական վերաբերմումքը Աղբրեցանի նկատմամք. «Աղբրեցանական Հանրապետոյոյոնում ամեն ինչ արհեստական էր, «ոչ իսկական»՝ սկսամ անճանումից, որը վերցվաճ էր

Պարսկաստանի նահանգներից մեկից: Արհեստական տարածք, որն ընդգրկում էր լեզգիական Չաքաքալամ, հայ-թաթարական Բարվի և Ելիզավետպոլի նահանգները, ռուսական Մուղանը, որը բուրքական քաղաքականության կողմից միավորվել էր, որպես Կովկասում պանթուրքիզմի և պանիսլամիզմի հենակետ ... Արհեստական պետականություն, քանի որ ժողովուրդների մեծ վերաբնակեցման ճանապարհին ընկած այդ հողերում միշտ բնակվում էին միմյանց հաջորդող նվաճողների բազմազան մշակույթների ներգործությանը ենթարկված մասն բնակիչներ...: Վերջապես, արհեստական էր պահվում նաև աղբյուրանական կառավարությունը՝ սկզբնապես Նուրի փաշայի կամքով, այնուհետև՝ զեմերալ Յամսոնի, հետագայում՝ ռուդակի ինտրոդուկտիվ²:

Արևմտյան մամուլը ևս լավատեսորեն տրամադրված չէր Աղբյուրանի անկախության հանդեպ: Այսպես, ազդեցիկ «Ժայնա» թերթը գրում էր. «Շամկացած որ, ով պատկերացում ունի մախբան Ռուսական հեղափոխությունը Վրաստանում և Աղբյուրանում տիրող վիճակի մասին, կհասկանա, որ նրանց անկախությունը յուրք սպառնալիք է աշխարհում յաղաղությանը»³:

Ազգայնական փառում նորատոնոյ Աղբյուրանական Հանրապետության նպատակն էր՝ վերացնել ռուսական ազդեցությունը հենց Աղբյուրանի տարածքում, որի հիմքն ու կրողը զեմերալ Լ.Բիչերախովի գլխավորած գորամիավորումներն էին:

Ընդունակ լինելով սեփական ուժերով հասնել Կամավորական ուժերի դուրսբերմանը իր տարածքից՝ Աղբյուրանը դրան հասավ Անդրկովկասում անգլիական զորքերի միջոցով:

1919թ. առաջին կեսին Կամավորական բանակի ղեկավար Լյուսիսային Կովկասի հարավ-արևելյան հատված առաջխաղացմանը զուգընթաց կրկին սրվեցին հակասությունները Ռուսաստանի Հարավի Զինված ուժերի և Աղբյուրանի միջև: Աղբյուրանը նույնպես հավակնություններ ունի «Դադստանի նկատմամբ՝ այդ հարցում հուսալով ստանալ անգլիացիների քաղաքական աջակցությունը: Լեռնականների պատվիրակության հետ համատեղ ակտիվ գործունեություն էր ծավալել նաև աղբյուրանական պատվիրակությունը Փարիզի յաղաղության վեհաժողովում»⁴:

Դադստանի հարցում անգլիացիների դիրքորոշման ձևավորման գործում կարևոր նշանակություն ուներ այն հանգամանքը, որ լուս նրանց, Դադստանում հակադեմոկրատիայի պայքարը կրում էր բուլղարական և պանիսլամիստական բնույթ⁵:

Մանր կացության մեջ հայտնված Վրաստանն ու Աղբյուրանը 1919թ. հունիսի 16-ին Թիֆլիսում սպառնալուսական դաշինք կնքեցին, որի առթիվ ՀՀ ԱԳ նախարար Ս.Տիգրանյանն իր զեկույցում գրում էր. «Միջխման օրեր առաջ ասել էր, թե, եթե հայերը չգիջեք, մենք ստիպված կմիանանք թաթարների հետ: Մեր քաղաքական գործակցության անհրաժեշ-

տությունը մերժել էին, իսկ մեր յեզքությունը, առանց դաշնագրի և կոմ-
բինացիայի, ապահովելու հաստատու քաղաքար միջոցը գտել էին Հա-
յաստանի ներքը և դուրսը ժուռլանների հարձակումներով ու սպառ-
նալիքներով մեր ուժերը զբաղեցնելու, զլատելու և յեզքացնելու մեջ»⁶։

Աղբրեցանը և Վրաստանը համոզված էին Հայաստանի և Կամավո-
րական քանակի միջև գաղտնի դաշինքի գոյության մեջ։ Այս առումով
հատկապես հատկանշական է Հայաստանում Աղբրեցանի դիվանագի-
տական ներկայացուցիչ Ֆեքիմնևու հաղորդագրությունը Աղբրեցանի
արագորժմախարարին, որտեղ նշվում էր. «Կամավորական քանակի ա-
ռաջխաղացումը հայերին ուրախություն է պատճառում, որովհետև հույս
ունեն, թե Բաքուն կզբաժվի ... Եթե մեր հարաբերությունը Կամավորա-
կան քանակի հետ լարվի, հայերը դեպի մեզ թշնամական դիրք կրենեն,
ուստի անհրաժեշտ է Հայաստանի համար Շարուր-Նախիջևանում
ստեղծել վտանգ»⁷։

Իրականում Աղբրեցանը ի վիճակի չէր դիմադրություն ցուցաբերել։
Այդ կապակցությամբ հետաքրքիր է Դեմիկիմի վկայությունը, որը գրում
էր՝ «Աղբրեցանական քանակը նույնպես իսկական չէր։ ... Մի անգամ
խորհրդարանում զենեքալ Մեհմանդարովը ստիպված էր հայտարարել,
որ իր քանակը ճարտումակ չէ և ի վիճակի չէ դիմադրել Կամավորական
քանակին»⁸։

Վերոհիշյալ պատճառով Աղբրեցանը ստիպված էր հենվել անգլիա-
ցիների քաղաքական օժանդակության վրա։ 1919թ. օգոստոսին Բաք-
վում քանակցություններ տեղի ունեցան Անդրկովկասում Դեմիկիմի
գլխավոր ներկայացուցիչ զենեքալ Բարաբովի և Աղբրեցանի կառավա-
րության միջև։ Այս կապակցությամբ Դեմիկիմին իր հուշերում նշում է, որ
Բարաբովին տրված գաղտնի հրահանգը հանդիսանում էր «Անդրկով-
կասում մեր ողջ քաղաքականության իրական արտահայտությունը
սկզբից մինչև վերջ և այնտեղ տեղի ունեցած իրադարձությունների
ընթացման քանակին»։ Աղբրեցանի մասին հրահանգում նշվում էր. «Ռու-
սաստանի Հարավի Չինված ուժերի գլխավոր հրամանատարությունը,
Աղբրեցանը համարելով Ռուսաստանի անբաժան մասը, ընդունում է
Աղբրեցանի ժամանակավոր ինքնուրույն կառավարումը, ընդհուպ մինչև
համառոտաստամյան պետական իշխանության վերջնական հաստա-
տումը ... »⁹։

Քանակցությունները անարդյունք էին, քանի որ, ինչպես նշում էր
Աղբրեցանի նույնանուն պաշտոնաբեթը, զենեքալ Բարաբովի և Աղբրե-
ցանի կառավարության միջև «ընդհանուր լիզու կախող էր գտնվել միայն
այն դեպքում, եթե Կամավորական հրամանատարությունը որոշակիե-
րեն և վճռականաբար հրաժարվեր Աղբրեցանի տարածքային ամբող-
ջականության և քաղաքական անկախության նկատմամբ բոլոր
նկրտումներից»¹⁰։

Մկավեց Աղլըբեջանի և Ռուսաստանի Հարավի Զինված ուժերի միջև հարաբերությունների ամենալարված փուլը, որը տևեց մինչև 1919թ. վերջը: Դրա վկայությունն է զեներալ Գեմիլիմի նոյեմբերի 3-ի հայտնի հրամանը, որի տեքստը հարկ եմ համարում ամբողջությամբ մեջ բերել. «Հաշվի առնելով ռուսական բանակի համղեպ աղլըբեջանական իշխանությունների քչնամական վերաբերմունքը և Հայաստանի հողերի վրա աղլըբեջանական զորքերի դավադրական հարձակումները՝ հրամայում եմ աղլըբեջանական զորքերում գտնվող ռուսական ծառայության բոլոր պլաներին լքել նրանց շարքերը»¹:

Անգլիացիների ճնշումը և Կամավորական բանակի անմիջական հարևանությունն ի վերջո ստիպեցին Աղլըբեջանին հրաժարվել լեռնականների ընդվզումների քաջահայտ հովանավորությունից: Բուշևիկյան վտանգի դեմ պայքարի հրամայականը նույնիսկ ստիպեց ռիսերիմ հակառակորդներին մերձեցման որոշակի քաղեք անել, որոնք սակայն ուշացած էին:

Ամփոփելով՝ պետք է նշենք, որ, ընդունելով համղերձ աղլըբեջանական պետականության միջազգային-իրավական, քաղաքական, ռազմական հիմքերի վերաբերյալ Ա. Գեմիլիմի մտեցումների հիմնավորված լինելը, միաժամանակ չենք կարող չենք ցարական զեներալի այդ դիրքորոշման պայմանավորվածությունը ռուսական մեծապետականությամբ:

DAVID KNYAZIAN
(IOS)

GENERAL DENIKIN ON THE AZERBAIJANI REPUBLIC

The research of political, military, economic and ethnic aspects of the Azerbaijani statehood will not be full if we don't take into account the approaches of the Russian General Denikin on that issue. In the 4th volume of his memoirs a chapter is dedicated to the relations between the Armed forces of the South of Russia and the Azerbaijani Republic.

In our conclusion we should state, that Denikin's position on the Azerbaijani statehood is reasonable and based on facts, but on the other hand his approaches are based on the vision of Azerbaijan as a part of the Great Russian Empire.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Деникин А., Очерки русской смуты, М., 2005, т. 4, с. 196.
2. Նույն տեղում, էջ 235-236:
3. Richard G. Hovhannisian, The Republic of Armenia, University of California press, 1995, p. 371.

4. Раевский А., Мусаватское правительство на Версальской конференции, Азербайджанский научно-исследовательский институт, Известия, т. 1, Выпуск 1, Баку, 1930, с. 44.
5. Այսպես, ՀամԿ(ր)Կ Կովկասի երկրամասային և Բարձր կոմիտեների անդամ Ա Միկոյանը Ա.Կիլոսկին ծագեցնազրված 1919թ. մայիսի 22-ի իր գեկույցում գրում էր «Պատմականորեն իրավիճակը փոխվել է: Լեռնականների Հանրապետության կառավարությունը հենարան չունի ժողովրդի շրջանում: Նրա իշխանությունը տարածվում է թեմիս Խան Շուրադի, Գերբնտի և մի քանի գյուղերի վրա... Դաշուստանի մարզվումը բայն ազդեցություն ունի՝ իր տրամադրության տակ մուսլիսկ ունենալով մի քանի հազար սլիկ»: И.Гаджиев, Совместная борьба бакинского пролетариата и трудящихся Дагестана против английских интервентов и денкинской контрреволюции в 1919-1920 гг., Махачкала, 1960, с. 8; его же, Совместная борьба трудящихся Азербайджана и Дагестана за власть Советов, Махачкала, 1960, с. 33.
6. Ա.Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 367:
7. Գաղտնի փաստաթղթերը: Ադրբեջանի դավադրական գործունեությունից մի էջ, Գլխավոր շտաբ, Եր., 1920, էջ 27:
8. Денкин А., նշվ. աշխ., էջ 241:
9. Նույն տեղում, էջ 196-198:
10. "Азербайджан" թերթ, # 182, 1919թ. օգոստոսի 28 (Հաշիմախանի Ազգային արխիվ):
11. Раевский А., Английская интервенция и мусаватское правительство, Баку, 1927, с. 116.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԳԱՎՆԻ
(ԱԻ)

ՉԻՆԱՍՏԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԸՈՒԿԱՅԻ ՆՈՐ ԴԵՐԱԿԱՏԱՐ

1978թ. սկսած ՉԺՀ-ը հրաժարվեց դասակարգային պայքարն իր անկյունաքար ընդունելու քաղաքականությունից՝ իր ուշադրությունը սևեռելով տնտեսական շինարարության ու քարեփոխումների, պլանայինից սոցիալիստական շուկայական տնտեսության անցման, տնտեսության ազատականացման ու քաց հոմների վարման քաղաքականությանը¹։ Չինաստանը, որը 1960-1970-ականներին հայտնի էր իր ինքնամփոփությամբ ու ինքնարավությամբ, արդեն 1980-1990-ականներին արժանագրեց տնտեսության դինամիկ աճ, համաշխարհային նշանակության տնտեսական նվաճումներ և քնակչության կենսամակարդակի զգալի առաջընթաց²։ Այսպիսով, քարեփոխումների քաղաքականության հետևողական կենսագործման շնորհիվ մերկայիս 1.299,88 մլն. (միայն մայրցամաքային հատվածի) քնակչություն ունեցող երկիրը դրսևորեց համաշխարհային տնտեսության պատմության մեջ գրեթե անմիաստեղծ պարեկան 9 տուրս աճ։

Թերևս վերոհիշյալ զարգացումներով կարելի է քացատրել նաև վերջին տարիներին ՉԺՀ միջազգային դերակատարության աստիճանական աճն ու շինական դիվանագիտության կողմից տարածաշրջանային խնդիրներից գլոբալ խնդիրների վրա կիզակետման միտումները։ Դրանում, անշուշտ, իր ուրույն դերն ունի նաև Չինաստանի՝ իր անող գերտնջության կարգավիճակը՝ վերջինիս ինչպես մուտք, այնպես էլ ազդեցության լծակներ ապահովելով գլոբալ էներգետիկ պաշարների նկատմամբ։

Ինդիքն այն է, որ 1990-ականների սկզբներից Չինաստանի տնտեսական զարգացման տեմպերին այլևս չհամապատասխանող վառելիքային դիֆիցիտի պայմաններում Պեկինի համար կենսական նշանակություն ձեռք բերեց էներգետիկ պաշարներով հարուստ մերձավորարևելյան տարածաշրջանի նավթարդյունահանող երկրների նկատմամբ լայնածավալ և հարսնուն մուտքի ապահովումը³։

Չինաստանի նավթային ծախսի շարունակ լքուլացման պայմաններում 1993-ից ՉԺՀ-ը վերածվեց վառելիքային ներկրողի՝ Մերձավոր Արևելքի նավթարդյունահանող երկրների հետ հարաբերությունների զարգացումը համարելով դիվանագիտական առաջնահերթություն⁴:

Իսկ ՉԺՀ-ի կուսիս-արևելյան Դաքինի նավթահորի պաշարների սպառման և Սինցզյան մահանգում, Արևելյան ու Հարավային Չինական ծովերում կանխատեսվող նավթային պաշարների հետ կապված Պեկինի ակնկալիքների յարդարացմամբ՝ հանգամանքները մերձավորարևելյան տարածաշրջանից նավթատարումների ապահովման ուղղությամբ վերջինիս քանքերի ակտիվացման պատճառ համոզիսացան⁵:

Սակայն Մերձավոր Արևելքի հետ համագործակցության զարգացումը Չինաստանին միաժամանակ ներքաշեց քաղաքական հսկաստությունների ու տարածաշրջանային հիմնախնդիրների հորձանուտը՝ կապված մերձավորարևելյան նավթային շուկայում ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Մալդիվայի և Եվրոպայի հետ Պեկինի անխուսափելի մրցակցությամբ: Հետևաբար, Չինաստանը հարկադրված եղավ հետամուտ լինել իր մրցակիցների համար անցանկալի լուսանցքային կամ ռիսկային շուկաների (այսինքն՝ միջազգային խնդիրներ ունեցող այնպիսի երկրների, ինչպիսիք են Իրանը, Իրաքը և Մուդանը) որոնմանը:

Այստեղ հատկանշականն այն է, որ քեև Պեկինը, մի կողմից վերոնշյալ շուկաների օգտագործման ու ընդլայնման հետ մեկտեղ չի կամենում վնասել ԱՄՆ-ի հետ իր հարաբերությունները⁶, մյուս կողմից էլ չի պատրաստվում պասիվորեն հարմարվելու կենսական էներգետիկ պաշարների նկատմամբ վերջինիս գլոբալ վերահսկողության հետ՝ այդպիսով տարածաշրջանում ԱՄՆ շահերի դեմ վճռական մարտահրավեր հանդիսանալով⁷:

Խնդիրն առավել սուր քնույթ է ստանում, երբ ԱՄՆ-ի և ՉԺՀ-ի էներգետիկ ռազմավարական շահերը բախվում են մահ այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսին Կենտրոնական Ասիան է, Կովկասը, ենթասահարայական Աֆրիկան և Լատինական Ամերիկան⁸:

Այս առումով անհիմն չենք համարում Հենրի Քեսինգերի՝ հիդրոկարբոնային պաշարների համար մղվող պայքարն առաջիկա տարիների միջազգային ամենահավանական հակամարտությունը համարելու շուրջ արվող կանխատեսումները⁹:

Այնուամենայնիվ, 2002թ. ՉԺՀ Կոմունիստական Կուսակցության գլխավոր քարտուղար Հու Չինտաոյի պաշտոնավարության ստանձնումից ի վեր երկրի աճող էներգետիկ պահանջների բավարարման նպատակով Պեկինի որդեգրած «դուրս գալու» «զոտ լու քու», ռազմավարության հիմնական ուղեմիջը համարվեց Մերձավոր Արևելքի նավթարդյունահանող երկրների հետ հարաբերությունների հաստատումը:

Եվ երբ 1990-ականների սկզբներին ՉԺՀ-ը մափք էր ներկրում Պարսից ծոցի երկու փոքրագույն երկրներից՝ Օմանից ու Եմենից, իսկ 90-ականների երկրորդ կեսից՝ Մոցի մավթարդյունահանող երեք հիմնական երկրներից՝ Իրաքից, Իրանից ու Սաուդյան Արաբիայից¹¹, ապա վերջնապես ռազմավարության որոշեցումից հետո Պեկինը ձեռնամուխ եղավ ինչպես Մոցին պատկանող առավել փոքր արդյունահանող երկրների՝ Զուվեյթի ու Արաբական Միացյալ Էմիրությունների, այնպես էլ տարածաշրջանից դուրս արդյունահանող երկրների՝ Ալժիրի, Եգիպտոսի, Լիբիայի և Սուդանի հետ հարաբերությունների հաստատմանը¹²։

Հարկ ենք համարում նշել, որ Մերձավոր Արևելքի տևական անկայունության պարագայում Եներգետիկ ոլորտի յննացի փորձագետները մերձավորարևելյան մավթից չափից դուրս կախվածությունից խտաստելու մայատակով առաջ են քաշում մավթային պաշարների դիվերսիֆիկացման՝ տարրորշման խնդիրը։ Նրանց կարծիքով, Չինաստանը պետք է վերանայի իր Եներգետիկ ռազմավարական նկատառումները՝ անվտանգության (քաղաքական և տնտեսական) տեսանկյունից անկայուն Եներգիայի աղբյուրների հարցում։ Վերջիններիս համաձայն, Չինաստանի մավթային ներկրումը 1/3-ով պետք է կախված լինի Ռուսաստանից, 1/3-ով՝ Կենտրոնական Ասիայից և 1/3-ով՝ Մերձավոր Արևելքից։

Այնուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 21-րդ դարի կեսին համաշխարհային մավթարտադրության և արտահանման ոլորտում կայուն ու երկարատև աղբյուր է հանդիսանում միայն Մերձավոր Արևելքը, ապա վերջինս, ամենայն հավանականությամբ, Չինաստանի Եներգետիկ աղբյուրների ռազմավարական տարրորշման գործում կմնա առանցքային, իսկ մյուս տարածաշրջանները՝ իբրև հավելյալ աղբյուրներ։

Հարկ է նշել, որ Չինաստանի «փոստալ աճի» և արդիականացման համար խիստ կարևոր մերձավորարևելյան տարածաշրջանի երկրների հետ համագործակցության զարգացման հանգամանքն իր հերթին կարող է նպաստել համաշխարհային բառերարեմում Պեկինի դերակատարության ակտիվացմանը։ Եվ քանի որ կանխատեսելի ապագայում Չինաստանի տնտեսությունն ըստ էության կտուժի Եներգիայի դիֆիցիտից, ապա Մերձավոր Արևելքն իբրև փառելիքի գլխավոր աղբյուր ինչպես ներկայում, այնպես էլ ապագայում Չինաստանի Եներգետիկ անվտանգության առումով կարևորագույնի իր կենսական նշանակությունը¹³։

CHINA AS A NEW ACTOR IN THE MIDDLE EASTERN OIL MARKET

In 1979 China initiated a new political line, a switch from "taking class struggle as a guide line" to taking economic construction as the central link and starting reform and opening up. With China's rapid economic development in recent years and increasing strengthening of China's comprehensive national power, China's influence on regional affairs are increasing. It is hard reality that China is rising and China's diplomacy tends to transit from regional to global focus accordingly. Because of its new need to supplement lagging domestic production with oil imports, China embarked on a new phase of energy-driven engagement with the Middle East in the 1990s. China initially established important relationships with Oman and Yemen, two of the smaller Persian Gulf states. Over the last decade, China has stepped up efforts to cultivate ties with other, smaller Gulf producers such as Kuwait and the United Arab Emirates, as well as with non-Persian Gulf energy producers in the region, such as Algeria, Egypt, Libya, and Sudan. With its overriding goal of securing oil and gas to fuel China's economic growth, the Chinese government has actively cultivated its relations with the oil-rich countries, especially Iran and Saudi Arabia. If Beijing continues to view access to Middle East as a playing field for great power competition, more direct confrontation between China and the United States will be not the exception but the rule. Given that in the foreseeable future China will continue to suffer from energy deficit, it is obvious that energy in the Middle East is vital to China's energy security.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. China Basic Series, China's Economy, by Wang Mengkui and others, China International Press, 2004, p. 4.
2. Салицкий А.И., Фисоков В.И., Китай и кризисы 90-ых годов, Московский общественный научный фонд, М., 1999, с. 7.
3. International Energy Security and Cooperation, Energy of the Middle East and Peaceful Rise, by Li Weijian. SIIS Publication, Shanghai, China, June 24-25, 2004, p. 184-189.
4. Dan Blumenthal, Providing Arms China and the Middle East, The Middle East Quarterly, Volume XII: Number 2. Spring, 2005. Stu' (<http://www.meforum.org/article/695>).
5. Flynt Leverett and Jeffrey Bader, Managing China-U.S. Energy Competition in the Middle East. By The Center for Strategic and International Studies and the Massachusetts Institute of Technology, The Washington Quarterly, 2005, p. 189.
6. Ji Guoxing, "Jiaqiang Yatai Hezuo Nengyuan Yinsu Burong Hushi," Jiefang Daily (Shanghai), July 20, 1997.

7. Rubin Barry, *China's Middle East Strategy*, *Middle East Review of International Affairs*, Volume 3, No. 1, March-1999. Shu' (<http://www.biu.ac.il/SOC/bsa/meria/journal/1999/issue1/jv3n1a4.html>).
8. Flynt Leverett and Jeffrey Bader, 62q, w2ju., 1p 187:
9. Mark Magner, "China Stakes Claim for Major Access to Oil Around the World," *Los Angeles Times*, July 17, 2005, p. A1.
10. Caroline Daniel, "Kissinger Warns of Energy Conflict," *Financial Times*, June, 2005, p. 8.
11. Rubin B, 62q, w2ju.:
12. Flynt Leverett and Jeffrey Bader, 62q, w2ju., 1p 190:
13. *International Energy Security and Cooperation. Energy of the Middle East and Peaceful Rise*, by Li Weijian. SIIS Publication, Shanghai, China, June 24-25, 2004, p. 185.

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԼԵՎՈՆ
(ԱՐՄԵՆՊՐԵՍ)

ԹՈՒՐԹԻԱՅԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ
ԽՆԴԻՐԻ ԸՈՒՐՁ

ՆԱՏՕ-ի անդամ պետությունների շարքում Թուրքիան, լինելով իր քանակի թվակազմով և սպառազինության հզորությամբ երկրորդ երկիրը և գրեթե չունենալով իր քանակի համար ռազմական տեխնիկայի և սպառազինության ապահովման սեփական ռազմաարդյունաբերական համալիրը, 90-ական թթ. ակտիվորեն ձեռնամուխ է եղել սեփական ռազմական արդյունաբերության համալիրի ստեղծման ծրագրին:

Ներկա ժամանակաշրջանում Թուրքիան իրականացնում է զինված ուժերի և սպառազինության արդիականացման ու նորացման ծրագիր, որը հաստատվել էր դեռևս 1997թ.: Այդ ծրագրի չրջանակներում թուրքական բանակին ու պաշտպանության մախաբարության պաշտպանական արդյունաբերությանը մինչև 2007թ. հատկացվել է շուրջ 27 մլրդ դոլար: Մինչև 2007թ. ծրագրի իրականացումը կարելի է դիտել որպես թուրքական զինված ուժերի արդիականացման կարճաժամկետ գործադրություն: Որպես երկարաժամկետ և հեռանկարային ծրագիր՝ մախատեսվում է մինչև 2020թ. Թուրքիայի զինված ուժերի (այսուհետ՝ ՁՈՒ) արդիականացման համար ներդնել 150 մլրդ դոլար¹:

2005թ. նոյեմբերին Թուրքիայի զինված ուժերի պաշտպանական արդյունաբերության խորհուրդը որոշեց ուժեղացնել երկրի ֆիկտիվային ենթակառուցվածքները, ինչի համար մտադիր է առաջիկա 10 տարիների ընթացքում 50 մլրդ դոլարի ներդրումներ ապահովել այդ ոլորտում: Պաշտպանական իմանադրամի հաշվին կատարվելիք այդ ներդրումների շարքում են ապագայի ռազմական ինքնաթիռներ համարվող «Atak» կոչված 50 հատ տակտիկական-հարձակողական ռազմական ուղղաթիռների և վերջին տարիներին տարածված «Avacs» կոչված ինքնաթիռների ձեռք բերման համար ներդրումները: Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության կապալառուական ծրագրերում տեղ են գտել հետևյալ մախագծերը. ապագայի ռազմական ինքնաթիռների ձեռքբերում, 50 հատ տակտիկական-հարձակողական ուղղաթիռների ձեռքբերում, զինված ուժերի համար 50 հատ ընդհանուր օգտագործման ուղղա-

թիւների ձեռքբերում, «Leopard I» տիպի տանկերի արդիականացում, ռազմական մավերի արդիականացում և այլն²:

Հարկ է նշել, որ Թուրքիան հատկապես վերջին տասնամյակում խիստ հետևողական է իր սեփական կամ մասնակի ազգային պաշտպանական արդյունաբերության ստեղծման և զարգացման գործում, ինչը նախատեսում է այլ երկրների համապատասխան նաստատությունների ու արդյունաբերական համալիրների հետ համատեղ ռազմական տեխնիկայի և մի շարք զինատեսակների արտադրություն: Թուրքական ռազմական արդյունաբերությունը կարելի է ասել արդեն զրանցել է որոշ նաջողություններ այդ ոլորտում: Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրի հիմքի վրա է արտադրվում այդ երկրի բանակի տրամադրության տակ գտնվող ռազմական տեխնիկայի և զինատեսակների մոտ 20 տոկոսը³:

Թուրքիայի ՋՌԻ-ի սպառազինության ապահովման համար գործընկերներ են եղել Հյուսիսատլանտյան դաշինքի պետությունները՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան: Վերջին շրջանում նկատվում են ռազմական ոլորտում, և հատկապես ռազմական տեխնիկայի ձեռքբերման ուղղությամբ, Թուրքիայի և Ռուսաստանի, ինչպես նաև Ոկրաինայի հետ համագործակցության միտումներ:

1990-ական թթ. կեսերից Թուրքիայի ՋՌԻ-ի սպառազինության ձեռքբերման և արդիականացման տեսանկյունից բավական սերտ համագործակցություն զարգացավ հատկապես Իսրայելի ռազմաարդյունաբերական համալիրի հետ⁴: Իսրայելական ռազմաարդյունաբերական համալիրի հետ համագործակցությունը հնարավորություն տվեց Թուրքիային ապահովել իր ՋՌԻ-ի սպառազինության բարձրագույն ու արդիականացումը, ինչպես նաև Իսրայելի միջոցով անուղղակիորեն ամերիկյան նորագույն զինտեխնիկայի ձեռքբերումը:

Իսրայելական ռազմաարդյունաբերական համալիրի հետ համագործակցությունը հնարավորություն էր տալիս բուրքական զինուժն ապահովել նորագույն ռազմական տեխնոլոգիաներով: Թուրքիայի պաշտպանության արդյունաբերական քարտուղարությունը (Savunma Sanayi Misteqerligi) շահագրգռված էր համատեղ ռազմական արտադրություն հիմնելու հարցում: Քայլեր ձեռնարկվեցին հակաօդային պաշտպանության, հրթիռների համատեղ արտադրության ուղղությամբ, որոնք դեռևս չարունակվում են: Թուրքիան մինչև օրս էլ չափազրգոված է Իսրայելի ավիացիոն արդյունաբերության հետ համատեղ միջին հեռահարության «երկինք-երկիր» հրթիռների համատեղ արտադրության համար: «Roketsan» յուրքական ընկերության տնօրեն Հուսեյին Բայսաքը հայտարարել է, որ բոլոր ենթակառուցվածքներն ունեն ամեն տեսակի հեռահար գործառության հրթիռներ արտադրելու համար: «Մենք արդեն

սկսել ենք հետահար գործողության հրթիռների արտադրությունը՝ սեփական կազմից հոգալու համար: Դրա առաջին ցուցանիշը կլինեն հակատանկային հրթիռները», - ասել է նա¹:

2005թ. նոյեմբերին բուրքական պաշտպանական արյուճաքերության քարտուղարության և իսրայելական ռազմական արյուճաքերության ընկերության ու «Elbit Systems» ընկերության միջև ձեռք բերված համաձայնությամբ սկսվել է բուրքական բանակի «M-60» 170 տանկերի արդիականացման 688 մլն դոլար գնահատվող ծրագիրը²: Նախատեսված է դրանք մի շարք քնննագրերով համապատասխանեցնել իսրայելական տանկերի նորագույն տեսակներին: Թուրքական տանկերի արդիականացման պայմանագիր էր կնքվել դեռևս 2002թ., բայց տեխնիկական պատճառներով հետաձգվել էր: Տանկերի որոշ բաղադրամասերի արտադրությունը սկսվելու է 2006թ. վերջին, իսկ նոր տանկերի քողարկումը 2007թ. բուրքական Կայսերի քաղաքում: Նույն ծրագրի շրջանակներում «M-60» տանկերը հանդերձավորվելու են մի շարք համակարգերով, որոնք օգտագործվում են իսրայելական «Merkav 4» տանկերում, այդ 170 տանկերը նորացված ձևով Թուրքիան կստանա 2009թ.³:

Իսրայելական ռազմարյուճաքիական ընկերությունները մասնակցել են նաև բուրքական ռազմական ուղղաթիռների ու ռմբակոծիչների արդիականացման ծրագրերին՝ դրանք ապահովելով նորագույն տեխնոլոգիաներով ու արքայազորումներով:

2005թ. երկու երկրների միջև կնքված պայմանագրով Իսրայելի պաշտպանության նախարարությունը տեխնոլոգիայի և աջակցություն է ցույց տալու Թուրքիային՝ տիեզերական հետախուզության ստեղծման համար, որի կապակցությամբ Թուրքիայում ազգային տիեզերական գործակալության մասին օրենք է ընդունվել: Նշենք, որ դեռևս 2002թ. դրա ստեղծման համար նախատեսվել էր հատկացնել 250 մլն դոլար⁴:

Թուրքիան այս տարի ձեռնամուխ է լինում տիեզերական հետազոտությունների ազգային ծրագրի իրագործմանը, որը նախատեսում է անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծում՝ տիեզերքի ուսումնասիրման և 2014թ. առաջին մարտնամալի արձակման համար: Երկրի Ազգային անվտանգության խորհրդի (MGK-Milli Güvenlik Konseyi) նաստատած՝ «Տիեզերական նախագիծը» նաև նախատես է դնում 2006թ. Թուրքիայի միացում Եվրոպական տիեզերական ծրագրին, մինչև 2010թ. տիեզերագնացների պատրաստման սեփական ծրագրի մշակում և մինչև 2012թ. ազգային տիեզերակայանի կառուցում⁵: Անցած տարի Թուրքիայի ՁՈՒ-ի Գլխավոր շտաբը (Genel Kurmay) վերականգնեց հետախուզական արքանյակի ստեղծման և քացքողման ծրագիրը⁶:

2005թ. վերջին Թուրքիան մոտ 10 մլրդ դոլար արժողության երրորդ սեքտորի հայրենական տանկերի արտադրության հավակնուտ խնդիր դրեց իր առջև, որին ցանկություն հայտնեցին մասնակցել ամերիկյան,

խրաչելական, հարավկորեական և եվրոպական ռազմաարդյունաբերողները: Հայրենական տանկերի արտադրության այդ ծրագիրն էլ կարելի է դիտել թուրքական սեփական ռազմական արտադրության ամենամեծ նախաձեռնությունը, որ երբեք էլ առաջադրվել է:

Անցած ամիս Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գծով խորհրդական Մուրադ Քայաբը նշել էր, որ Թուրքիայի պատմության մեջ ամենամեծ պաշտպանական նախագիծը հանդիսացող զինված ուժերում նորագույն ինքնաթիռների կարիքի համար պետք է ընդհանուր առմամբ 10 մլրդ դոլար արժողությամբ 100 ինքնաթիռներ գնեն: Թուրք զինվորական խորհրդականն ասել է, որ նոր սերնդի ռազմական ինքնաթիռները պետք է փոխարինեն թուրքական զինված ուժերի կողմից դեռևս օգտագործվող «F-16» և «F-4» ռազմական ինքնաթիռներին: Ենթադրվում է, որ նախագծի ամրագրությամբ իրագործման համար կպահանջվի մոտ 20 տարի և նախագծի հետ կապված աշխատանքների 50 տոկոսը կիրադրվի քուրդական «TUSAŞ», «ASELSAN», «HAVELSAN», «ROKETSAN» ընկերությունների և Թուրքիայի օդազնացության և տեղեկագրագնացության արդյունաբերության ընկերության պաշտպանական գործարաններում¹¹:

Վերջերս Թուրքիան մաս կազմեց պաշտպանական քննազատի ինքնաթիռաշինական լայնածավալ ծրագրին: ԱՄՆ-ի «Lockhead Martin» ընկերության Տիխասի նահանգի ինքնաթիռաշինական գործարանում արտադրության պատրաստվող «F-35» տիպի ուղղահայաց վերելք և վայրեցք կատարող ինքնաթիռների ստեղծման նախագծին մաս է կազմել նաև Թուրքիան, և որ այդ ինքնաթիռների վաճառքից մասնաբաժին պետք է հատկացվի նաև այդ երկրին: «F-35» ինքնաթիռների ստեղծման նախագծի արժեքը կազմում է 276 մլրդ դոլար և նախագծի իրագործման համար Թուրքիան 10 մլրդ դոլար է հատկացրել, որի 3.5 մլրդ - դոլարի վերադարձն այդ երկրին երաշխավորված է՝ Թուրքիային 100 ինքնաթիռներ վաճառելու ակնկալիքով¹²:

Այնքան է, որ Թուրքիան ակտիվ քայլեր է ձեռնարկում սեփական ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծման ուղղությամբ՝ միաժամանակ այլ երկրների հետ ռազմական համագործակցության շրջանակներում ապահովում իր ՁՈՒ-ի ռազմական տեխնիկայի և օպատագիմության համալրումն ու արդիականացումը՝ մեծան ծրագրերին հատկացնելով հսկայական գումարներ:

THE MODERNIZATION OF TURKEY'S ARMED FORCES

Being the second country with its ammunition and ranks and file among the NATO member countries and without having its own complex for ensuring the ammunition and military technology for its army, starting from 90s Turkey launched program on creating its own military-industrial complex.

At present Turkey is implementing program on modernization of its Armed Forces which was adopted in 1997. Within the frameworks of the program 27 million USD were provided to the Turkish army and Defense Ministry's defense industry by the 2007. It is also expected to provide 150 billion USD for the modernization of Turkish armed forces by 2020.

In these sphere Turkey has started actively cooperating with Israel as well as with NATO member states, particularly in the spheres of modernization of military technology and achievement of new military equipment.

It is obvious that Turkey is undertaking active steps for the creation of its own military-industrial complex at the same time ensuring modernization of its armed forces within the frameworks of cooperation with other countries.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Гурьев А.А.; Турция—Израиль: по пути укрепления военного сотрудничества, <http://www.limes.ru/rus/stat/2006/24-01-06.htm>.
2. Akşam, 21.11.2005
3. Гурьев А.А., 624. 221а.
4. Քուրդ-իսրայելական ռազմական համագործակցության մասին ավելի մանրամասն տե՛ս Kogan E. Cooperation in the Israeli-Turkish Defence Industry, Middle East Series 05/43, September 2005, Conflict Studies Research Centre, www.da.mod.uk/CSRC/documents/middle_east/05/43-EK
5. Yeni şafak, 03.10.2005
6. Hürriyet, 23.11.2005
7. Նույն տեղում:
8. Kogan E., 624. 221ա.
9. Yeni şafak, 29.03.2006
10. Turkish military rekindles quest for spy satellite - Janes Defence, 18.02.2005, www.Lenta.ru, 24.02.2005
11. Akşam, 29.03.2006; Zaman, 16.03.2006
12. Milliyet, 11.04.2006

ՂԱՐԻՔԸՆՆԱՆ ԳԵՎՈՐԳ
(Ա)

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐՆԱՆԱՎԵՐԻ ՍԵՐ-
ՏԱՃՏԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ 1990-ԱԿԱՆ ԹԹ.**

1980-ական թթ. կեսերին ներքաղաքական անկայուն իրադրությունը և սոցիալ-տնտեսական լարվածությունը Սիրիայում աստիճանաբար մեղմացավ:

Ասադի օրոք Սիրիայում փաստացի գործում էր կառավարման երկաստիճան համակարգ, որն սկսել էր առավել ցայտուն դրսևորվել 1980-ականների սկզբից և շարունակվեց 1990-ականներին: Երկրում արտաքինապես գործառնում էր կառավարման համակարգ՝ մախազահի գլխավորությամբ և իշխանության գործադիր և օրենսդիր մարմիններով, ինչպես նաև պետության կողմից վերահսկվող մի շարք ինստիտուտներով, որոնք ստեղծվել էին վարչակարգի կողմից՝ զինված Արաբական վերածնունդ սոցիալիստական կուսակցության՝ (ԱՎՄԿ կամ Քասա, քասադի՝ վերածնունդ) գաղափարախոսական հիմնադրությամբով: Կուսակցությունում գոյություն ունեյր սեփական իշխանական հիերարխիան և կառավարման սեփական մարմինները: Դրա հետ մեկտեղ Սիրիայում գործում էին նաև քաղաքիկ հասարակական և մասնագիտական կազմակերպություններ (այսպես կոչված մոնազզամաթ շա՛աբիյա՝ ժողովրդական կազմակերպություններ), որոնք ներկայացնում էին սիրիական բնակչության տարբեր խավերի և շերտերի շահերը: Երկրի կառավարությունում ներկայացված էին Սիրիայի տարբեր կրոնական դավանանքների ներկայացուցիչները՝ բնակչության մեջ իրենց քվաքանակի համապատասխան: Ասադի ստեղծած վարչակարգը մեծամասամբ համապատասխանում էր Սիրիայի բնակչության հիմնական խմբերի շահերին, քաջառությանը մեծահույսատ սուննի խավի, որոնց դրությունը, սակայն, էական փոփոխության ենթարկվեց 1990-ականների սկզբից: Իր ճկուն քաղաքականությամբ Ասադն ապահովել էր վարչակարգի աջակցության լայն հասարակական հենք և երկրում համեմատաբար սոցիալական խաղաղություն՝ կյանքի կոչելով 1970թ. նրա հիմնադրած ուղղիչ շարժման միջոցով արձատսվորված հիմնադրությունն ու նպատակնե-

որ, որոնք փաստորեն չէին փոփոխվել վերջին երեք տասնամյակների ընթացքում:

Ասադի օրոք տեղեկված այդ ձևական պետական և հասարակական կառույցներն ու ինստիտուտները հիմնականում կառավարող էլիտաների գործունեության օրինականացման միջոց էին հանդիսանում, իշխանության օրինականության կերպարի տեղեկման խնդիր էին կատարում, ծառայում էին որպես քննադատական սոցիալական և տնտեսական համախմբման նական գործոն: Այդ համակարգը իշխանությանը ենարակություն էր տալիս իր կողմը գրավել նոր կողմնակիցներ և նշանակել նրանց ղեկավար պաշտոններին, որոնք ապացուցել էին իրենց հավատարմությունը²:

Այդ ձևական կառուցվածքի հետ մեկտեղ գործում էր իշխանության իրական կառուցակարգը, որը ներկայացված էր բանակի և ծառայությունների բարձրագույն ղեկավարությամբ, որոնցից իրականում կախված էր վարչակարգի կայունությունը և ապագան: Ձիճվորականները վճռորոշ դիրքեր էին զբաղեցնում կառավարող ելիտարիստիկ մեջ, նրանց իրավասություններն ինտրիկեցված չէին սահմանադրության մեջ, սակայն նրանք քաղաքական մեծ ազդեցություն ունեին: Ըստ դեպքերում Սիրիայում մի շարք հանգուցային կարգերի շտրք վճռորոշ խոսքը պատկանում էր դիվիզիաների հրամանատարներին, հատուկ ծառայությունների ղեկավարներին, ինչպես նաև ալավիական³ հոգևորականության վերնախավին⁴:

Որպես բարձրատիճան գինվորականներ մտնում էին Պաշտպանության խորհրդի կազմի մեջ, սրը կարևոր տեղ էր գրավում քաղաքական որոշումներ ընդունելու գործում: Ինչպես պաշտպանության խորհուրդը, այնպես էլ ալավի շեյխների բարձրագույն խորհուրդը չէր ազդարարում իր գործունեությունը: Իր ամենամեյա միտերում ալավիական համայնքի վերնախավը որոշումներ էր ընդունում համայնքի կյանքի և ընդհանրապես երկրի ամենամորթակատ հարցերի վերաբերյալ: Եվ չնայած այդ որոշումները հասնում էին պետության նախագահին որպես երաշխավորություններ և կարծիքներ, Ասադը, որպես կանոն, հետևում էր դրանց⁵:

Այլ էր իրադրությունը՝ տնտեսական ոլորտում: 1990-ականների սկզբներից երկրում սկսեց ձևավորվել նոր տնտեսական էլիտան: Հետզհետե ազատ տնտեսական հարաբերությունների զարգացման պայմաններում ալավիների իշխանության պահպանման և կայունության գրավակալը ալավի վերնախավի և քաղաքական էլիտայի սերտ կապն ու համագործակցությունն էր Սիրիայի առևտրա-ֆինանսական էլիտայի սուննի խաչոր ներկայացուցիչների հետ՝ ալավիական ընկերակցության կողմից պետական վարչակազմի, բանակի և անվտանգության ու հատուկ ծառայությունների վրա վերահսկողության սրահպանման հետ մեկտեղ: Այն ուներ իր տրամաբանական հիմնավորումը: Ավանդական սուն-

միակամ մեծահարուստ խավի հետ համեմատած տնտեսական առումով առավել քոյլ ալավիները տարակուսում էին, որ եթե տնտեսության շուկայական բնույթն առավել զարգացում ստանա և տնտեսության ազատականացման քարեփոխումներն էլ ալիքի խորանան, ապա ալավի փոքրամասնությունը կարող է յղիմամալ մրցակցությանը և զիջել նաև իր քաղաքական դիրքերը սումնի մեծահարուստ գործարար խավի ճնշումների ներքո: Ի տարրերություն 1970-ականների և 1980-ականների, և համոզվելով, որ անհնար է իշխանության հետ քաջահայտ առնակառմամբ⁶ հասնել հաջողության, ալավիական իշխանության հետ սերտ գործակցության մեջ շահագրգռված էր նաև սումնիական խավը և ձգտում էր դրան: Սումնի խոշոր գործարարներին անհրաժեշտ էր ազդեցիկ ալավի գեներալների և կուսակցական-վարչական վերնախավի աջակցությունը քաղաքականության արգելքներն ու տնտեսության պետական կարգավորման տանձամատիակումները հաղթահարելու համար: Ալավիներն իրենց հերթին շահագրգռված էին սումնիների միջոցով երբ ունենալ դեպի արևմտյան շուկաներ և նրանց կապերի շնորհիվ պահովել արտասահմանյան ներդրումներ Սիրիայի տնտեսությունում: Իր հերթին ալանդապես տնտեսական ալիքի մեծ ներուժ և արտաքին շուկաներում որոշակի հեղինակություն և մշակված կապեր ունեցող սումնիական մեծահարուստ գործարար խավը տնտեսության պետական կարգավորման պայմաններում իր տնտեսական շահերը պաշտպանելու համար ստիպված էր աջակցություն փնտրել քարծրաստիճան ալավիների՝ զինվորականների և հատուկ ծառայությունների ղեկավարների մոտ, որոնցից վերջին հաշվով կախված էր երկրում ազատ գործարարությանը զբաղվելու հնարավորությունը: Միևնույն ժամանակ 1990-ական թթ.-ի սկզբից սիրիական նոր խոշոր գործարար խավը սկսեց ձեռք բերել առավել ժամրակչիկ դիրքեր՝ որպես վարչակարգի հիմքերից մեկը, որը պետության մեջ ուժերը հավասարակշռող գործոն էր: Առաջը լավ հասկանում էր, որ նոր սիրիական տնտեսական էլիտան մոտ ապագայում կարող է դառնալ վարչակարգի կայունության և անկախության վճռորոշ տարրերից մեկը: Այդ պատճառով նա տնտեսական ազատականացման միջոցով ձգտում էր քաջել նրա մուտքը և ներքախանցումը իշխանական մարմիններ և ինստիտուտներ: Այդուհանդերձ սումնիների պարագայում ամբողջությամբ իշխանամետ կուտ խավի ձևավորումը, որը դեռևս 1980-ականների սկզբին ֆինանսավորելով իսլամական-ծայրահեղականներին լուրջ սպառնալիք էր ստեղծել վարչակարգին և աշխարհիկ Սիրիային, պահանջում էր ոչ միայն մասնավոր սումնիական կապիտալի և ալավիական իշխանության առավել սերտացում, այլև Սիրիայում առավել լայն քաղաքական ազատականացում և արմատական քարեփոխումներ⁷:

Միջխայտմ 1990-ական թթ.-ի սկզբից սկսեցին ձևավորվել ալալիսական և սոմնիական բիզնես-ընկերակցություններ, ընդհանուր տնտեսական շահերի և աճող քաղաքական նկրտումների հիմքի վրա: Սոմնիական տնտեսական էլիտան, հատկապես Դամասկոսի խոշոր գործարար խավը 1990-ական թթ.-ի սկզբներից սկսեց հետզհետե ինտեգրվել իշխանությանը այն միջոցով, որը ղեռ վաղուց հայտնի էր ալալի համայնքի մեջ պետական բարձր պաշտոնները քաշխելու գործում: Միջխայտմ տնտեսության ուժեղ պետական հատվածի առկայության և տնտեսության պետական կարգավորման պայմաններում սոմնիներն իրենց տնտեսական շահերը բավական գործուն պաշտպանում էին մաս ամուսնական-բարեկամական կապերի միջոցով կառավարչական կառույցներում և իշխանության վերնախավում, սակայն նրանց ազդեցությունը ուղղումներ ընդունելու ոլորտում բավական սահմանափակ էր, իսկ նրանց կարգավիճակը, որպես իշխանության գործընկերներ, քիչ զգալի էր⁶: Միջխայի կրոնա-դավանական փոքրամասնությունները՝ քրիստոնյաները, դրուզները, իսմաիլականները նույնպես ալալիների իշխանությունը դիտարկում էին որպես իրենց անվտանգության և հասարակական կարգավիճակի որոշակի երաշխիք, որը նրանց կարծիքով կարող էր փոփոխվել սոմնիների՝ իշխանության գալու դեպքում:

Փոքրամասնությունների ներկայացուցիչները նույնպես լուրջ քաղաքական և տնտեսական դիրքեր էին զբաղեցնում պետությունում և անմիջական աղեցություն ունեին Միջխայի քաղաքական վերնախավի ձևավորման գործում: Նրանց սոցիալական կարգավիճակի այդպիսի աճը մեծամասամբ պայմանավորված էր Միջխայում բանակի և ԱՎՄԿ-ի դերի բարձրացմամբ: Հայտնի է, որ զինվորական ծառայությունը հնարավորություն էր տալիս կրոնական համայնքների ներկայացուցիչներին պետությունում բարձրանալ դեկավար դիրքերի: Նմանատիպ հնարավորություններ էր ընձեռում մաս ամրամակցությունը Բաաս կուսակցությունում⁶:

Այսպիսով, 1990-ականներին Հաֆեզ ալ-Ասադի հավասարակշռող քաղաքականությունը Միջխայում մեծամասնություն կազմող սոմնիների և իշխանության կորիզը կազմող ալալիների միջև, ինչպես մաս որոշակի ուշադրությունը կրոնական փոքրամասնությունների նկատմամբ և նրանց ներգրավումը կառավարման համակարգում նրկում քաղաքական կայունության հիմնական գրավականներից մեկն էր, ինչի շնորհիվ Միջխան դուրս եկավ 1980-ականների ներքաղաքական շարունակական անկայուն դրությունից:

THE PROCESS OF ACCRETION OF POLITICAL AND ECONOMIC
ELITES OF SYRIA IN THE EARLY 1990's.

After the economic stagnation of 1980's the new economic elite of Syria was on the way to formation in the early 1990's. Under conditions of development of free economic relations and increasing liberalization of the Syrian economy, the keeping of power by the alawies and the stability of the regime were determined by the close cooperation between the Alawi political and military elite with the Sunni upper representatives of commercial and financial elite.

The upper Sunni businessmen and entrepreneurs actually needed the support of the influential Alawi generals and party-administrative officials, to overcome the bureaucratic obstacles and the restrictions of the state-regulated economy as well. Simultaneously the Alawies were interested in getting a possibility to reach international markets via Sunnis and providing foreign investments for the Syrian economy using the close business ties of the Sunni economic elite.

ՃԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կուսակցությունը հիմնադրվել էր Սիրիայում 1947թ. և վերածվել համաարարական կուսակցության՝ իր ժամանակներում ճիշտ արաբական եղբրնություն: 1954թ. Դաժանկոսում անեղծվեց կուսակցության առաջին համազգային դեկլարությունը: Կուսակցությունը Սիրիայում իշխամության եկավ 1963թ., և նրա հիմնական կարգախոսն է «միասնություն, ազատություն, սոցիալիզմ»:
2. Сирия. Справочник, М., 1992, с. 209-210.
3. Ազալիները իսլամի երկու գլխավոր ուղղություններից մեկի՝ շիականության մի ճյուղավերումն են, որոնք 4-րդ խափնա Աֆիմ, որից գալիս է նրանց անվանումը, դարձրել են իրենց պաշտամունքի առարկա: Սիրիայի մախազահ Հաֆեզ ալ-Ասադը մույնպես պալի էր, նրանց կրոնական առաջնորդի՝ ուսիս աղ-դիմի մատավայրը գտնվում է Ասադի ծննդավայր Սիրիայի Կարդահս բնակավայրում:
4. Ахмедов В. М., Сирия на рубеже столетий. Власть и политика, М., 2003, с. 32.
5. Նույն տեղում:
6. 1982թ. իշխամությունները դաժանորեն ճնշեցին մահ որոշ յափով ստեճնների շահերն արտասխյտող «ճառտվճան-եղայրների» նւոյթները:
7. Hinnebusch R.A. Asads Syria and the New World Order. The Struggle for Regime Survival. Middle East Policy. 1995 с. 80-86.
8. Volker P., The Political Economy of Syria under Asad. L., 1997, с. 50-58.
9. Նույն տեղում:

ՄԱԼՅԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ
(ՄԻ)

ՀԱՄԵՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՈՐՊԵՍ
ՈՍՁՄԱՔԱՎԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ ՍՈՉԻ-ԳԱԳՐԱ
ՏԱՐԱԾԱԵՐՁԱՆՈՒՄ 1919Թ.

1919թ. փետրվարին «սպիտակ» Կամավորական բանակը դուրս քշեց Մոչիից վրացական զորքերը, որից հետո միաճեց Գազրայի տարածքը: Այդ բանակի առաջխաղացումը համընկել էր անկարգություններ անող վրաց զինվորականների դեմ համընդհանուր բնակչության մասնակի զինված ելույթի հետ: Մոչիի Հայոց ազգային խորհուրդը (այսուհետև՝ ՀԱԻ) կոչ էր անում բոլոր շահագրգիռ կողմերին ալևա շենքարկել շրջանը Վրաստանի կառավարության իշխանությանը¹: «Սպիտակ շարժման» և վրաց զինված ուժերի բախման հետևանքով առաջացել էր Մոչիի ռազմաճակատը: «[Մոչիի շրջանում] բոլոր դժգոհությունն չկար Կամավորական բանակի դեմ մինչև մոքիլիզացիայի յայտարարումը... [ռուս գյուղացիությունը] սաստիկ յուզեց և որոշեց զինուր շտաբ»²: Բնակչության հուզումներն ակտիվ հրահրում էին ռուս սոցիալիստ-հեղափոխականները: Չորսհավարից խոսափողները քաքնվում էին լեռներում: Նրանց հավաքում ընդունվել էր բանաձև, որը մերժում էր զորակոչի մասին հրամանը, քանզի «գյուղացիները չեն ցանկանում զոհվել վրացական և բուլղիկյան ռազմաճակատներում...»³: Շարժումը դեկավարելու համար ընտրվել էր «Ժողովրդական շտաբ»: Խոտվարար ռուս գյուղացիները կոչվում էին «կանաչներ» կոմունիստ «կարմիրներից» և միապետական «սպիտակներից» տարբերելու համար⁴: Որոշվել էր սկսել ապստամբություն «սպիտակների» դեմ և գրավել շրջանի քաղաքները: Լեռներից Մոչիի ուղղությամբ առչակվելու համար անհրաժեշտ էր անցնել հայկական ավանների միջով, որոնք գտնի էին կազմում ռուսարմակ գյուղերի և ծովափի միջև: Ուստի հարկավոր էր հայ գյուղացիների համաձայնությունը ստանալ, կամ գոնե նրանց չեզոքությունն ունենալ: Ապստամբների ղեկավարները խնդրեցին Մոչիի ՀԱԻ-ի անդամներին իրենց հետ բանակցությունների մեջ մտնել: Հայերի ներկայացուցիչները մտահոգություն էին հայտնում, որ առաջացած հակամարտությունից կարող է օգտվել վրացական բանակը: Հայկական կողմը կասկածում էր նաև, որ անհա-

ջողութեան դեպքում ապստամբները կարող էին դիմել Վրաստանի օգնության²։ Ուստի հայերը պարզ արտահայտեցին իրենց դիրքը. նրանք դեմ են ապստամբությանը, իսկ եթե վրացական բանակն օգտվելով Ելույթից ճեղքի ուսգմանակատը, ապա հայերն այդ պարագայում, իրենց գոյությունը պահելու համար, կմիասնան ցամաքացած ուժի հետ, քննույզ «սպիտակ»։ Այսպիսով հայերի դիրքորոշման հետևանքով հետաձգվեց ապստամբների հարձակումը շրջկենտրոնի ուղղությամբ, ինչն էսպես ազդեց դեպքերի հետագա զարգացումների վրա։ 1919թ. ապրիլի սկզբին էլույթը սկսվեց, սակայն ոչ այն չափով, որը սպասվում էր։ Խռովարարները կարճ ժամանակով կարողացան գրավել Խոտտան և Աղեբը։ Հայերից շատերը, որոնք ողջունում էին «սպիտակների» տիրապետությունը, որպես ազատություն վրացական լծից, համերաշխ չեղան այդ պարագայում ռուս գյուղացիների հետ³։ Չնայած բռնկված ապստամբության՝ բոլոր զինուսպարտ հայերը մերկայացել էին զորակոչային կետերը։ Կազակների երկու հարյուրյակների և հայերից հապճեպորեն կազմակերպված ջոկատների միացյալ ուժի շնորհիվ, ապրիլի 11-ին Խոտտայի մտակայքում եղած դաժան մարտում, հաջողվեց ջախջախել ապստամբների «բանակը», որը քաշվեց դեպի լեռներ։ «Սպիտակ» հրամանատարության գնահատականը եղավ այն, թե «բոլոր զորակոչված հայերը հավատարիմ մնացին Ռուսաստանին»⁴։ Երթանում «Աշխատավոր» քեթի սեփական թղթակիցը հաղորդում էր. «Երոթինը լուրջ էր ծայր աստիճանի, հայերը բնառ ցանկություն չունեին կռի թոնել իրենց դրացիների հետ, որոնց հետ տասնեակ տարիներ եղել են բարի հարևաններ և ապրել են շատ խաղաղ ու բարեկամական»⁵։ Խռովությանն ակտիվ մասնակցություն էին ցուցաբերել Պլաստունակայա գյուղի վրաց բնակիչները⁶։ Այս գյուղի դեմ ուղվել էին պատժիչ ուժեր։ Նրան հարակից Նորաչեն ավանի հայկական ջոկատին «սպիտակ» հրամանատարությունը կարգադրել էր գրավել ուսգմավարական նշանակություն ունեցող բլուրը, որն ընկած էր Նորաչենի և Պլաստունակայի միջև և, որի վրա դիրքավորվել էին զինված վրացիները։ Հայերը մերժեցին այդ կարգադրությունը։ Վրաց գյուղացիները, որոնց էլույթի էին հանել վրացական բանակի աջակցության և շրթանում Վրաստանի տիրապետության վերականգնման խոստումներով, հուսախաբ եղան և փախչում էին դեպի լեռներ, տեսնելով «սպիտակների» զերազանցող ուժերը։ Մի քանի հարյուր երեխա, կին և ծեր ապաստան գտան դրացի Մամայրա հայկական գյուղում⁷։ Ըստ «Աշխատավոր»-ի թղթակցի, «Պլաստունակայի դժբաղդությունը անկեղծ ցառ պատճառեց բոլոր հայութեան, որովհետև այդ խաղաղ... գյուղը զուհ գնաց ... պղծվեցախային»⁸։

Ունենալով աչքի առաջ վրացական փտանցը, տեղի հայկական բոլոր հասարակական ուժերը համախմբվեցին Սոչիի ՀԱԽ-ի շուրջը և գերագույն ջանքեր գործադրեցին ապստամբ ռուս գյուղացիներին խաղա-

դացնելու համար: Բանգի վրացական քանակի ենթադրվող միջամտությունը ճգճգվում էր, ապա ապստամբ ղեկավարների մոտ ՀԱԽ-ի խաղաղարար միջնորդությունը հաջողությամբ ունեցավ: Վերցնելով այդ առաքելությունը ՀԱԽ-ը մախապես առաջարկել էր «սպիտակ» հրամանատարությանն ընդհանուր ներում շնորհել Ելույթի մասնակիցներին, ինչպես նաև շրջանում այլևս չամցկացնել զորահավաք¹⁷: Սույի քնակիչ, սոցիալիստ-հեղափոխական Ն. Վ. Վորոնովիչը միազնցեցում է ՀԱԽ-ի դերը խաղաղության հաստատման գործում, ասելով, թե հիշյալ պայմաններն առաջարկվել էին ամմիջապես «սպիտակ» հրամանատարության կողմից, իսկ հայերին իբր մնում էր միայն հաղորդել այն «Ժողովրդական շտաբին»¹⁸: ՀԱԽ-ի մախաձեռնությամբ 1919թ. ապրիլի 16-ին Սուխում կրավորվեց խորհրդակցություն, որի աշխատանքներում մասնակցեցին հայ, ռուս, հույն, էստոնացի և մոլդովացի ազգաբնակչության քանազանացները: Խորհրդակցությունը պարզ կերպով ծայտարարեց, որ չի ցանկանում վերստին տեսնել շրջանը Վրաստանի տիրապետության ներքո¹⁴: Սակայն ապրիլի 17-ին, երբ Սույի շրջանը գրեթե խաղաղվել էր, վրացական զորքերն անցան հարձակման և այնուհետև զրավեցին Ադլերը: «Սպիտակները» շտաբը, լուսննալով բավարար թվով զինված ուժ դիմադրելու համար, պատրաստվում էր լքել Սույն¹⁵: Հանչնահայ համայնքի մեծ մասը տրամադրված էր վաղ թե ուշ վերադառնալ Հայրենիք¹⁶ և այն հարցը, թե կլինի Սույի շրջանը Վրաստանի կամ Ռուսաստանի կազմում նրան քիչ էր հուզում: Սակայն հանչնահայ քնակչությունը համոզված լինելով, որ վրացական տիրապետության վերահաստատումը բացի հալածանքներից հայերին ոչինչ չի խոստանում, ապա դիմում է ինքնապաշտպանության և այդ պահին հանդիսանում էր գրեթե միակ կազմակերպված ուժը, որը ռազմաճակատում կարողանում է կասեցնել վրացական առաջխաղացումն Ադլերից հյուսիս ընկած տարածքների ուղղությամբ¹⁷: Դեպի հարավ գտնվող Գագրայի և Պիլենկովայի ենթաշրջանի հայկական գյուղերի մեծ մասը չէր դիմադրել վրացական արշավանքի հենց առաջին օրից և կամավոր զինաթափ էր եղել Մոխուսի ՀԱԽ-ի անդամների քարոզչության և միջնորդության շնորհիվ¹⁸: Սույնը տրամադրվել էին անել նաև լեռներում գտնվող Չորագյուղ, Քրիստաֆորովո և Օվա գյուղերի քնակիչները, բայց տեսնելով, որ ոչ մի հնազանդություն չի փրկում թալանից և բռնություններից, գյուղացիները որոշել էին դիմադրել¹⁹: Վրաստանի ՀԱԽ-ը տեղեկացվում էր Գագրայից, որ «հայերը հիշելով շրջանում ստիպարած լինելով իրենց կեանքը, գոյքը, պատիր պաշտպանելու համար քաշել են լեռները և ինքնապաշտպանության դիմել գերազանց ոյժերի դեմ: Ներկայումս Պիլենկովայի լեռքաշրջանի Քրիստաֆորովո, Օվա, Չորագյուղ... շրջապատում են վրացական զորքերով, հայերի տները երկնի են մատնած վրացիների կողմից... վերջիններխա ու հայերի միջև տեղի ունի անհասարկ կոխ»²⁰: Օգ-

նություն չստանալով «սպիտակներին» և անկարող լինելով սեփական
 անբավարար ուժերով պահել 15 վերստ երկարությամբ պաշտպանա-
 կան գիծը, մայիսի 4-ին հայ գյուղացիները տոխաված են լինում վիթի²¹։
 Հրաժարվելով զինաթափվել, հայերի ինքնապաշտպանական ջոկատ-
 ներն անցել էին լեռների վրայով դեպի Ալյէր, տանելով իրենց հետ
 քնակալության մի մասը²²։ Սուխումի Հայոց ազգային խորհրդի անդամնե-
 րը դիմել էին Սոչիի ՀՄԽ-ին նամակով, որտեղ մասնավորապես ասված
 էր. «Պիլենկովայի ենթաշրջանի» գլխիցը զինաթափ են լինում, եթե նոր
 դեպքեր առաջ չգան, [սպա] ազգաքնակալությունը ֆիզիքապես զոնտ տո-
 ժած չի լինի (')։ ...Քայց շատ վատ կը լինի, եթե... Սոչիի և Ալյէրի շրջան-
 ների հայերը նորից Կամատրական քանակի շարքերում լինեն²³։ Այս
 դեպքում Պիլենկովայի և Սուխումի շրջանի հայերի վիճակը շատ ու շատ
 կը ծանրանայ և այս հանգամանքը պետք է որ այքի առաջ ունենան Սո-
 չիի և Ալյէրի շրջանի հայերը...»²⁴։ Սոչիի ՀՄԽ-ի պատասխանը երկար
 սպասել չտվեց. «Չեզ ևս մի անգամ ընդմիջտ քացաքձակապես յայտնում
 ենք, որ Սոչիի հայութիւնը ամբողջ 7 ամիս համբերութեամբ տարել է
 վրացական քաշիքուզուկութիւնները, չէզոքութիւնից դուրս չգալով]։ [Սո-
 չիի Հայոց] Ազգ. Խորհուրդը միշտ դիմումներ է տվել քե՛ վրաց իշխանու-
 թեան, քե՛ «դաշնակիցներին», քայց ոչ մի անգամ Կամատրական քանակ-
 կին։ ...Սոչիի շրջանում մինչև նրանց [յմա՝ վրաց-Բ. Մ.] գալը տիրում էր
 ազգերի կատարեալ համերաշխութիւն, քայց նրանց տիրապետութեան
 ընթացքում բոլորքուց տեղական վրացիների շովինիզմը... իսկ այս վեր-
 ջին շարքանկում վրաց կատավարութեան ազնետների վերջին պրովո-
 կացիոն գործունէութեան պատճառով քիչ էր մնում վտանգելու հայ-
 տուս... տասանակ տարիներ ունեցած խաղաղ հարաբերութիւնները։
 ...Մի անգամ որոշելով վրացական կատավարութեան դիմագիծը և պարզ
 լինելով, թէ ինչ է սպասում [հայերին] անկարգապահ [վրաց] զինուորների
 ներս խուժումից, քնական է, որ Սոչիի շրջանի հայերը պիտի մտածէին
 լուրջ ինքնապաշտպանութեան մասին և... յենէին այն ուժին, որ այս
 պարագայում իր քնական օգնականը պիտի լիներ - այդ ուժը լինելու Կա-
 մատրական քանակ, թէ մի ուրիշ անուն կրող կազմակերպություն։
 ...Դուք, որ... ձեր այքի առջև կողոպտել տիք Պիլենկովոն ու ձեր քերա-
 նով խոտովաճում էք, որ ձեր կատավարութիւնը կարող է այդ կողմի հա-
 յերի ֆիզիքական գոյութիւնը վտանգել, քարոյական իրատուք չու-
 նիք... հասարակութեան կարծիքը մոլորեցնելու։ ...Եթէ դուք ուզում էք, որ
 մենք հրաժարունք անհրաժեշտ ինքնապաշտպանութիւնից, [սպա] հա-
 մոզեք ձեր ընկեր վրացիներին՝ թող ձեռք քաշեն հայանալած քաղաքա-
 կանութիւնից...»²⁵։

Ըստ «Աշխատավոր»-ի թղթակցի Սոչիի շրջանի «հայերը կատարե-
 ցին վճռական դեր. նրանք մէկ կողմից դրացի գեղացիներին ծանգս-
 տացրին, ազատեցին սլովոկացիայից, իսկ մյուս կողմից որոշ ռազմա-

կան ուժ հանդես բերին»²⁸։ Իրոք, եթե շինքը Սոչիի ՀԱԽ-ի միջնորդական մախաձեռնությունը, ապա հայտնի չէ ինչքան կտևեր ռուս գյուղացիների ապստամբությունը, որը հրաշալի առիթ էր ստեղծել վրացական քանակի հարձակման համար։ Հետևապես Սոչիի շրջանում բռնկված քաղաքացիական պատերազմի պարագայում հայերը ներկայացնում էին ուժ, որի հետ ստիպված էին հաշվի մտնել բոլոր շահագրգիռ կողմերը։ Ջինեղով հայերին «սպիտակները» կայտղացան կասեցնել շրջկենտրոն Սոչիի վրա ապստամբների առաջխաղացումը, և չի քացատվում, որ վրացական քանակի միջամտությունը հետաձգվել էր մինչև այն պահը, երբ Սուխումի ՀԱԽ-ի անդամների միջոցով հաջողվել էր ստանալ Գազրայի հայության չեզոքության երաշխիքները։ Նաև այս հանգամանքն է քացատրում վրացական քանակի նախնական հաջողությունը, քանի որ Գազրայի և Պիլենկովայի հայությունն իրենից զգալի ռազմական գործուն էր ներկայացնում (տարածքի բնակչության 75 տոկոսը²⁹, 1000 տնտեսություն³⁰), ինչն ապացուցում է նաև երեք հայկական գյուղերի համառ դիմադրությունը 17 օրվա ընթացքում։ Վրաստանի կառավարությունը ծրագրել էր գրավել Սոչիի շրջանի ամբողջ տարածքը³¹։ Սուխումի Հայոց ազգային խորհրդի դիմումը Սոչիի ՀԱԽ-ի անդամներին վկայում է, որ դեպքերի զարգացման գործում Աղեերից հյուսիս գտնվող տարածքների հայկական բնակչության դիրքորոշումը զգալի նշանակություն ուներ, քանզի վրացական կողմը Սուխումի ՀԱԽ-ի միջոցով փորձում էր հասնել նաև այդ հատվածի հայության չեզոքությանը։ Բրիտանական հրամանատարությունը վերջնազիր էր ներկայացրել Վրաստանի կառավարությանը, առաջխաղացման դադարեցման պահանջով, ինչպես նաև զորքերը նախկին դիրքերը քաշելու մասին³²։ Վրացիները մասամբ ենթարկվեցին վերջնազրի պահանջներին, 1919թ. ապրիլի վերջերին զիջելով Աղեերը³³։ 1919թ. մայիսի 23-24-ին Թիֆլիսում քանակությունների ժամանակ վրացական կողմը չափավորեց իր պահանջները և առաջարկեց Սոչիի շրջանը վերածել չեզոք գոտու³⁴։ Բրիտանական հրամանատարության մախաձեռնությամբ Գազրայի տարածքում կողմերի միջև հաստատվել էր «չեզոք գոտի»³⁵։ Հայաբնակ Պիլենկովայի ենթաշրջանը հայտնվեց նրա սահմանագծին, կիսվելով՝ «չեզոք» և «վրացական» մասերի³⁶։ Այսպիսով, Աղեերից հյուսիս բնակվող հայերի դիրքորոշումը, ինչպես նաև անեմա վճուական օրերին Պիլենկովայի ենթաշրջանի երեք հայկական գյուղերի զինված դիմադրությունը, կասեցրեցին վրացական քանակի հարձակումը և, հետևապես, սահմանափակեցին վրացական կողմի ձգտումները Սոչիի շրջանի հյուսիսային մասի նկատմամբ մինչև այն պահը, երբ անգլիացիների վերջնազրի հետևանքով Վրաստանի կառավարությունը հրաման տվեց առաջխաղացման դադարեցման մասին։

HAMSHIN ARMENIAN COMMUNITY AS MILITARY AND POLITICAL
FACTOR IN SOCHI - GAGRA REGION IN 1919

Sochi - Gagra region status was not finally juridically legalized. The question of border evoked the military conflict between Georgia and Russian "White" movement. The violence of Georgian troops had such result self-defence local Armenians. Resistance of Armenian population was not permitted Georgian Army captured of Sochi district.

ՕՍԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մանրամասն տե՛ս Մախյան Բ., Վրաստանի կառավարությունը և Սուչի շրջանի համընթաց համայնքը (1918-1920թթ.)-Մերձավոր և Միջին Արևելքի նրկրներ և ժողովուրդներ, XXIV, եր., 2005, էջ 163-180:
2. Պոնտացի Ա., Սուչի վերջին դեպքերը.- «Աշխատավոր», 13. 05. 1919, N 93:
3. Воронович Н.В., "Зеленые" повстанцы на Черноморском побережьи. - Движонн-Юденич-Врангель, Мемуары. М.- Лен., 1931, с. 166.
4. Նույն տեղում:
5. Վրաստանի կառավարությունը կուտակել էր Սուչիի ուղղմանակառնում ժողովրդական զվարթիչի որ գումարտակ և այլ զանազան զորամասեր և միայն հարձակ պահ էր սպասում հարձակման մասին հրամանն արձակելու համար (Воронович Н. В., նշվ. աշխ., էջ 169-170):
6. Воронович Н. В., նշվ. աշխ., էջ 165, 187:
7. События в Сочи. - "Борьба" газета, Тифлис, 28. 04.1919, N 90.
8. Պոնտացի Ա., Սուչի վերջին դեպքերը.- «Աշխատավոր» քերթ, Թիֆլիս, 15. 05. 1919, N 95:
9. Սուչի շրջանում վրաց բնակչությունը կազմում էր 5 տոկոս, որը հիմնականում բնակվում էր Պրաստունակայա զրտարում (Добровольческая армия и Грузия. - "Закавказское слово" газета, Тифлис, 14. 02. 1919, N 23):
10. «Աշխատավոր», 12. 05. 1919, N 115:
11. Պոնտացի Ա., նշվ. աշխ., 23. 05. 1919, N 102:
12. Պոնտացի Ա., նշվ. աշխ., 15. 05. 1919, N 95:
13. Воронович Н. В., նշվ. աշխ., էջ 167:
14. Պոնտացի Ա., նշվ. աշխ., էջ 18. 05. 1919, N 98:
15. արձնելով ամբողջ ուշադրությունը հակառուշիկյան ուղղմանակառնում, «սպիտակները» մի քանի սակավամարդ վաշտ էին համել վրացիների դեմ (Воронович Н. В., նշվ. աշխ., էջ 169):
16. 1920թ. մարտի 7-ին Սուչիի ՀԱԽ-ը, իրենցիկ իր ողջույնի խոսքը Ա. Խառոյայանին, վստահեցնում էր «ստացիին հնարատը պարագային ազատ Հայրենիք ներգաղթելու ցանկութեամբ» մասին («Աշխատավոր», 25. 03. 1920, N 68):
17. Պոնտացի Ա., Սուչի վերջին դեպքերը.- «Աշխատավոր», 18. 05. 1919, N 98:

18. Մուխոմի շքանի (Արխազխայի) ՀԱԽ-ը աշակցում էր տարածաշրջանում վրացական տիրապետության հաստատմանը (մանրամասն տե՛ս Մախչյան Բ., Զաղաքական իրադրությունը և համընթացայեղի կացությունն Արխազխայում 1918-1920թթ.-ՊԲՀ, 2005, N 1, էջ 125-140):
19. 1919թ. ապրիլի 24-ին Գագրայի և Պիլենկովայի Հայկական խորհուրդների նախագահները դիմել էին Վրաստանի ՀԱԽ-ին նամակով, որտեղ ժամագրապես ասված էր. «...Այդ [ներա]լրջանների անբաշտպան ու խաղաղակեաց հայութիւնը ենթակայ է վրաց զօրքերի անկողք ու անխիղճ հալածանքներին: Վրացիների կողմից թալանում են անխտիր քոլոր հայերի ունեցածքը, տանում են անասունները, ձիերը, կողաբառում են հայերի խանութները, ահագին բռվ հայեր են ձերբակալում, մեղադրելով նրանց, որ իբր թէ նրանք օգնել են Կամատրական զօրքերին: Վրաց զինուորների կողմից արատաւորում է շրջաններես հայերի դարերով սքրագործած օբաղը՝ բռնաբարելով հայ իգական սեռը... Վրացիների հալածանքները...անցան իրենց չափ ու սահմանը, մամառանը Պիլենկովայի [ներա]լրջանի հայութեան վերաբերմամբ, որտեղ եղան նաև ապամոթեան ղէպքեր» (Մեմընկիլյան տարիգըր-«Ալշխատավոր», 21. 05. 1919, N 100:) Մյնույն փնակում էր նաև Ախալցալայի և Ախալցխայի հայությունը (Մեղունյան Ա., Ջափանցը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր., 2003, էջ 317: Միմոնյան Ե., Ախալցխայան կրակի օղակում՝ 1917-1921թթ. դեպքերի հուշագրություն, Եր., 2000, էջ 111, 115): 1919թ. մայիսի 16-ին Վրաստանի ՀԶԴ Կեմետլոմի անդամներ Տ. Ավետիսյանը և Դ. Դավիթյանյանն այցելել էին Սահժամաղիթ ժողովի փոխնախագահ Լոմբարիժեհին և «յարուցել են...Մուխոմի, Ախալցալայի և Ախալցխայի տեղական ադմինիստրացիայի բռնութիւնների, քաղամների, առազակաթիւնների խնդիրը, որից գլխաւորապես տուժում են հայերը» («Ալշխատավոր», 21. 05. 1919, N 100):
20. Մեմընկիլյան տուրիպմը. - «Ալշխատավոր», 21.05.1919, N 100:
21. 1919թ. մայիսի 3-ին Վրաստանի Ժողովրդական զվարդիայի հրամանատար Վ. Ջուրիժմ զբանցել էր օրագրում. «В час дня наша колонна выступила из Гагр для обезоруживания армянских горных поселков. Не хотелось новых насилий и новой борьбы, но все средства иссякли и терпение истощилось...» (Джугоев В., Тяжелый крест: записки народотердейца, Тифлис, 1920, с. 146):
22. Պոնտացի Ա., Մուխի վերջին դեպքերը.- «Ալշխատավոր», 05.06.1919, N 109:
23. 1919թ. մայիսի 24-ին Վրաստանի վարչապետ Ն. Ժողդանիան բողոքում էր անգլիացի զեմ. Պիլին, թե «հայերը Կամատրականների առաջապահ զօրամասերում են գտնուած» (Մատրեան Ս., Վրացի մեմընկիլները և անգլիական զօրավարները-«Հայրենիք», Բոստոն, N 4, փետրվար 1928, էջ 151: Մամրամասն տե՛ս Մախչյան Բ., Համընթացայեղի զօրամասը Կամավորական քանակի շարքերում (1919-1920թթ.) - Մերձավոր Արևելք, II, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ: Հոդվածների ժողովածու, Երևան, 2005, էջ 122-126):
24. Պոնտացի Ա., Դրությունը Մուխի շրջանում. - «Ալշխատավոր», 10. 06. 1919, N 113:
25. Նույն տեղում:

26. Պոլետսկի Ա., Սուչիի վերջին անցքերը . - «Աշխատավոր», 23. 05. 1919, N 102:
27. «Աշխատավոր», 21. 05. 1919, N 100:
28. «Աշխատավոր», 05. 06. 1919, N 109:
29. Այդ մտադրության մասին է վերադառնում Վրաստանի արտգործնախարար Ե. Գեգեճկերիի նայտարարությունը, թե «Սուչիի շրջանի վերաբերյալ ես պարտավոր եմ նայունել, որ մենք չենք հրաժարվում մեր իսկապետություններից» (Учредительное Собрание, 17 апреля 1919г. - "Кавказское слово" газета, Тифлис, 25. 04. 1919, N 75): Փարիզի խաղաղարար վեհաժողովում 1919թ. մայիսի 1-ին տարածած Վրաստանի պատվիրակության «Հուշագիրը» պահանջում էր ճանաչել Տուաֆուսից 14 կմ ղեպի ծախված գտնվող Մակեդոնի գետն իրրև Վրաստանի հյուսիս-արևմտյան սահման, ինչն ավելի էր քան Սուչիի շրջանի րուն տարածքը (История Абхазии. Гудаута, 1993, с. 302):
30. Луконский А. С., Из воспоминаний, - Архив Русской Революции изданный И. В. Гессеном, т. VI. Берлин, 1922, с. 119.
31. Воронович Н. В., "Зеленые" повстанцы..., с. 170:
32. Деникин-Юденич-Врангель, Мемуары, с. 102:
33. Фазицкий В., Зеленая армия в Черноморье. - "Пролетарская революция", Исторический журнал Исполта, N 8-9, 1924, с. 52, схема N 2:
34. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 551, ք. 1 շրջ:

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍՈՒՐՆ
(ԱԻ)

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԸԱՐԺՈՒՄԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ 2000-2005ԹԹ.

2000թ. հունիսի 10-ին վախճանվեց Սիրիայի Արաբական Հանրապետության /ՄԱՀ/ երկարամյա նախագահ Հաֆեզ ալ-Ասադը և մեկ ամիս անց՝ նույնի 12-ին համընդհանուր հանրաքվեի արդյունքում երկրի ղեկավար դարձավ նրա որդի Բաշար ալ-Ասադը: Ազդարարվեց Սիրիայի պատմության մի ամբողջ քաղաքական դարաշրջանի ավարտ և սկսվեց նորը, որն իր հետ բերեց քաղաքիվ նոր հիմնախնդիրներ և հարցադրումներ:

Դրանց մեջ ամենակարևորներից էր սիրիական իշխանությունների և իսլամական ընդդիմության փոխհարաբերությունների հարցը: 1976-1982թթ. երկրում նրանց միջև ծավալված սուր հակամարտությունն ավարտվեց «Մահմեդական եղբայրներ» արձատական իսլամական կազմակերպության պարտությամբ. կրոնական ընդդիմության վտանգն արձատախիլ արվեց ամենածայրահեղ զործողությունների միջոցով: Հետագա 20 տարիների ընթացքում վարչակարգի վերաբերմունքը որոշակիորեն մեղմվեց, սակայն Հաֆեզ ալ-Ասադի քաղաքականության ընդհանուր ուղեգիծը միշտ էլ մնում էր անփոփոխ՝ քաջատեղ ելույթի դրսևորման գամկազած հնարավորություն. «Մահմեդական եղբայրներ» կազմակերպությունն արգելված էր, իսկ իսլամն իր չափավոր դրսևորումներով կոչված էր ծառայելու պետության, իշխող կուսակցության և երկրի նախագահի իշխանության ամրապնդմանը: Իրավիճակի արդյունավետ վերահսկողության գտնականն էր այն, որ իշխանությունները մշտապես ընդգծում էին անհրաժեշտության դեպքում կոչու քայլերի դիմելու իրենց վճռականությունը:

Հաֆեզ ալ-Ասադի մահից հետո իրավիճակը փոխվեց:

Այսօր երբեմնի ընդգծված աշխարհիկ սիրիական հասարակությունն արագազգված տեմպերով իսլամականացվում է: Երկրում ավելի մեծ քափ է առանում մզկիթաշինությունը, իսկ հին մզկիթները մշտապես լիքն են լինում աղոթքի ժամերին: Համատարած է դարձել կամանց գլխաշոր կրելու սովորույթը: Այս ամենը վերաբերում է Սիրիայի բոլոր քաղաքներին՝ ներառյալ ամենաաշխարհիկը համարվող մայրաքաղաք Դամասկոսը²:

Իսլամականամուն է նաև Միջինասիայի իշխանական վերնախավը: Այսպես, նախագահ Բաշար ալ-Ասադի ճառերում իսլամական հոնորոսկանությունն ղեկն ավելի ընդգծված է դառնում¹: Բարձրաստիճան պաշտոնյաները նույնպես փսրծում են ավելի ընդգծել սեփական կրոնապախությունը: Հետաքրքրական է նաև նախկին փոխնախագահ Խադրամի մահմեդական օրենքների և ավանդույթների ավելի մեծ հարգանքով զործելու հրամանագիրը: Իշխանության վերին օղակներում այս ուղղության կողմնակիցների առկայության և մեծ կշռի մասին է վկայում նաև զորղ Լաքիլ Ֆայյադի ձերբակալումը, որի ելմանական «Ֆեդավոլությունը» նրա՝ երկրի իսլամականացման մասին ահազանգող հողվածներն էին:

Երկրի իսլամականացմանը նպաստում է նաև արտաքին գործունը: Միջինական հասարակությունում, բազմաթիվ այլ իսլամական պետությունների նման, վեթյին տարիներին բավականին տարածված է արևմտյան քաղաքակրթական սպառնալիքին դիմակայելու անհրաժեշտության գաղափարը: Իրարում ամերիկյան քաղաքականության պայմաններում այս լափազանց պարզեցված «քաղաքակրթական բախման» կոնցեպցիան բավականին արդյունավետ օգտագործվում է իշխանությունների կողմից, հասարակության մոթիլիզացման, նայրենասիրական զգացմունքների բարձրացման և սեփական իշխանության հեղինակության համար: Վարչակարգն իսլամական քաղաքիլի ընդգծման միջոցով ստանում է իսլամական աշխարհի գաղափարական աջակցությունն ԱՄՆ-ի հետ պայքարում և բացի այդ շահում է երկրի ավելի իսլամականացող բնակչության համակրանքը: Մյուսով նաև հնարավոր է լինում խել նախաձեռնությունն իսլամական խմբերից և հետզհետե ավելի ակտիվացող «Մահմեդական եղբայրներ» կազմակերպությունից:

Իսլամիստական կազմակերպությունները 1980-ականների կեսերից գործում են երկրից դուրս: Նրանք բազմաթիվ պատկառումների և ներքին հակաառյույնների շրջան են անցել և մինչև 2000թ. բավական պասիվ էին: Պատճառը պայքարի շարունակության համար համապատասխան մախաբայմանների բացակայությունն էր: Երկրի ներսում նրանք չունեին ոչ մի հեմարան, իշխանության գլխին ռժեղ, միասնական վարչակարգ էր, իսկ հասարակությունը, հոգնած քաղաքացիական պատերազմի տարիների տարածված ահաբեկչությունից, չէր ցանկանում սատարել արմատական իսլամական շարժումներին: Երկրից դուրս նույնպես ոչ մի օգնության ակնկալիքներ չկային: Միջինասիայի հարևանները շահագրգռված էին երկրի կայունության պահպանման մեջ, իսկ պաղեստինյան և լիբանանյան իսլամական խմբավորումները Դամասկոսին ղեկավարում էին իբրև գործընկեր, որը նրանց զգալի ֆինանսական և կազմակերպական օգնություն է ցուցաբերում:

Նոր նախագահի ինագուրացիայից հետո նկատվեց իսլամականների որոշակի ակտիվացում: Ամմիջապես հանրաքվեից հետո, «Մահմեդա-

կան եղբայրներ» կազմակերպության նախագահ Ալի Սադրեդդին ալ-Քայանուդին երկրի նոր ղեկավարությանը կոչ արեց արմատական քաղաքական քարեփոխումներ իրականացնել սիրիական հասարակությունում⁴: Հետո նոր պայմաններում նոր իշխանությունների նկատմամբ վերաբերմունքի և ընդհանուր ուզգեամբարության մշակման նպատակով 2000թ. հոկտեմբերի 19-ին խղամակամնելը հանդիպեցին Վալինգտոնում: Հանդիպմանը, որը նախագահում էր Ալի Սադրեդդին ալ-Քայանուդին, ներկա էին նաև «Մահմեդական եղբայրության» մեկ այլ ֆրակցիայի՝ Ալման Սադրեդդինի խմբավորման ներկայացուցիչները⁵: Հավանաբար, այս հանդիպման ժամանակ որոշում ընդունվեց ՄԱՀ-ի նոր ղեկավարության հետ հարաբերությունների հաստատման վերաբերյալ: Ցանկությունն այնքան մեծ էր, որ արվեց այդոն երկուսից մեկն ատաջարկը, այն պայմաններում, երբ հարյանահյան Իզլամական գործողության ճակատի միջոցով ուղարկված առաջին դիմումը ոչ մի արձագանքի չարժանացավ Բաշար ալ-Ասադի կողմից⁶: Երկխոսության ևս մեկ փորձ ձեռնարկվեց 2001թ. մայիսին «Քաղաքական գործունեության ազգային պատվի պակտի» հույսկտմով, որով «Մահմեդական եղբայրները» ճանաչում էին նոր իշխանությունների օրինականությունը և հայտարարում էին ժողովրդավարական գործընթացի սատարման մասին⁷:

ՄԱՀ կառավարությունն իր հերթին հստակ գիտակցում էր իսլամական շարժման իրական վտանգը և փորձում էր համապատասխան քայլեր ձեռնարկել: Այսպես, տարբեր քննազավառներում քարեփոխումներ իրականացնելուց հետո, երիտասարդ նախագահը փորձեց որոշակի փոփոխություններ իրականացնել նաև իսլամական արմատական խմբերի հետ հարաբերություններում: 2003թ. դեկտեմբերի վերջին Ազգային առաջադիմական ճակատի (ԱԱԸ) տարածաշրջանային կազմակերպությունների երդադ համագումարի ժամանակ ճակատի աշխատանքներին նոր քաղաքական կուսակցությունների մասնակցության հարցի համատեքստում նորից քննարկվում է իսլամական կուսակցության ստեղծման գաղափարը իբրև իսլամական ժայռահեղականության երկրնորանք⁸: Սա հստակ տեղավորվում էր ազգային և իսլամական արժեքների հակադրումից խոսափելու Միջիայի ղեկավարության քաղաքականության մեջ: Մշտապես ընդգծվում է, որ «իսլամական նախագիծը ազգային նախագծի երկրնորանք չէ» և հետևաբար առաջանում է Միջիայում «օրինականորեն գործող իսլամական կուսակցության» ստեղծման «հնարավորություն և անհրաժեշտություն»⁹:

Միաժամանակ փորձ կատարվեց նաև հաշտության եզրեր գտնել իսլամական ընդդիմության հետ: Այսպես, 2004թ. օգոստոսին ՄԱՀ նախագահի և «Մահմեդական եղբայրներ» ներկայացուցիչների միջև շփումներ կազմակերպվեցին, որոնք պետք է ցույց տային, որ երկիրը «հատաբարի է 1980-ականների ճգնաժամը և նրա հետևանքները»: Այս հանդի-

պումների կապակցությամբ Միքիայի խորհրդարանի պատգամավոր, իսլամական հետազոտությունների կենտրոնի նախագահ, իսլամական քարեփոխումների կողմնակից Մուհամմադ Հաբբաչը¹⁰ հայտարարեց, որ «իսլամական և ազգային շարժման միջև կասկած կորցրեց այսքան ամուր չի եղել»: Կողմնորդ հատակորեն փորձում էին պայմանավորվածություններ ձևեր քերել: Այս գործընթացին զուգահեռ ներքո շնորհվեց 250 քաղաքական քանտարկյալների, որոնց մեծամասնությունը նախկինում «Մահմեդական եղբայրներ» և Իսլամական ազատագրման կուսակցության անդամներն էին: Դա հնարավորություն տվեց Հաբբաչին հայտարարելու, որ երկրում այդև չկան քաղաքանտարկյալներ, նույնիսկ առաջարկել երկրից հեռացած արմատականներին տրամադրել Միքիա վերադառնալու իրավունք, ինչը զույգ կտա կայունության վերականգնումը և վախի ծրնորուտի բացակայությունը: Բանակցությունները, սակայն, ոչ մի արդյունք չտվեցին¹¹: Ավելին, հարաբերություններն ավելի լարվեցին, իսկ երբ Արդի Հալիմ հաղդամը նանդես եկավ նախագահ Բաշարին քննադատող հայտարարություններով, «Մահմեդական եղբայրները» ողջունեցին նրա այս հայտարարությունը և աստարեցին նրան¹²:

Միքիական իշխանությունների և ընդդիմության այսպիսի կտրուկ օտարման և շփումների անհնարիմության գաղտնիքը հավանաբար իսլամականների մեծ ներուժի և կատավարության կողմից դրա հատակ գիտակցման մեջ է: Աշխարհիկ ընդդիմության տկարությունը թույլ է տալիս Բաշար ալ-Ասադին իրեն համզիտ զգալ¹³: Իսլամական ընդդիմությունը դիտարկվում է իրրև գործող իշխանությունների միակ հնարավոր երկրորդամբը, և այս պայմաններում քննալ էլ զարմանալի չէ սիրիական իշխանությունների կոչու դիրքորոշումը նրա հանդեպ: Իշխանությունների վերաբերմունքի մասին է վկայում, օրինակ, 2005թ. մայիսի 24-ին «Դամասկոսյան զարնան» ժամանակ քաղաքական սալուններից վերջինի՝ Աբրասիի ակումբի փակումը և ոտք անդամների ձեռքակալումը: Իշխանությունները քավական հանդուրժող էին ակումբի գործունեության նկատմամբ, նույնիսկ, երբ այնուեղ կազմակերպվում էին հանդիպումներ ընդդիմադիր գործիչների հետ և հնչում էր քննադատություն երկրի ղեկավարության նկատմամբ: Սակայն, երբ այս ակումբում ընթերցվեց Ալի Մադդեդդին Բաշամուլիի հրապարակային հայտարարությունը, իշխանությունները կտրուկ միջոցների դիմեցին¹⁴: Փաստորեն, իշխանությունները պատրաստ էին որոշակի քաղաքական ազատությունների, քանի դեռ դրանք չեն առնչվում իսլամականներին:

Միքիական իշխանություններն այսօր հասկանում են, որ ստիպված են քաղաքական նկատառումներով որոշակիորեն շահարկել իսլամական գործունը և չառ դեպքերում սեփական նպատակներով օգտագործել իսլամականներին, սակայն նաև հատակ գիտակցում են դրա վտանգը և վերջիններիս վերահսկողությունից դուրս գալու հնարավորությունը:

Դրա օրինակ կարող են ծառայել ուրբաթօրյա աղոթքները, որոնք օգտագործվում են իշխանությունների սեփական քաղաքականության գաղափարական հիմնավորման համար, սակայն շատ հաճախ դրանք ԱՄՆ քաղաքականության քննադատության հետ մեկտեղ իսլամիստական քարոզչություն են իրականացնում, հայտարարելով, որ իսլամն է բոլոր խնդիրների միակ լուծումը, ինչը քառացիաբան կրկնում է «Մահմեդական եղբայրների» կարգախոսը¹⁵:

SUREN MANUKYAN
(IOS)

ISLAMIC MOVEMENT IN SYRIA IN 2000-2005

Syria's Muslim Brotherhood - banned for nearly 25 years - has been increasingly vocal recently in its criticism of the regime of President Bashar Assad. For example, it demanded the organization of free elections, cancellation of the state of emergency and dismantlement of special courts, warning that the ruling Baath Party would bear "sole responsibility" for the damage the country suffered if it failed to heed this call.

The Brotherhood's increasingly aggressive stance, coupled with developments in Lebanon and reports that the U.S. has held talks with Syrian opposition figures, has fed speculation as to whether Assad will survive the current tumult.

The Brotherhood's statements were noteworthy in that they appeared to represent a shift in their approach during the past years, where they focused on engagement with the regime. When Bashar Assad took office in 2000, for example, the Brotherhood took steps to reach out to the new president. In May 2001, the group prepared a "National Honor Pact", accepting the democratic process and, for the first time, recognizing the regime's legitimacy.

The move appeared to pay off: In 2004, senior Syrian officials, including Assad, met with leaders who had ties to the Brotherhood. As Muhammad Hshab, a Syrian parliamentarian, put it: "The commonalities between the Islamic movements and [the] national movement are stronger than at any time before". The signs were so promising, in fact, that this newspaper ran an article in May 2004 titled "Damascus, Brotherhood set to reconcile?". In the end, however, the negotiations appeared to fizzle, bringing the two sides no closer together.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բաշար ալ-Ասադի կառավարման առաջին տարիներին տեղի ունեցած քաղաքականության մասին ժամբանաստեղծ Ս.Մամուլյան, Բաշար ալ-Ասադի կառավարման առաջին չորս տարիների ընթացքում Սիրիայում տեղի ունեցած ռոլը սոցիալական և մեքքին տեղաշարժերի շուրջ// Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր XXIII, էր., 2004:
2. Jacobson M., An Islamist Syria is Not Very Probable/Daily Star (Beirut), 29.04.2005, Исламские фундаментализм возрождается из пепла//

- Макфаркьюхер Н., "Нью-Йорк таймс", по www.sem40.ru, 30.10.2003, Chanaa K., Syria's uneasy truce with Islam// http://news.bbc.co.uk/1/hi/world/middle_east/3705861.stm
3. Ушбрийшый тбу' Косач Г., Красный флаг над Ближним Востоком, М., 2001.
 4. Al-Hayah, 27.06.2000, al-Shark al-Awsat, 12.07.2000, 20.07. 2000.
 5. A Muslim Brotherhood meeting in Washington DC? 19.10. 2000 //MEIB.
 6. Al-Hayah, 27.06.2000, al-Shark al-Awsat, 12.07.2000, 20.07.2000.
 7. Jacobson M., An Islamist Syria is Not Very Probable//Daily Star (Beirut), 29.04.2005.
 8. Ахмедов В., Башар Асад – арабский лидер нового поколения// Сирия: проблемы внутриполитической стабильности и внешней безопасности (материалы круглого стола, 21 сентября 2004 г.) М., 2004, с. 9.
 9. Косач Г., Басисты Сирии: меняющаяся или неизменная партия?// Сирия: проблемы внутриполитической стабильности и внешней безопасности (материалы круглого стола, 21.09.2004) М., 2004, с. 75.
 10. Ушбрийшый Հարրաշի գործունեության մասին մանրամասն տбу' Heck P., Religious renewal in Syria: the Case of Muhammad al-Habash// Islam and Christian-Muslim Relations, vol.15, no.2, April 2004, pp. 185-207.
 11. No more Islamists in Syria prisons// Washington Times, 11, 08, 2004// www.washingtonpost.com/archive/local/localnews/2004/08/11/20040811-101359-4798r.htm; Jacobson M., An Islamist Syria is Not Very Probable//Daily Star (Beirut), 29.04.2005.
 12. Badran T, Saudi-Syrian Relations after Hariri// Mideast Monitor, 2006, vol.1, no. 1.
 13. Blanford N., Syria opposition too weak to confront state// The Daily Star, 08.06.2005
http://www.dailystar.com.lb/article.asp?edition_id=10&categ_id=2&article_id=15728
 14. Blanford N., Syria opposition too weak to confront state// The Daily Star, 08.06.2005
http://www.dailystar.com.lb/article.asp?edition_id=10&categ_id=2&article_id=15728
 15. Исламский фундаментализм возрождается из пепла// Макфаркьюхер Н., "Нью-Йорк таймс", 30.10.2003.

ՄԱՐԳԱՐՅՈՒՆ ՆԱՐԻՆԵ
(ՀՅԹԻ)

ԱՐԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆԸՆ ՍԻՐԻԱՅՈՒՄ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ

1915թ. Հայոց ցեղասպանությունից մազապարծ հայ տաղազիկների հարյուրավոր քարավաններ հայտնվեցին սիրիական ամապատում, որոնց օգնության ձեռք մեկնեց սիրիացի արաբ ժողովուրդը: Քուրդական իշխանությունները համոզված էին, որ արաբական ամապատներում հայտնված հայ ժողովրդի բնկորներին դաճողաղ և տանջալից վախճան է սպասվում սովի և հիվանդությունների պատճառով, ինչին պետք է «աջակցեին» իսլամադավան արաբները: 1915թ. սեպտեմբերի 9-ի Քալեաթի հեռագիր երամանում, որն ուղղված էր Հալեպի կուսակալին, ասվում էր. «Հալեպից հեռացրեք կամանց, երեխաներին...բայլ մի տվեք, որ նրանց պաշտպանի տեղի ժողովուրդը...»¹: Այնուհայտ է, որ քուրդական կառավարությունը սկզբից չէր քաջատեղյակ է եղել արաբների՝ հայ տաղազիկների նկատմամբ ունեցած քաղաքական վերաբերմունքին:

Հայ տաղազիկների ամփոփագության և քաղաքային տեսանկյունից քաջատիկ կարևոր նշանակություն ունի Մաքքայի շերիֆ և էմիր Հուսեյն իբն Ալիի 1917թ. օրենքի ուժ ունեցող հայտնի պատգամը, որ կոչ էր անում «... օգնեք Յակոբյան հայ համայնքի զավակներին, որոնք գտնվում են ձեր կողմերում՝ լուծելով նրանց խնդիրները, պաշտպանելով նրանց, ինչպես կապառույթներ ինքներդ ձեզ, ձեր հասրատությունը և զավակներին, օժանդակեք նրանց ամեն ինչում, թե ճանկորոյության ժամանակ, թե ձեզ մտո իջևանելիս, քանի որ նրանք իսլամադավանների հովանավորության տակ են»²:

Շերիֆի երամանը ճշտորեն սկսեց իրականացնել նրա որդին՝ Ֆեյսալը Սիրիայում իր կառավարության տարիներին (1918-1920թթ.) փորձում էր կարգավորել տեղի բազմախազարանոց հայ գաղթականների բնակեցման հարցը: Նա հետամուտ էր ազգային փոքրամասնություններին սիրաշահելու քաղաքականությունը՝ ձգտելով հետագայում ժառանգել այն ֆրանսիացիների դեմ պայքարում:

1919թ. հունվարի կեսերին Փարիզում էմիր Ֆեյսալը, ընդունելով Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուրբար փաշային, նրա հետ

քննարկեց Միրճյալի, Լիբանանի, Պաղեստինի, Իրաքի հայ գաղթականության վիճակը քարեշավելու խնդիրը և հայ-արաբական համագործակցության հետ կապված հարցեր: Փարիզի Հայ ազգային պատվիրակությունն այդ առթիվ Ֆեյսալի տրամադրությանը համձնեց Մամչեստրի և Մարսեյի հայ գաղթօջախների նվիրատվություններով գոյացած ավելի քան 150 կգ. ոսկին, որն օգտագործվելու էր Դամասկոսի և Հալեպի հայ տարագիրներին սնունդ, բուժօգնություն տրամադրելու համար: Ֆեյսալը Փարիզից հեռագրով կարգադրեց համասիրիական կառավարության դեկավար Ալի Ռիզա առ-Ռիկարսիին՝ «հնարավոր բոլոր միջոցները ձեռք առնել՝ քարեշավելու հայ տարագիրների կացությունը»: Մեկ այլ հեռագրով նա կարգադրեց վերջինիս՝ «նայտնաբերել արաբների մոտ և աշխարհներում գտնվող հայ որբերին, աղջիկներին և կանանց ու համձնել հայկական ներկայացուցչական մարմիններին»¹:

Տարագիրների մեջ ամենամանրը թերևս հայ որբերի վիճակն էր, և պատահական չէ, որ ի կատարումն Ֆեյսալի հիշյալ կարգադրության, տեղական իշխանությունները սկսեցին աջակցել Դեյ Ջորամ, Ռաքրայում, Ռաս ալ-Այմում և այլ վայրերում գործող որբահավաքի մարմիններին, որոնց հիմնական խնդիրը անապատի զանազան վայրերում հայտնված որբերին, աղջիկներին ու այրիներին հավաքելն ու Հալեպ ուղարկելն էր:

1919թ. հունիսի 2-ին՝ Միրիական կոնգրեսի գումարման նախօրեին, Ֆեյսալը Հալեպում այցելեց տարբեր համայնքների կենտրոններ, այդ թվում Հալոց առաջնորդարան, որտեղ կայացած հանդիպման ընթացքում քննարկվեց նաև հայ որբերի խնդիրը: Հալեպում Ֆեյսալն այցելեց նաև հայ-ֆրանսիական որբանոց և նվիրատվություն արեց որբանոցին: Հալեպի հայ գաղթականության առաջնորդներին խնդրանքին ընդատաջելով՝ Ֆեյսալը կարգադրեց խառնագույն պատիժների ենթարկել հայ կանանց ու երեխաներին չվերադարձնողներին, նույնիսկ «նիքյառով» (պաշտոնական-կրոնական ամուսնությանը) ամուսնացածներին, որոնք հայտնաբերվելու դեպքում 15 օրից մինչև մեկ ամիս չեզոք կազմակերպությունների մոտ մնալուց հետո պետք է տեղեկացնեին՝ ցանկանում են վերադառնալ հայկական շրջանակներ, թե՛ ոչ:

Հայերին վերադարձնելու բազմաթիվ հայտարարություններ տպագրվեցին նաև քերթերում: 1919թ. հունիսի վերջերսին Հալեպում հրատարակվող «Կիլիկիա» լրագիրը հարդորում էր, որ հայ կանանց, աղջիկների, երեխաների հավաքման գործը լայն թափ էր ստացել: Գրեթե ամեն օր Հալեպ էին ժամանում շրջակա քաղաքներից, գյուղերից և վրաններից եկող մեծ ու վառքի խմբեր: Հայ տարագիրների քարավանների գլխավոր հանգրվանը Հալեպ և Դամասկոս քաղաքներն ու նրանց մերձակա շրջաններն էին: Հալեպում որբանոցներ բացվեցին նաև մի շարք երկրնե-

րի հյուպատոսությունների և միտոներական տարրեր հաստատությունների ցանցերով, իսկ Դամասկոսում որքանոց բացվեց ՀԲԸՄ ցանցերով:

Արաբ ժողովրդի օգնությունը չէր սահմանափակվում պաշտոնական շրջանակներով: Առանձին անհատներ ևս, թե՛ աշխարհիկ և թե՛ եղևտնական, օգնություն և ապաստան են տրամադրել հայ որրերին: Նրանցից է Ռաքքայի աշխրաթի առաջնորդ շեյխ Ֆեդի Ալ Ֆուազը, որն այդ տարիներին եղել է «արաբի հսկիչ»: Նրա որդու՝ Մոհամմադ Ամին Ֆուազի խոսքերով՝ հայրը նախանգի ամենաազդեցիկ մարդկանցից մեկն էր և մեծապես օգնել է հայերին: Վերջինիս քննարծակ տանը մոտ 50 հայ որրեր էին ապրում, որոնց մասին նա հոգ էր տանում և հովանավորում⁴:

Հայնացի քիչիկ Մուստաֆա Ջելերին 1914թ. Բիթլիսում զինվորական ծառայության մեջ էր և աշխատում էր տեղի զինվորական հիվանդանոցում: Տեսնելով Բիթլիսի քնակության ծանրեւ 1915թ. կիրառված դաժանությունները՝ նա հավաքում է քաղաքի փողոցներում իրեն հանդիպած մոտ 40 որր աղքիկների ու դեռատի կանանց և որպես աշխատողներ տանում իր հիվանդանոցը:

Հայ որրերի մեկ այլ հովանավոր էր հայնացի Աբդ ալ-Դանի ալ-Ջուդդին, որը 1915թ. բարձրական ջանակում զինվորական ծառայության մեջ էր: Թուրքական իշխանությունները նրան էին վստահել հայ տարագիրների քարավաններից մեկի՝ Միրիական անապատ ուղեկցման և քննազննման գործը: Մակայն մարդասիրությունը նրան բույլ չի տալիս իրագործել ռճրագործությունը: Նրան հաջողվում է փրկել հարյուրավոր հայ ընտանիքների⁵:

Արաբ կրոնավոր, շեյխ Աբդալլահ Մուսային չորս ամսվա ընթացքում Համա քաղաքում հայկական որքանոց հիմնեց՝ իր վրա վերցնելով ծախսերի հետ կապված ողջ դժվարությունները⁶: Բացի այդ նա օգնության ձեռք է մեկնել Եզիպոսում 1915թ. ապաստանած մուսալեոցի հայ գաղթականներին:

Տարագրության շրջանում Միրիայում շատ հայ որրեր նաև հավատափոխ են եղել: Չնայած որքանավաք կազմակերպելու և հայերին ազգային հաստատություններին վերադարձնելու Ֆեյսալի քաղաքականությանը, բազմաթիվ հայեր, համակերպված նոր իրողություններին և չունենալով այլընտրանք, չէին ցանականում փոխել նոր՝ աշարական միջավայրը:

Միրիական անապատի մի շարք աշխրաքներ, իտուկապես Անուզի, Եամմար, Դամմար, Թայի, Ռաքքար, մեծ դեր են ունեցել հայ որրերին օգնելու գործում: Նրանք որդեգրում էին հայ որրերին՝ անգամ առանց կրոնափոխության պայմանի, չնայած որ նրանց մի զգալի հատվածը, այնուամենայնիվ, արաբացավ: Զաղդեսական ծագումով մի հայկուտոս, որը իբրև շեյխ ծագվել է Միրիական անապատի վրանարձակների մոտ,

գրում է, որ Համմար ցեղի մարդկանց մուս ծառայության են վերցվել 2000 հայեր: Երեխաները թաքաված էին և կրում էին մահմեդական անուններ, իսկ ցեղասպանության ականատես և վերապրող Լևոն Սերոպը վկայում է, որ Ամազեհ և Համմար ցեղախմբերի մուս 5000-ից ավելի հայերովիներ են ապրել⁷:

Միջինական ամապատում որսահավաք էր կազմակերպել մեկ բուրջական կառավարությունը, որը միայն մի նպատակ էր հետապնդում՝ հայ որբերի բրբացումն ու ազգափոխությունը: Այն հետևողականորեն իրականացվել է Միլիայում գործող որոշ որբամոցներում, որոնք գտնվել են Օսմանյան կայսրության հոգածության ներքո: Թրքացած երեխաները մեծեղծ էին կոչվում և որբամոցներում նրանց նկատմամբ հատուկ հսկողություն էր սահմանված:

Արաբ ժողովրդի ցուցաբերած անգնահատելի օգնությունը փրկել է տասնյակ հազարավոր հայ որբերի կյանքը և որոշ լավով կանխել նրանց դավանափոխության գործընթացը:

Ամիդիեղով հայ որբերի բեման, տեղին է մեթքերն սիրիացի պատմաբան Նայիմ ալ-Յաֆիի հետևյալ խոսքերը. «...արարներն ապաստան տվեցին հայ որբերին, այրիներին, տարազիրներին... Նրանք մարդկային վերաբերմունք ցուցաբերեցին հակառակ բուրջական կառավարության հսկողությանը՝ ելնելով իրենց խղճի թելադրանքից: Նրանք իրենց արտերն ու դոճերը բացեցին բոլոր հայերի առջև, ովքեր դրա կարիքն ունեին»⁸:

NARINE MARGARYAN
(MIAG)

THE ARABS' STANCE ON ARMENIAN ORPHANS FOUND IN SYRIA

After the Armenian genocide in 1915 Armenian deportees were found in the Syrian Desert. There they received the assistance of Syrian Arab people. The evidence of good will of latter is the call of Meqqa Emir and Sherif Huseyn Ibn Ali in 1917 to protect and assist the Armenian deportees. Under the conditions of policy of Genocide, implemented by the Turkish government, the Armenian orphans were in very lamentable situation. The work of orphan collecting began; orphanages were founded in the main centers of caravans. Hussein's son Feysal had a great role in this work. He urged all local bodies to found the orphans, which were in Arab families and handle them to the representatives of Armenian organizations. The assistance of Arab people didn't confine only in official frames. Many persons assisted and gave a heaven to the Armenian orphans. (The Raqqa's Ashira leader Fedi Al Fuaz, Mustafa Jelebi, Abd al Ghani al Juddi). The religious leader Abdullah Musi founded an orphanage in Hama. Many Armenian orphans became spostatates. Leaving with Arabs, they gradually accepted the Arab's lifestyle. Summarizing we can conclude that Arabs

showed humanistic stance toward the Armenian orphans otherwise the latter would not survive.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ատոնյան Ա., Մեծ ռժիրը, Եր., 1990, էջ 36:
2. Նալին աղ-Յաֆի, Հայոց ցեղասպանությունը և արարական հասարակական կարծիքի դիրքությունը, Լաբակիա, 1992, էջ 68 (արաբերեն):
3. «Ար-Ֆրակադդում» հայկական թերթի փաթեթագիր էջերը հայերի և արաբների վիճակի մասին Օսմանյան պետության մեջ ու Սիրիայում, Դամասկոս, էջ 321 (արաբերեն):
4. Արեայան Ն., Հայկական սարսափները պիսիական մտքում, Դամասկոս, 2002, էջ 144 (արաբերեն):
5. Գեղարզ, Տարեգիրք վեցերորդ, Հալեպ, 2002, էջ 42-45 (արաբերեն):
6. Սալիհ Ջանր աղ-Ղեյն, Արաբների անկեղծությունն ու հայերի երախտագիտությունը, Բեյրութ, 2000, էջ 245 (արաբերեն):
7. Ազատյան Լ., Հայ որբերը Մեծ Եղեռնի, Լոս Անջելես, 1999, էջ 227:
8. Նալին աղ-Յաֆի, Հայոց ցեղասպանությունը և արարական հասարակական կարծիքի դիրքությունը, Լաբակիա, 1992, էջ 76 (արաբերեն):

ՅԱՐԱԼՅԱՆ ՌՈՒԴԻԿ
(ԵՊԿ)

**ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ
ԽՆԴԻՐԸ**

Նախքան Կասպիցի իրավական կարգավիճակի մասին խոսելը, անհրաժեշտ է անդրադառնալ նրա տարրեր որակումներին՝ որպես «լիճ», «ծով», «փակ լիճ», «փակ ծով»: Թեպետ վերջին ձևակերպումը դուրս է մնացել միջազգային ծովային իրավունքի կոնվենցիաներից (1958թ. Ժնևի և 1982թ. Ծովային կոնվենցիաներ), սակայն չի կարող անտեսվել նրա առկայությունն օրակարգում, մասնավորապես, որ կան ծանրակշիռ պատճառներ Կասպիցը փակ ծով համարելու համար. այն չունի եզր դեպի ծովեր և օվկիանոսներ, իսկ չափսերը հեռու են լիճ կոչվելու հավանությունից՝ շրջապատված լինելով մի շարք պետությունների (մակերեսը կազմում է 378000ք.կմ):

«Փակ ծով»-ի գաղափարն առաջին անգամ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աստիճանաբար իջավ Խորհրդային իրավագիտության կողմից¹. նպատակն էր՝ սահմանափակել մրցակից երկրների մավերի մտտքը Մև ծով: 1956թ. Խորհրդային մասնագետները փակ ծովերը բաժանեցին երեք խմբի.

1. ծով, որ կապված չէ այլ ծովերի հետ, շրջապատված է երկու կամ ավելի երկրներով (Կասպից ծով)
2. ծով, որ մեկ կամ մի քանի ներուցներով կապված է այլ ծովերի հետ, կարգավիճակը սահմանվում է միջազգային կոնվենցիայով, շրջապատված է սահմանափակ քանակությամբ երկրներով (Բալթիկ և Մև ծովեր)
3. ծով, որ շրջապատված է երկու կամ ավելի երկրներով, սակայն կարգավիճակը չի սահմանվում միջազգային կոնվենցիայով (Վապոնական ծով):

Վերոհիշյալ երեք տարբերակների միջև ընդհանուրն այն է, որ համաշխարհային ծովային ուղիները շրջանցում են այդ ծովերը՝ անօրինական դարձնելով ոչ տարածաշրջանային պետությունների միջատությունը փակ ծովերին վերաբերող խնդիրներին:

«Շով», «լին» և «փակ լին» համարվում են այն ջրատարածությունները, որոնք ընդգրկում են ցամաքի որոշակի սահմանափակ տարածք և շրջապատված են երկու կամ ավելի պետություններով: Ըստ միջազգային իրավունքի՝ դրանք ներքին ջրեր են, և ափամերձ երկրներն իրենց ինքնիշխանության շրջանակները որոշում են միմյանց հետ պայմանագրեր կնքելով (1982թ. կոնվենցիա, 123-րդ հոդված): Փակ ծովերի վերաբերյալ վերջնական սահմանում գոյություն չունի, ինչն էլ մերձկասպյան երկրների միջև տարածայնությունների պատճառ է հանդիսանում՝ բարդացնելով Կասպից ծովի իրավական կարգավիճակի որոշման խնդիրը:

Խորհրդային միության փլուզումը պատճառ հանդիսացավ լուրջ աշխարհաքաղաքական տեղաշարժերի, որի դրսևորումներից է Արևմուտք-Արևելք հակամարտության տեղափոխությունը Միջերկրական ծովի արևելյան ափերից դեպի Կասպից ծով²: Առաջ են մղվում մի կողմից ԱՄՆ և ՆԱՏՕ, մյուս կողմից՝ Ռուսաստանի դաշնության (ՌԴ) և Իրանի իսլամական հանրապետության (ԻԻՀ) շահերը:

Այս խնդրավորումները թեպետ պայմանականորեն բաժանվել են երկու հակադիր ուժերի, սակայն միևնույն ժամանակ չեն կորցրել միմյանց նկատմամբ մրցակցության զգոնությունը:

ՌԴ-ը և ԻԻՀ-ը, լինելով սեփական տարածաշրջանային գործընթացների անմիջական մասնակիցներ և Կասպիցի տերեր³, կարող են փոխզիջումների միջոցով գալ ընդհանուր գաղափարի Կասպյան հիմնահարցում՝ առաջնահերթությունը տալով հարցի քաղաքական կողմին (հիշեցնենք, որ 1995թ. ԻԻՀ նավթի մախարաք Ղուբան Ռեգա Արագայեն հայտարարեց, որ «Կասպից ծովի հարցում Իրանն առաջնորդվելու է տնտեսական նպատակահարմարությամբ, ոչ թե քաղաքական կողմնորոշմամբ»: Սա նշանակում էր, որ Իրանի իսլամական հանրապետությունը տնտեսապես շահավետ պայմանների դեպքում կերաժարվի ՌԴ համագործակցությունից):

Արևմուտքը լուրջ քաղաքական նպատակներ է հետապնդում աշխարհագրական նպաստավոր դիրք գրավող Կասպյան տարածաշրջանում՝ շեշտադրումը կատարելով բնական հարստությունների յուրացման և շահագործման վրա: Նրա քաղաքական նպատակները կարող են խախտել ծովի բնապահպանական համակարգը⁴, եթե չսահմանվի կործանել այն. ծովի նավթօգտակների՝ անգամ կանոնավոր շահագործումը չի վերացնում նրա աղտոտման վտանգը: 50տ նավթի ներհոսքը ծովի հյուսիսային հատված, որտեղ ջրի խոշորությունը 20մ է (ժայռավոր խոշորությունը մինչև 1025մ է), մահացու ազդեցություն կունենա կենդանի մարմինների վրա:

Արևմտյան նավթային ընկերություններին, որոնք գործում են սեփական տարածաշրջանից դուրս, դժվար թե մտահոգեն այդ կարգի խնդիր-

ները: Այդ իսկ պատճառով նախընտրելի են ծովի իրավական կարգավիճակի լուծման այն տարրերակները, որանք բխում են սեփականատիրոջ իրավասությունից. դրանով տարածաշրջանի զարգացման առավել կայուն նախադրյալներ կստեղծվեն:

RUDIK YARALIAN
(YSU)

THE PROBLEM OF LEGAL STATUS OF THE CASPIAN SEA

At first it is necessary to have a notion about the seas, lakes and closed lakes for discussing the problem of the legal status of the Caspian Sea. The concept "of the closed sea" has not been included in the right of the international sea conventions though the Caspian Sea is actually possible to be considered as the closed sea – it is not connected to other seas and oceans and its sizes are great enough.

The acceptance of the concept "of the closed sea" will neutralize the political aims of the West in this region and will help to avoid ecological crisis by creating more stable conditions for development of the Caspian region.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Daryuye Mazandaran, Iradj Afshar, Tehran, 2002 (սփրսղիբրեմ):
2. Дарвади П, Каспийский регион в современной геополитике, Центральная Азия и Кавказ, 3 (27), Швеция, 2003.
3. Ս. Հափուրյանյան, Կասպյան բնօրնը և Իրանը, Հանրապետական, քիվ 6, 2003:
4. Кванцов В.М., Экологические проблемы Каспийского Бассейна, Новая Евразия: Россия и страны Ближнего зарубежья, М., 2002.

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ
(ՀՀՀ)

ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱԲՈՒԻ ՆԱՀԱՆՋԻ
ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Եվրամիության անդամակցության գործընթացի պայմաններում հատկապես վերջին տարիներին նկատելի է Թուրքիայում տարրների՝ որոշ ազգային քեմաներում հարուցված պետական արգելքների աստիճանական նահանջի միտում: Մա առնչվում է մասնավորապես քրդական խնդրին, Թուրքիայում ազգային փոքրամասնությունների իրավունքների քեմային, ինչպես նաև Հայոց Եղեռնի հարցին: Թուրքական պետությունը շարունակում է մերժողական քաղաքականությունը Հայոց ցեղասպանության խնդրում, քայց գիտական շրջանակներում եւ մամուլում աստիճանաբար առավել լսելի են դառնում ազատական, օրյեկտիվ դիրքորոշումները Հայոց ցեղասպանության հարցում պետական հետապնդումները նախկինի համեմատ տեղի են տվել: «Հայկական տարրն նահանջում է» խորագրով իր վերջին մեմագրության մեջ բուրջ առցիտոգ Թամեր Աքչամը նկատում է. «Հասարակությունն ասես սկսել է հետաքրքրվել իր խնդիրներով, Հայկական հարցի շուրջ մամուլով եւ գիտական շրջանակներում ամենախաղիչ աղբամտությամբ քննարկումներ են անցկացվում»¹:

Թ. Աքչամն արձանագրել է Թուրքիայում հայկական տարրի նահանջը դեռևս 2000թ.: Անցնող տարիների կտրվածքով եւս կարելի է արձանագրել տարրի հետընթաց, այսինքն Թուրքիայում Հայոց Եղեռնի հարցում պետական արգելքի նահանջը ստացել է շարունակական բնույթ, ինչը վկայում է, որ գործընթացն առավել հիմնավոր է դառնում:

Թուրք աշխարհահռչակ արձակագիր Օրհան Փամուշը եւս 2005թ. նոյեմբերին հայտարարել էր, թե «վերջին շրջանում Հայկական հարցը Թուրքիայում աստիճանաբար դառնում է հասարակական բաց քննարկման առարկա»²: Նույն քեմայով ամերիկյան «Քրիսչընդ տայմս մոնիտոր» ինտելեքտուալ մեջբերում է պոլսահայ «Ակոս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դիմքի խոսքը. «Աստիճանաբար սկսում ենք հարցնել, թե ինչ է տեղի ունեցել հայերի հետ: Այժմ եկել է դա հասկանալու ժամանակը»³: Հրասպարակախոս Յիգալ Շլեյֆերը նշում է. «Միմչել վերջերս

բուրքական պետությունը կարող էր ազատորեն հրապարակել պաշտոնական տեսակետը նշված հարցերի շուրջ: Ռայց, ըստ դիտողների, գերազանցապես ԵՄ ճնշումների պայմաններում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումները ավելի լայն դաշտ են ստեղծում այս հարցում հասարակության համար ազատ քննարկումներ կազմակերպելու հարցում»⁶:

Տարուի մահանցին նպաստող առաջնային գործոն է եվրախնտեզրման գործընթացում բուրքական կողմին եվրոպական տարրերի առյուծմեծից, հասարակական-քաղաքական, մտավորական շրջանակներից առաջադրվող ժողովրդավարացման պահանջը: Մեկ այլ իրողություն, որը եւս կարծում ենք անհրաժեշտ է կարեւորել, ըստ Թուրքիայի ներսում համեմ ժողովրդավարացման, այդ շրջանագծում մասն հայկական տարրի վերացման նպատակով տարվող որոշակի աշխատանքն է, որ պետական ճնշումների մասնակի բուլացման պայմանում առավել նկատելի է դարձել:

Հայոց Եղեռնի հարցում տարուի մահանցի բերես ամենամշակակալի իրողություն կարող է համարվել մախող տարվա սեպտեմբերի 23-24-ը Ստամբուլի «Բիլգի» համալսարանում Հայոց Եղեռնի բնմայով գիտաժողովը, որի ընթացքում արձանագրվեցին գերազանցապես օրյնկտիվ դիրքորոշումներ, իսկ Գեքմանիայի Բոխում քաղաքի «Ուսիք» համալսարանի պատմության պրոֆեսոր, ազգությամբ բուրք Ֆիքրեթ Աղաները կատարվածը հատակ բնորոշեց որպես «ցեղասպանություն»⁷: Թուրքիայի ակադեմիական կյանքում այս գիտաժողովը եզակի էր իր բնույթով, սակայն դրա մասնակից արտասահմանում ինչպես մասն ըստ Թուրքիայում քնակվող պատմաբանները ավելի վաղ եւս արտահայտվել էին Մեծ Եղեռնի վերաբերյալ: Մասնավորապես Ստամբուլի «Մաքանջը» համալսարանի պրոֆեսոր Հայի Բերքբայը, անդադարաւորով բուրք արձակագիր Փամուքի հայտնի հայտարարությանն այն մասին, որ «Թուրքիայում ժամանակին սպանվել են 1 միլիոն հայ եւ 30 հազար քուրդ» նշել է «1915-1916թթ. գոցն 800 հազար հայ է սպանվել, գոցն՝ 1 միլիոն: Երբ նախկինում, որպես պատմաբան, այդ մասին հայտարարում էի, ինչպես Փամուքն այս օրերին, եւ եւս ենթարկվում էի ազգայնամոլների հարձակումներին»⁸: Իսկ «Բիլգի» համալսարանից գրականագիտության պրոֆեսոր Մուրաթ Բելգնն հարցազրույցներից մեկում նշել էր, որ «1915թ. տեղի ունեցածը համահունչ է ՄԱԿ-ի ցեղասպանության մասին կոմիսնցիային»⁹:

Աննախադեպ կարելի է համարել Թուրքիայի մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպության հայտարարությունը 2005թ. ապրիլի 24-ին: «90 տարի առաջ այս օրը Օսմանյան կայսրության վերջին ժամանակաշրջանի երիտթուրքական կատավարությունը Ստամբուլում լայնածավալ ճիւղակաւորություններ սկսեց: Չեքրակալվածները Գլխա-

վոր շտաբի կամ նախարարությունների տեղեկատվական կայքերում բնութաչվում են որպես «հայ կոմյունիզմներ»։ Մինչդեռ նրանց զգալի մասը հայ հասարակության ընտրյալ մտավորականներն էին՝ պատգամավորներ, գրողներ, բանաստեղծներ, երաժիշտ, արվեստագետ, բժիշկ, փաստաբան։ Մենք որպես մարդու իրավունքների պաշտպաններ պահանջում ենք երաժարվել ֆաշիստական արշավներից, «ցեղասպանություն» բառի շուրջ առկա հակաժողովրդավարական օրինակներ սահմանափակումներից։ Բրեժնևեյի 305-րդ հոդվածի Հայոց ցեղասպանության վերաբերյալ մասից, որը խաչընդուտում է պատմության հետ առեղծվածը, ասված էր տեքստում՝ Հայտարարությանը աստարել էր գերազանցապես Թուրքիայի քրդերից բաղկացած «Ինժեկրատ ժողովրդի» կուսակցությունը։ Նշված կառույցը զգալի տեղ ունի երկրի արեւելյան շրջանների տեղական ինքնակառավարման մարմիններում։ Կարելի է որոշակի վերապահումով ասել, որ համընդհանուր Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ Հայոց ցեղասպանության փաստը ստագավ նաև քաղաքական օրյեկտիվ գնահատական։

Հայկական տարուի մահանգի գործում կարծում ենք կարևոր են նաև երկրի լրատվամիջոցներում ժամանակ առ ժամանակ լույս տեսնող ազատական հոդվածները։ Այս իմաստով զգալի աշխատանք է տանում «Ռադիկալ» օրաթերթը։ Այստեղ են հոդվածներ երապարակում Մուրադ Բելգեն, Էրոլ Ջաքըջբոլյուն, Իանեթ Բերքանը, որ նաև «Ռադիկալ» օրաթերթի խմբագիրն է։

Հայտնի է, որ Թուրքիայում դատական կարգով հետապնդվում էին 5 լրագրողներ վերոնշյալ «Ռիզգե» համալսարանի գիտաժողովի նախագահ Բուրքական պետական դիրքորոշումը քննադատելու պատճառով։ Պետք է նշել, որ 5 լրագրողներից 4-ն աշխատում են «Ռադիկալ» օրաթերթում։ 2006թ. փետրվարի 12-ից սկսած՝ թերթը երատաքակեց «91 ամյա առեղծվածը. Հայկական հարց» խորագրով Մեծ Եղեռնի վերաբերյալ թերևս դեռ տեսակետներ արտահայտող հարցազրույցների շարք։ Ընդհանուր թվով 7 հրատարակումների 14 հարցազրույցներից 11-ում, «ցեղասպանություն» բառերի ուղղակի կիրառումից խուսափելու հետ մեկտեղ, ներկայացվեց Հայոց Եղեռնը հաստատող տեսակետ (Հալիլ Բերքբայ, Հրանտ Դինք, Էրոյդան Այդըն, Բասըրն Օրան, Մասիս Զյուրքչյուզի, Ալիան Աքբար, Այշե Հյուր, Թամեթ Աքչամ, Դիլեթ Ջաֆթբոլյուն, Օսման Զյուքեր, Ֆուաթ Դյունդար) և միայն 2-ը՝ դեռ (Յուսուֆ Հալաբոլյուն, Թուրքբայա Աբասով), իսկ կարսեցի Ֆաիթ Բուլոթը միջամկյալ դիրք գրադնցրեց⁹։

Հողփածաշարում նաև պոլսահայ նամայնքի ներկայացուցիչները արժարծում էին իրենց հիմնախնդիրների մասին, մասնավորապես պոլսահայ Լեդա Մեքմեյրը պատմում է, որ մորական կողմը լինելով հայ, ընդունել է իսլամը և քաջցնում է իրական ծագումը¹⁰։

«Մաղիկալի» հողվածաչաքը որոշ չափով կրկնում էր 2005թ. Մեծ Եղեռնի տարիների օրերին «Հյուրիեթ» քեթթում լրագրող Մեֆա Քափլամի հրատարակած «Բնչ է տեղի ունեցել 1915թ.» շարքի մտնեցումը, որը ևս օրյեկտիվ դիրքորոշմամբ պատմաբաններին զուգահեռ ներկայացնում էր միրժողական կեղծ դիրքորոշումները, սակայն այստեղ լրագրողը հիմնականում պահպանել էր կողմերի միջև «ծավասարակշռությունը»: Մակայն նկատելի է նաև, որ լրագրողն առավելապես համակարծիք է օրյեկտիվ կողմին: Մեֆա Քափլամն ավելի ուշ առանձին գրքով տպագրեց իր հողվածաչաքը, որում նաև տեղադրեց Թալեաթի հեռագիրը Դիարքեթի նախնգապետին հայերի շարդը շարունակելու վերաբերյալ¹¹:

Կա տեսակետ, որ Անկաթան իրականացնում է մակերեսային, «կոսմետիկ» բարեփոխումներ՝ նկրտական «տեսուչների» մոտ ժողովրդափարագման պատրանք ստեղծելու համար: «Եթե անգամ Թուրքիան խոսքի ազատության ուղղությամբ որոշ բարեփոխումներ կատարել է, դա ոչ քն համոզմունքներից է, այլ ասես շոտ է», հայտարարել է արձակագիր Օրհան Փամուրը¹²:

Հայկական տարուի նախանքի գործում պետք է կարելուել նաև պատմական իրականությունն արտացոլող գրքերի հրատարակումը Թուրքիայում: Նշված ոլորտում զգալի աշխատանք է տարել «Բելգե» հրատարակչությունը: «Թուրքիայում ամենակարևոր տարումներից մեկը համարում ենք 1915թ. հայերի դեմ իրականացված ցեղասպանությունը: ...Պետությունները չպետք է խոսափեն իրենց պատմությունը քննարկելուց ևս մյս հետ անընտանից: Իվ Թեոմոնի և Վահագն Դադրյանի գրքերը տպագրել ենք հենց այս գիտակցությամբ», - նշել է բուրջական «Բելգե» հրատարակչատան դեկավարներից Այշե Նուր Ջարաբզում¹³: 1977թ. հիմնված «Բելգե» լույս է ընծայել Մեծ Եղեռնի վերաբերյալ պատմական իրականությունը ներկայացնող տասնյակից ավելի գրքեր, որոնց թվում Ծ. Վերվելի «Մուսա Լեռան 40 օրը», Ավետիս Մհարոնյանի «Ֆիդայիները», Վահագն Դադրյանի «Հայոց ցեղասպանության գործում կառույցների դերը» հողվածների ժողովածուն, Առնոդ Թոյնթիի, ծայ պատմաբան Արսեն Ավագյանի, իրավապաշտպան Եղա Օզբանի աշխատությունները:

Թուրքական «Փերի» հրատարակչատունը 2004թ. լույս է ընծայել Անդրանիկ Չելեպյանի «Անդրանիկ փաշա» գիրքը: Հատկանշական է, որ Չելեպյանի գիրքը լույս էր տեսել Բեյրութում 1986թ., Հայաստանում տպագրվել 4 տարի անց՝ 1990թ.՝ այս դեպքում արդեն խորհրդային համակարգի հարուցած արգելքների պատճառով: Արժանահիշատակ է նաև վերջին տարիներին պատմաբան Թամեր Աբյանի գրքերի հրատարակումն ու վերահրատարակումը Թուրքիայում, Առոն Էգոյանի «Արաբաթի» ցուցադրությունը «Կանալ Թուրք» հեռուստաալիքով ապրիլի 13-ին: «Ես մեկ հայկական տարու վերագրեց» հողվածում հրատարա-

կայսա Մ. Ալի Բիրանդը նշում էր, որ համարձակ մտեցումի համար հետոստապլիքի ղեկավարին պետք է շնորհավորել⁴։

Պետք է նաև նշել, որ ատկա դյուրյամբ պաշտոնական Անկարայի շարունակում է մերժողական քաղաքականությունը։ Թուրքիայի պատմության ինստիտուտի Թուստի Հալաչոլլուի գլխավորությամբ իրականացնում է համապատասխան կեղծ գիտական և քաղաքական աշխատանք։ Իր վերջին հարցազրույցներում Հալաչոլլուն կրկին վերահաստատել էր դիրքորոշումը։ Պնդելով, թե քարդի ենթարկվածների թիվը սահմանափակվել է մի քանի հազարով, ինչը պատահական միջադեպների արդյունք է եղել՝ նա շարունակում է. «Տեղեկանալով այս մասին՝ Թալեսարը միջոցառումներ ձեռնարկելու համար հետազոտող հետազոտի հետևից էր ուղարկում։ Ցեղասպանությունը հրահանգողը դա կանն՞ք»⁵։ Գերազանցապես մերժողական ուղղվածություն ունեղ նաև Ստամբուլի համալսարանում տեղի ունեցած վերջին գիտաժողովը⁶։

Սակայն զարգացնելով Թամեր Աքչամի միտքը՝ կարելի է արձանագրել, որ հայկական տարտի ոլորտում ընթանում է յուրատեսակ «ձմեռալ»։ Միանգամայն տրամաբանական համարելով, որ սա արվում է գերազանցապես հանուն ԵՄ անդամության զործընթացի՝ կարելի է արձանագրել, որ Եղեռնի հարցում հասարակության տեղեկացվածության մակարդակն աճում է, ինչը կարելի է նաև աստիճանական կարգով «մերթին ճնշում» ձևավորելու և բուրքական պաշտոնական ղեկավարությանը սեփական անցյալի հետ «առեքստանան» մղելու համար։

HAYKARAM NAHAPETYAN
(Public TV Company of Armenia)

THE PROCESS OF REMOVAL OF ARMENIAN TABOO IN TURKEY

During the recent years the Armenian Genocide issue has been discussed in Turkey more freely than in previous years and decades. The steps forward are conducted mostly due to the pressures by Western and especially European circles against Turkey. They demand that Turkish authorities create better conditions for discussing the Genocide question and accept the historical reality. Under these circumstances Ankara started suggesting some liberal viewpoints concerning the Armenian issue in the recent years. Many Turkish human rights activists, liberal-minded intellectuals, journalists, as well as political dissidents are contributing to the process of creating better atmosphere for discussing the realities of 1915 Genocide. On 24 April of 2005, the Human Rights Organization of Turkey issued a proclamation condemning Turkey's official position over Genocide issue and blaming the authorities for failing "to come face to face with their own history". Several books describing the historical reality of Genocide have been published mostly by "Belge" publishing house in Istanbul. The Conference held on 24-25 September 2005 in "Bilgi" University of Istanbul may also be considered as a step forward. Writer Orhan

Pamuk believes that Ankara is conducting a "make up" rather than reforms. In any case, year after year Turkish society is getting more and more informed about the Armenian Genocide issue.

ՇԱՆՈՍԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Taner Akçam, Ermeni Tabusu Aralınırken, İstanbul, Su yayımları, 2000 s. 9.
2. Pamuk: Ermeni sorunu artık tabu değil, www.zeynepbc.com, 29.11.2005.
3. Yigal Schleifer, Armenian Taboo Removes, The Christian Science Monitor, 17.03.2005.
4. Նույն տեղում:
5. «Ալմենայրիաս» լրատվական գործակալություն, www.armenpress.am, 25.09.2005.
6. Oshan Pamuk Üzerine, Vatan gazetesi, 11.02.2005.
7. Umarım 100'üncü yıl İstanbul'da anırsız, Milliyet, 01.05.2006.
8. Ermeni halkının acısına saygı göstermelidir, Radikal, 26.04.2005.
9. Ertuğrul Mavioglu, 91 yıllık duğum. Ermeni Sorunu, Radikal, 12-18. 02.2006.
10. Soykırım mı, değil mi?, Radikal, 12.02.2006.
11. Sefa Kaplan, 1915'te ne oldu? İstanbul, Hürriyet yayımları, 2005.
12. Pamuk: Reformlar kozmetik, Radikal, 11.12.2005.
13. Ayşe Nur Zarakolu Yazma ve Yayınlama Özgürlüğü İcin...", s. 58, Belge Yayınları, İstanbul, 2002.
14. Yeni bir Ermeni tabusu yıkıldı, Milliyet, 14.04.2006.
15. Bu telgrafın neresinde Soykırımı emri var?, Vatan, 13.03.2006.
16. Գիտամոդոլի մասնակիցների ամբողջական ցանկը տես՝ <http://www.hvtert.com/dosya/PROGRAM13THMARCH.xls>

ՆԱԿԱՍԱՐԳՅԱՆ ՆԱԶԵԼԻ
(ԱԻ)

**ԱՆԳԼՈՒՌՈՒՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԵՎ ԻՐԱՆԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵԳՆԱԺԱՆ ԱՌԱՋԻՆ
ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻՑ ԱՌԱՋ**

Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրեին Իրանը շարունակում էր գտնվել Մեծ Բրիտանիայի և ցարական Ռուսաստանի միջև Միջին Արևելքում ըմբռնող քաղաքական, ռազմավարական և տնտեսական շահերի մրցակցության կիզակետում: Իրանի դաջարական կառավարությունը՝ զրեթե ամբողջովին կորցրել էր իր քաղաքական և տնտեսական կենսունակությունն ու ինքնուրույնությունը: Իրանն ապրում էր խոր սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամ: Վտանգված էր երկրի ռազմական անվտանգությունը և վարչական կայունությունը: Հաջարական կառավարությունը փորձում էր պահել իշխանությունը՝ որպես ճգնաժամից դուրս գալու միջոց կիրառելով հրաժարականների մեթոդը և լավագույնս խուսաճավել երկրում առկա անզու-ռուսական մրցակցության և ներքին ծածայնքային հակասությունների միջև¹:

XX դարի սկզբին անզու-ռուսական մրցակցությունը Իրանում կարևոր գործոն էր, առանց որի ուսումնասիրության հնարավոր չէ հասկանալ միջինարևելյան, ինչպես նաև միջազգային քաղաքականության բազում հարցեր:

1912թ. փետրվարի 18-ին Ռուսաստանի և Անգլիայի ճնշման ազդյունքում Իրանի կառավարությունը ստիպված էր պաշտոնապես ճանաչել² դեռևս 1907թ. անզու-իրանական ծածածայնագիրը՝ Իրանն ազդեցության երեք գոտիների բաժանելու վերաբերյալ³: Փոխարենը Իրանին տրամադրվեցին նոր փոխառություններ՝ յուրաքանչյուր երկիրի կողմից 100 մազ. ֆունտ ստեռլինգ գումարով, տարեկան 7 տոկոս տոկոսադրույքով⁴:

Նշենք, որ համաձայնագրի IV-V կետերի ծածածայն Իրանի բոլոր մաքսատների շահույթները պետք է մտնեին Անգլիայի հիմնադրած «Շահնշահական բանկ» և Ռուսաստանի հիմնադրած «Հաշվարկատու բանկ»⁵ մարիտիլ շահական կառավարության կողմից նախկինում վերցված բոլոր փոխառությունները և դրանց տոկոսները⁶:

XIX դարից սկսած Անգլիան և Ռուսաստանը փորձում էին առավել ամրապնդել իրենց ֆինանսատնտեսական դիրքերը Իրանում: Անգլիան երկրի նարափում, իսկ Ռուսաստանը՝ հյուսիսում սկսեցին իրականացնել ներդրումային մեծաշնորհային ծրագրեր երկրի տնտեսության տարբեր ոլորտներում⁹: Օրինակ՝ Անգլիայի ներդրումը Իրանի հեռագրային ընկերությունում կազմում էր՝ 50 հազ. ֆունտ ստեռլինգ, «Եաննիշական բանկ» հիմնելու նախնական կապիտալը կազմում էր՝ 100 000 ֆունտ ստեռլինգ¹⁰:

Վերոհիշյալ երկու երկրները՝ հատկապես Անգլիան, փորձում էին իրենց մեծաշնորհային դիրքերը ամրապնդել նաև Իրանի նավթարդյունաբերության ոլորտում: Մասնավորապես 1901թ. Մեզաֆար էյ-Դին շահի կողմից անգլոնախուսակ դ'Արսիին տրամադրվեց Իրանի տարածքում նավթի շահագործման մեծաշնորհային կոնցեսիա, որի շրջանակներին մեջ չէին մտնում հյուսիսային հինգ նահանգները, որոնք զանվում էին ռուսական ազդեցության ոլորտում: 1909թ. այդ կոնցեսիայի հիմամ վրա հիմնվեց Անգլո-պարսկական նավթային ընկերությունը, որը պատերազմի տարիներին իրականացնում էր քրիտանական նավատորմի նավթի մատակարարումը¹¹:

Չնոր բերելով մեծաշնորհային իրավունքներ, այս երկու տերությունները սահմանափակում էին շահի ինքնուրույնությունը, ընդհուպ մինչև նրա կողմից ինքնուրույն քաղաքական որոշումներ կայացնելու հնարավորությունը: 1911-1914թթ. շահական կառավարությունը ստացավ ևս հինգ նոր փոխառություններ: Այսպիսով, արդեն աշխարհամարտի նախօրեին Իրանի արտաքին պարտքը Ռուսաստանին և Անգլիային կազմում էր 6 մլն. 804 հազ. ֆունտ ստեռլինգ¹²:

Իրանը Ռուսաստանի և Անգլիայի համար ինչպես էժան հումքի, գյուղատնտեսական քմամքերի արտահանման շուկա էր, այնպես էլ այդ երկրների արդյունաբերական ապրանքների խոշոր սպառող: Իրանի գյուղատնտեսական քմամքերի նկատմամբ բարձր պահանջարկը և չձևավորված արդյունաբերական կապիտալի բացակայությունն ի վերջո հանգեցրեցին առևտրային ազատ կապիտալի կուտակմանը բարձր պաշտոնյաների, հոգևորականության, առևտրային բուրժուազիայի ձեռքում¹³: Կուտակված միջոցները (ազատ կապիտալը) գյուղատնտեսական ոլորտում ուղղվում էր վերջիններիս կողմից հողերի ձեռքբերմանը, քանի որ գյուղատնտեսական ոլորտում ներդրված միջոցներն ավելի շահութաբեր էին: Գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի ցածր լինելն Իրանում հնարավորություն էր տալիս օտարերկրյա առևտրային ընկերություններին այդ արտադրանքն արտահանել միջազգային շուկա:

Ինչ վերաբերում է արդյունաբերական արտադրությանը, ապա Իրանում գերակշռում էր հիմնականում Ռուսաստանից և Անգլիայից ներ-

մոծվող արյունաքերական ապրանքները, քանի որ դրանք առավել մրցունակ էին: Իրանի Ռուսաստանի և Անգլիայի հետ առևտրի քննորոշ ձևերից էր առևտրային բացասական հաշվեկշիռը, ինչի վատ արտահայտությունն էր ներմոծվող ապրանքների անընդհատ աճն՝ արտահանվող ապրանքների նկատմամբ¹⁴:

Որոշակի վերապահումով մտածնալով մի շարք խորհրդային հեղինակների աշխատություններին, որոնցում նշվում է, քե օտարերկրյա կապիտալի մուտքն Իրան խաչընդոտեց և կասեցրեց իրանական տնտեսության զարգացմանը նշենք, որ ընդհակառակը, օտարերկրյա մեղքումների աճը դրական ազդեցություն ունեցավ իրանական բուրժուազիայի, ինչպես նաև կապիտալիստական հարաբերությունների և ազատ շուկայի ձևավորման վրա: Այլ է խնդիրը, որ իրանական իշխանություններն առաջնորդվելով իրենց ամձնական և ոչ պետական շահերով, ինչպես նաև կաշկանդված լինելով ավատականության կապանքներով, հետևողական չգտնվեցին օտարերկրյա մեղքումները և փոխառությունները ի նպաստ երկրի տնտեսության զարգացմանն ուղղորդելու և դրանով իսկ խթանելու իրենց երկրի առաջադիմական զարգացմանը:

NAZELY NAVASARDYAN
(IOS)

BRITISH-RUSSIAN FACTOR AND IRAN'S ECONOMIC CRISIS BEFORE THE WORLD WAR I

The research of the British-Russian competition and Iran's economic crisis in the beginning of XX century is too important problem. Without it's analysis it will be too difficult to understand correctly Great Britain's and Russia's struggle for the strengthening of their strategical and economical profits in Middle Asia, especially in Iran, before the World War I.

The Qajar dynasty (1796-1925) bounded with feudal limits wasn't able to create acting system of security of great vitality and administrative government. As a result Iran was in deep social-political and economical crisis. In spite of foreign investments and credits (in this case British and Russian) which mostly promoted the development of Iranian economy the authorities, leaded by their personal not the state profits, couldn't use them in favour of the progressive development of the country.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ղազարական ղննատիան իշխել է Իրանում 1796-1925 թթ., տե՛ս Մոհամմադ Ջավադ Մաշկուր, Թարիխ-ե Իրան զամին, Թեհրան, էջ 385-123 (պարսկերեն):
2. Abrahamian Er., Iran Between Two Revolutions, New Jersey, 1982, p. 41.
3. Նույն տեղում, էջ 42:

4. Мекдународные отношения в эпоху империализма, сер. 2, т. XIX, ч. 2, с. 306. (Из ноты персидского министра иностранных дел Восуг од-Доуле русскому посланнику в Тегеране Поклевскому-Козеллу от 7 (20) марта 1912г.).
5. Տուր համաձայնագրի՝ Իրանի էլտախային հատվածը համարվեց Ռուսաստանի ազդեցության որոշ, հարավայինը՝ Անգլիայի, իսկ կենտրոնական հատվածը՝ յեզր գոտի՝ քաջի ազատ մրցակցության դաշտ:
6. Мекдународные отношения в эпоху империализма, сер. 2, т. XIX, ч. 2, с. 155-156. (Из совместной ноты русского и английского посланников в Тегеране персидскому министру иностранных дел Восуг од-Доуле 18/5 февраля 1912г.).
7. Ըլլ մասին մանրամասն տե՛ս՝ P. Sykes A History of Iran, vol. 2, L., 1921, Кулагина Л.М., Экспансия английского империализма в Иране в конце 19 - начале 20 вв., М., 1981, с. 50-57.
8. Новая история Ирана. Хрестоматия, с. 202-203, см. Советско-иранские отношения, М., 1988, с. 51-54.
9. Բայրտրդյան Վ., Իրանի պատմություն, եր., 2005, էջ 483-503, նույնի՝ Իրանն առաջին համաշխարհային պատերազմի մախորյակին և պատերազմի տարիներին, աստմեական մեծնարկ և մերդական օժանդակ մյուրեր, եր., 1984, էջ 3-11:
10. Кулагина Л.М., Экспансия английского империализма в Иране в конце 19 - начале 20 вв., М., 1981, с. 110, таб. 8.
11. Elwell-Sutton L.P., Persian Oil. A Study in Power Politics, L., 1955, p. 11-51.
12. Иванов М.С., Очерк истории Ирана, М., 1952, с. 250.
13. Горелников С.Г., Иран. Экономико-географическая характеристика, М., 1961, с. 151-152.
14. Իրան անգլիական - ռուսական ապրանքների արտահանման - ներմուծման մասին մանրամասն տե՛ս Бобынин Н.Н., Персия ее экономическое положение и внешняя торговля 1901-1923гг., Тифлис, 1923, с. 114-167.

ԱՏԵՓԱՆՅԱՆ ԼՈՒՄՆԷ
(ԱԹ)

ԱՐԴԻԱԿԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԻՐԱՆՈՒՄ 20-ԲԴ
ԴԱՐԻ 20-40 ԱԿԱՆ ԹԹ. ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1921 թ. փետրվարի 21-ին Իրանում տեղի ունեցած հեղաշրջումից հետո մտնելով քաղաքական քառեկուսյան՝ Ռեզա խանը ձեռնամուխ եղավ միասնական և կանոնավոր բանակի ստեղծմանը և երկրում կենտրոնական հզոր իշխանություն ու կայունություն հաստատելու գործընթացին: Հետևողական քայլերի միջոցով աստիճանաբար իր ձեռքերում կենտրոնացնելով Իրանի ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական իշխանությունները՝ Ռեզա խանը փորձեց օգտագործել 1923 թ. երկրում սկիզբ առած հանրապետական վարչակարգ ստեղծելու շարժումը՝ Ղալաթյանների դիմաստիան տապալելու և իր դիրքերը ամրապնդելու նպատակով:

Սակայն, հանդիպելով ավատական ազնվականության և ազդեցիկ հոգևորականության հուժկու դիմադրությանը, նա ստիպված եղավ հրաժարվել հանրապետական շարժմանը սատար կանգնելու իր քաղաքանությունից: Նա անգամ մի հռչակագիր հրապարակեց, որտեղ հայտարարում էր, որ ինքը միշտ քառեկուսի է եղել իսլամի ժաղկանը և հոգևորականության դիրքերի ամասանությանը¹: Հենց այդ ժամանակաշրջանից էլ ձևավորվեց Ռեզա խանի, իսկ ապագայում Ռեզա շահի քաղաքականությունը կրոնի և մասնավորապես հոգևորականության հանդեպ: Բայց զիտակցելով, որ կրոնի դերն Իրանում չափազանց կարևոր է, իսկ հոգևորականության դիրքերը՝ ամուր, նա որդեգրեց հոգևորականությանը սիրաշահելու և նրանց իր կողմնակիցը դարձնելու քաղաքականություն, որն ուներ ևս մեկ հեռանկար նպատակ. հոգևորականության աջակցությունը ձեռք բերելով՝ նա կտանար հավատացյալների մի սովորականովածի հավանությունն ու աջակցությունը:

Հետամուտ լինելով իր որդեգրած քաղաքականությանը՝ Ռեզա խանը մի հայտարարություն հրապարակեց, որի համաձայն իր հիմնական խնդիրն էր համարում. «Ֆեյախական օրենքների իրագործումը և ժողովրդի քարոզությունը»²:

Եշված քայլերի արդյունքում նրան հաջողվեց ստանալ հոգևորականության մի մասի աջակցությունը, որի շնորհիվ էլ 1925թ. դեկտեմբերի 12-ին Մեջլիսի որոշմամբ Ռեզա խանը հռչակվեց Իրանի շահ: Իրանում հիմնվեց նոր միապետական դինաստիա, որն ընդունեց Փահլավի գահակալական անունը:

Լիարժեք իշխանություն հաստատելուց և երկրի կայունությունն ապահովելուց հետո՝ Ռեզա շահը ձեռնամուխ եղավ մի շարք միջոցառումների իրագործմանը, որոնք ուղղված էին երկրի արդիականացմանը և արևմտականացմանը: Իրանի սքսթազայում արդիականացման քաղաքականությունը անխուսափելիորեն ենթադրում էր երկրի աշխարհիկացում, որն էլ իր հերթին՝ հոգևորականության դերի և ուժի թուլացում: Ըստ Ռեզա շահի՝ Իրանի արդիականացման ճանապարհին սակա էր երեք կարևորագույն խնդիր՝ հոգևորականության ավանդական ազդեցությունը, քնակչության անզբազիտությունը և կանանց կախյալ վիճակը:

Այսպիսով, հենց այդ խնդիրների լուծմանն էր, որ իր ուշադրությունը րևեռեց Ռեզա շահն առաջին հերթին, քանի որ աշխարհիկ տիպի կրթական համակարգի հիմնադրումը և կանանց վիճակի բարելավումը ոչ միայն երկրի առաջընթացի գրավականն էին, այլև հոգևորականության ազդեցությունը թուլացնելու լավագույն միջոց: Հոգևորականության անձեռնմխելիությունը խափանվեց մաև 1938թ. հունիսի 19-ին ընդունված՝ Համընդհանուր զինվորական պատրաստականության մասին վերանայված օրենքով, որի 62-րդ հոդվածի համաձայն բոլոր հոգևորականները ենթարկվում էին երկամյա պարտադիր զինվորական ծառայության⁴:

Հոգևորականության ազդեցությունը թուլացնելու՝ Ռեզա շահի քաղաքականությունը առավել կտրուկ ձևով արտահայտվեց արդարադատության համակարգի բարեփոխումների գործընթացում: Դեռևս 1907թ. Թեհրանում հիմնվել էին աշխարհիկ տիպի առաջին դատարանները, սակայն աշխարհիկ օրենսգրքերի քաղաքականության պատճառով դրանք առաջնորդվում էին շարիաթով:

Այսպիսով, դատական ռեֆորմը նպատակ ուներ շարիաթական օրենսգրքերը փոխարինել եվրոպական իրավունքի նորմերով⁵: Այս դեպքում ևս, գլխակցելով հոգևորականության ուժը և ներգործության աստիճանը հավատացյալ զանգվածների վրա, Ռեզա շահը գերադասեց ճակատային պայքարի մեջ չմտնել, որի արդյունքում Սահմանադրության Լրացման երկրորդ հոդվածի համաձայն նոր օրենքները ոչ մի դեպքում չպետք է եսկանսին շարիաթին⁶:

Այսպիսով, չնայած ընդունվեցին եվրոպական տիպի Քրեական (1927թ.) և Զաղաքացիական (1929թ.) օրենսգրքեր՝ սակայն Զաղաքացիական օրենսգիրքը իրենից ներկայացնում էր շարիաթի և արևմտյան աշխարհիկ օրենքների ընդհանրացում, քանի որ ոչ մի այլ քննադատում շարիաթի գաղափարներն այնքան հարատև չէին, որքան ամուս-

նությանը, ապահարզանին, ընտանեկան հարաբերություններին և քաղաքականության դեմ հանցագործություններին վերաբերող հարցերում⁴։

Հետագա քայլերի արդյունքում շարիաթական դատարանների գործունեության իրավական դաշտը նեղացվեց։ Ի վերջո, 1931թ. նոյեմբերի 30-ին Մեջլիսը վավերացրեց օրենք, որտեղ ասվում էր, որ «Շարիաթական դատարանները ստեղծված են՝ բննելու այն դեպքերը, որոնք պետության օրենքներով մտցված են նրանց իրավասությունների շրջանակների մեջ»։ Այսինքն, շարիաթական դատարանների իրավասության մեջ էին մտնում միայն ընտանեկան և կրոնական քննադատների խնդիրները։ Նույն օրենքով շարիաթական դատարանների բոլոր գործողությունները մտցվեցին Գլխավոր դատախազի վերահսկողության ներքո, դրանք զրկվեցին դատավճիտ երապարակելու իրավունքից, նրանց դատավճիտները պետք է ուղարկվեին պետական այն դատարան, որը և գործը ուղղել էր նրանց, և այդ իսկ դատարանը կարող էր հրապարակել դատավճիտը։ Պետական դատարանները ստացան նաև շարիաթական դատարանների դատավճիտները բողոքարկելու իրավունք⁵։

1939թ. Քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում շարիաթական դատարանները ընդհանրապես զրկվեցին գործելու հնարավորությունից⁶։ Հոգևորականության դերը երկրի արդարադատության քննադատում էլ ավելի թուլացավ 1936թ. դեկտեմբերի 27-ին, երբ Մեջլիսի կողմից ընդունվեց արդարադատության համակարգի վերակառուցման և դատավճիտների վերաբերյալ օրենքը, որի համաձայն դատավճիտները պետք է համապատասխան մասնագիտական կրթություն ունենային, իսկ մալսկինում աղոծն գործող դատավճիտները պետք է քննություններ համձնեին իրանական և միջազգային օրենսդրության վերաբերյալ, որպեսզի կարողանային շարունակել իրենց գործունեությունը⁷։ Դատավճիտների ծառայողական վերոնիշյալ որակավորումների կիրառման հետևանքով հոգևորականության քաղաքային մեթոդաբանության ցուցանիշները դուրս մնացին արդարադատության համակարգից։

Ունեա շահի քաղաքականությունը հետապնդում էր հոգևորականության ոչ միայն նասադական, այլև ֆիմանական դիրքերը թուլացնելու նպատակ։ Դատական քառեվտիտումների շրջանակներում 1932թ. մարտի 17-ին Մեջլիսն օրենք ընդունեց, որի համաձայն օրինական փաստաթղթերի, սեփականությանը և ունեցվածքին վերաբերող այլ գործարքները պետք է կատարվեին միայն պետական աշխարհիկ դատարաններում⁸։ Այդ գործառնությունը նախկինում լինելով շարիաթական դատարանների մենաշնորհը՝ ամուսնությունների և ապահարզանների գրանցման հետ միասին մոջթահիդների ու ցածր խավի հոգևորականության օրինական եկամտների աղբյուրն էր կազմում։ Հոգևորականության ֆիմանական դիրքերը խարխլելու ուղղությամբ կատարված քայլերից էր նաև Գվիրատվությունների միջոցով կուտակված՝ մզկիթա-

պատկան հարստությունների (վակուֆների) բռնագրավումը⁵⁴։ Հատկանշական է, որ վակուֆների մի մասը մագվեց Լուսավորության նախարարության վերահսկողության ներքո՝ աշխարհիկ կրթական համակարգի տարածման կարիքները հոգալու նպատակով։ Բնականաբար դա անցանկալի հետևանքների ունեցավ հոգևորականության համար, քանի որ եկամուտների աղբյուր հանդիսացող միջոցների կորուստը կախման մեջ էր գցում նրանց կառավարությունից։ Կատարված բարեփոխումների հետևանքով բազմաթիվ հոգևորականներ ստիպված եղան հանել կրոնավորի հագուստը և աշխարհիկ աշխատանք փնտրել։

Այսպիսով, ամփոփելով Ռեզա շահի կատարած մանր շրջանի իրողությունները, հարկ է նշել, որ կատարված բարեփոխումները, լինելով բերի և ոչ հետևողական ու ծանախ իրականացվելով բռնապետական մեթոդներով, այնուամենայնիվ, նպաստեցին պետության դեկավար դերի ուժեղացմանը երկրի տնտեսական ու հասարակական կյանքում, ինչպես նաև Իրանի կայացմանը որպես անկախ պետություն։ Երկրի կենտրոնացումից և կայունացումից հետո, ըստ Ռեզա շահի, կարևորագույն խնդիր էր արդիականացումը, որը կնպաստեր Իրանի առաջընթացին։ Իշխանության գալու ընթացքում և դրանից հետո իր ճանապարհին խոչընդոտ համարելով հոգևորականությանը, որը մեծ դեր ուներ երկրի կյանքում, Ռեզա շահը կարևոր էր համարում իր «մրցակիցների» դիրքերի բուլացումը։ Երես պայքարը կրում էր նաև հոգեբանական բնույթ։ Ոչ պես ռզիչման աղբյուր փաստարանելով ոչ թե խաճախական անցյալը, այլ նախախախտական Իրանի նվաճումները, սահմանափակելով մահմեդական կրոնական տոների զանգվածային անցկացումը և իրականացնելով ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց հագուստի բոնի արևմտականացում, նա կործանարար հարված էր հասցնում հոգևորականության գաղափարական դիրքերին ևս։ Անգամ առողջապահության ոլորտում կատարված բարեփոխումները՝ պարտադիր պատվաստումները, թժշկական զննումները և այլն, որոշ անումներով դիտվում էին որպես հակահոգևորական տրամադրությունների դրսևորում։

Այդուհանդերձ, իր բարեփոխումների ողջ ընթացքում ծանդիպելով հոգևորականության դիմադրությանը, Ռեզա շահը բավականին զգույշ էր պահում իրեն նրանց հանդեպ։ Չնայած իր կատարած մանր շրջանում հոգևորականության ուժը բուլացնելու ուղղությամբ կատարված բուրբ քայլերին՝ նա ծանախ իր ելույթներում և հայտարարություններում հանդես էր գալիս որպես իսկապետապետ մահմեդական և նույնիսկ պնդում էր, որ բարեփոխումների իրականացումը ամենևին էլ չի հակասում իսկապետի սկզբունքներին⁵⁵։ Այսպիսով, «մտքակի և բլիթի» իսլամի քաղաքականության շնորհիվ Ռեզա Շահին հաջողվեց իրականացնել սեփական նպատակները, որը, սակայն չի կարելի վերագրել միայն նրա ուժեղ անհատականությանը։ Շահի հաջողության գրավականը նաև մտավորա-

կանության մեծ մասի, քաղաքային նորաստեղծ միջին խավի՝ պետական պաշտոնյաների, արհեստավորների և ուսանողների, իսկ ամենակարևորը՝ քանակային ապաների աջակցությունն էր:

LUSINE STEPANYAN
(IOS)

THE RESULTS OF MODERNISATION POLICY IN IRAN FOR CLERGY IN 1920-1940's OF XX CENTURY

Having undisputed political power, during years of his reign Reza Shah Pahlavi initiated a number of reforms to modernize the country. Three factors, according to him, that hindered the realization of the reforms, were Shiah religion in its traditional form, illiteracy and the status of women.

So the shah initiated a number of reforms that dealt successive blows to the body of organized Islam and radically undermined the position of the clergy. One and the most trenchant reform was the confiscation by the government of the ecclesiastical possessions, called waqf in Islamic countries, which meant not only decisive loss of power, but also deprived them of their independence and made them government officials and state functionaries. The second and may be the most important step was the establishment of modern secular educational system in Iran. Not less important were the reforms in judiciary sphere. The displacement by secular law of the religious law, the Sharia'h, was fatal for the clergy.

Analyzing all modernizing reforms that took place in Iran we can say that due to Reza Shah's customary vigor and support of intellectual and newly established urban middle classes, there were great changes, which resulted in decisive loss of power for clergy not only in the social, but also economic sphere of the country.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Koodie N.R., Iran. Religion, Politics and Society (Collected Essays), London, 1980, p. 98, ՎՔայրուրդյան, Իրանի պատմություն, Եր., 2005, էջ 603:
2. Նույն տեղում, էջ 605.
3. Haas W.S., Iran, Columbia University Press, New York, 1946, p. 153.
4. Տվյալ խնդիրները արդեն քննարկվել են՝ Ստեփանյան Լ., Կրթական բարեփոխումները Ռեզա շահ Փանդալիի կառավարման շրջանում, Մերձավոր Արևելք. Պատմություն, քաղաքականություն, մշակույթ (հոդվածների ժողովածու), Եր., 2002, էջ 134-147, Կամանջ վիճակը Ռեզա շահ Փանդալիի կառավարման շրջանում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ XXII, Եր., 2003, էջ 145-156, Իրանական քանակը որպես երկրի կենտրոնացման քաղաքականության կարևորագույն երաշխիք XX դարի առաջին կեսին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ XXIII, Եր., 2004, էջ 277-289 հոդվածներում:

5. Banani A., *Modernization of Iran: 1921-1941*, Stanford, California, 1961, p. 69, Avery P., *Modern Iran*, London, 1965, p. 286, Haas W.S., *Iran*, p. 158.
6. Վ. Բալթուրդյան, նշվ. աշխ., էջ 610:
7. Banani A., նշվ. աշխ., էջ 77.
8. *Ibid.*, p. 80, Lenczowski G., *Iran Under The Pahlavis*, Stanford, California, 1978, p. 92, Арабаджян З.А., *Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.)*, М., "Наука", 1991, с. 49.
9. Նույն տեղում, էջ 50, Banani A., նշվ. աշխ., էջ 78.
10. Նույն տեղում, էջ 79, Վ. Բալթուրդյան, նշվ. աշխ., էջ 610:
11. Keddie N.R., *Religion and Politics in Iran (Shi'ism from Quietism to Revolution)*, New Haven and London, 1983, p. 60, Banani A., նշվ. աշխ., էջ 79.
12. Նույն տեղում, էջ 73, Վ. Բալթուրդյան, նշվ. աշխ., էջ 621, Lenczowski G., նշվ. աշխ., էջ 92.
13. Նույն տեղում, էջ 92, Avery P., նշվ. աշխ., էջ 291, Арабаджян З.А., նշվ. աշխ., էջ 50, Banani A., նշվ. աշխ., էջ 72.
14. Նույն տեղում, էջ 92, Keddie N.R., նշվ. աշխ., էջ 60, Haas W. S., նշվ. աշխ., էջ 157.
15. Lenczowski G., նշվ. աշխ., էջ 39, Վ. Բալթուրդյան, նշվ. աշխ., էջ 617:

**ՎԱՐՊԵՐԵՍՅԱՆ ԱՐԵՆ
(Ա)**

**ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ
ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ԳԱԶԱՏԱՐԻ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

21-րդ դարում էներգետիկ ամվտամագուքյան հարցը գուտ տնտեսական հասկացությունից վերածվել է քաղաքականի: Ներկայումս էներգակիրների ներմուծման խնդրի հետ կապված ցանկացած հարց ուղղակիորեն առնչվում է երկրի ազգային ամվտամագուքյան հարցերին: Էներգետիկ ամվտամագուքյունը կարևոր է հատկապես այն երկրների համար, որոնք կախված են այս կամ այն երկրից՝ էներգակիրների ներմուծման հարցում: Էներգակիրների ներմուծման քազմականացումը տարրեր երկրներից դառնում է ռազմավարական նշանակություն ունեցող խնդիր:

21-րդ դարը կարելի է բնութագրել որպես էներգակիրների այլընտրանքի ստեղծման դար, որտեղ ամկախ է նա, ով ունի այդ այլընտրանքի հնարավորությունը կամ ով իր համար ստեղծում է այդ այլընտրանքը: Նկատենք, որ Հայաստանի Կովկասի հանրապետությունները ևս փորձում են գտնել էներգակիրների ներմուծման մոր աղբյուրներ: Էներգետիկայի քննազտատում հայ-իրանական հարաբերությունները կարելի է դիտարկել հենց այս՝ այլընտրանքի տեսանկյունից:

1992թ. դեկտեմբերին Իրանում Հայաստանի Հանրապետության և ԻԻՀ միջև ստորագրվեցին մի շարք պայմանագրեր, այդ թվում Հայաստան գազամուղի կառուցման համաձայնագիրը:

Այդ համաձայնագիրը ստորագրվեց այն ժամանակ, երբ երկու երկրների կապերի զարգացման համար քաղական նպատակներ պայմաններ կային: Հակառակ բոլոր սպասումների՝ տարրեր պատճառներով համաձայնագիրը կյանքի չկոչվեց:

1995թ. գազամուղի կառուցման հարցի շուրջ հնարավոր դարձավ Իրանի հետ կնքել մի լրացուցիչ համաձայնագիր, ըստ որի Հայաստանը գազամուղի կառուցումից հետո տարեկան կարող էր ստանալ 700 մլն խմ. գազ: Եվ հարկ է ավելացնել, որ մինչև վերջ հստակեցված չէր, քի ով է իր վրա վերցնելու գազամուղի Թավրիզ-Մաղրի հատվածի շինարարությունը¹:

2000թ. նոյեմբերի 8-9-ը ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Մարգարյանն այցելեց Թեհրան և հանդիպումներ ունեցավ Իրանի որոշ պաշտոնյաների, այդ թվում նախագահ Խաթամիի հետ: Բանակցությունների առանցքային հարցը եղել է Իրան-Հայաստան զազատարի կառուցումը, որի շինարարության աշխատանքները պետք է սկսվեն 2001թ. փետրվարին: Նույն թվին հայտարարվեց, որ Իրան-Հայաստան 140 կմ երկարությամբ զազատարի կառուցումը գնահատվել է 138 մլն դոլար, և որ նախագիծն իրականացնելու է ռուսական «Գազպրոմ», ֆրանսիական «Շրանսագազ», իրանական զազի ազգային ընկերությունների և ՀՀ էներգետիկայի նախարարության մասնակցությամբ ստեղծված կոնսորցիումը²:

Ինչպես նախորդ համաձայնագրերը, այդ համաձայնագիրը ևս կյանքի չէր չվեց: Դրա հիմնական պատճառներից էին ռուսական կողմի հրաժարվելը վերը նշված կոնսորցիումից, ինչպես նաև Իրանի առաջարկած բարձր ասկագինը³:

Հարկ է նշել 1992թ.-ից ի վեր զազամուղի քեման եղել է հայ-իրանական բոլոր բանակցությունների առանցքային խնդիրներից մեկը:

2001թ. հուլիսի 3-5-ը Թեհրան ժամանեց ՀՀ կառավարական պատվիրակությունը: Նրա ունեցած հանդիպումներում մասնավորապես քննարկվեցին էներգետիկայի և հաղորդակցության ոլորտի մի շարք համատեղ ծրագրեր՝ կարևորելով Իրան-Հայաստան զազատարի, Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայանի և Քաջարանի թունելի կառուցումը⁴:

Իրան-Հայաստան զազատարի շինարարության կապակցությամբ առկա էր այն տեսակետը, որ ԱՄՆ-ը կարող էր դեմ լինել նրա իրագործմանը: Այդ հարցի շուրջ հայ-ամերիկյան քննարկումները ցույց տվեցին, որ Վաշինգտոնը ըմբռնումով է մոտենում Հայաստանի էներգետիկ անվտանգության խնդիրներին և դեմ չէ զազատարի այդ ծրագրի կենսագործմանը:

2001թ. դեկտեմբերին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը պաշտոնական այցով եղավ Իրանում, որտեղ տեղի ունեցած բանակցությունների առանցքային քեմաներից է եղել Իրան-Հայաստան զազատարի շինարարության հարցը⁵:

ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը 2003թ. դեկտեմբերին այդ հարցի առնչությամբ իր հայտարարություններից մեկում ասել է. «Ռուսաստանի Դաշնությունը չի միստում նախագծի իրագործման կարևորությունը, ավելին՝ հայկական կողմը Ռուսաստանին հրավիրում է զազատարի շինարարության գործում ակտիվ դեր խաղալ»⁶:

Տևական բանակցություններից հետո վերջապես Հայաստանը և Իրանը 2004թ. մայիսի 13-ին ստորագրեցին Իրան-Հայաստան զազատարի կառուցման վերջնական պայմանագիրը⁷:

2004թ. սեպտեմբերին ԻԻՀ նախագահ Մոհամմադ Նաբամիի Հայաստան կատարած պաշտոնական այցի ժամանակ երկու նախագահների մերկայությունը երևանում մի շարք համաձայնագրեր ստորագրվեցին, որոնցից մեկը վերաբերում էր Իրան-Հայաստան գազատարի Մադրի-Քաջարան հատվածի ֆինանսավորմանը, որը պարտավորվում էր կատարել իրանական կողմը՝

ԻԻՀ նախագահի երևանյան այցի ընթացքում ՀՀ Ընդգնտիկայի նախարար Արմեն Մովսիսյանը և Իրանի նավթի նախարար Ռիժան Ջանգանեն ստորագրեցին փոխըմբռնման մի հուշագիր՝ Ընդգնտիկ քննակազմում հետագա աշխատանքների վերաբերյալ՝

Հանդիսավոր արարողությանը 2004թ. նոյեմբերի 30-ին մեկնարկեցին «Իրան-Հայաստան» գազատարի շինարարության աշխատանքները, միաժամանակ Շինուհայրում շահագործման հանձնվեց «Ազարակ-Շինուհայր» էլեկտրահաղորդման քարձրավորտ օդային երկլայտ գծերը՝

Իրանական կողմում կառուցվելիք գազատարի երկարությունը 100 կմ է և ընդգրկում է Թավրիզ-Նոբրուզ (Մադրի սահմանային կետը) տարածքը՝

Այդ հատվածի շինարարությունը պետք է իրականացնի իրանական կողմը: Գազատարի առաջին 40 կիլոմետրը, որի շինարարությունն արդեն սկսվել է, կառուցվելու է իրանական կողմի հատկացրած 30 մլն դոլար փարկի միջոցներով: Վարկի տրամադրման մասին համաձայնագիրը ՀՀ Ընդգնտիկայի նախարարության օր Իրանի արտահանման և զարգացման բանկի միջև ստորագրվել էր սույն թվականի սեպտեմբերին՝ ԻԻՀ նախագահ Մոհամմադ Նաբամիի Հայաստան կատարած այցի ժամանակ¹⁷:

Այդ նույն ժամանակ գազատարի 40կմ շինարարության մասին պայմանագիր էին ստորագրել նաև «Հայաստանի քարձրավորտ էլեկտրական ցանցեր» ընկերությունը և, որպես կապալառու, Իրանի «Մանիր» ընկերությունը¹⁷: Ըստ հիշյալ պայմանագրի՝ շինարարությունը պետք է ավարտվի մինչև 2007թ. հունվարի 1-ը, որից հետո Իրանի և Հայաստանի գազի համակարգերը կարող են միանալ և սկսել աշխատանքը, սակայն ավելի փոքր թողունակությամբ, քան նախատեսված էր գլխավոր պայմանագրում (2004թ. մայիսի 13-ին), համաձայն որի Հայաստան ներմուծվող գազի ծավալը սկզբնական շրջանում կհասնի մինչև տարեկան 1,1 մլրդ խմ, իսկ 2019թ.՝ 2,3 մլրդ խմ-ի¹⁸:

Ըստ «Մանիր» ընկերության փոխտնօրեն Համլո Ռեզա Ջանանի արած հայտարարության՝ կառուցվող գազատարը տարեկան առավելագույնը 2,8 մլրդ խմ. գազ Հայաստան առաքելու հզորություն ունի. գազի խողովակն ունի 711 սմ տրամաչափ և իջեցվում է 1,7 մ խորության խրամատներում¹⁴:

Պայմանագիրը ստորագրված է 20 տարով: Նախատեսված հզորությանը զազատարը շահագործելու համար Հայաստանում պետք է կառուցվի ևս 197 կմ խողովակաշար, որը կդնդգրվի Զաքարյան-Սիսիան-Չերմուկ-Արարատ տարածքը¹⁵:

Ըստ Իրանի հետ ձեռք բերած համաձայնության՝ հայկական կողմը Իրանից ստացվող 1000 խմ գազի դիմաց իրանական կողմին կտրամադրի 3000 կվտ ժամ էլեկտրաէներգիա «գազ էլեկտրաէներգիայի դիմաց» սկզբունքով:

Ըստ համաձայնագրի՝ մախատեսվում է 1:3 հարաբերակցությանը ստանալ գազ և հատկացնել էլեկտրաէներգիա: Համաձայն հաշվարկի՝ 1,1 մլրդ խմ. գազ տարեկան ստանալով Իրանից՝ Հայաստանը Իրանին կմատակարարի 3,3 մլրդ կվտ ժամ էլեկտրաէներգիա¹⁶:

Պետք է նկատի առնել, որ Հայաստանը, գազի խողովակաշարի և քարծրավոլտ էլեկտրացանցի միջոցով կապվելով հարևան Իրանի Իսլամական Հանրապետության հետ, ստեղծում է էներգետիկ ամպտանգության այն համակարգը, որը ռազմավարական նշանակություն ունի մեր երկրի զարգացման համար քե՛ն ներտնտեսական և քե՛ն արտաքին քաղաքական ոլորտների տեսանկյունից:

AREN VARDERESYAN
(JOS)

IRAN-ARMENIAN COOPERATION IN POWER ENGINEERING: CONSTRUCTION OF THE GASLINE

The article deals with the construction of the gasline between Iran-Armenia within the framework of agreement in power engineering signed between Armenia and Iran, in 1992.

The developments concerning the project have also been touched upon.

The article concludes the importance of the gasline for both countries.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ազգ. 10.12.2000
2. Հայաստանի Հանրապետություն, 20.11.2001
3. Հայաստանի Հանրապետություն, 20.11.2001
4. IRAN NEWS, 06.07.2001 (մակ տես «Ազգ», 07-07-2001)
5. www.iran.gov.mfa
6. Առավոտ, 23.12.2003
7. Հայաստանի Հանրապետություն, 20.05.2004
8. Ազգ, 09.09.2004
9. Հայաստանի Հանրապետություն, 20.05.2004

10. Հայաստանի Հանրապետություն, 01.12.2004
11. Ազգ. 03.12.2004
12. Միհր, ղեկտեմբեր, 2004
13. Հայաստանի Հանրապետություն, 09.01.2006
14. Հայաստանի Հանրապետություն, 09.01.2006
15. Հայաստանի Հանրապետություն, 01.12.2004
16. Հայոց Աշխարհ, 03.12.2004

ՓԱՇՏԱՅԱՆ ԱՐԱՔԱ (ԱԻ)

«ՀԵՏԻՍԼԱՄԻՉՄ». ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱ

Արևմտյան վերլուծաբաններից շատերի կարծիքով՝ Մառը պատերազմի ավարտից հետո քանի ղեկ «նոր» աշխարհի քնուրազող չափառչիները մշուշապատ են ու փոփոխական, ապա կարիք ունեն սահմանվելու «հետ» նախորդով¹: Այս տեսանկյունից հետաքրքրական է «հետխլամիզմ» ("Post-Islamism") եզրի նշանակությունը:

Արևմտյան արևելագիտության կողմից քնուրազոված «հետխլամիզմը» սկսեց ծառայել 1990-ականներից և սրատմականորեն համարվում է երրորդ փուլը նախախլամիզմից (կամ ազգայնականությունից) և իսլամիզմից հետո: Ընդ որում, յուրաքանչյուր շրջան իր նախորդի էվոլյուցիայի արդյունքն է: «Հետխլամիզմի» ֆրանսիացի տեսաբան Օլի Կեպելի համոզմամբ՝ 20-րդ դարի վերջին քառորդը նշանավորվեց իսլամիստական շարժումների վերելքով, ապա և մայրամուտով, ինչը որքան տարավորիչ, նույնքան անսպասելի էր²:

Համարձակ և վիճարկելի է քվում այն տեսակետը, թե իսլամիզմը կարելի է հաղթահարված համարել այն դեպքում, երբ վերջինս, ինչպես նշում է ամերիկացի ռադիկալիստ Դանիել Փայիսը, դեռևս կենսունակ է և ձգտում է իշխանության գալ³: Իսլամիստական շարժումների գծով եզիպտացի փորձագետ Դիա Ռաշվանի համոզմամբ՝ «հետխլամիզմի» ի հայտ գալն ամենևին չի նշանակում, թե իսլամիզմը սպառվել է: Նրա կարծիքով՝ թե՛ «իսլամիզմը» և թե՛ «հետխլամիզմը», որպես հայեցակարգեր, կարող են հանդես գալ միաժամանակ⁴:

Կասկածից վեր է սակայն, որ վերջին շրջանում քաղաքական իսլամի գաղափարախոսական դաշտում տեղի են ունեցել առանցքային փոփոխություններ, ի հայտ են եկել զարգացման նոր միտումներ, ինչն էլ բնորոշում է «հետխլամիզմ» տեսությունը: Այս իմաստով «հետխլամիզմը» կարելի է դիտարկել որպես մի տարողունակ հասկացողություն, որ իսլամիզմի հետ համեմատած այլի է ընկնում գաղափարախոսական նոր քաղաքիչներով:

«Հետխլամիզմի» տեսաբանները նոր իրողություն են համարում այն, որ մարտնչող իսլամիզմը նախանց է ապրել՝ ընդհանուր առմամբ հրա-

ժառվելով իր մի շարք սկզբունքներից ու մեթոդներից, այդ թվում բոնուր-
յունից ու հեղափոխությունից: Ֆրանսիացի տատմասախոս Օլիվեր Ռոյը
«Քաղաքական իրամի ճախողումը» գրքում նշում է, որ իսլամիստները,
պարտություն կրելով «մերձավոր քշմամուց», այսինքն՝ սեփական վար-
չակարգերից, իրենց պայքարն ուղղորդեցին «հեռավոր քշմամու», այն է՝
Արևմուտքի և մասնավորապես ԱՄՆ-ի դեմ⁷:

Օ.Ռոյի կարծիքով՝ 1990-ականներին ճախողվեց նաև «իսլամական
ինտերնացիոնալը» և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում իսլամիս-
տական շարժումները «ազգայնականացվեցին»⁸:

Իսլամիզմն այժմ հանդես է գալիս չափավոր դիտքներից և հայտ է ներ-
կայացնել՝ գործելու քաղաքական դաշտում, ինչպես Ժիլ Կեսպեն է նշում
վերաճելով ժողովրդավարական շարժումների⁹: Ասվածի ասարցույցը,
«հետխալամիզմի» մեկ այլ տեսարան Ասեֆ Բայասի կարծիքով, Եզհպ-
տոսում, Սիքիայում⁹, Ալժիրում, Բուվինյում, Հոդղանանում, Պաղեստին-
ում, Մոդանում «Մահմեդական եղբայրներին»⁹ կամ իսլամական լիբե-
րալների որդեգրած ուղեգիծն է Սաուդյան Արաբիայում¹⁰:

Փաստորեն, «հետխալամիզմն» իսլամական մտքի մեջ ի հայտ է քերել
մի նոր մտածելու, որն այժի է ընկնում չափավոր ու ազատական ուղղ-
վածությամբ: Այն էսպես նոր որակ է ստեղծում ժամանակակից իսլա-
մական գաղափարախոսության մեջ¹¹:

Իսլամական չափավորների հանդգամք՝ իսլամն իր կրոնական, քա-
ղաքական, սոցիալական և գաղափարախոսական կողմերով լիովին հա-
մատեղելի է արդիականության հետ և կարող է քննառաջ գնալ 21-րդ դա-
րի պահանջներին: Եթե իսլամիզմին հատուկ է կրոնական ճշմարտու-
թյան քաջարձակացումը, իսլամի քաջատիկության սկզբունքը և իսլամա-
կան արժեհամակարգն աշխարհում գերակա դարձնելու այլընտրանք
չունեցող անհրաժեշտությունը, ապա «հետխալամիզմին» հատուկ է տա-
րակարծությունը, քազմազանությունը, փոխհամաձայնությունը, ինչպես
նաև անհանդուրժողականության և կրոնական մոլեռանդության ժխտու-
մը:

Իսլամական չափավորները ժամանակակից աշխարհի արժեվորման
սեփական տեսակետն ունեն՝ հիմնված շարիաթի ընդհանուր սկզբունք-
ների վրա: Ըստ այդմ՝ շարիաթը ոչ թե քաղաքացած տեքստ է, այլ որոշակի
արժեքների վրա հիմնված ուղի, որը մեկնաբանելիս պետք է հաշվի առ-
նել նոր իրողությունները: Զպետք է կուրորեն հետևել արդեն հնացած
կարծրատիպերին կամ որոշակի կրոնախրավական ուղղության: Քազա-
լերվում է ստեղծագործական միտքը, կարևորվում *իջթիհադը*, որպես՝ իս-
լամական սկզբունքների ազատ մեկնության մեթոդ: Բազմակարծության
իրականացման համար առաջարկվում է հիմնավոր փաստարկումներով
ամրագրված երկխոսությունը՝ ինչպես ներիսլամական միջավայրում,
այնպես էլ այլ կրոնների և մշակույթների շրջանակներում: Անընդունելի

են համարվում իսլամական սկզբունքների միակողմանի մեկնությունները և այդ համատեքստում՝ ընդդեմախոսներին անհավատության մեջ մեղադրելն ու մրանց սեփական տեսակետները պարտադրելը: Իսլամական մոլեռանդության հիմնական պատճառներ են համարվում ինքնամեկուսացումն ու ներփակվածությունը:

Իացի այդ, կարևորում է արևմտյան մի շարք հիմնարար արժեքների ներդրումն իսլամական հասարակություններում: «Հետիսլամիզմ» շրջանակներում հանդես եկող առանձին ուղղությունների քննույժ է դառնում մահ որոշակի աշխարհիկ ուղղվածությունը: Ասվածի ապացույցը եզրափակված «Մահմեդական եղբայրներից» 1995թ. առանձնացած «Ալ-վասատ» կուսակցության գաղափարախոսությունն է¹²:

Ամերիկացի ռադիկալիստ Ջոն Էսպերդիտոյի կարծիքով՝ անկախ «իսլամիզմ» և «հետիսլամիզմ» եզրերի կիրառությունից, ակնհայտ է, որ քաղաքական իսլամն այժմ այցի է ընկնում ավելի սոցիալական, քան քաղաքական շեշտադրմամբ¹³: Իսկ դա նշանակում է, որ իսլամիզմը ձեռք է բերել նոր հատկանիշներ:

Չմայած առկա բազմակողմ մտածումներին, անժխտելի է այն փաստը, որ «հետիսլամիզմ» այցի է ընկնում նոր հարցադրումներով, որի ի հայտ գալը դեռևս չի նշանակում իսլամիզմի պատճառով ավարտ:

Արդի գլոբալ մարտահրավերների առջև «հետիսլամիզմը» կարող է դառնալ այդպիսով նոր ուղղվածություն ժամանակակից իսլամի համար: Ժիլ Կեպելի համոզմամբ՝ 21-րդ դարում իսլամական աշխարհը վերջնականորեն մուտք կգործի արդիականություն՝ նպատակելով իսլամական ժողովրդավարության տարածմանը:

ARAKS PASHAYAN

(JOS)

"POST-ISLAMISM": AN ANAVOIDABLE EVOLUTION

According to western political theory, since the end of Cold War the intellectual, political and social characteristics of the "old" world have given way to a radically different, "new" world, which is still vague. There are no terms to describe it except prefix "post". The purpose of this article is to discuss the term and substance of "Post-Islamism" – as a moderate direction in Islamic thought, applying for modernization of Islam.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Uju duuuh inb'u' Dias Rashwan, *Wishful thinking, present and future*, Al-Ahram Weekly Online, 7-13 February 2002, Issue No. 572, <http://weekly.ahram.org.eg/2002/572/op2.htm>

2. Жиль Кепель, Дюжикад, Экспансия и зоват исламизма, М., 2004, с. 19.
3. www.meforum.org/article/447
4. Dina Rashwan, Wishful thinking, present and future, նշվ. տեղում:
5. Sb'u Olivier Roy, The Failure of Political Islam, Cambridge MA: Harvard University Press, 1995.
6. <http://www.ssrc.org/sect11/essays/roy.htm> - Ասլամի ապացույցը «հետխալամիզմի» շրջանում իսլամիստական մի շարք շարժումների ռդդարած ուղեգիծն էր սեփական երկրներում, որոնցից ուշագրավ է «Հեղափոխի» օրինակը: Վերջինս Լիբանանի քաղաքացիական պատերազմի ավարտից և քաղաքական դաշտ մտնելուց հետո հրաժարվեց Լիբանանում իսլամական պետություն ստեղծելու գաղափարից և պայքարում էր իսրայելական օկուպացիայի դեմ՝ համագործակցելով մանրիստոնական առանձին շջջանակների հետ:
7. Gilles Kepel, Islamism Reconsidered, Harvard International Review, vol. 22, No. 2, p. 24.
8. Այս մասին տե՛ս՝ Манукян С., Зигаги развития исламистского движения в Сирии в 1982-2000гг., Страны и народы Ближнего и Среднего Востока, т. XXIV, Ер., 2005, с. 181-194.
9. <http://www.craash.cam.ac.uk/events/abstracts/revolution/ABayart.pdf>- Տե՛ս՝ Ասեֆ Բայարի մաս՝ What is Post-Islamism?, ISIM Review, No. 16, Autumn, Leiden, 2005, p.5.
10. Այս մասին տե՛ս՝ Stephane Lacroix, Between Islamists and Liberals: Saudi Arabia's New "Islam Liberal" Reformists, Middle East Journal, vol. 58, No. 3, Summer, 2004, p. 349.
11. «Հետխալամիզմի» պատմական ակունքներում 19-րդ դարի վերջին ակնթար առած իսլամական խալաֆ (քարեփոխման) շարժումն է, համաձայն որի՝ իսլամը պետք է ընդառաջ գնա ժամանակի պահանջներին: Գաղափարախոսության առաջատարներից մեկի՝ Նուրիդին Բենի Սուլեյմանի (1849-1905) կարծիքով՝ պետք է հրաժարվել կրոնական և հասարակական գիտակցության մեջ առկա կարծրատիպերից և ամբողջությամբ վերականգնել *իքթիսաթ*:
12. Joshua A. Stacher, Post-Islamist Rumbblings in Egypt: the Emergence of the Wasat party, The Middle East Journal, Summer, 2002, v.56, i3 p415(18), <http://arabist.net/post-islamist-rumbblings-in-egypt-the-emergence-of-the-wasat-party>
13. www.meforum.org/article/447

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՂԱՔԱՔՅՈՒՆ ՀՐԱՅՐ
(ԵՊՀ)

ՈՒՂԻՂ ԽՆԴԻԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԴԻՐՔՆ
ԱՐԱՔԵՐԵՆՈՒՄ ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՆ
ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Արաքական լեզվաբանական ավանդույթն (այսուհետ՝ ԱԱ) առանձնացնում է այնպիսի քայական շարքեր, որոնցով կազմված ստորոգական միջուկը կարող է ընդլայնվել միաժամանակ երկու կամ երեք *ակուզատիվ* անվանական միավորներիով, որոնք պայմանավորված լինելով քայի կառավարման գործառույթով՝ Ֆախադասության մեջ գործառնում են իրեն ուղիղ խնդիրներ՝ Ակկուզատիվ շարահյուսական լրացական միավորների նման մեկնաբանությունը ոչ միշտ է համապատասխանում ժամանակակից լեզվաբանական տեսության մտեցումներին: Թերևս դրանով է պայմանավորված արևմտյան լեզվաբանների կողմից այդ դիրքերը մկադազրելիս *ուղիղ խնդիր* եզրի փոխարեն *ակուզատիվ* անուն կամ *լրացում* եզրերին դիմելը՝ դրանով իսկ կասկածի ենթարկելով արաքերականագետների կողմից առաջարկվող քայերի ստորաբաժանումը միակի, երկակի և եռակի անցողիկ քայական շարքերի: Ստորև քննության կառնվեն արաքերենի երկակի և եռակի անցողիկությամբ քնուրազրվող քայական շարքերը, որոնք, ինչպես կտեսնենք, որոշ դեպքերում ցուցաբերում են միակի անցողիկ քայերին քննորոշ առանձնահատկություններ:

1. Կրկնակի անցողիկությամբ քնուրազրվող քայերը (*al-'aḥ'ā al-muta'addiya ila maḥ'ālayn*) ըստ իրենց կողմից կառավարվող խնդրառված անվանական միավորների քնույթի և շարահյուսական առանձնահատկությունների կազմում են երկու տարրեր շարքեր: Առաջին շարքի քայական միավորների կողմից կառավարվող խնդիրներն իրենց ելքային տարրերակում փոխկապակցված են անվանական ստորոգական կառույցի ստորոգական միջուկը կազմող ենթակայի և ստորոգյալի միջև առկա հարաբերություններով (*ḥanna wa 'axawštuha*): Ձուգանեռներ

անցկացնելով հայերենի քայական շարքերի հետ, կարող ենք նկատել, որ այս շարքը կազմող միավորները ցուցաբերում են մնամաբյուններ վերացական քայերի անցողականությամբ քննազգրվող տեսակի հետ, որոնք չունենալով լիարժեք նյութական կամ քայական իմաստ իրենց սեմանտիկ բեռնվածքը անբողոքությամբ իրացնելու նպատակով վերջադաս խնդրատված անվանական միավորի հետ (Ա.Ա.-ում՝ երկարող ուղիղ խնդիր) կազմում են քաղաղրյալ անվանաքայական ստորոգյալ:

Երկարող շարքը կազմող պատճառական իմաստով բեռնված քայերի կողմից կառավարվող խնդրատված միավորների միջև չկա որևէ տեսակի շարահյուսական հարաբերություն: Այս շարքի քայերի հոլովական համակարգ ունեցող այլ լեզուների մոյն սեմանտիկ բեռնվածքով քայերի հետ համադրության արդյունքում պարզ է դառնում, որ խնդրատված միավորներից մեկը գործառնում է իբրև ուղիղ խնդիր, մինչդեռ մյուսը ցուցաբերում է անուղղակի, մեծամասամբ հանգման անուղղակի խնդրին քնդող առանձնահատկություններ: Խնդիրների տարբերակումը ստուգաբանելու նպատակով առաջարկում ենք այդ շարքի քայերով կազմված ստորոգական կառույցների առաջին խնդրատված անվանական միավորի փոխարինումը *հարակցական մասնիկ + գեներտիվ անուն* կառույցով. (1) *'a'taytu Zaydan kitāban* (*Չեյդին գիրք տվեցի*) ⇔ (2) *'a'taytu lizaydin kitāban*: Կարելի է ենթադրել, որ երկրորդ տեսակին պատկանող փոխակերպված նախադասությունները ժամանակակից արաբերենում հանդես են գալիս որպես առաջին տեսակի ելքային նախադասությունների փոխակերպման արդյունք²:

2. Ա.Ա.-ում առանձնանում է պատճառական սեմանտիկ բեռնվածքով երկակի անցողականություն ցուցաբերող քայերի շարք (*xabbara, 'axbara, nabba'a, 'a'lama, 'ara*), որոնք գործառնելով մեկ այլ քայի նյութական իմաստով՝ տվյալ դեպքում՝ *'a'lama տվորեցնեղ, հասկացնեղ, ցույց տալ*, որակվում են իբրև եռակի անցողականությամբ քայեր: Այսպես *'araytu Sa'īdan* (1) *al-'amra* (2) *sahlan* (3) «*Հասկացրի Սալիդին, որ խնդիրը պարզ է»* նախադասության մեջ առաջին և երկրորդ խնդրատված անունները համապատասխանաբար գործառնում են իբրև հանգման անուղղակի և ուղիղ խնդիրներ, մինչդեռ երրորդ խնդրատված անվանական միավորը չի կարող քննազգրվել իբրև ուղիղ խնդիր, քանի որ իմաստային առումով քայի հետ գտնվելով վիճակային հարաբերությունների⁴ մեջ ցուցաբերում է սիրկոնստանուններին քնդող պարագայական առանձնահատկություններ:

3. Կարելի է եզրակացնել, որ արաբերենի քայը հիմնականում միակի անցողական է, որոշ դեպքերում՝ կրկնակի, իսկ վերջինիս կառավարման գործառույթով պայամանավորված երկու խնդրատված անուններից մեկը ստորոգական կառույցի սահմաններում գործառնում է իբրև *հանգման անուղղակի*, իսկ մյուսը՝ իբրև *ուղիղ խնդիր*:

THE SYNTACTICAL POSITION OF THE DIRECT OBJECT IN ARABIC IN
THE CONTEXT OF GOVERNMENT THEORY

The traditional Arabic linguistics distinguishes between verbs which have one, two & three direct objects. This thesis is not estimated identically by modern linguistic theory. As the 1st, 2nd & 3rd accusative nominal units which follow the verb (depending on its valency) do not function as direct objects in all cases. The transitive Arabic verbs which need 2 direct objects are divided into 2 groups. According to traditional Arabic linguistics between the 2 direct objects of the first group initially lies a syntactical relation of a predicate and a subject of a nominal sentence. But in reality the 1st group verbs should be regarded as abstract verbs having no verbal meaning and which form a compound nominative-verbal predicate. The 2 accusative nominal units of the verbs of the second group shouldn't be regarded as direct objects as one of them, in fact, functions as an indirect object. As for the verbs which need 3 accusative names, they, in fact, are nothing else than transitive verbs which need 2 objects. They need the 3rd accusative nominal unit when they function with a semantic filling of another verb. If the 1st and the 2nd accusative nominal units function as direct and indirect objects, the 3rd one functions as an adverbial modifier.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Al-Galibāt Mustafa, Jāmi'u ad-durūs al-'arabiyya, Bayrut, 1989, p. 35.
2. W. Wright, A Grammar of the Arabic Language, Beirut, 1981, vol. III, p. 10.
3. Naphtali Kinberg, Studies in The Linguistic Structure of Classical Arabic, Brill, Leiden-Boston-Köln, 2001, p. 15.
4. Գ. Ջահուկյանը շարահյուսական երկրորդական անդամները բաժանում է երկու տեսակի՝ խնդրային և պարագայական, նշելով, որ առաջինների դեպքում բայի և խնդրի միջև առկա են առաջնայական հարաբերություններ, իսկ երկրորդի դեպքում կիճակային: Տե՛ս Ջահուկյան Գ.Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974; էջ 421:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷՄՄԱ
(ՈՂՄՎ)

ԱՐԱՔԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԶԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՍԿԶՔՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Արարական լեզվաբանությունը, իր հիմքում ունենալով հունական լեզվաբանության և հնդկական հնչյունաբանության ազդեցությունը, սկզբնավորվեց իսլամի տարածումից և արարական խալիֆայության ստեղծումից հետո: Արարական լեզվաբանական մտքի և հատկապես քերականության զարգացումը պայմանավորված էր պետության քաղաքական իշխանությունն ամրապնդելու, 'Լուրանի սուրբ տեքստերը մեկ միասնական քերականական համակարգով մշակելու, ինչպես նաև՝ արաբերենը այդպիսով ժողովուրդների ազդեցությունից զերծ պահելու պահանջով:

Արարական քերականական դպրոցների առաջացումը վերագրվում է 7-րդ դարի երկրորդ կեսին: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ արաբ քանադաները վերոնշյալ բացատրելի լեզվական առանձին երևույթներ, ինչպես նաև արաբերենի զարգացման օրինաչափությունները:

Արարական քերականության հիմնադիրն, իրավամբ, համարվում է 7-րդ դարի գործիչ Աբու ալ-Ասուադ ալ-Դասուլին, որին, ըստ ավանդության, չորրորդ արդարադատ խալիֆա Ալիին համձնարարել է գրադրել լեզվի ուսումնասիրությամբ՝ նախապես մատնանշելով քստերի հիմնական խմբերն արաբերենում: Ալ-Դասուլին հաջողվել է մշակել արաբերենի ձայնանշանները, որոնք հնարավորություն են տվել ճիշտ ընթերցել 'Լուրանը: Դա առաջին լեզվական նվաճումն էր արարական լեզվաբանության մեջ՝

Արաբերենը և նրա քերականական միտքը զարգացել են Բասրայի, Ջուֆայի և Բաղդադի դպրոցների ուղղություններով: 7-րդ դարի վերջին 8-րդ դարի սկզբին հիմնված Բասրայի դպրոցի ներկայացուցիչները (Սիբավեյհիի գլխավորությամբ) հիմք էին ընդունում դասական հնդկականների լեզուն և խտտապահանջ էին քերականական նորմերի պահպանման հարցում: Բասրայի լեզվաբանական դպրոցի ականավոր ներկայացուցիչներից էին Արդալան ալ-Հադրամին և Իսա բին Ամմի ալ-Մակաֆին: Խալիլ բին Ահմադ ալ-Ֆարահիդին և Յամուս բին Նաջիբը շարահյուսա-

կան ուսումնասիրությունների հետ մեկտեղ զբաղվում էին նաև քառի խոսքիմաստային առանձնահատկությունների հետազոտմամբ: Դպրոցի հիմնադիր ալ-Սակաֆին փորձել է ամբողջացնել լեզվական բոլոր ուսումնասիրություններն իր «Ալ-Իքմա» («Ամբողջացում»), «Ալ-Գամու» («Համակարգում») և «Ալ-Մուհամմադ» տրակտատներում՝ տալով արաբերենի քերականական նորմերի կանոնավորված շարադրամբը: Բասրացիները հիմնականում զբաղվում էին լեզվական առանձին իրողությունների ուսումնասիրմամբ, այդ թվում՝ բառագիտությամբ և ձևաբանությամբ²:

Քուֆայի քերականական դպրոցը հիմնվել է 8-րդ դարում, որի հիմնադիրն է Աբու Ջաֆար Մուհամմադ ալ-Ռուասին: Դպրոցը մեծ տեղ էր հատկացնում խոսակցական լեզվի առանձնահատկությունների ուսումնասիրմանը:

Քուֆայի և Բասրայի լեզվաբանական դպրոցների միջև առկա տարածայնություններն, ընդհանուր առմամբ, հաջողվել է հարցահարել Սիբրավեյհին և ալ-Սակաֆին: Հակառակ դեպքում՝ ընդունված է այն տեսակետը, որ 126 լեզվաբանական հիմնահարցեր այդպես էլ մնացել են անլուծելի:

Քուֆայից և Բասրայից դուրս եկան առաջին կրթված քերականներն ու զբաղանագիտները³:

Բաղդադի կամ էլեկտիկ քերականների դպրոցը հիմնադրվել է 9-րդ դարում: Այս դպրոցի ներկայացուցիչները հիմնականում համակարգում և մշակում էին բասրացի և քուֆացի քերականների աշխատանքները: Այս տեսանկյունից ուշագրավ է Սիբրավեյհի «Ալ-քիբար» հիմնարար աշխատության ալ-Ֆարհաի կատարած մշակումը:

Դպրոցի ամենաակամադոր ներկայացուցիչն Օսման բին Ջինին էր, որն զբաղվել է լեզվի երկուստ արմատների ուսումնասիրությամբ, անունների ծագումնաբանությամբ: Նրա հայտնի երկերից են՝ «Ալ-քիբարը», «Ալ-խասախը» («Առանձնահատկությամբները»), «Ասրաբ ալ-արաբիյան» («Արաբերենի զարտնիքները»)՝

Լեզվական առանձին հարցերին նվիրված բավական արժեքավոր ուսումնասիրություններ են կատարել բաղդադցիներ Իբն Քուքայթը, ալ-Ջամհարին և Աբդ ալ-Ռահմանը:

Հարկ է նշել, որ հիշյալ երեք դպրոցները հիմնադրար դեր են խաղացել արաբերենի և նրա քերականական մտքի զարգացման հարցում, իսկ արաբական լեզվաբանությունը հիմնականում զարգացել է Սիբրավեյհի, ալ-Ջուրջանիի (10-րդ դար) և ալ-Ջամախչարիի (12-րդ դար) մշակած ուղղություններով:

Սիբրավեյհի «Ալ-քիբարը» ներառում է այն բոլոր ուսումնասիրությունները, որոնք արվել են մինչև իր ժամանակաշրջանը: Նրա քերականական ուսումնասիրությունն այնքան լիարժեք է և ամբողջական, որ

դրանից հետո ոչ որ նոր խոսք չի ասել: Ալ-Ջոհրջանին քերականության մեջ հիմնավոր տեղ է տվել մասնիկներին և անցողիկ քայերին: Խիստ արժեքավոր է նրա՝ հազար տողից կազմված «Ալֆիյա» տրակտատը, որ հեղինակը չափածոյով շարադրել է արաբերենի քերականությունը: Ալ-Ջամախյարին իր «Ալ-քիթաբ ալ-մուֆասսալ» («Հանգամանալից տրակտակ») աշխատության մեջ քառերը քաժամում է քայերի, անունների և մասնիկների՝ կատարելով դրանց շարահյուսական, ձևաբանական և ենյունաբանական վերլուծությունը:

11-12-րդ դարերում արաբական լեզվաբանության կենտրոններ դարձան Եգիպտոսն ու Միջին, սակայն եզրադաջի, սիրիացի և սվեյի ոչ շրջանի քերականների ընդհանուր առժամը որևէ նոր բան չեն ավելացրել արաբական դասական քերականական ուսմանը:

EMMA KHACHATRYAN
(RA(S)U)

ABOUT THE FOUNDATION OF GRAMMAR OF ARABIC LANGUAGE

Awarding achievements of Hellenic and Indian Grammar, the Arabs since the mid of 7th century founded the basic of own Grammar, which came to his apogee in 8-12th century and was developed by Basra, Kufa and Baghdad Grammar Schools. In that period the Grammar of Literary Arab language was finally developed and was conserved up today without any essential changes.

The development of Grammar of Arabic was mainly conditioned with the spread of Arabic Language and regulation of the holy texts of Quran, which has to be unanimous for all believers. There are three famous grammarians in the intellectual history of Arabs. They are Sibawayhi /VIII/, al-Gurgani /X/ and al-Zamahshari /XIV/ opening a new path for development of Arabic Grammar.

ԾԱՆՈթԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մանրամասն տե՛ս՝ Звегинцев В., История арабского языкознания, М., 1958.
2. Մանրամասն տե՛ս՝ Г.Габунян, О проблеме слова в свете факторов арабского литературного языка, М., 1968.
3. Մուրիի ալ-Սաջիհ, Դիրասար Ֆի ֆիկհի ալ-լուղա, Գիմաչկ, 1994, սաֆեա 177-178 (արաբերեն):
4. Մոհամմադ Ալ-Մուրաբիթ, Ֆիկհու ալ-լուղա վա խասաիս ալ-արաբիյա, Գիմաչկ, 2002, սաֆեա 48 (արաբերեն):
5. Աբրաղյան Թատուվի, Ող իլա ալ-սիհա ալ-լուղավիյա, ալ-Կաեիրա, 2004, սաֆեա 23-24 (արաբերեն):

ՀԱՐՈՒԹՅՈՒՅՈՒՆ ԼԻՍԹ
(ԵՊԿ)

«ՆՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ
ԵՐԶԱՆԱԿՆԵՐՆ ԱՐԱՐԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՈՒՄ

Ինչպես հայտնի է, մախադասությունը գործարկվում է քառերի օգնությամբ, ամբողջությամբ է կազմում և չի մասնատվում նրա մասերի առանձին արժեքայնությամբ: Մյուս հատկությունների նկատմամբ այս հատկությունն առաջնայինն է: Մի միավորը քավական է ստորոգակալությունն արտահայտելու համար, ինչպես նաև պարտադիր չէ «սուրյեկտի» (ենթակա) առկայությունը ստորոգյալի առկայության դեպքում: Երբևիտությունը համարվում է մախադասության միայն քերականական կողմ, որը ապահովում է նրա անդամների ճիշտ գույակցումը: Տարբեր ինտոնացիոն ուղղագրերը ունիվերսալ չեն և գտնվում են սուրյեկտիվ գնահատականների շղթայում: Հետևաբար մախադասության միակ հատկությունը համարվում է նրա ստորոգակալության հատկությունը¹:

Միջմադարյան արաբ քանասերները, ուսումնասիրելով պարզ մախադասությունը կառուցվածքային և գործառական առումներով, լեզվաբանական վերլուծության յուրաքանչյուր ոլորտում հստակեցրել են իրենց ուսումնասիրության օրյեկտը: Դա կառուցվածքային ոլորտում յառու-ն է (մախադասություն), իսկ գործառական ոլորտում՝ *al-kalam*-ը²: Համաձայն արաբական լեզվաբանական ավանդույթի՝ մախադասությունները բաժանվում են 4 խմբի՝ ա) Բայական մախադասություններ, որոնցում առաջին բաղադրիչն արտահայտված է քայով, օրինակ՝ *Šahaba Zeydan* (Գնաց Ձեյզը): բ) Անվանական մախադասություններ, որոնցում առաջին բաղադրիչը արտահայտված է անունով, օրինակ՝ *A'mru Šahibun* (Ամրը գնացողն է): գ) Պայմանական մախադասություններ, որոնցում առաջին բաղադրիչը պայմանի մասնիկն է, օրինակ՝ *Zeydan in taqrahahu yakramuka* (Եթե մեծարես Ձեյզին, նա էլ քեզ կմեծարի): դ) Պարագայական մախադասություններ, որոնցում առաջին բաղադրիչն արտահայտված է պարագայով կամ առաջադաս ստորոգյալի հետ հանդես եկող հետադաս պարագայով, օրինակ՝ *Khalidan amamaka*³ (Խալիդը քո առաջ է):

Անվանական մախադասություններում բայական ստորգական ձևերի բացակայությունը նման շարահյուսական կառույցներում քելում է այնպիսի լեզվական երևույթների, որոնք համընթացում են նման կառույցներում ստորգծման առաջացմանը: Այս խմբի լուսաբանումը կապված է արաբերեն գրական լեզվում որոշյալության և անորոշության շարահյուսական ռեկամտության վարկածի ճշտման հետ: Այս հիմնախնդրի լուծումը ենթադրում է բաղադրիչների վերլուծության, անվանական քառաձևերին համապատասխանող որոշյալ-անորոշության իմաստի տարրերի անդամատում⁴:

Միաժամանակ ստորգական միավորների կառուցվածքային համակարգի քերականական վերլուծությունը միջնադարյան արաբ քանասերների մոտ չի սահմանափակվում միայն նրանց ձևակազմական տարրերի կոնկրետ քերականական ներկայացմամբ, այլ ընդլայնվում է՝ վերացարկվելով «թեմայի» (Al-musnad ilayhi) և «տեմայի» (Al-musnad), մակնրանց վերացական օրինակների կառուցվածքային սխեմաների տեսքով:

Ստորգական կառույցի բնորոշ առանձնահատկությունները նրանց ենթակարգություն է տվել այս միավորների կառուցվածքում առանձնացնել 2 հատկություն՝ ստորգում (Al-isnad) կառուցվածքային ոլորտում և անհրաժեշտ տեղեկատվություն (Al-ifada) հաղորդակցական ոլորտում⁵:

Բայական մախադասության կառույցի բնորոշ գծերից մեկը նրա բաղադրիչների դիրքային որոշակումն է: Նշված վիճակը քիտում է կառավարման տեսությունից (Al-'amal), որի համաձայն՝ բայը կառավարող գործառույթ ունի, այսինքն՝ al-'amil-է, իսկ ենթական կառավարվողն է՝ al-ma'tul⁶:

Ալ-Չուրբանին (XI դար) իր «Al-awamil al-mi'a» աշխատության մեջ դասակարգում է մախադասության շարահյուսական պատկերը ձևավորող քուր գործոնները՝ մախ քիզ գործածական ma'nauya-ն, իսկ ապա՝ համախ գործածվող lafziya-ն, ինչն էլ իր հերթին քաժանվում է qiyasiya-ի և samai'ya-ի⁷:

Համապատասխանաբար 'amil-ի⁸ ազդեցությունը քառի վրա հանգեցնում է քառափոխության՝ al-'i'rab-ի: 'Amil-ի և al-'i'rab-ի փոխկապակցվածություն արաբ ժամանակակից քերականագետ ալ-Լալաինին ներկայացնում է այսպես՝ որոշ քառեր փոխում են վերջավորությունները՝ կապված մախադասության մեջ իրենց ունեցած դիրքից և այն միավորից, որը մախորդում է քառերին: Նրանցից որոշները երբեք չեն փոխում իրենց վերջավորությունը, ինչ 'amil էլ մախարի: Առաջինները կոչվում են m'ua'rab, իսկ երկրորդները՝ ma'bid, իսկ 'amil-ի ազդեցությամբ քառերի վերջավորության փոփոխությունը կոչվում է al-'i'rab և համապատասխանաբար՝ փոփոխության բացակայությունը՝ al-bina'⁹: Al-'i'rab-ը 'amil-ի գործունեության ազդեցությունն է քառի վերջավորության

վրա, լինի այն *marfu'*, *majrur*, *mansub*, *majzum* բառափոխական վիճակների՝ համաձայն *'amil*-ի պահանջի: *Mu'arab* են ներկա ժամանակի բայերը, որոնց չեն հավելվել ուտ *al-takid*-ն (ուժեղացման նուր) և բոլոր անունները՝ որոշ բացառությամբնեղով:

Քառի վերջավորության փոփոխման պատճառ կարող են լինել կառավարող բառերը՝ *'awamil*, որը անունները և բայերը դնում է որոշակի քերականական ձևի մեջ: Որպես կառավարող գործոն կարող են հանդես գալ անունները, բայերը, բայանունները (դերբայերն ու մասդարները), նախդիրները և այլն:

Արարական քերականական ավանդույթում (ԱՔԱ) կարևոր տեղ է հատկացվել նախադասության ենթադրյալ անդամին՝ *taqdir*: Համաձայն ԱՔԱ-ի գոյություն ունի առաջնային որոշակի կառուցվածք, որով ենթական հանդես է գալիս ուղիղ ձևով, լրացունը՝ խնդրատված, իսկ ստորոգյալը (քանավոր խոսքում)՝ բայով, սակայն իրական լեզվական իրավիճակը առավել քան բարդ է՝ առաջ են գալիս նախադասություն հիշեցնող տարրեր փոփոխական կառույցներ: Այդ նպատակին է ծառայում՝ ա) նախադասության անդամի գրաված դիրքը, բ) հնարավոր ենթադրյալ կառավարող բառը (Al-mahkum), գ) կառավարող քառի բացթողումը: Այսպես, օրինակ՝ *l. marartu bi Zaydin*¹⁰ (Անցա Ջեյդի կողքով) ասույթը բայական է, որում ստորոգյալը բայ է և վերջավորությամբ արտահայտելով կցյալ ենթական խնդրատական նշանակությամբ, իսկ *"Zeydin"* ուղիղ խնդիրն է հարակցական նշանակությամբ դրված, *bi* նախդիրով պայմանավորված, քանի որ ուղիղ խնդիրը միշտ դրվում է հայցական հոլովով, ապա տեսականորեն այստեղ ուղիղ խնդիրը համարվում է հայցական հոլովով դրված: 2. Բայը ենթադրվում է *a'Abdu al-lahi darabtahu* (Մի՞ բն դու Աբդուլլահին ես ծեծել) նախադասության մեջ, որն ընկած է *a'* հարցական մասնիկի ու հատուկ անվան միջև: 3. *Zaydin fi d-dari* (Ջեյդը տանն է) նախադասությունում բայը բաց է բողբված, որը ենթադրյալ *istaqarra* է (քառացի՝ հաստատվեց):

Խնդրատությունը իրագործվում է ինչպես մեկ այնպես էլ մի քանի նախադասությունների անդամների միջև, որոնք գտնվում են մեկ բարդ նախադասության կազմում: ԱՔԱ-ի համաձայն՝ խնդրատման հատկությամբ առանձնանում է բայ-ստորոգյալը: Խնդրատությունը կարող է իրագործվել ինչպես առաջընթաց, այնպես էլ հետընթաց ուղղությամբ: Հետընթաց ուղղությամբ ներգործում են միայն անուններն ու բայերը, նախդիրները ներգործում են միայն առաջընթաց ուղղությամբ: Անվանական նախադասության ենթական (Al-mubtada) նախորդում է ստորոգյալին (Al-khabar), հետևաբար այն կառավարում է ստորոգյալը նույնիսկ այն դեպքում, երբ ստորոգյալը առաջադաս է, քանի որ ստորոգյալը *mahkuman 'alyhi* է¹¹: *"Mustaliqan Zeydun"* նախադասության մեջ անվա-

մական մախադասության ստորոգյալը մախոդրում է ենթակային, սակայն ենթական պահպանում է իր mahkam 'alyhi դիրքը:

Տարակարծությունները Բասրայի և Թուֆայի քերականական դպրոցի ներկայացուցիչների միջև այս ասպարեզում առաջ են եկել երկու ուղղություններով. 1. քուֆայականները որոշ շարահյուսական կառույցներում ընդունում էին այնպիսի սկզբունքներ, որոնք բասրայականները գրական լեզվի համար համաշուն էին անթույլատրելի, 2. քերականական երկու դպրոցների ներկայացուցիչներն էլ, ընդունելով գրական լեզվի համար այս կամ այն կառույցի պիտանելությունը, դրան տալիս էին բոլորովին այլ տեսական գնահատական:

LILIT HARUTYUNYAN
(YSU)

THE FRAME OF "GOVERNMENT" MEANING IN ARAB GRAMMER TRADITION

The effect of an abstract 'amil such as ai-ibtidā is produced only when a syntactical connection exists between the subject affected by it and its predicate in the nominal sentence. Similarly, it can be inferred that the imperfect verb takes the nominative produced by its abstract 'amil only when a syntactic connection exists between the verb and another part of the sentence. Some 'awāmil are particular to nouns and others are particular to imperfect verbs. No 'amil can affect both a noun and a verb.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Бенвенист Э., Общая лингвистика, Уровни лингвистического анализа, М., 1974, с. 138.
2. Юсупов И. М., Основание структурные модели простого предложения в современном арабском литературном языке, со. дис., с. 4.
3. Shakh anmuzaj fi an-nahu, lil'alamiti az-Zamakhshari, al-Ardabin Jamal ad-Din, al-Qahira, 1990, p. 30.
4. Габучян Г. М., Теория артикла и проблемы арабского синтаксиса, с. 118.
5. Юсупов И. М., Основание структурные модели простого предложения в современном арабском литературном языке, со. дис., с. 4.
6. Петросян С. С., Глагольное предложение в концепции аз-Занахшари, автор. на со. уч. степ. канд. фил. наук, М., 1988, с. 18.
7. Al-Jurjani, Al-'awamil al-mi'a fi an-nahu, p. 3.
8. Մյու տերթմը Խ. Կ. Քաշանդի "Արաբո-սլոնսկի սլոնար"-ում քերականական իմաստով տրվում է քրպի կառավարող մասնիկ, կառավարող բառ:
9. Al-Galaini, Jamil' ad-durus al-'arabiyya, Beirut, 2002, p. 16.

10. Ахбледианина В.Г., Арабское языкознание средних веков, в кн.: Истор. лингв. уч. Средн. Вост., Л., 1978, с. 72.
11. *Sharh al-muzaj fi an-nahu, lil'alamiti az-Zamakhshari, al-Ardahin Jamal ad-Din, al-Qahira, 1990, p. 32.*

ՄԱՆՐԱՍՏՅԱՆ ԱՌԹ
(ԵՊԿ)

ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՄՈՂՁԵՆ ՄԱՌՄԱԼՔԱՅԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սկսած 1980թ. արդի իրանական գրականության և կինոարվեստի մեջ առանձնահատուկ կարևորություն ստացան կամանց հիմնախնդիրների մվիրված քննաճերը:

Աշխարհաստիակ պարսիկ կինոքննադրիչ, արձակագիր և սցենարիստ Մոհզեմ Մախմադրաֆը այն եզակի արվեստագետներից է, որը թե՛ իր արձակ տեղծագործություններում և թե՛ կինոնկարների մեջ կամանց հիմնախնդիրներին ամոքադառնում է արվեստագետի ինքնատիպ մտածելությանը:

Ավանդապահ հասարակության մեջ սիրտ, ամուսնության, կնոջ իրավագրկության խնդիրներն են շոշափվում Մախմադրաֆի «Գարե» (1995թ.) չափազանց գրավիչ ու գունեղ կինոնկարում: Ֆիլմը պատմում է հարավարևելյան Իրանի տեղաբնիկ կին գորգագործների մասին: Գարեի շարունակ այս կամայք էլուսել են «գարե»¹, յուրաքանչյուր գորգի հետ մեկտեղ պատկերելով իրենց իսկ կյանքը, հուզումներն ու վշտերը: Գարեն ընտանեկան-տոհմական ասքապատում է, որտեղ կամայք գրկված են սեփական ճակատագրին տնօրինելու իրավունքից: Ազատությունը ապշում է միայն կնոջ երևակայական աշխարհում, որն էլ գույների միջոցով փոխանցվում է «գարեին»:

Մահմեդական կամանց իրավունքների ուղմահարմամ և նրանց դեմ կիրառվող հոգևոր ու ֆիզիկական բռնության խնդիրն է շոշափում Մախմադրաֆի մեկ այլ կինոտեղծագործությունը՝ նրան մեծ համրավ քերած աղմկահարույց «Ղանդահար» (2001թ.) ֆիլմը: Այն նկարագրում է սեփական ինքնություն չունեցող, սովի, բռնության գոհ, մարդկային տարրական իրավունքներից զուրկ աֆղան կամանց կյանքը թալիբների իշխանության օրոք: Ֆիլմի հիմքում Կամադայում արպատան գտած երիտասարդ աֆղանուհի Նաֆասի պատմությունն է, որի ճանապարհորդությունը վերածվում է մղձավանջի, երբ նա տարիներ անց վերադառնում է Աֆղանստան՝ փրկելու ինքնասպանության եզրին հայտնված իր հարազատ քրոջը: «Իրականությունը Աֆղանստանում ինքն իր մեջ արդեն իսկ սյուրեալ է, սա մի երկիր է, որտեղ կամայք չունեն դեմք: Անա-

պատում դեզերող աֆղան կամանց քարավանները դիտելուց հետո, ավելի սյուրեռալ պատկեր չես կարող երևակայել», - իր հարցազրույցներից մեկում շեշտում է Մախմալբախը⁵:

«*Հանդանդա*» ֆիլմը մախմալբախյան հումանիզմի բացառիկ դրսևոլումներից մեկն է: 2002թ. այն փրամվում է զբոյժ կրելով «*Բուզգոս յթանդվեց Աֆղանստանում, այն փչրվեց ամոթից*» խորագիրը: Գրքի վերաբերյալ արվեստագետը տալիս է իր ինքնատիպ մեկնաբանությունը. «Բամիխանում Բուշդաշի արձանը փուլ եկավ, որպեսզի աշխարհին պատմի իր երկրի աղքատության, բռնության, անտարբերության ու քաղոյակամության մասին, այն փչրվեց Աֆղանստանի մկատմամբ աշխարհի ցուցաբերած անտարբերության ամոթից»⁶:

Կնոջ անձնական ուղեբեզության, սիրո, հուսալքության և պայքարի մասին են պատմում Մախմալբախի «*Միրո ժամանակը*» (1990թ.), «*Օյնեված ամուսնություն*» (1988թ.), «*Արախալյա*» (1993թ.) ֆիլմերը:

Իրանական անդրոցեմտրիկ հասարակության մեջ կնոջ հաստնության խնդրի շուրջ ստեղծված հիվանդագին ընկալման երևույթին են անդրադառնում Մախմալբախի սցենարների հիման վրա կերամազորված «*Այն օրը, երբ ես կին դարձա*» (2000թ.) և «*Ժամձորը*» (1998թ.) ֆիլմերը:

Ժամանակակից Իրանի կամանց սոցիալական և իրավական դրությունը շահական վարչակարգի օրոք, ինչպես նաև իրանա-իրաքյան պատերազմի տարիներին նրանց կրած քաղոյառիզերանական ճգնաժամը, փայլուն կերպով մկարագրված են Մոհզեն Մախմալբախի «*Համբարդի ինձ*» (1994թ.) և «*Քյուրեդապակյա այգին*» (1986թ.)⁷ արձակ ստեղծագործություններում:

«*Համբարդի ինձ*» պատմվածքում հեղինակը պատկերում է շահական բռնապետության դեմ պայքարող, մարքսիստական շարժման հայտնի մասնակիցներ Մարզիյե Օսկոյի և Մոսբախա Շոայանի սիրո, հայրենասիրության, ՍԱՎԱԿ-ի կողմից բանտում կրած նրանց տանջանքների ու մահվան իրական պատմությունը⁸: «Պատմվածքի գլխավոր հերոսուհու՝ Մարզիեյի միջոցով Մախմալբախը ամոթբազում է մախա-հեղափոյակական Իրանում հակաշահական շարժման մեջ ներգրավված այն հազարավոր կամանց կերպարը, ովքեր սեփական կյանքը զոհաբերեցին հանուն գաղափարական պայքարի:

Իրանա-իրաքյան պատերազմի դաժան հետևանքներին, նահատակության երևույթին, կամանց բարդ սոցիալական ու հոգեբանական խնդիրներին է անդրադառնում հեղինակը իր «*Քյուրեդապակյա այգին*» վեպում, որը մա մվիրել է իր երկրի բոլոր ճնշված կամանց:

Վեպը պատկերում է իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում նահատակված զինվորների այրիներին, ովքեր այդ ժամը տարիներին, առանց ամուսնու, փորձում էին պայքարել հանուն կյանքի ու միայնակ մեծացնել իրենց զավակներին: Մախմալբախի վեպի հերոսահիմները, չնայած պատե-

բազմի կրած ղեկարություններին, ապարեզ են հանում իրենց անընկճելի ոգին ու մաքսանման կամքը՝ հաստատելու ապրելու իրենց մարդկային իրավունքը: «Անչն ունի հումանիստական խոր բովանդակություն և ավարտվում է կյանքի լավատեսական հեռանկարի պատկերով:

«Բյուրեղապակյա այգին» վնասի միջոցով հեղինակը կարողացավ ցույց տալ, որ իրանցի կանայք անհամըրթողականության, կաղապարված ու հետադիմական հայացքների զանն են:

Իր գեղարվեստական ստեղծագործություններում, անդրադառնալով կանանց հիմնախնդիրներին, Մ.Մախմալբաֆը շեշտադրում է ժամանակակից իրանական արվեստի հումանիստական ուղղվածությունը, արվեստ, որը չի ճանաչում քոմություն և խտրականություն:

LILIT SAFRASTYAN
(YSU)

WOMEN'S ISSUES IN THE WORKS OF MOHSEN MAKHMALBAF

Mohsen Makhmalbaf became a famous writer and filmmaker of the post-revolutionary Iran. His literary and scientific activities include research into the arts, novels, short stories and screenplays.

After the victory of the Islamic Revolution Iranian cinema was also revolutionized and the general nature of films and the role of women in the films changed in a positive manner.

The films of M. Makhmalbaf redefine the humanitarian themes of contemporary Iranian cinema, firstly, by treating all aspects of women social and private lives in modern Iran.

His famous films such as "Gabbah", "Kandahar", "Time of Love", "Marriage of Blessed" and "Actor" make very strong statements about the women rights issues, social and psychological problems that women face in Iran and Afghanistan.

Women's issues predominate in M. Makhmalbaf's fictional works such as "Kiss Me", and "The Crystal Garden". Mohsen Makhmalbaf, dedicated his novel, "The Crystal Garden", to "the women, the oppressed women of his land".

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Գաբեն» գորգի յուրահատուկ տեսակ է Իրանում:
2. The Guardian, August 11, 2001.
3. Նույն տեղում:
4. Տն'ս՝ Մախմալբաֆ Մ., Գոնգի Խարիդի, Նաշրե-Նեյ, Թեհրան, 1994 (պարսկերեն):
5. Տն'ս՝ Մախմալբաֆ Մ., Բաշե Բոլոր, Նաշրե-Նեյ, Թեհրան, 1986 (պարսկերեն):
6. Talatof K., The Politics of Writing in Iran, Syracuse, New York, 2000, p. 119.

ՓԱՇՏԱՆ ԱՆԻ
(ԳԻ)

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՆՐՔԵՐԱՆԳՆԵՐՆ ԱՂԱՍԻ
ԱՅՎԱԶՅԱՆԻ ԱՐՉԱԿՈՒՄ

Արևելքն իր ինքնատիպ գույներով ու քնավորությամբ միշտ էլ հետաքրքրել է հայ գրողներին: Արևելյան իրողություններին իրենց տեղ-ծագործություններում անդրադարձել են Խ.Աբովյանը, Հովհ.Թումանյանը, Ավ.Իսահակյանը, Ե.Չարենցը, Հ.Շիրազը և ուրիշներ:

Ժամանակակից հայ արձակի նշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Աղասի Այվազյանի արվեստը, կարելի է ասել, առնչվում է արևելյան աշխարհին, նրա հոգեբանությանը, նիստուկացիին: Առանձին տեղծագործություններ պարզապես հազեցած են արևելյան շեշտադրությամբ ու նրբորակներով: Այդ են ասում և վերնագրերը՝ «Արևելյան դուքամ», «Մուխամբազ՝ դուդուկով», «Թիֆլիս», «Պուճուր մի տեղ Բուդյայի կողքին», «Նախշում քաղնիքը», «Դարդ-աղյուսը» և այլն:

Հեղինակի մայրենուրած բոլոր ժանրերում էլ (վիպակներ, պատմվածքներ, պիեսներ, էսսեներ) կարելի է գտնել արևելյան կյանքի ցայտուն տեսարաններ. «Հավլաբարում եկեղեցիներ կային, Շայթանբազարում՝ մզկիթներ, Հավլաբարում արևելյան պանդոկ կար, Շայթանբազարում՝ պարսկական քաղնիքներ, ուղտերն էին տնկուզաբով քայլում»¹:

Արևելյան քաղաքին բնորոշ պատկերներ կան «Նախշում քաղնիքը» պատմվածքում, որը ոչ միայն արևելյան քաղաքի, այլև արևելյան մտածողության շեշտեր ունի: Բաղնիքն այստեղ խորհրդանշում է ոչ միայն արևելյան տաք գույները, առույգ, աշխույժ, կենդանի ժամանակը, այլև պատմվածքում հաստանացող տազմապը, անլուծելի քվացող հարցերը, մարդկային ինքնատիպ հարարությունները: Եվ ոչ միայն. արևելյան նախշում քաղնիքն այստեղ առաջին հերթին խորհրդանշում է արևելյան գեղեցկուհիների թև՝ արտաքինը, թև՝ ներաշխարհը. «Պճնագարդ ու խատուտիկ, քարթիկներին սուրմա քաշած, կապտազույն աչքերը կուպերի տակ, ծամր հետույքը ցեխաջրում, կլկոցը աղիքների մեջ, նախշում քաղնիքը նստել է Թուրքի մեյդանում: Մեյդանը՝ Թիֆլիսի փոսի մեջ, Նախշում քաղնիքը՝ մեյդանի փոսի մեջ, քաղնիքի ջրավազանները՝ էլ ավելի խորը»²:

Գրողի պատկերած արևելյան քաղցիքը, որ խորհրդանշում է կամանգ, ճակատքում է մարդկային յուրահատուկ հարաբերությունները։ «Նախշուն քաղցիքը շարունակում էր իր կյանքը։ Գախս էին թիֆլիսի կանաչը, գաղիս էին իրենց թոխյաներով, թոխյաների մեջ՝ խիճկալ ու խաչ, յուժքար ու փիթի...»¹։

Շատ հաճախ քաղաքի (Թիֆլիսի) նկարագիրը հեղինակի գրչի տակ ձևոր է քերտմ մաև արևելյան հոգեբանության արտահայտությունները։ Ինչպե՞ս են ապրում այստեղ, ինչպե՞ս են սիրում։ «Հավարարում մարդիկ քասիր են պահում, մամուսի համար իրար այք են հանում, իրար սպանում, իրենք իրենց են սպանում... Ըստ սիրտն են սպանելու շտի, առելու շտի, փախչելու շտի»²։

Գինու հրապույրով և դուրդուկի հնչյուններով է քննդաշում գրողն իր կողմից կերպավորած քաղաքի արևելյան քաղաք Թիֆլիսը։ Դա կրկնում է հատկապես «Ավետարան ըստ Հավարարի», «Երկրպագություն միաձայնությանը», «Մուխամբազ՝ դուրդուկով» և այլ պատմվածքներում։ Արևելյան երաժշտությունը՝ լի անավոր գեղզեղանքով և քաղցրածոթությամբ, մեղեդային ինքնատիպ լուծումներով հաճախ լրացնում է այն գլխավոր ասելիքը, որը վաղուց է մտապահվել գրողի կողմից։ «Քասասուն դուրդուկի հնչյունները տարածվում էին Թիֆլիսի վրա՝ ինչպես շուայ, մեծ քեֆի սեղանին՝ ընդարձակ ծածկոցը։ Եկեղեցիների խայերը ուռնիների մեամ օտարվում էին նրանց հնչյունների ուժից»³, կամ։ «Իսկ դուրդուկը ամեն տեղ լինում էր։ Միբայխանայով քարձրանում էր դարձիվեր, շունը քերանը հասնում, հետո լոթիավարի պարում Հավարարի նշանը քերում, հետո իջնում ցած՝ Զաղուրեք, դարդ անում Փեխանի մտելի վրա, հետո մտնում Գեակի ու հուսակուտուր սեք քաղաքում կոկիլի, խալավոր Բեթևանին...»⁴։

Արևելյան հնչյուններով ու նրբերանգներով են պարտորված Այվազյանի հատկապես այն ստեղծագործությունները, որոնք միտված են արևելյան քաղաքի ոչ միայն նկարագրությանը, այլև այնտեղ ապրող արևելյան։ Մարդն ամասանան կարտում է այն վայրը, որտեղ անցկացրել է մամկությունն ու պատասնելությունը, իր քաղաքը։ Շատ տարիներ հետո նա տեղնում է տեսնել քաղաքը, իր ընկերներին ու ծանոթներին։ Այդքան ժամանակ իր ծննդավայրի հարուստ գույները ուղեկցել են նրան, տեղ գտել նրա հոգում, և նա ամզոր է մոտանալ դրանք։

Համղիպման ժամանակ նորից հնչում է դուրդուկը՝ որպես անցյալի մեծ սիմվոլ, իսկ «...մի քանի շիչ կախների գինով, լոքո ձկով, մչաղիով, կծու լոթիով ու ջոմջոլով սեղանը առնված էր մարդկային պատկառելի կերպարանքների օղակի մեջ...»⁵։

Արևելյան կյանքի պատկերներ են ամփոփված «Դարդ-աղյուտը» գողարիկ մի պատմվածքում և։ Արևելյան ինքնատիպ նկարագիր ունեցող գլխավոր հերոսի հոգեկան ապրումներն անդրադառնում են մաև

պատմվածքի գործողություններին. «Քուրը ամբողջ քաղաքով գալիս
հասնում էր Շիբբան քաղաք, կալում Շահ-Արաի մզկիթի պատերին,
խորոնած պտտվում, տակուվրա լինում, իր պոչի ետևից ընկած շան
մեման ոլորան տալիս... Ու եթե կինտոների մավակը ընկնում էր այդ
ջրապատույտի մեջ, մի ամբողջ օր այդպես էլ պտտվում էր տեղում կայու-
սելի մեման: Նափակի միջի մաճառը գինի էր դառնում, ու հարթածից հար-
թած կինտոները գիշերը անկողնում ռտուճեռով փաթաթված սեփական
կնիկներին, աչքները փակ պատմում էին իրենց ճամփորդության մասին
Արևելքում՝ հազար ու մի միմարների շուրջը»⁸:

Այվազյանի հերոսի և Քուր գետի ինքնատիպ միաձուլում կա «Սա-
տանայի օգնությունը» պատմվածքում, որն ավարտվում է գլխավոր հե-
րոսի՝ Արփի ինքնասպանությամբ: Կրկին կերպավորվում են արևելյան
տաք գույներն ու մեղեդիները՝ այդե՛ն տխուր, շատ տխուր հնչյուններով.
«Քնի երկու ափերը ուղեկցում էին Ակոփին: Զախ ափի բոլոր պատշ-
գամքներում քառ էին մկազում, աջ ափի բոլոր տներում՝ քյամանչա, և
հրածելու էին տալիս դարդիմանդ Ակոփին...»⁹:

«Աղասի Այվազյանը մկարիչ է, գրում է Ս. Հարությունյանը: Նկարիչ
է ոչ միայն մասնագիտությամբ, այլև որպես գրող: Նրա ընկալումը տե-
տղական է: Այդ է պատճառը, որ մի քանի ցայտուն շտրիխով մա մեր ա-
ռաջ է կանգնեցնում իր հերոսներին՝ վարյուն ու հավաստի»¹⁰:

Հետագոր Հնդկաստան ուղևորված Խոսրոյին («Պոճուր մի տեղ
Ռուդրայի կողքին») ապշեցնում է այդ երկիրն իր անտվորությամբ ու նո-
րությամբ: Զարմացնում են բոլորը՝ արևելյան այդ աշխարհի մարդիկ՝
թե՛ ծերերը, թե՛ երիտասները և թե՛ կանայք. «Հնդիկները ընտանիք-ընտա-
նիք մերկ պատկած էին մայրերին, փողոցով մեկ: Նրանց ամբողջ ունեց-
վածքը մի քանի սավան էր: Մեկը փռել էր տակը, մյուսը՝ վրան: Խոսրոն
ու Կուկուզանովը քայլ էին անում նրանց վրայով: Միայնակ հնդիկները
հարձարվել էին ամենազարմանալի տեղերում՝ պատերի տակ, փայտե
հարթակների վրա... Մի սպիտակ սավան մարմնին և մի սպիտակ փաթ-
քոց գլխին, ու նրանք արև էին վայելում...»¹¹:

Պարսկական կյանքի նկարագրություններ կան «Պոճու վան շենքի և
շինության» վիպակում: Այստեղ հնչող սազը ևս խորհրդանշում է
Արևելքն ու այստեղ ապրող բնակչին. «Կուր պարսիկը սազի վրա մեղ-
րածոր մի մեղեդի էր հնչեցնում Թավրիզի փողոցում: Եվ ասես փողոցը
մեղեդու շարունակությունը լինել: Նա ծուրոնն հաչում էր իր հեռա-
պատկերի մեջ՝ ամերի և տանկների կլկոցով... Մեղեդին ծանոթ էր բունջ
ու պաճախին և հեշտությամբ էր կողմնորոշվում տեղանքում»¹²:

Ինքնատիպ ու գեղեցիկ աշխարհ Արևելքն իր տաք գույներով, բույն-
բով ու ներկայությամբ, անշուշտ, հարստացնում է գրողի ստեղծագոր-
ծական տարածքը նոր ծայրով ու օրիֆով. «Թիֆլիսում ծիածանի բոլոր
գույներով Կախնի գինիներ կային, Երևանի ծիրան, Թավրիզի խաղողն

էր ինքն իրեն փարվում զամբոյողների մեջ, պարսիկները տապալած «շյալա» էին գլխի վրա քավալով ման ածում ու ցրում նրա բուրմուսը, սրկում ամեն բանը ու պուճախ... Թիֆլիսում հնդկական խուրմա կար, դարչին ու մեխակ, արաքական գունավոր քաղցր ջրեր, դաշխան... ու ք-
 ևածում էին նրանց հոտերը քաղաքի վրա, միանում իրար, մի կախարչիչ
 ու գունավոր ամպ դառնում...»¹⁷:

Այսպիսով՝ արևելյան պատկերներն ու արևելյան մարդու նկարագիր պարունակող կերպարներն ավելի պատկերավոր ու արտահայտիչ են դարձնում Աղ. Այվազյանի ստեղծագործությունները. Արևելքը՝ աշխարհի մի մեծ մասը, իր նրբերանգներով հեռու չի մնացել արձակագրի տեսադաշտից: Նա կարողացել է զգալ և վերարտադրել արևելյան աշխարհին քնորոշ շատ նրբերանգներ:

ANI PASHAYAN

(IL)

THE ORIENTAL SHADES IN PROSE WORKS OF AGHASI AYVAZIAN

The Orient with its peculiarities and warm colors is present in prose works of Aghasi Ayvazyan such as "Arevelyan Doukan", "Nakhshun Baghnike", "Avetaran Est Havlabeni", "Mukhambaz Dudukov", "Puchur Mi Tegh Buddayi Koghkin" etc. In all of the author preferred genres (tales, short stories, pièces, essays) we can find scenes of oriental life, specifics of oriental city, elements of oriental mentality. The oriental realities make the prose works of Ayvazyan more descriptive, reach and expressive.

ՃԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աղ. Այվազյան, Ընտիր երկեր, Եր., 1987, էջ 359:
2. Աղ. Այվազյան, Դիպլոմատո, Եր., 1985, էջ 3:
3. Նույն տեղում, էջ 7:
4. Աղ. Այվազյան, Ընտիր երկեր, Եր., 1987, էջ 321:
5. Նույն տեղում:
6. Աղ. Այվազյան, Թրի ամիսը, Եր., 1989, էջ 56:
7. Նույն տեղում, էջ 40:
8. Աղ. Այվազյան, Ընտիր երկեր, Եր., 1987, էջ 409:
9. Նույն տեղում, էջ 542:
10. Մովսեսական գրականություն, Եր., 1969, թիվ 7:
11. Աղ. Այվազյան, Դիպլոմատո, Եր., 1985, էջ 32:
12. Աղ. Այվազյան, Պոեմ փասն շենքի և շինության, Եր., 2002, էջ 111:
13. Աղ. Այվազյան, Ընտիր երկեր, Եր., 1987, էջ 360:

Հ ա պ ա Վ ո Ւ Մ Ն Ե Ր

- ՀՀ ԳԱԱ – Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային
ակադեմիա
ԱԻ – ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ
ԳԻ – Գրականության ինստիտուտ
ՀԶԹԻ – Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ
ԵՊՀ – Երևանի պետական համալսարան
ՌՀ(Ս)Հ – Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան
ԻԱՀ – Իսֆահանի Արվեստի համալսարան
ՀՀՀ – Հայաստանի Հանրային Հեռատեստիություն
ԱՐՄԵՆՊՐԵՍ ցատվական գործակալություն

Abbreviations

- NAS RA – National Academy of Sciences, Republic of Armenia
IOS – Institute of Oriental Studies, NAS RA
IL – Institute of Literature
MIAG – Museum-Institute of Armenian Genocide
YSU – Yerevan State University
RA(S)U – Russian-Armenian (Slavonic) University
AUI – Art University of Isfahan
Public TV Company of Armenia
ARMENPRESS NEWS AGENCY

ՔՈՎԸՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Բարսյան Լենի	
Նոր Ջոդայի և Սպահանի որմնանկարչության փոխառնվածությունները XVII դարում	5
Գրիգորյան Սոնա	
Ուրարտա-իսպական լեզվաաղբյուրները ակադ. Գր. Ղաֆանցյանի աշխատություններում	10
Հմայակյան Համիկ	
«Թուխ Սանուկների» պաշտամունքը և միջնադարյան Հայաստանի արհեստակցական միությունները	18
Մարտոյան Գալիկ	
Հայոց 30-րդ օրանվան և ուրարտական թեյլեբրա աստծո պատկերագրության խնդրի շուրջ	22
Մարտոյան Թեհմինե	
Կարմելյանների և ջուղահայերի հարաբերությունները	25
Շաքարյան Արտակ	
Օսմանյան կայսրության բնակչության խոսափումը դեկլիմենից (Ռամադան օսմանյան փաստաթղթերի)	29

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒԹՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Անույան Մելինե	
Մեծ եղևոցը հավաստող վկայություններ Օսմանյան «Ալեմդար» օրաթերքում (1919թ.)	34
Արշակյան Գրիգոր	
Թուրքիայի գաղթունեությունը Բաքու-Թրիխա-Ջեյհան մակրամտի նախապատրաստական աշխատանքների գործընթացում	42
Գևորգյան Գոռ	
Եզիպտոսում 2005թ. կայացած նախազանական ընտրությունների շուրջ	47
Գումանյան Արթուր	
Թուրքիայի 1980թ. ռազմական ինդաշրջման պատճառների շուրջ	51
Իսկանդարյան Գոհար	
Ջրայական շարժումը Իրանում (Մեհարադի Հանրապետության ստեղծումը) ..	56
Խաչատրյան Ալեքսոս	
Միջազգային մալթային կոնստրուկտիվ գաղթունեությունը Իրանում 1950-ական թթ.	62
Կնյազյան Դավիթ	
Գեներալ Անտոն Դեմիկիևի Աղբյուրանական Հանրապետության մասին .	67

Հարությունյան Աղավնի	
Չինաստանը՝ որպես մերձավորարևելյան էներգետիկ շուկայի մեր ընթակառար.....	72
Հովսեփյան Լևոն	
Թուրքիայի գինված ումերի աքցնականացման խնդրի շուրջ.....	77
Ղարիբջանյան Գևորգ	
Ձաղարակա՛ն և տնտեսական վերմախապների սկզբանական գործընթացը Սիրիայում 1990-ական թթ.....	82
Մախլան Յենիամին	
Համշենա՛նայ համայնքը որպես ռազմաքաղաքական գործո՛մ Սոչի-Գազդաս տարածաշրջանում 1919թ.....	87
Մանուկյան Մուրին	
Իսլամական շարժումը Սիրիայում 2000-2005թթ.....	95
Մալգարյան Նարինե	
Արաբների վերաբերմունքը Սիրիայում հաստատված հայ ռոբերի նկատմամբ.....	101
Յաքոբյան Ռուդիկ	
Կասպից ծովի իրավական կարգավիճակի խնդիրը.....	106
Նաժնազետյան Հայկարամ	
Թուրքիայում հայկական տարուի մահանցի գործընթացը.....	109
Նազատարյան Նազելի	
Անգլո-ոսմական գործո՛նը և Իրանի ամենակամ ճգնաժամն առաջին աշխարհամարտից առաջ.....	115
Մտեֆանյան Լուսինե	
Արդիականացման գործընթացն Իրանում 20-րդ դարի 20-40-ական թթ. և դրա ինտեռնացիոնը իր գեոքաղաքականության համար.....	119
Վարդերեսյան Արնե	
Իրան-Հայաստան էներգետիկ համագործակցություն. գազատարի շինարարությունը.....	125
Փաշայան Արաքս	
«Հետխլամիզն». ամխոսապիեի էկոլոցիա.....	130

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աղաբարյան Հրայր	
Ուղիղ խնդրի շարահյուսական զիրքն արարեքնմում խնդրառության տեսության համատեքստում.....	134
Խաչատրյան Էմմա	
Աղաբերեն լեզվի ցերականության սկզբնավորման հարցի շուրջ.....	137
Հարությունյան Լիլիթ	
«Եմոլոգառություն» հասկացության շրջանակներն աքցնական ընթակամական ավանդույթում.....	140
Մախրատյան Լիլիթ	
Կամանց էիմանաքցերը Մոնզն Մախամաքա՛նի սուղծալործություննեյում... 145	
Փաշայան Անի	
Արևելյան նրբեքամզներն Արաբի Այվազյանի արձակում.....	148

CONTENTS

ANCIENT AND MIDDLE AGES

Ani Babayan Mutual Influences New Julfa and Isfahan Mural Painting in Seventeenth Century	5
Sona Grigorian The Similarities of the Armenian and Urartian Languages in the Works of G.Ghapentsian	10
Hasmik Hmayakyan Cult of "Tukh Matsks" and Medieval Armenian Guilds	18
Gagik Martoyan On the Matter of Denomination of the 30 th Day's of the Armenian Calendar and the Iconography of the Urartian God Teišeba	22
Tehmine Martoyan The Relations between the Carmelites and the Armenians of New Julfa	25
Artak Shakaryan Devshirme Evacuation of the Ottoman Population (According to Ottoman Documents)	29

MODERN AND CONTEMPORARY HISTORY

Meline Anumyan Evidences in Ottoman Daily "Alemdar" (1919) confirming the Armenian Genocide	34
Grigor Arshakyan The Activity of Turkey during the Process of Construction of Baku-Tbilisi-Geyhan Pipeline	42
Gor Gevorgyan About Presidential Elections in Egypt 2005	47
Artur Dumanyan About the Question of the Causes of the 1980 Military Intervention	51
Gohar Iskandaryan Kurds Movement in Iran: Mehabad Republic	56
Albert Khachataryan The Activities of International Oil Consortium in Iran in 1950's	62
David Knyazyan General Denikin on the Azerbaijani Republic	67
Aghavni Harutyunian China as a New Actor in the Middle Eastern Oil Market	72
Levon Hovsepyan The Modernization of Turkey's Armed Forces	77

Gevorg Gharibjanian	
The Process of Accretion of Political and Economic Elites of Syria in the Early 1990's	82
Benjamin Mallyan	
Hamshin Armenian Community as Military and Political Factor in Sochi – Gagra Region in 1919.....	87
Suren Manukyan	
Islamic Movement in Syria in 2000-2005.....	95
Narine Margaryan	
The Arabs' Stance on Armenian Orphans Found in Syria.....	101
Rudik Yaryan	
The Problem of Legal Status of the Caspian Sea	106
Haykaram Nahapetyan	
The Process of Removal of Armenian Taboo in Turkey.....	109
Nazely Navasardyan	
British-Russian Factor and Iran's Economic Crisis before the World War I ...	115
Lusine Stepanyan	
The Results of Modernisation Policy in Iran for Clergy in 1920-1940's of XX Century	119
Aren Varderesyan	
Iran-Armenian Cooperation in Power Engineering: Construction of the Gasline.....	125
Araks Pashayan	
"Post-Islamism": an Avoidable Evolution.....	130

LINGUISTICS AND LITERARY CRITICISM

Hrayr Aghababyan	
The Syntactical Position of the Direct Object in Arabic in the Context of Government Theory.....	134
Emma Khachatryan	
About the Foundation of Grammar of Arabic Language.....	137
Lilit Harutyunyan	
The Frame of "Government" Meaning in Arab Grammar Tradition.....	140
Lilit Safrastyan	
Women's Issues in the Works of Mohsen Makhmalbaf.....	145
Ani Pashayan	
The Oriental Shades in Prose Works of Aghasi Ayzazyan.....	148

ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԲ

III

NEAR EAST

III

Գրատարակչության տնօրեն Է.Ա. Մկրտչյան
Գեղ. խմբագիր Ա.Ա. Քաղղաթարյան
Քանակարգ, էջադրոդ Գ.Ա. Գարությունյան

Տպագրությունը օձսեք մուղը օձսեք Չախը՝ 60x84/16:
Ծավալը՝ 10 մամ.: Տպաքանակը՝ 200: Գինը՝ պայմանագրային:



Տպագրված է «Տանգակ-97» հրատարակչության տպարանում,
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28,
ֆաքս՝ (+37410) 23-25-96, էլ. փոստ՝ info@zangak.am,
էլ. կայք՝ www.zangak.am